

# ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱ

գրական-գեղարվեսական հանդես

28 29  
2012

## ՊԻԵՍՆԵՐ

ԱՅՆԻԱ Աղասարյան	2	ՍԻՄՈՆԱ
Սամվել Խալաքյան	34	ՊԱՐԱՍ, ՊԱՐԱՍ, ՊԱՐԱՍ...
Կարինե Խոդիկյան	52	ԲԱՐԻ ԵՂԵՔ, ՍԱՏԿԱՑՐԵՔ <b>ԴՐԱՆ</b>
Հովհաննես Թեհօյոցյան	72	ԾԱՌ՝ ՕԴԻ ՄԵԶ
Մանե Խառայյան	80	ՀՅՈՒՐԸ, ՈՐ ԵԿԱՎ <b>ԺԱՄԱՆԱԿԻՆ</b>
Արամ Արսենյան	90	ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ԴՊՐՈՑԸ
Թամարա Բարթափիա	92	ԽԱՂԱԼԻՔ ԱՏԲՃԱՆԱԿԸ
Նաղեմդա Պետուկինա	116	ԱՄՆՈՐՄԱՆԸ



## ԱՆՆԱ ԱՂԱՍԱՐՅԱՆ

Սիմոնայի քրոջը՝ Պիաֆին, ճանաչում են բոլորը: Սիմոնային զիտեն քչերը: Նրանք տանել չեն կարողանում իրար, բայց չեն կարող ապրել մեկն առանց մյուսի:

Երկվորյակներ չեն, բայց նման են նաև արտաքինով, ն էությամբ: Տարբերությունը միայն Սիմոնայի հասակն էր, որ 2 ամ ավելի բարձր էր Պիաֆից, և Պիաֆը դա չէր ներում նրան: Նրանք կապված են սիրո ու ատելության խառնուրդով:

Ինձ միշտ հետաքրքիր են եղել միայն խառնուրդով զգացմունքները, որոնց բացատրությունը, ինչպես բարձրագույն մաթեմատիկայում, որտեղ 2-ին գումարած 2-ը ամեննեն էլ հավասար չէ 4-ի,

դուրս է պարզ կամ պարզունակ տրամաբանությունից: Պիետում երկու ուժեղ կանացի կերպարներ են, երկու քոյր, որոնք «սազում են» իրար, ինչպես սպիտակն ու սևը: Ով էր սպիտակը... Թող բեմադրիչն ինքը որոշի: Գուցե Սիմոնան ավելի ուժեղ էր՝ տանելու համար տաղմանի այն ահոելի բեռը, որ մեծ տառապանքով կրում էր Պիաֆը: Գուցե արժե, որ երկրորդ ներկայացման մեջ Պիաֆի դերը խաղա Սիմոնայի դերակատարուիհին:

# ՍԻՄՈՆԱ

## Գործող անձինք

**ՍԻՄՈՆԱ - Պիաֆի բույրը**

**ՊԻՎՓ - Սիմոնայի բույրը**

**ԼՈՒԻ - Շաբաց հայրը**

**ԷՌԵՍ - փոքրիկ Պիաֆը**

**ԸՎԱՐՑՈՂՓ - Գետաղոյի սղա**

**ՀԵՖԿԵ - քժիւկ**

**ՔՐԻՍՏԻ**

**ԺԱՎԵՏ**

**ՄԻՄԻ**

**ԻՎՈՆՆԱ**

**ԼՈՒԻԶ - հասարակաց տան շիրուհին**

**ՔՐԵՌԻ - քարմեն**

**ՄԻԿԵԼ - դաշնակահար**

**ԼԵՊԼԵ, ՈԵՅՍՈՆ, ԾԵԲԱՐՅԵ, ՏԻԿԻՆ**

**ԼՐԱՎՐԱՎԱՃԱՌ**

## ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

Հասարակաց տուն: Երաժշտություն: Երկու, երեք սեղան, մի անկյունում՝ զբանաֆոն, որոնց մոտ նստած աղջկերը ծխում են ու սուրճ խմում: Առավոտ է: Աղջկներից ոմանք կիսահագնված են: Մեկը ներս է մտնում սրբիչով մագերք ցամաքեցնելով, խալաքը վրան զցած: Բարի հետևում քարմենն է, որի արտաքինը և ներկած աչքերը մատնում են միասնառական հակումը: Բեմի խորքում լայն ու երկար աստիճաններ են, որոնք տանում են դեպի պայմանական բեմը: Դրսից լսվում է նադան Լուիզի ձայնը:

**ԼՈՒԻԶ - Ֆրեդի, ո՞ւր ես դրել այդ ա-**  
նիծյալ քակարդը: Ֆրեդի...

**ՔՐԵՌԻ - Երեկ դուք տարաք խոհա-**  
նոց:

**ԼՈՒԻԶ - (ներս մտնելով): Ձո՞ք ասելով՝**  
սկլերող ունեմ, հա՞յ, պառավ եմ...

**ՄԻՄԻ - Ակսվե՞ց...**

**ԼՈՒԻԶ - (աղջկներին): Դուք սու**  
մնացեք: Հինա հերթը ձեզ էլ կհաս-  
նի: (Ֆրեդին): Ո՞ւր է քակարդը,  
մկները վիստում են խոհանոցում:

**ՔՐԵՌԻ - Չգիտեմ:**

**ԼՈՒԽԶ** - Օ՛, սուրբ Թերեզա... Ես կցնդեմ ձեր ձեռքին մի օր: Ֆրեղի, շխմացողները գնում են դժոխք, - ասել է Երանելի Ավգուստինը:

**ՖՐԵԴԻ** - Ի՞նչ Ավգուստին:

**ԼՈՒԽԶ** - Դա՞ էլ չգիտես: Ֆրեղի, քեզ պետք է երթեմն-երթեմն կանանց ուորերի արանքը խցվել, այդ դեպքում ինչ-որ քան գուցե իմանաս: Շամպայնի բաժակներն օճառով լվա, գանգրահեր ավանակ:

**ՖՐԵԴԻ** - Լուսն եմ, մաղամ:

**ԼՈՒԽԶ** - Մարի՝ ... Ո՞ւր է այդ փնքի հավը: Հարյուր անգամ ասել եմ, որ ամեն հաճախորդից հետո սենյակը պետք է կարգի բերել: (Քրիստինին) Քո սենյակում երեք օր է՝ Սուրբ-Գոմոր է: Ինչո՞ւ չես հետևում սենյակիդ մաքրությանը...

**ՋՐԻՍՏԻՆ** - Բայց, տիկին, երեք օր է...

**ԼՈՒԽԶ** - Ի՞նչ՝ բայց: Ի՞նչ՝ բայց: Սա առաջին կարգի հասարակաց տուն է: Տղամարդիկ այստեղ չախտի զգան, ինչպես իրենց տանը: Նրանց կանայք կարող են ամիսներով սավանը շփոխել: Եթե այստեղ էլ նույնը լինի, նրանք կմնան իրենց տներում: Պա՞րզ է: Իսկ դուք կզրկվեք աշխատանքից: Ո՞ւր է Ռոզին:

**ՍԻՍԻ** - Վերևում: Նրա մոտ հաճախորդ է եկել: Այսօր երրորդն է:

**ԼՈՒԽԶ** - Խեղճ Ռոզի: Ձեր փոխարեն էլ է աշխատում: Երեք օր է՝ ոչ մի ֆրանկի օգուտ չեք բերել, իսկ ես շարունակում եմ կերակրել ձեզ: Կվոնդեմ, բոլորիդ փողոց կշպրտեմ, լու՞մ եք...

**ԻՎՈՆՆԱ** - Մաղամ...

**ԼՈՒԽԶ** - Ի՞նչ՝ մաղամ: Երկու օր է՝ խրտնեցում եք հաճախորդներին: Խոսքներդ մեկ եք արե՞լ, ուզում եք ինձ սնանկացնե՞լ... Գործադրով եք հայտարարո՞ւմ:

**ԻՎՈՆՆԱ** - Մաղամ, ես հեռանում եմ, այլև մեղքի մեջ ապրել չեմ կարող:

**ԼՈՒԽԶ** - Հիմարություն չանես, սովոր կատակես մայրի վրա: Կամ էլ ստիպված նույն բանը կանես, ինչ այստեղ ես անում: Ավելի լավ չի՞ այստեղ, քան փողոցում մաքոր, ապահով, բժշկի հսկողության տակ, տեղը տեղին:

**ԻՎՈՆՆԱ** - Երեկ եկեղեցում Սուրբ Թերեզան նախատեց ինձ երկնքից և պատվիրեց, որ դարձի զամ: Ես հստակ լսեցի նրա ձայնը. «Իվոննա, դարձի արի»: Էլ չեմ կարող, մաղամ, ես գնում եմ: Մնաք բարով, քոյրեք: (Հրաժեշտ է տալիս աղջկաներին):

**ՍԻՍԻ** - (Խեծկլտում է): Իսկ ես ի՞նչ անեմ, Սուրբ Թերեզա... ի՞նչ անեմ... ներիր, ես չեմ կարող այսպես միանգամից թողնել ու գնալ... ներիր, Սուրբ Թերեզա... ներիր...

**ԼՈՒԽԶ** - Ոտքս կոտրվեր՝ ձեզ եկեղեցի շտանեի:

**ԻՎՈՆՆԱ** - Մնաք բարով:

**ԼՈՒԽԶ** - Չհամարձակվե՞ս... Իվոննա, ես դարձիր, լսո՞ւմ ես...

Իվոննան դրս է գալիս: Աղջկաները լաց են լինում խմբով:

**ԼՈՒԽԶ** - Չայներդ կտրե՞ք... կտրե՞ք ձայներդ: Ձեզ ինչի՞ համար եկեղեցի տարա: Քեզ եմ հարցնում, Սիսի, պատախանի՛ր:

**ՍԻՍԻ** - Որ բոլորս միասին աղոքենք

Սուրբ Թերեզային, որ հրաշք գործի, ու փոքրիկ Եղիսի աշքերը բացվեն նրա սուրբ զորությամբ:

**ԼՈՒԻԶ** - Իսկ ի՞նչ ստացվեց: Եղիսի դեռ կույր է, ինչպես մի տարի առաջ, երբ հայրը նրան այստեղ բերեց: Եղիսի հետ հրաշք տեղի չունեցավ: Բայց փոխարենը մի ուրիշ հրաշք եղավ: Դո՛ք փոխվեցիր: Երեք օր է՝ հրաժարվում եք աշխատել: Սա կուսանո՞ց է, ձեզ եմ հարցնում, թե՞ բարդակ: Ա՛խ, այս ի՞նչ բերեցիր իմ զիվին, Սուրբ Թերեզա: (Նայում է վերև:) Դու ինչոր բան խառնել ես երկի: (Ուղում է զնալ:)

**Ներս է մտնում Ժանետը:**

**ԺԱՆԵՏ** - (Խորամցելով): Բարի լույս... Ֆրենի, մի բաժակ նարնջի հյութ տուր ինձ:

**ԼՈՒԻԶ** - Այդ ի՞նչ է ձեռքիդ:

**ԺԱՆԵՏ** - Տիկնիկ: Երեկ եմ զնել Եղիսի համար, բայց նա դեռ քնած է, չհասցրի տալ: Միսի, դեմքի մածուկը բրվել էր, բափեցի:

**ԼՈՒԻԶ** - Տուր այստեղ այդ տիկնիկը: **ԺԱՆԵՏ** - Ինչո՞ւ, Եղիսի համար եմ զնել:

**ԼՈՒԻԶ** - Նա ոչինչ չի տեսնում, Եղիսը կույր է ծնվել, նրա ինչի՞ն է պետք տիկնիկը: Տուր այստեղ...

**ԺԱՆԵՏ** - Խնդրում եմ, մաղամ Լուիզ:

**ԼՈՒԻΖ** - Տուր, ասում եմ, անպիտան աղջիկ:

**ԺԱՆԵՏ** - Թողեք, թող մոտս մնա, խնդրում եմ: (Տիկնիկը մետում է Ֆրենիին:)

**ԼՈՒԻΖ** - Լուի, հո դուք չե՞ք խելազարվել: Մնում եք, որ հիմա էլ մայրական

զգացմունքներ ծնվեն ձեր մեջ: Սա նաևկապարտեղ չի, գրողը տանի, սա բորդել է: Տոնի... (Պոկում է ձեռքից տիկնիկը:) Տիկնիկն էր պակաս...

**ԺԱՆԵՏ** - Ետ տվեք, խնդրում եմ...

**ԼՈՒԻΖ** - Հաճախորդների հետ տուն-տուն ես խաղալո՞ւ: Նրանք եղ տուն-տունից են փախչում, զախս այստեղ, որ մի քիչ հանգստանան: (Ձեռքերը երկինք հառած:) Օ՛հ, Սուրբ Թերեզա, էս ի՞նչ կատակներ ես անում, ա՛խ, Սուրբ Թերեզա, թե ձեռքս կրնկնեիր... (Համկարծ հասկանում է իր ասածը:) Մեղա քեզ, Տեր Աստված: (Խաչակնքում է:)

**Հնչում է դրան զանգը:**

**ԼՈՒԻΖ** - Հաճախորդ է: Տերերո՞ւմ:

Ծրբներկդ, շրբներկդ քսիր, շուտ արա... Այս ի՞նչ տեսք ունեք: Կարգի բերեք ձեզ, արազ: Ֆրենի, պատրաստ: Ժանետ, դիմավորիր: Եվ ինչպես հարկն է, հասկացա՞ր: Ժպտացեք...

**Ժանետը բացում է դուռը, ներս է մտնում Եղիսի հայրը՝ Լուին: Նա դեղին հնամաշ կեախով է, կարմիր վերնաշապիկով և կամաչ տարատով: Կոշիկները տարբեր են և գույնով, և ձևով: Ձեռքին գույնզգույն փաթեթներ են: Աղջիկները հիացած բացականչում են:**

**ԱՂՋԻԿՆԵՐ** - Լուի, Լուին է եկե՞...

Լուի...

Լուին ակրոբատիկ տրյուկ է անում, փաթեթներն ընկնում են հատակին:

**ԼՈՒԻ** - Ալլե՛... Ձեզ ողջունում է բոլոր

Ժամանակների ամենամեծ արտիստը, ակրոբատը և ժանգվորը, որն արհամարհում է աշխարհի բոլոր բեմերը: Ձեզ ողջունում է նա՛, որի բեմը փողոցն է, այսինքն՝ Երկրագնդի մակերեսը: Ալե՛...  
(Փարերներով ժանգվորություն է անում:)

**ԼՈՒՔ** - Ըիր, կուսանոցն ինձ քիչ էր, հիմա էլ կրկես-կրկես ենք խաղալու:

**Աղջկեմերը ծիծաղելով ու ծափերով նետվում են հատակին քափված փարերները հավաքելու:**

**ԶՐԻԱՏԻՆ** - Ի՞նչ ես բերել մեզ համար, Լուի:

**ԼՈՒՔ** - Կոնֆետներ, ժապավեններ, մազակալներ և այլ մանր-մունք բաներ: Վայելեք, ամմեղ մեղավորներ:

**ԼՈՒՔ** - Ժանետ, զնա, Էղիսին քեր: Ասա՝ անառակ հայրող եկել է քեզ տեսնելու: Աշխ, իմ խեղճ քոյլը, ել գերեզմանից, տես՝ զավակդ ինչ է դարձել: (Լուիին:) Ո՞ւմ ես մեծացրել, ո՞ւմ...

**ԼՈՒՔ** - Մորաքոյլը, ես արտիստ եմ: (Համրուրում է:) Դա ավելի ամոթափի չէ, քան պոռնկանոց պահելը: (Ամուր համրուրում է:)

**ԼՈՒՔ** - (Իրում է): Կորի՞ր, անպետք... Թող, հերիք է ճաճապացնես քշերս, ատամներս հանեցիր: (Հրում է:) Ո՞ւր էիր, ա՛յ տղա: Երեխան շուտով կմոռանա քեզ: Սի քիչ շուտ շուտ արի:

**ԼՈՒՔ** - Ստեղծագործում էի, մադամ: Սի աման տաք ապուր քեր քրոջ ստեղծագործող որդուն, ստամբուս ահազանգում է: Ո՞նց ես, Ֆրենի:

**ԼՈՒՔ** - «Ստեղծագործում էի»: Գրողը քեզ տանի:

**ՍԻՄԻ** - Իսկ սա ի՞նչ է, Լուի:

**ԼՈՒՔ** - Փուչիկներ Էղիսի համար: Փչեք, մինչև գա: Ջնա՞ծ է դեռ: Արդեն կեսօր է:

**ՍԻՄԻ** - Արջի քուն է մտել: Երեկ ցերեկը քննեց, մինչև հիմա չի արթնացել: (Փշում է փուչիկը:)

**ԶՐԻԱՏԻՆ** - Սովորաբար մեզ հետ է քննում, շատ ուշ: Վաղ էլ արքանում է: Բայց այսօր... մի հաս էլ ինձ տուր: (Վերցնում է Սիսիից փուչիկը:)

**ԼՈՒՔ** - (ապուր դնելով Լուիի առաջ): Առ, զիստկվի՛ր, փուչ լակուն դուրս եկար:

**ԼՈՒՔ** - Մորաքոյլը, աշխարհի բոլոր արքաներն ինձ հերթով առաջարկեցին խաղալ իրենց քագավորական քատրոններում: Խոստացան ուկու սարեր, աղամանդներ ու գոհարներ, բայց ես նայեցի նրանց արհամարհանքով ու նետեցի հպարտ. «Ազնիվ արտիստին փողով առնել հնարավոր չէ, ես գերադասում եմ ազատությունը»: Իսկ ազատությունը փողոցում է: Ալե՛...

**ՍԻՄԻ** - Բուավո, Լուի, բուավո:

**ԼՈՒՔ** - Ծաշդ սառում է, այ տղա:

**ԼՈՒՔ** - Եվ աշխարհի արքաներն ստիպված եղան դուրս գալ փողոց՝ մեծ արտիստին տեսնելու: Այո՛, քողեցին իրենց ապարանքներն ու եկան փողոց՝ հասարակ մահկանացուների պես: Արվեստի առաջ քոլորը հավասար են: Ալե՛... (Գլոխակոնճի է տապիս:)

**ԼՈՒՔ** - Ծաշը, այ տղա, գրո՛ղը քեզ

տանի: (Ֆրեդիհն.) Ի՞նչ ես անզործ նստել, արի զնանք թակարդը գտնենք:

**ԼՈՒԻ** - Մորաքույր, ուտեղուց առաջ պետք է վաստակեմ իմ ապուրը: Լուին աղքատ է, բայց հպարտ: Ալլե՛ ...

**Աղջկեները ծափահարում են:**

**ՍԻՍԻ** - Բռավո, բռավո... Ի՞նչ լավ արիր, որ եկար, Լուի:

**ԼՈՒԻ** - Ազնվագույն ու չքնաղագեղ օրիորդներ, աշխարհիս բոլոր վայելքները ոչինչ են ձեր ծափերի դիմաց: (Գրկում է Սիսիհն:) Բայց նույնիսկ այդ ծափերը ոչինչ են քո գույգ, ցցուն բիթների դիմաց:

**ՍԻՍԻ** - Թող, Լուի, թող...

**ԼՈՒԻ** - Օ՛, ձեր երկու բիթները, որոնք բարձր են, ինչպես Հիմալայները, և նրանց վրա կարծես չի ազդում երկրի ձգողականությունը: Գրավիտացիա՝ ...

**ՍԻՍԻ** - Թող, Լուի... Բաց թող, կատակ չեմ անում: Մի՛ արա:

**ԼՈՒԻ** - (հետ քաշվելով): Ներեցեք, օրիորդ, ես չգիտեի, որ դուք օրիորդ եք: Արի զիրկս, Քրիստին...

**ՔՐԻՍՏԻՆ** - Թո՞ղ, չփապչես ինձ... (Հեռու է փախչում:)

**ԼՈՒԻ** - Ի՞նչ է պատահել: Հիմնարկի պրոֆիլը փոխվե՞լ եք:

**ՍԻՍԻ** - Սուրբ Թերեզան տակնուվրա արեց մեր հոգիները: Ա՛խ, Լուի, ի՞նչ մեղավոր ենք, մեզ դժոխք է սպասում: Սարսափելի է...

**ԼՈՒԻ** - Ի՞նչ Թերեզա... Սրբի դուռ եք զնացե՞լ: Դո՞ւք... (Պայրում է ծիծաղից:)

**ՍԻՍԻ** - Հա, աղջկադ համար: Աղոքք

արեցինք, աղաչեցինք, որ Էղիստին տեսողություն տա: Բայց հրաշքը տեղի չունեցավ:

**ԼՈՒԻ** - Խսկ դուք լրջորեն հավատո՞ւմ եիք դրան: (Հողոտում է:)

**ՍԻՍԻ** - Ես հիմա էլ եմ հավատում: Սուրբ Թերեզա՝ ...

**Ներս է մտնում փոքրիկ Էղիստը՝ ճշարվ, ճեղքերով աջքերը փակած:**

**ՊԻԱՖ** - Մամա՝ ... մամա՝: Վառում է, վառո՞ւմ է... մամա...

**Աղջկեները նետվում են դեպի նա:**

**ՍԻՍԻ** - Բաց թող... բաց...

**ՔՐԻՍՏԻՆ** - Զերքերդ հեռու տար աչքերից:

**ՊԻԱՖ** - Զէ՛, չէ՛ ... վառո՞ւմ է...

**ԼՈՒԻ** - Էղիստ, ես եմ՝ հայրդ, պապա Լուին... Էղիստ, նայիր ինձ...

**Էղիստը բացում է աջքերը, նայում է հորը, ճեղքը տանում է նրա դեմքին: Բոլորն ապշահար իրար են նայում:**

**ՍԻՍԻ** - Ժանե՛տ, մադամ Լուի՛զ...

**ՊԻԱՖ** - Պապա՝ ... (Գրկում է հորը:)

**ՍԻՍԻ** - Մարդամ Լուիզ, Ֆրենի... (Դուրս է վազում:)

**Ներս են ընկնում մադամ Լուիզը, Ֆրենին ու Ժանետը:**

**ԺԱՆԵՏ** - Ի՞նչ, ի՞նչ է եղել...

**ԼՈՒԻԶ** - Ի՞նչ ես ծայնդ գլուխդ գցել...

**ՔՐԻՍՏԻՆ** - Հրաշքը կատարվեց, մադամ Լուիզ, Էղիստը տեսնում է, Էղիստը տեսնում է... (Լաց է լինում:)

**ԼՈՒԻԶ** - Հիսուս Քրիստո՞ս... (Ծունկի է զայխ:)

**Աղջկեները հետևում են նրան: Ծունկի եկած՝ աղքաք են մրմնջում: Էղիստը ապշած նայում է շորջը:**

- ԹԻԱՖ** - Սա ի՞նչ է:
- ԼՈՒԻ** - Աշխարհ, Էղիտ, աշխարհ:
- ԹԻԱՖ** - Աշխարհը ի՞նչ է:
- ԼՈՒԻ** - Ծառեր, երկինք, մարդիկ...
- Աշխարհ:
- ԹԻԱՖ** - Աշխարհը այսքա՞նն է:
- ԼՈՒԻ** - Չէ... (*Բացելով պատուհանը*):  
Այնտեղ էլ կա աշխարհ:
- ԹԻԱՖ** - (*աչքերը ծածկելով*): Փակի՛ր,  
փակի՛ր...
- ԼՈՒԻ** - Դա արևն է, Էղիտ, արև՝ ը:
- ԹԻԱՖ** - Վառո՞ւմ է, վառո՞ւմ է...
- ԼՈՒԻ** - (*փակում է պատուհանը*): Բաց  
աչքերդ: Արևը գնաց: Մրանից հե-  
տո դու ամեն օր տեսնելու ես նրան:  
Զո ապրած բոլոր օրերում տեսնե-  
լու ես նրան:
- ԹԻԱՖ** - Չեմ ուզում:
- ԼՈՒԻ** - Դու պիտի սովորես նրան: Ե-  
թե չլինի արևը, չեն լինի գույները:
- ԹԻԱՖ** - Գույնն ՞ը... Ի՞նչ է՝ գույները:
- ԼՈՒԻ** - Այ, նայիր: Գույները սրանք  
են: Չե, չե, սրանք փուչիկներ են,  
բայց նրանք տարբեր գույն ունեն:  
Այ, սա կարմիրն է, սա՝ դեղինը...
- ԼՈՒԻԶ** - Ջոր տվեք, սիրոս թուլացել է:
- ՍԻՍԻ** - Մամա՞... (*Վախեցած է*):
- ԼՈՒԻ** - Սա կանաչն է, սա՝ կապոյ-  
տը... Կրկնիր:
- ԹԻԱՖ** - Սա կանաչն է, սա՝ կապոյ-  
տը:
- ԼՈՒԻ** - Չե, չե: Դա կարմիրն է, սա է  
կանաչը: Սա կարմիր է, սիրո գույ-  
նը: Վերցրու: Հիշիր՝ սեր-կարմիր:  
(*Տալիս է փուչիկը*)
- ԶՐԻՍՏԻՆ** - Սա կանաչն է: Կյանքի  
գույնը, ջահելության: Կանաչ-  
կյանք: Հիշիր: (*Տալիս է փուչիկը*)
- ԺԱՆԵՏ** - Սա կապոյտն է: Երազան-  
քի գույնը: Հիշիր՝ կապոյտ-երա-  
զանք: Վերցրու: (*Տալիս է փուչիկը*)
- ՖՐԵԴԻ** - Սա սպիտակն է: Անմեղութ-  
յունը: Ծերմակ-անմեղություն: Հի-  
շիր: Վերցրու: (*Տալիս է փուչիկը*)
- ԼՈՒԻԶ** - Սա սևն է: Ցավի գույնը:  
Վերցրու: Հիշիր՝ սև-ցավ: (*Տալիս է փուչիկը*)
- ՍԻՍԻ** - Սա դեղինն է, հույսի գույնը:  
Դեղին-հույս: Հիշիր: Վերցրու:  
(*Տալիս է փուչիկը*)
- ԹԻԱՖ** - (*փուչիկները ցոյց տալով*):  
Սեր, ցավ, հույս...
- ԼՈՒԻ** - Չե, դրանք գույներ չեն,  
դրանք... Գույնը կարմիրն է, սևը,  
դեղինը:
- ԹԻԱՖ** - Խսկ սեր, ցավ՝ ի՞նչ է:
- ԼՈՒԻԶ** - (*հոգոց հանելով*): Կմեծա-  
նաս՝ կիմանաս:
- ԹԻԱՖ** - Կիմանա՞մ:
- ԼՈՒԻ** - Կիմանաս:
- ԹԻԱՖ** - Մյուս գույներն էլ կիմանա՞մ:
- ԼՈՒԻԶ** - Կիմանաս, Էղիտ, կիմանաս:  
Սքուրյուն:
- Երգ:
- ԱՐԱՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ**
- Լույսը հետզիետե բացվում է:**  
**Քեմի խորքում, աստիճանների վերևում, մեջքով դեպի դահլիճը կանգնած է Պիաֆը: Ծոնդալից ծափահարությունները: Ենթադր-վող հանդիսատեսք քեմի հետևում է: Պիաֆը շրջվում է, իջնում քե-մից: Միմնան նրա ուսերին է գցում քիկնոցը:**
- ԼԵՊԼԵ** - Բռավոն, ճնճղուկս, բռավոն...  
(*Գրկում է Պիաֆին*)

**ՈԵՅՍՈՆ** - Ծնորհավորում եմ... Բռավու...

**ԹԻԱՖ** - Մրտում եմ... Կոկորդս այնպես է չորացել, կարող եմ ավազ թքել:

**ՍԻՍՈՆԱ** - Նա դողացնում է:

**ԼԵՊԼԵ** - Տարեք հյուրասենյակ: (*Ծերարյեին*.) Ի՞նչ կասեք իմ այս հայտնագործության մասին, մսյո Շերարյե:

**ԾԵԲԱՐՅԵ** - Պիաֆ... Այսինքն՝ ճնճղո՞ւկ: Լավ է: Լավ ես գտել անունը: Սիայնակ, գունատ, վերքի պես կարմիր բերանով, անշուր սև շորով, մակարոնի պես թևերով՝ փողոցի աղջկը երգում է... Փողոցն, իհարկե, տրամալին չէ Լուսին քոչելու համար, բայց...

**ԼԵՊԼԵ** - Նա կրոշի, կրոշի, Մորիս: Չլսեցի՞ր, ինչ ծափեր էին: Կարկուտ, հեղեղ...

**ՏԻԿԻՆ** - Պիաֆ, Էղիտ Պիաֆ: Պատկերացնո՞ւմ եք, այդ Պիաֆը իման լացացրեց: Վերջին անգամ մորաքրոջ թաղմանն եմ լաց եղել, երկու ամիս առաջ: Ի՞նչ կին էր: Օրվա մեջ չորս անգամ զգեստ եք փոխում: Պատկերացնո՞ւմ եք՝ արդուուզարդն էլ հետը:

**ՈԵՅՍՈՆ** - Ի՞նչ եք ասում:

**ՏԻԿԻՆ** - Գնանք Հնորհավորենք այդ աղջկան: Նա հարդասենյակո՞ւմ է:

**ՈԵՅՍՈՆ** - Նա մենակ չէ, քույրն էլ հետն է: Կարծեմ, Սիմոնա է անունը: Նրանք նույն հորից են, տարբեր մայրերից:

Դուրս են գալիս: Բեմք դատարկ- վում է: Ներս են մտնում քույրերը:

**ՍԻՍՈՆԱ** - Ինչի՞ց ես վատ զգում:

Այսպիսի հաջողություն դեռ ոչ ոք չի ունեցել էս կարարեում: Ի՞նչ է պատահել:

**ԹԻԱՖ** - Հանգիստ քողեք ինձ... Ի՞նչ եք ուզում ինձանից: Ես վատ եմ, հասկան՞ում եք, վատ եմ:

**ՍԻՍՈՆԱ** - Էղիտ, մի քիչ որ կոնծես, տրամադրությունի տեղը կզա: Գնանք բիստր, տղերքը հիմա հավաքվել են:

**Ներս է մտնում Լեպլեն:**

**ԼԵՊԼԵ** - Լսիր, ճնճղուկ, երեք շաբաթ հետո...

**ԹԻԱՖ** - Ես երկար ժամանակ կույր եմ եղել ու միայն լսել եմ: Կուշտ եմ լսելուց: Հիմա ուզում եմ տեսնել: Տեսնել ու ապրել: Հասկացա՞ք:

**ԼԵՊԼԵ** - Համբերիր, մի քիչ համբերիր: Դու հանրաճանաչ ես դառնալու, քո անունը մեծ տառերով զրվելու է Փարիզի ազդագրերում, քեզ ծափահարելու է աշխարհը, հավատա՛ ինձ: Ամրող աշխարհը: Երեք շաբաթից մեկնում ես Կանն: Ես ամեն ինչ դասավորել եմ: Գործերը լավ են զնում:

**ՍԻՍՈՆԱ** - Կա՞նն... Էղիտ, լսեցի՞ր: Սենք համերգ պիտի տանք Կաննում:

**ԼԵՊԼԵ** - Ինչո՞ւ «մենք»: Ի՞նչ է նշանակում՝ «մենք»:

**ՍԻՍՈՆԱ** - Մենք, այսինքն՝ ես ու Էղիտը: Ես պետք է ուղեկցեմ Էղիտին: Նա առանց ինձ չի կարող:

**ԼԵՊԼԵ** - Սիմոնա, Էղիտին երկար ու դժվարին ճանապարհ է սպասվում, ժամանակն է, որ հանգիստ քողեք նրան: Այսուհետև նա իր կյանքը պիտի ունենա, դուք՝ ձերը:

**ՍԻՄՈՆԱ** - Նա առանց ինձ չի կարող:  
**ՊԻԱՖ** - Պապաշա, ո՞ւր ես ճխտել  
 վիսկիի շիշը:

**ՍԻՄՈՆԱ** - Նրան հեշտ է խարել, նա  
 դյուրահավատ է: Ես քոյլ չեմ տա,  
 որ որևէ մեկն օգտագործի քրոջս:  
 Ես նրա պահապան հրեշտակն եմ:

**ԼԵՊԼԵ** - Սև հրեշտակը: Դուք շատ  
 վատ եք ազդում նրա վրա, անընդ-  
 հատ քաշում եք ներքե, կյանքի հա-  
 տակը: Իսկ նա վերջապես դուրս է  
 եկել այդ ճահճից: Նա ձեր կարիքը  
 չունի հիմա, հիմա նա ի՞մ կարիքն  
 ունի:

**ՊԻԱՖ** - Ինձ խմել է պետք... խմել եմ  
 ուզում...

**ԼԵՊԼԵ** - Ոչ մի բաժակ, Էղիտ, ոչ մի  
 բաժակ, լսո՞ւմ ես: Վաղը ելույթ ու-  
 նես:

**ՊԻԱՖ** - (*Խաչակնքում է*): Երդվում եմ:  
 (*Դադար:*) Երդվում եմ՝ միայն մի  
 բաժակ:

**ԼԵՊԼԵ** - (*Դուրս գալով*): Տես, երդվել  
 ես: Միայն մի բաժակ:

**ՊԻԱՖ** - Ժո՛ն, ինչու երդվեցի: Խաչ էլ  
 արեցի...

**ՍԻՄՈՆԱ** - Միայն մի բաժակ՝ ամեն  
 բիստրոյում: Իսկ քանի՞ բիստրո  
 կա Փարիզում...

**ՊԻԱՖ** - Դու հանձարեղ ես, Սոմննա:  
 (*Դուրս են գալիս ծիծաղելով*):

### ԱՐԱՐՎԱԾ ԵՐՐՈՐԴ

**ԲԵՆԱՌԱԶՔՈՒՄ զանգում է հեռա-  
 խոսք:** Ներս է մտնում Սիմոննան,  
 վերցնում է լսափողը:

**ՍԻՄՈՆԱ** - Ալո... Մարդասպանը դու  
 ես, կեղտոտ խոզ: Այլասերվածն էլ

կինդ է, փոս ընկած բազմոց: (*Կա-  
 յում է լսափողը:*)

**Ներս է մտնում Պիաֆը:**

**ՊԻԱՖ** - Ո՞վ եք:

**ՍԻՄՈՆԱ** - Ի՞նչ իմանամ: Ելի Լեպլեի  
 սպանության գործով: Վերջ ունե-  
 նալո՞ւ է ես պատմությունը, թե՞ չէ:

**ՊԻԱՖ** - Լսիր, Սիմոննա: Հիմա մի բան  
 պիտի ասեմ, մի այնպիսի բան,  
 որ... շունչդ տեղը բեր, թե չէ կուշա-  
 րափվես:

**ՍԻՄՈՆԱ** - Կարող ես չասել, զիտեմ:  
 Դու սիրահարվել ես Ուեյմոնին:  
 Ինչպես միշտ, քեզ ներշնչել ես, որ  
 նրա աչքերը կապույտ են: Հենց  
 սկսեցիր սվիտը գործել նրա հա-  
 մար, արդեն պարզ էր, որ սիրա-  
 հարվել ես:

**ՊԻԱՖ** - Սոմննա, ես երջանիկ եմ: Իմ  
 տանը հիմա տղամարդ կա: Այն  
 տանը, որտեղ տղամարդու վերնա-  
 շապիկ չկա արողի թիկնակին, որ-  
 տեղ տղամարդու գուլպաներ չկան  
 մահճակալի տակ ընկած՝ դա պա-  
 ռավա այրու տուն է: Այդ տունը մե-  
 ռած է: Այդ տանը թագավորում են  
 ձանձրույթն ու խավարը: Իսկ Ուեյ-  
 մոնի աշքերն իսկապես կապույտ  
 են: (*Սիմոննան հեզնական ծիծա-  
 ղում է:*) Չվիճե՞ս: Կապույտ են:

**ՍԻՄՈՆԱ** - Չեմ վիճի: Հո հիմա՞ր չեմ:  
 Սանավանդ, որ դրանից օգուտ  
 չկա: Եթե ուզում ես, որ ասեմ՝ կա-  
 քը սև է՝ կասեմ:

**ՊԻԱՖ** - Մի սկսիր առավոտ շուտ:  
 Սուրճ սարքիր:

**ՍԻՄՈՆԱ** - Խոլ-համրի պես ժամերով  
 լսում եմ քեզ, ամեն ինչում համա-  
 ձայնվում, աղախնու նման սպա-

սարկում, կիսում բոլոր ցավերդ ու հոգեւերդ... (*Սուրճ է եվխում:*)

**ՊԻԱՖ - (ընդհատելով):** Ի՞նչ ես ուզում ինձնից, Մոմոնա: Ես արքնացել եմ հրաշալի տրամադրությամբ, սրտիս մեջ բրիր կա, ես այսօր երջանիկ եմ: Ինչի՞ ես փշացնում ամեն ինչ: Երե դժգոհ ես՝ կարող ես գնալ:

**ՄԻՍՈՆԱ -** Նորից փողո՞ց... Գնալու տեղ ունենայի՝ կգնայի:

**ՊԻԱՖ -** Չեմ հասկանում, ինչի՞ց ես դժգոհ:

**ՄԻՍՈՆԱ - (բունոտ):** Ոչ մի բանից: (*Խոնարհվում է:*) Ծա՛ռ շնորհակալ եմ, շատ գրի եմ: Տաքով անկյուն է, կտոր կա զլխիս վերևում, դու ինձ կերակրում ես, պահում, հազցնում: Ծնորհակալ եմ: Ես՝ ոչնչությունս, մինչև գերեզման պարտական եմ մեծն Էդիտ Պիաֆին: Համեցեք... (*Տաղս է սուրճը:*)

**ՊԻԱՖ -** Մոմոնա, ի՞նչ ես ուզում ինձանից: Ամեն անգամ, երբ մի փոքր երջանիկ եմ զգում, պղղորում ես հոգիս, դու փսխում ես իմ ուրախության մեջ: Ինչի՞ ես կյանքս ուտում, ի՞նչը քեզ դուր չի գալիս:

**ՄԻՍՈՆԱ -** Լավ եմ անում: Բո՞ւն է դրել էստեղ: Կնիկ-երեխսա ունի՝ թող զնա իր բունը, իր թխսի կողքին նստի, որ ձվերը լակ դուրս չգան: Ուսուցի՞չ է դարձել զլխիս, մէ՛տր... Չեոք է մեկնում ընկածին:

**ՊԻԱՖ -** Ես ընկած չեմ, Մոմոնա: Կարգին խոսիր: Ուեյմոնն իսկապես անկրկնելի հովանավոր է: Նա ինձ սովորեցնում է քայլել, խոսել, ուտել, երգել, գրել, կարդալ...

**ՄԻՍՈՆԱ -** Պա՛հ, պա՛հ, պա՛հ... Նա

քեզ տգեսու ու անգրագես է համարում, գոռում է քեզ վրա. «Էս մի արա, էն մի արա... Այսպես նստիր... Ուտելուց մի ճպճպացրու... Պատառարաղը ձախով բռնիր»: Զախիմի՞ն ես, ի՞նչ է: Իսկ եղ սոլեֆիջոնն... Գլուխս ուռել է ձեր դասերից: Ո՞ւմ է պետք եղ սոլեֆիջոնն...

**ՊԻԱՖ -** Սոլֆեջիոն:

**ՄԻՍՈՆԱ -** Նույն զիրիլն է: Նա վիրավորում է քեզ դրանով, ստորացնում է, ո՞նց չես հասկանում: Ոնց որ տիկնիկ լինես նրա ձեռքին, խաղալի՞ք: Ես քեզ չեմ ճանաչում, Եղիս: Քեզ որ խորհուրդ տալիս էին, դու անպատճառ հակառակն էիր անում, որ տեսնես, քեզ դրանից ինչ կատացվի: Հիմա ի՞նչ է եղել... Ինչի՞ ես խեղճացել, ինչի՞ ես ենթարկվում նրան: Մէ՛տր... Դու նրանից հազար գլուխ բարձր ես:

**ՊԻԱՖ -** Մոմոնա, առանց նրան ես ոչնչի չեմ հասնի: Նա ինձ պետք է, Մոմոնա:

**ՄԻՍՈՆԱ -** Լա՛վ հաշվել է ատամներդ: Եղ ի՞նքն է քեզ ներշնչել:

**ՊԻԱՖ -** Ես սիրում եմ նրան, Մոմոնա:

**ՄԻՍՈՆԱ -** Սերս ո՞րն է. լսի՞ր: Սերերը փողոցներում թափած են, իսկ ինձ նման հավատարիմ մարդ դու չես գտնի: Ո՞չ մի տեղ: Նա ո՞վ է, որ իմ տեղը գրավի քո կյանքում: Երկուերեք ամսից նրա սերը հ'օդս կցնի, կրողնի-կգնա: Էլի ես եմ մնալու քո կողքին: Հիշի՞ր, ո՞վ էր կողքին, երբ բաժանվեցիր: Ո՞ւմ հետ էիր փողոցներում թափառում, կրկորդ պատռում, որ մի կտոր սև հաց վաստակես երեխայիդ համար: Ո՞վ էր կողքին,

երք երեխաղ մեռավ: Ո՞վ թեզ հետ դուրս եկավ իր մարմինը վաճառելու, որ կարողանաս դագաղ առնել երեխայի համար...

**ՊԻԱՖ - (Ճշում է):** Լոի՛ր, Մոմոնա, լոի՛ր, լոի՛ր...

**Ներս է մտնում Ուեյմոնը:**

**ՈԵՅՍՈՆ - (ոգևորված բափահարում է մի քույր):** Կոնտրակտը քերել եմ, Է-դիտ: Ստորագրեց, վերջապես ստորագրեց այդ ժատս սրիկան: Նայի՛ր, դու երևյթ ես ունենալու ԱԲՍ-ում: Է-դի՛տ... Էդի՛տ, ի՞նչ է պատահել: (Նայում է Սիմոնային, հետո նորից՝ Պիաֆին: ) Լաց ես եղե՞լ...

**ՄԻՍՈՆԱ -** Ձեր տված գիրքը գցել է նրա տրամադրությունը: Ծա՞տ սրտաճնիկ պատմություն էր: Արցունքաբե՞ր... Մամոն-Լեսկո: Էլ ո՞նց կլիներ...

**ՈԵՅՍՈՆ -** Մասն ն Լեսկո:

**ՄԻՍՈՆԱ -** Նոյն զիրին է: Ո՞նց չեք հասկանում, որ Էդիտին կարդալ չի կարելի, հակացուցված է: Նա կույր է եղել, նրա տեսողությունը վատ է, իսկ դուք՝ մէ՞տր, ստիպում եք նրան գիշերները աչք քոռացնել գորերի վրա: Գիրք կարդալը պիտի օգնի նրան, որ ավելի լավ երգի՞՛: Կարդալն ի՞նչ կապ ունի երգելու հետ:

**ՈԵՅՍՈՆ -** Դա հասկանալու համար ուղեղի ծալքերի որոշակի քանակություն է պահանջվում: Ես չեմ զարմանում, որ դուք այդ կապը չեք տեսնում:

**ՄԻՍՈՆԱ -** Ուզում եք ասել, որ ես անգրագետ ու բոի եմ, հա՞՛: Հա՛, մենք անգրագետ ու բոի ենք, մենք

փողոցում ենք մեծացել, մենք կեղտուտ ենք եղել, մարդիկ մեր հոսից հեռու են փախել: Հա՛... Բայց ես քքել եմ ձեր արխստոկրատիայի վրա: Մեր կեղտը արտաքին է, իսկ ձերը՝ ներքին: Դուք ներսից եք կելու:

**ՊԻԱՖ -** Մոմոնա...

**ՄԻՍՈՆԱ -** Հա՛, քող իմանա...

**ՈԵՅՍՈՆ -** Ես քոյլ չեմ տա ինձ հետ այդ տոնով խոսել:

**ՄԻՍՈՆԱ -** Իսկ դու ո՞վ դառար, որ ինձ քոյլ տաս կամ քոյլ չտաս:

**ՈԵՅՍՈՆ -** Դուք վատ օրինակ եք ծառայում, քարշ եք տալիս սուտեմյորների ու բժրամողների շրջապատը, գիշերային արշավների եք դուրս գալիս, հարթեցող եք դարձնում նրան, իսկ այդ ամենը խանգարում է նրա կարիերային: Դուք փշացնում եք Էդիտին:

**ՊԻԱՖ -** Ուեյմոն...

**ՄԻՍՈՆԱ -** Ես եմ փշացնո՞ւմ: Եվ ո՞վ է սա ասում, փշացած մի մարդ, որ կնոշի ու երեխաներին քողած՝ ծվարել է ջահել երգչուիու փեշի տակ: Դեռ համարձակվում ես զլիսիս բարոյականությո՞ւն կարդալ... Կե՞րու:

**Ուեյմոնը հեռանում է:**

**ՊԻԱՖ -** Ուեյմոն... (Նետվում է նրա հետևից: )

**ՄԻՍՈՆԱ -** Էդիտ, հետ արի: (Հետևում է նրան: )

## ԱՐԱՐՎԱԾ ՉՈՐՐՈՐԴ

Բեմը խափարում է: Լավում է ոմբակոծության ձայն, տագնա-

այս ազդանշան, գերմաներեն հա-  
ղորդագրություն ռայլիով: Բնմի  
վրայով ռմբակոծիչների լույսերն  
են սահում, քրթում, մարտում: Բե-  
մը հետզիետե լուսավորվում է:  
Նոյն հասարակաց տունն է, ո-  
չինչ չի փոխվել: Նոյն բարձենք,  
նոյն աղջկները: Բայց տանտի-  
րուին Խվոննան է, այն աղջկը,  
որ հեռացել էր տարիներ առաջ  
Սուրբ Թերեզայի պատվիրանով:  
Ամեն ինչ նոյնն է: Կարելի է աղ-  
ջկներին այլ անուններով կոչել,  
բայց նախընտրելի է առաջարկ-  
վող տարրերակը:

**ԻՎՈՆՆԱ** - Մարի... Ո՞ւր է այդ աղջի-  
կը, ո՞ւր է կորչում ասեղի պես, երբ  
ինձ պետք է գալիս: Մարի... (Բար-  
մենին) Շամպայնի բաժակները  
օճառով չլվաս, օճառ չկա, չի ճար-  
վում: Պատերազմ է: Խնայողաբար  
ծախսիր:

**ՖՐԵԴԻ** - Այդպես էլ անում եմ, մադամ  
Խվոննա:

**ԻՎՈՆՆԱ** - Պիաֆի սենյակի շերն ի-  
ջեցրու ներքեւ: Խողանոց է այն-  
տեղ: Գարեջրի շերի սար է  
գոյացել:

**ՖՐԵԴԻ** - Ես ամեն առավոտ հավա-  
քում եմ, տիրուիի, բայց երեկո-  
յան... երեկոյան նորից այդ սարը  
գոյանում է:

**ԻՎՈՆՆԱ** - Զգիտեմ, նրա գալու ժա-  
մանակն է: Այսօր քրոջը բերում է  
մեզ մոտ, չորրորդ սենյակը պետք է  
կարգի բերել: Քրիստին, զբաղեց-  
րու գերմանացի սպային, կարևոր  
մարդ է: Թողիր տեղիցդ, մոտեցիր  
նրան:

**ՋՐԻԱՏԻՆ** - Զգվում եմ դրանցից, ստոր  
օկուպանտներ:

**ԻՎՈՆՆԱ** - Չայնի, կամաց, կլսի: Սեր  
գործում բոլոր տղամարդիկ էլ օկու-  
պանտ են: Վեր կաց, հրավիրիր  
պարի:

Ներսի սենյակից դուրս են գալիս  
Պիաֆն ու Սիմոնան, պատ-  
րաստվում են գնալ:

**ՊԻԱՖ** - Սիսի, քարտուղարուիուս զգու-  
շացրու, որ կվերադառնամ առա-  
վույսան: (Վերցնում է թիկնոցը:)

**ՍԻՄՈՆԱ** - Քարտուղարուիի ես պա-  
հո՞ւմ:

**ՊԻԱՖ** - Սոնս մնա, ես հիմա գրոծա-  
րար կին եմ: Մադամ Պիաֆ:

**ՍԻՄՈՆԱ** - Ծիշտ ես անում: Բարդա-  
կը ամենահարմար տեղն է քար-  
տուղարուիի պահելու համար: Ի՞նչ  
ես անում, խալաթով ես գալի՞ս:

**ՊԻԱՖ** - Ահ, հերն էլ անիծած: Գնա-  
ցինք:

Ներս են մտնում գերմանացի եր-  
կու սպա: Ներկա մի զինվորն ան-  
միջապես ոտքի է կանգնում.  
«Հայլ»:

**ԸՎԱՐՑԿՈՒՖ** - Մադամ Պիաֆ: Էղիս  
Զովանա Գասիոն:

**ՊԻԱՖ** - Այո, դա իմ ազգանունն է:

**ՀԵՖԿԵ** - (աղջկներին): Ազատեք  
սրահը... Արա՛զ, արա՛զ: Գնացեք  
ձեր սենյակները: Դուք էլ, մադ-  
մուազել:

**ՊԻԱՖ** - Նա իմ քույրն է:

**ՀԵՖԿԵ** - Սիմոնա Բերտոն: Դա մեզ  
հայտնի է: Դուրս եկեք:

Սիմոնան դուրս է գալիս:

**ՊԻԱՖ** - Որտեղից զիտեք Սիմոնային:

**ՀԵՖԿԵ** - Նստեք, մադամ Պիաֆ:

- ՊԻԱՖ** - Ի՞նչ է պատահել...
- ԾՎԱՐՑԿՈՒԹ** - Դուք երեկ ելույթ եք ու-  
նեցել ԱԲՍ-ում, ճի՞շտ է:
- ՊԻԱՖ** - Ասենք թե, հետո՞:
- ԾՎԱՐՑԿՈՒԹ** - Այս կամ ոչ:
- ՊԻԱՖ** - Սա ի՞նչ է, հարցաքննութ-  
յո՞ւն:
- ԾՎԱՐՑԿՈՒԹ** - Դուք ելույթ եք ունեցել  
ֆրանսիական դրոշի փոնի վրա, որ  
ծածանվում էր բեմով մեկ: Ի՞նչ էիք  
ուզում ասել: Դա ի՞նչ էր նշանա-  
կում:
- ՊԻԱՖ** - Ֆրանսիան իմ հայրենիքն է:
- ԾՎԱՐՑԿՈՒԹ** - Այս, այդպե՞ս... Լավ:  
Երեկ դուք երգել եք «Որտեղ են իմ  
ընկերները» վերնագրով մի երգ, ո-  
րը...
- ՊԻԱՖ** - Երգել եմ ու պիտի երգեմ:
- ԾՎԱՐՑԿՈՒԹ** - (*քմծիծաղով*): Ոչ, մա-  
դամ Պիաֆ: Դուք այլևս այդ երգը  
չեք երգի: Զեր երկիրը ծունկ է չոքել  
հզոր Գերմանիայի առաջ: Մենք  
ենք այստեղ տերը, մենք ենք այս-  
տեղ թելադրում տիրոջ իրավունքով:  
Դուք կհանեք ձեր ոեպերտուարից  
այդ հայրենասիրական երգը:
- ՊԻԱՖ** - Ես սիրում եմ այդ երգը:
- ԾՎԱՐՑԿՈՒԹ** - Ձեր ասպարեզը սերմ է,  
սիրո մասին էլ երգեք: Հեռու մնա-  
ցեք քաղաքականությունից:
- ՊԻԱՖ** - Ես ֆրանսուի եմ, իմ երկիրը  
ծամր օրեք է ապրում: Ես երգում  
եմ, ինչ զգում եմ, ինչ հուզում է ինձ:  
Իսկ այս պահին ինձ հուզում է իմ  
երկրի վիճակը:
- ԾՎԱՐՑԿՈՒԹ** - Դուք ստիպված կլինեք  
իրաժարվել այդ երգից:
- ՊԻԱՖ** - Ոչ:
- ԾՎԱՐՑԿՈՒԹ** - Այդ դեպքում մենք եր-  
գը հայտարարում ենք արգելված:

**ՀԵՖԿԵ** - Խելամիտ եղեք, մադամ  
Պիաֆ: Ես հիացած եմ ձեր արվես-  
տով ու չեմ ուզենա, որ անախոր-  
ժություններ ունենաք:

**ՊԻԱՖ** - Խելամի՞տ... (*Ծիծաղում է:*)  
Իմ ծննդյան պահից սկսած՝ ինձ  
անծանոք է այդ բառը: Ես անխո-  
հեմություն եմ ունեցել ծնվել մայրի  
վրա, իսկ առաջին խանձարուր ե-  
ղել է ոստիկանի պիջակը:

**ԾՎԱՐՑԿՈՒԹ** - Այդ բոլորը մեզ հայտ-  
նի է: Գեստավոյում ձեր դոսյեն  
կա, ինչպես բոլոր անվանի ֆրան-  
սիացիներինը: Ձեր հայրը փողո-  
ցային ակրոբատ էր, ձեր մայրը  
հարթեցող է, փողոցային կիմ: Դուք  
ամուսնացել եք անչափահաս տա-  
րիքում, ունեցել եք մի աղջիկ, որը  
մահացել է մեկուկես տարեկան  
հասակում: Դուք ձեր կյանքը անց  
էիք կացնում գիշերային խրախ-  
ճանքներում, իսկ երեխան օրերով  
տաճը մնում էր մենակ, ամիսնամ ու  
սոված, որի պատճառով էլ մահա-  
ցավ: Դուք եք սպանել նրան, մա-  
դամ:

**ՊԻԱՖ** - Ձեզ ո՞վ է քոյլ տվել... Դա  
ճիշտ չէ, եսս...

**ԾՎԱՐՑԿՈՒԹ** - Մեզ մոտ, մադամ, միայն  
ստոյգ տեղեկություններ են գրանց-  
վում: Դա ճիշտ է: Դուք ոչ կարգին  
զավակ եք եղել ձեր ծնողների հա-  
մար, ոչ կարգին մայր՝ ձեր զավակի  
համար:

**ՊԻԱՖ** - Դուք իրավունք չունեք... Ես...  
ես... Իմ անձնական կյանքը ձեզ չի  
վերաբերում: Ո՞վ եք դոք: Ես ստիպ-  
ված էի փող վաստակել Սեսիլի հա-

մար... Ես ստիպված էի նրան մենակ բռնել... (Հոգվում է:)

**ԾՎԱՐՑԿՈՒԹ** - Հիմա է՞լ եք ստիպված: Դուք լողում եք ոսկու մեջ, իսկ ձեր մայրը փող է մուրում փողոցներում: Թերթերի ու խմբազրույթունների դրսերն է ծեծում, որ գոնե բերթերի միջոցով արքնացնի ձեր խիդճը:

**ՊԻԱՖ** - Նա իմ մայրն է միայն փաստարդերով: Իմ մեջ նրան քաղել եմ վաղուց, այն օրը, երբ ինձ լրեց: Այդ օրը ես մի ամսեկան էի, պարո՞ւ:

**ԾՎԱՐՑԿՈՒԹ** - Դուք մեզ ֆաշիստ եք հորջորջում: Մինչդեռ իսկական ֆաշիստները սփովված են աշխարհով մեկ, մաղա՞մ, որոնցից մեկն էլ դուք եք: Ֆաշիստ լինելու համար պարտադիր չէ կուսակցության պատկանել կամ համազգեստ կրել: Այո... Աստված քափրփված է, նա անփուրորեն է ցանում տաղանդի սերմերը: Խալերի նման: Ում կկպնի կկպնի: Ոչ մի ընտրություն, ոչ մի համակարգում: Տարեայնորեն ներքն է նետում, առանց հաշվի առնելու, թե ո՞չ է այն մարդը, որին շնորհում է իր աստվածային կայծը: Եվ հաճախ դրանք ընկնում են ոչնչությունների վրա: Շատերը կրում, կռանում ու ոչնչանում են տաղանդի բերից: Նրանց ուժերից վեր է այդ ծանրությունը: Դա չ՞ պատճառը, որ հանճարները պատեպատ են զարկում իրենց, խմում, դառնում թմրամոլ, ինքնասպան լինում կամ մսխում կյանքը, որը նույն ինքնասպանությունն է: Գուցե դա՞ էլ Աստծո կողմից մարդուն

պատժելու ձև է: Մինչդեռ կան մարդիկ, որոնք արժանի են դրան, որոնք ի գորու են կրելու այդ բեռլ՝ տաղանդը, բերելորեն կրելու և արծանապատվությամբ տանելու: Ինչպես, օրինակ, Գյորեն: Դուք մեծ երգչուի եք, ես չեմ ուրանում, բացառիկ երևույթ: Այն, ինչին ականատես եղա երեկ, ձեր համերգի ժամանակ, դուրս էր բանականության սահմաններից: Անհնարին մի բան, բայց ակնհայտ: Դուք տեղտեղ ֆալշ էիք երգում, մոռանում բառերը, դուք ոչ մի տվյալ չունեք բեմի համար, բայց դահլիճը հիպոնացել էր ձեր երգից: Այդ բվում՝ նաև ես:

**ՊԻԱՖ** - Ես ֆալշ չեմ երգում, դուք ի՞նչ եք հասկանում երաժշտությունից:

**ՀԵՖԿԵ** - Նա դիրիժոր է, մադամ Պիաֆ: Մինչև պատերազմը դեկավարել է Բեռլինի հայտնի նվազախմբերից մեկը:

**ՊԻԱՖ** - Դո՞ւ... դիրիժոր՞: Ի՞նչ է ձեր անոնք:

**ԾՎԱՐՑԿՈՒԹ** - Իմ անոնք ձեզ ոչինչ չի ասի: Ես հրաժարվեցի երաժշտությունից: Յավոր սրտի, ես հասկացա, որ ոչ Բերիովեն կդառնամ, ոչ էլ Ֆերենց Լիստ: «Կամ ամեն ինչ, կամ ոչինչ». սա է իմ սկզբունքը:

**ՀԵՖԿԵ** - Համեցեք... (Միզարեք է հյուրափում Պիաֆին):

**ՊԻԱՖ** - Ընորհակալ եմ... Հա՛, Բերիովենը լավ կոմպոզիտոր է:

**ԾՎԱՐՑԿՈՒԹ** - (սարկազմով): Իհարկե, իսկ Գյորեն՝ լավ բանաստեղծ:

**ՀԵՖԿԵ** - Ցտեսություն, մադամ Պիաֆ:

Այլևս չերգեք այդ երգը: Խորհուրդ եմ տալիս որպես երկրպագու և բարի կամեցող:

**ՊԻԱՖ - Լավ:** Հաջորդ համերգին ես կհայտարարեմ, որ ռեյխը արգելել է այդ երգը, և ամբողջ Փարիզը կծիծաղի ձեզ վրա:

**ԾՎԱՐՑԿՈՒԹ** - Այստեղ գալուց առաջ համոզված էի, որ ձեր հարցում էլ ճիշտ եմ դուրս գալու: Պիտի ասեմ, որ հուսախար չարիք: Ձեր հանճարեղությունը Աստծո անփութության հետևանքն է: Մնաք բարով, մադամ: Տեսեք՝ ինքնասպան չինեք հանկարծ:

**ՊԻԱՖ - Դուք աշխարհի ամենադաժան մարդն եք, պարոն:** Անսիրտ ու անհոգի:

**ԾՎԱՐՑԿՈՒԹ** - Դուք աշխարհի ամենամեծ երգչուհին եք, մադամ: Բայց դա չի խանգարում անսիրտ լինել ձեր մոր նկատմամբ: Իսկ Շոպենն ու Շումանը ինձ չեն խանգարում սպա լինել գետապոյում: Սեր միջն առանձնապես տարբերություն չեմ տեսնում: Ցտեսություն:

**Գնում են:** Դադար: Հեռախոսագանգ: Ներս է մտնում Սիմոնան:

**ՍԻՄՈՆԱ -** Չես լսո՞ւմ: (*Վերցնում է հեռախոսը*) Ալո... Ո՞վ: Այո: (*Կախում է*) Եղիստ... Սեր հայրդ մեռել է:

**ՊԻԱՖ - (ցրված):** Ա՛, Սիմոնա: Դո՞ւ ես...

**ՍԻՄՈՆԱ -** Պապա Լոյին մեռել է, Եղիստ: Լոռություն:

**ՊԻԱՖ -** Իմ խեղճ ծաղրածու:

**Սիմոնան տագնապահար հայցքով հետևում է Պիաֆին, որը**

մոտենում է գրամաֆոնին, դնում ձայնասկավառակը: Հնչում է «Կլրուն» երգը: Մթություն:

### ԱՐԱՐՎԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

**Պիաֆի հյուրասենյակը:** Պիաֆը հրահանգներ է տալիս աղջիկներին, որոնք արագ-արագ ներս ու դուրս են անում՝ զարդարելով սենյակը: Զգացվում է, որ Պիաֆի տաճր պատրաստվում են ինչ-որ կարևոր իրադարձության: Միշելլ լլ հետևում է Պիաֆին՝ նոտաները ճեղքին:

**ՊԻԱՖ -** Երկար է, ճգված է ուտինի նման:

**ՄԻՇԵԼ - Ի՞նչը:**

**ՊԻԱՖ -** Քրիստին, մոմակալներն այստեղ բեր: (*Միշելին*) Ինձ ծիչ է պետք: Ես չեմ ուզում հալած մոմի պես արցունքներ լիովին երեսիս... (*Յույց է տալիս նոտաների վրա:*) Այ, այստեղ հանկարծ, շատ հանկարծ երգը պիտի կտրվի: Սիսի՛, սեղանը գցեք: Ափսեները շարեք, քող ամեն ինչ պատրաստ լինի:

**ՄԻՇԵԼ - Ինչո՞ւ...** (*Թորվում է ուսերը*)

**ՊԻԱՖ -** Սիսի՛, միրգը մեծ սկուտեղի մեջ բեր: Դա հետ տար: Ամենամեծ սկուտեղով, հասկացա՞ր: Նա բռնցքամարտիկ է, պետք չէ նրա առաջ ծոփ կեր դնել: Հետ տար մրգամանը: (*Միշելին*) Ի՞նչը՝ ինչու:

**ՄԻՇԵԼ -** Ինչո՞ւ պիտի այստեղ ընդհատվի:

**ՊԻԱՖ -** Որովհետև, եթե աղջիկը շարունակի երգել, կսկսի հեկեկալ: Հասկացա՞ր:

**ՄԻԾԵԼ** - Թող հեկեկա:

**ՊԻԱՖ** - (անսպասելի բղավում է):  
Չպիտի՝ հեկեկա: Նրա հեկեկոցը  
այստե՞ղ է, այստե՞ղ... (Բռումցրով  
խփում է սրտիմ:)

**ՄԻԾԵԼ** - Լավ, լավ, հասկացա:

**ՊԻԱՖ** - (Ժանետիմ): Ω՛չ, ծաղիները՝  
դաշնամուրի վրա: Սեղանի վրա  
ինչո՞ւ ես ծաղիներ դնում, արածե-  
լո՞ւ եմք:

**ՄԻԾԵԼ** - Իսկ ժեստե՞րը: Ժեստերի  
մասին մտածե՞լ եք:

**ՊԻԱՖ** - Ժեստը ինքն իրեն կգա:

**ՄԻԾԵԼ** - Ես կարծում էի, թե դուք հա-  
յելու առջև փորձում եք ձեր ժեստե-  
րը: Դրանք այնքան ազդեցիկ են,  
որ...

**ՊԻԱՖ** - (Ժիծաղելով): Սիրելիս, ես  
խեղատակ չեմ, որ կանգնեմ հա-  
յելու առջև ու ծամածուրթյուններ  
անեմ: Չե, ես երկար եմ կանգնում  
հայելու առջև, բայց ուրիշ բանի  
համար: Արտաքին թերություններս  
կոծկելու նպատակով: Նայիր,  
ի՞նչ է տվել ինձ Աստված. սմբած  
կուրծք, կախված հետույք, Եյֆել-  
յան աշտարակի չափ բարձր ճա-  
կատ, թքով կպցրած մազեր: Սա  
ինչի՞ է նման... Նայիր: Ծուռտիկ  
ուորեր... բավականին օգտագործ-  
ված նարմին:

**ՄԻԾԵԼ** - Ի՞նչ եք ասում, մադամ  
Պիաֆ: Դուք գեղեցիկ եք:

**ՊԻԱՖ** - Ես, իհարկե, հասկանում եմ,  
որ տղանարդ կոչվածի համար սա  
էլշատ-շատ է: Բայց դա չի նշանա-  
կում, թե Սիլույան Վեներան եմ:

Ներս է մտնում Սիմոնան՝ ճամպ-  
րուկը ձեռքին:

**ՊԻԱՖ** - Սիմոնա՞...

**ՄԻԾՈՆԱ** - Հերթական անգամ դուրս  
արեցիր տնից, հերթական անգամ  
վերադարձա: Կարծում ես՝ ինքնա-  
սիրություն չունե՞մ:

**ՊԻԱՖ** - Սիմոնա... Ω՛նց եմ կարոտել  
քեզ: Սիշել, ազատ ես: Սիմոնա՞...  
(Ուզում է գրկել:)

Միշելը դուրս է զայխ:

**ՄԻԾՈՆԱ** - Սպասիր... (Հետ է քաշվում:)  
Կարծում ես՝ ինքնասիրություն չու-  
նե՞մ: Բայց ես վերադառնում եմ, ո-  
րովհետև դու իմ կարիքն ունես: Ինձ  
համար չեմ վերադարձել, քեզ  
համար եմ վերադարձել: Դու առանց  
ինձ չես կարող: Հանկարծ չմտածես,  
թե...

**ՊԻԱՖ** - Զեմ մտածի, չեմ մտածի:  
Թող գրկեմ քեզ: (Գրկախառնվում  
են:) Տեր Աստված... Սիմոնա... Ինչ  
լավ արիր, որ եկար: Ես այնքան  
քան ունեմ քեզ պատմելու:

**ՄԻԾՈՆԱ** - (Ոնդիատելով): Բայց սա  
վերջին անգամն է, լավ իմացիր: Ե-  
թե մի անգամ էլ ինձ վտարես, էլ ե-  
րեսս չես տեսնի: Հիշիր: Սինչե  
նահ: Լսեցի՞ր:

**ՊԻԱՖ** - Լսեցի, լսեցի: Հարյուր ան-  
գամ լսել եմ: Դե, պատմիր, ո՞նց ես,  
ո՞ր էիր, որտե՞ղ էիր, Սիմոնա, ես  
սիրահարվել եմ:

**ՄԻԾՈՆԱ** - Ես էլ, դա նախանցյալ  
տարի եք:

**ՊԻԱՖ** - Այս, Այմոնա, եքե իմանաս՝  
ով է, եքե իմանաս...

**ՄԻԾՈՆԱ** - Իմն էլ արտասովոր տղա-  
նարդ էր: Էղիտ, չես պատկերաց-  
նի՝ ինչ տղանարդ էր:

**ՊԻԱՖ** - Ես երջանիկ եմ: Ես նրան  
հանդիպեցի...

**ՄԻՍՈՆԱ** - Ես նրան հանդիպեցի երեք տարի առաջ, Կասարլանկայում: Պառկած էի ծովի ափին, ավազի վրա ու նայում էի երկնքին:

**ՊԻԱՖ** - Նա երկնագույն կոստյում էր հագել: Սկզբում տեսա թիկունքից: Նրա թիկունքը խենթացրեց ինձ: Կարծես քանդակ լիներ: Ես զգացի, որ...

**ՄԻՍՈՆԱ** - Թերևս քամի փչեց: Ես մենակ էի:

**ՊԻԱՖ** - Նրա աշքերը փայլում էին:

**ՄԻՍՈՆԱ** - Մենք համրուրվեցինք, ու նա ասաց իր անունը՝ Մարսել:

**ՊԻԱՖ** - Պարզվեց, որ նա բռնցքամարտիկ է:

**ՄԻՍՈՆԱ** - Նա բռնցքամարտիկ էր... Ինչ ասացի՞ն...

**ՊԻԱՖ** - Ի՞նչը...

**ՄԻՍՈՆԱ** - Բռնցքամարտիկ... Անունը ի՞նչ է: Ի՞նչ ասացիր, չլսեցի:

**ՊԻԱՖ** - (զայրացած): «Չլսեցի»... Ես քեզ պատմում եմ իմ սիրո մասին, իսկ դու լենու փոխարեն ինչ-որ անհասկանալի բաներ ես զառանցում: Մարսել: Մարսել Սերդան է նրա անունը: Ի՞նչ եղավ քեզ: Չե՞ր սպասում, որ այդպիսի տղամարդ ինձ բաժին կընկնի: Այո՛: Իմն է: Մարսել Սերդանը... Չե՞ս ճանաչում նրան:

**ՄԻՍՈՆԱ** - Չե՞ս այսինքն... Չե՞:

**ՊԻԱՖ** - Մոնոնա, նրան բոլորն են ճանաչում: Նա աշխարհահոչակ է: Այս, Մոնոնա... Թերք չես կարդում: Գիտե՞ս, ինչ սիրու ունի Մարսելը: Սի անգամ, խանդի նոպայի մեջ ընկա, դուրս եկա տնից ու որոշեցի ծածուկ հետևել նրան: Նա մի քա-

նի օր նոյն ժամին ինչ-որ տեղ էր գնում: Կասկածը սիրտս ընկավ: Եվ ի՞նչ պարզվեց... Ամոքից գետինը մտա: Պարզվեց, որ ամեն օր նոյն ժամին ակնարույժի մտու է տանում իր իին ծանոքին, որը համարյա կուրացել էր: Դա մի աղքատ ու ծեր բռնցքամարտիկ էր Կասարլանկայից: Ինչո՞ւ ես գունատվել: Ինչո՞ւ ես ինձ այդպիս նայում: (*Դադարից հետո:*) Տեր Աստված, այս ի՞նչ տեսք ունես: Հանվիր, արագ: Հանվիր...

**ՄԻՍՈՆԱ** - Ի՞նչ ես անում, թո՞դ:

**ՊԻԱՖ** - Հանվիր, մտիր լողացիր: Նրա ինքնարիոն արդեն օդում է: Մարսելը չպետք է քեզ այս տեսքով տեսնի: Դու իմ քույրն ես: Ես քեզ նոր շորեր կտամ: Հանվիր, ասացի:

**ՄԻՍՈՆԱ** - Նա ե՞րբ է զալիս: Այսօ՞... իմա՞ծ:

**ՊԻԱՖ** - Սիմոնա, դու կորցրել ես լսելու կարողությունդ: Մարսելը Նյու Յորքում էր, ես հեռագրեցի, որ անմիջապես վերադառնա: Մրցումները վերջացել են, ավելորդ տեղն ինչո՞ւ մնա Նյու Յորքում: Մեր սպորտսմենները գալիս են վաղը, բայց ես պահանջեցի, որ Մարսելը գա այսօր: Դու հո ծանոք ես իմ անհամբեր բնավորույթանը: Հանվիր շորերդ... Լոգարանում տաք ջուրը պատրաստ է:

**ՄԻՍՈՆԱ** - (հանելով թիկնոցը): Հա, տաք ջուրը չեր խանգարի, մանավանդ, որ սառն արդեն լցրիր գլխիս:

**ՊԻԱՖ** - Այսի՞նքն... Ի՞նչ ես ուզում ասել:

**ՍԻՄՈՆԱ** - Հեք: Նրա համար ավխոր գործո՞ւմ ես:

**ՊԻԱՖ** - Վերջացնելու վրա եմ: Վիզն է մնացել: Թելը պրծավ, չերիքեց:

**ՍԻՄՈՆԱ** - Լավ նշան չի: (Գնում է դեպի դուռը:)

**ՊԻԱՖ** - Չկոռաս: Ես վախենում եմ քեզնից:

**ՍԻՄՈՆԱ** - Աշխատիր ուշ ավարտել գործվածքը: Քո սիրավեպերը վերջանում են վիզը վերջացնելու հետ միասին:

**ՊԻԱՖ** - Չսկսես, Մոմոնա: Մտիր լոգարան... Օձի լեզու ունի:

**ՍԻՄՈՆԱ** - (դուրս է զայխ, ապա՝ կրկին հայտնվելով ու անհետանալով): Դա իմ միակ զենքն է այս աշխարհում: Քեզ նման փողի ու փառքի մեջ չեմ լվվում: Մտիպված եմ լեզու բանեցնել:

### Հեռախոսազանգ:

**ՊԻԱՖ** - Ալո՞... Ալո: Այո, Պիաֆն է: Ի՞նչ լուր... Հայտնե՛ք: Դե ասեք, մի՛ ծամծմեք: Հարգելիս, ամքող կյանքս վատ լուրերի հեռագրասյուն է եղել: Ես պինդ եմ, կդիմանամ: Ասե՛ք... Ի՞նչ է, մա՞յրս է մահացել: Ո՞չ... (Ճշում է:) Չի կարող պատահել, ստո՛ւ եք... Ի՞նչ ավխավքար, ի՞նչ ինքնարիո... Մարսել... Տեր Աստված... Մարսել... (Լսափողը սահում է նրա ձեռքից:) Չե, դա անհնար է... Չի կարող պատահել... (Թուլացած նստում է:) Մարսել...

Ներս է մտնում Սիմոնան կիսամերկ, ցամքոցով փարարված:

**ՍԻՄՈՆԱ** - Հը՞... Ի՞նչ է եղել: Շացի՞ր, թե՞ ինձ թվաց:

**ՊԻԱՖ** - Չե... Թյուրիմացություն է: Չի կարող պատահել... Չի կարող պատահել...

**ՍԻՄՈՆԱ** - Պարզ է: Ստիպված ես սվիտքը քանդել: Այդ թելից երկու ժիշտ դուրս կօա: (Դադար: Պիաֆը քարացած ճայում է նրան: ) Ի՞նչ... ի՞նչ ասացի, որ...

**ՊԻԱՖ** - (անսպասելի հարձակվում է Սիմոնայի վրա): Հրե՛շ... Ինչո՞ւ վերադարձար, դու միշտ դժբախսություն ես բերում, ինչո՞ւ վերադարձար... (Ծեծում է:) Ինչո՞ւ... ի՞նչ ես ուզում ինձանից, հրե՛շ... հրե՛շ, հրե՛շ, հրե՛շ... (Ծեծում է:)

**ՍԻՄՈՆԱ** - Խելքդ բռցրի՞ր... Ուշքի արի, աննորման: (Հրում է Պիաֆին: ) Խելան... Աշխարհը չվերջացավ Մարսելով: Թող հեռանա, ի՞նչ ես քեզ կոտորում: Առաջին անգամը չի, որ քեզ լրում եմ: Կարևորն այն է, որ ես եմ կողքիդ:

**ՊԻԱՖ** - Նա մահացել է:

**ՍԻՄՈՆԱ** - Մահացե՞լ...

**ՊԻԱՖ** - Հա... (Հեկեկում է:) Մարսելը չկա... (Աղորքի պես:) Տեր Աստված, ես կ ուժ չունեմ դիմանալու... Ինչքա՞ն, ախր... Սինչև ե՞րբ՝ այսպես: Չե՞ որ երկարից չեմ, Տեր Աստված: Համաձայն եմ, տուր ինձ այնքան ցավ, որն ի վիճակի եմ տանել: Բայց դրանից ավելի ինչո՞ւ ես տալիս: (Ոռնում է:) Ի՞նչ է ուզածդ... Սինչև ե՞րբ՝ այսպես: Սինչև ե՞րբ պիտի խոշտանգես ինձ: Սիրտս քրքրել ես արդեն: Բզկտված է, ել սիրտ չկա... Սինչև ե՞րբ, հանուն ինչի՞ն, ո՞ր մեղքիս համար, ինչի՞ն համար...

**ՄԻՍՈՆԱ** - Որ նոր երգ ծնվի քո մեջ,  
մի նոր մեղեղի:

**ԹԻԱՖ** - (սարսափած նայում է նրան):  
Ես հասկացա... Դու... Դու իմ ճա-  
կատագիրն ես: Դու ինձ երբեք քաց  
չես քողմելու: Դու քոնել ես իմ կո-  
կորդից:

**ՄԻՍՈՆԱ** - Ինչե՞ր ես դուրս տալիս: Ա-  
րի, պառկիր, դողացնում ես...

**ԹԻԱՖ** - (վախեցած հետ է քաշվում  
նրանից): Դու չես հանգատանա,  
մինչև կարիլ առ կարիլ չքամես իմ  
արյունը: (Մատոր երկինք պարզե-  
լով:) Նա՛ է դրել քեզ իմ կողքին: Դու  
Նրա՝ ուղարկածն ես: Դրա համար  
Էլ պոկ չես գալիս ինձնից, դրա հա-  
մար Էլ շարունակ քո կարիքն եմ  
զգում, չեմ կարողանում բաժանվել  
քեզնից, ատում եմ, ատում եմ ու սի-  
րում: Բավական է, որ բերան բա-  
ցեմ, դու արդեն զիտես, թե ինչ եմ  
ասելու: Գիսաստղի պես անհետա-  
նում ես, աղետի պես հայտնվում...  
Եվ միշտ՝ ճիշտ ժամանակին:

**ՄԻՍՈՆԱ** - Արի, պառկիր, քնարեկ  
կտամ...

**ԹԻԱՖ** - (անկենդան աչքերով, խոպոտ  
ձայնով): Չույր... Ի՞նչ է նշանակում  
«Չույր»: Այնքան նման ինձ, որ հա-  
ճախ մեզ շփոքում են: Գուցե դու՝  
ե՞ս եմ... Չույր... (Ծեշտակի նայում  
է Սիմոնային:) Ո՞վ ես դու...

**ՄԻՍՈՆԱ** - Խնդրում եմ, մի խելագար-  
վիր: Արի...

**ԹԻԱՖ** - Հեռո՛... Դու դատապարտ-  
ված ես ինձ հետ անցնելու իմ  
ճանապարհը: Սինչև վերջ: Դու  
դատապարտված ես քայլել իմ  
հետևից, որ Նրա հանձնարարութ-

յամբ իրես ինձ, վայր գցես, երբ  
հանկարծ ժախտ հայտնվի դեմքիս:  
Ու ես շարունակ պիտի ընկնեմ,  
ծնկներս ջարդեմ ու ճամփաս քայ-  
լեմ՝ քիցս արյուն չոռալով: Սինչև  
որ ժախտս դառնա ծուռ, խեղված,  
արնուու ու ցեխոտ... Սինչև որ  
շունչս փշեմ ու փովեմ գետնին՝  
մաշված, քրքրված տիկնիկի պես:  
(Դադար:) Որովհետև Նա այդպես  
է որոշել: Դու մեղավոր չես...

**ՄԻՍՈՆԱ** - Էդիտ...

**ԹԻԱՖ** - (ժեստով): Հեռո՛... Զմոտե-  
նաւ:

Պիաֆը դանդաղ քայլում է դեափի  
քեմի խորքը:

**ՄԻՍՈՆԱ** - Էդիտ...

Պիաֆն ուշաբավկում է: Մքուր-  
յուն:

## ԱՐԱՎԱԾ ՎԵՅՏՐՈՒՐԴ

Քեմն անփոփոխ է: Աղջկները  
հավաքում են այն ամենը, ինչ քե-  
րել էին նախորդ տեսարանում և  
նախապատրաստում են քեմը  
հաջորդ տեսարանի համար, որի  
ընթացքում քեմը հետզիետև դառ-  
նում է համատարած սպիտակ՝  
վերածվերով հիվանդասենյակի:

**ԺԱՆԵՏ** - Փոստը բերեցին: Նամակ-  
ների մի ամբողջ կույտ է գոյացել:  
Ի՞նչ անեմ... (Հավաքում է սենյա-  
կը:)

**ՄԻՍԻ** - Անօգուտ բան է, միևնույն է,  
նա կարդալ չի կարող: (Դուրս է  
տանում փուշիկները:)

**ԺԱՆԵՏ** - Ես կկարդամ նրա համար:

**ՋՐԻՍԻՆ** - Ի՞նչ ես խոսում: Այդ ցա-

վերի մեջ որ քեզ նամակ կարդային՝ բան կհասկանայի՞ր: Գլուխը վիրակապերի մեջ է: Նա կամ քնած է, կամ ոռուում է ցավից: Երբորդ վիճակ չկա:

**ԺԱՆԵՏ** - Նրան անընդհատ մորֆի են սրսկում, հա՞:

**ՔՐԻՍԻՆ** - Գիտե՞ս, ինչ կատարվեց ինձ հետ համերգի ժամանակ: Էղիտը դուրս եկավ քեմ, նրան ողջունեցին օվացիաներով: Նվազախումբն սկսեց նվազել, բայց նա կարծես ոչինչ չէր լսում: Քրտինքը հոսում էր դեմքի վրայով՝ մաքրելով գրիմը: Լուսարձակի լույսը նրա վրա էր, ու նա տանջվում էր այդ լույսից: Քար լուրջուն տիրեց: Նվազախումբը կրկին սկսեց նվազել, սկզբից... Էղիտն օրորվեց ու կառչեց միկրոֆոնից, որ չընկնի: Դահլիճը ծիծաղեց:

**ԺԱՆԵՏ** - Հետո՞... Նա ընկա՞վ քեմի վրա:

**ՔՐԻՍԻՆ** - Չէ: Ավելի լավ կլիներ, եթե ընկներ: Օրորվում էր միկրոֆոնի հետ միասին... Տեսե՞լ ես, ինչպես է տատանվում նավի կայճը ալեկոծուրյան ժամանակ: Դահլիճը ծիծաղում էր: Դե արի ու եղ սրիկաներին բացատրի, որ այդ կինը երկու ավտովքար է տարել ու ստամոքսի խոցի շորս ժամանոց վիրահատուրյուն... Էղիտը որոշել էր քեմ դուրս գալ առանց մորֆիի: Խայտառակ տապալում էր: Էղիտը հեկեկում էր: Ինչ-որ կցկոտը բառեր էր ասում... Մենք մոտ էինք նստած, կարողացա տարբերել միայն երկու քառ... «Մարսել... Մարսել...»:

**ՍԻՍԻ** - Հետաքրքիր է, ո՞ւմ նկատի ուներ: Սերդանի՞ն, թե՞ իր երեխային: Նրա երեխայի անունն էլ էր Մարսել: Մարսել էր, չէ՞:

**ԺԱՆԵՏ** - Ինչի՞ց է մահացել: (Երկու սպական են փոռում:)

**ՍԻՍԻ** - Զգիտեմ:

**ՔՐԻՍԻՆ** - Ես էլ չգիտեմ: Երևի սովոր: Մի անգամ փորձեցի խոսք բացել, բայց Սիմոնան հայացքով այնպես սաստեց, որ մեխանիկ տեղում ու սկվեցի: Հետո զգուշացրեց ինձ, որ Էղիտի մոտ երբեք այդ թեմայով չխստեմ: «Դա տաքու է», - ասաց:

**ԺԱՆԵՏ** - Մի անգամ, երբ նրան ասացի: «Ուզում եմ քեզ ամուսնացած ու երջանիկ տեսնել», նա պատախանեց. «Ես ամուսնացած եմ, Ժանետ, իմ ամուսինը հանդիսաւեսն է»:

**ՔՐԻՍԻՆ** - Հանդիսաւեսը նրան ավելի լավ է հասկանում, քան որևէ տղամարդ: Երբեք չեմ մոռանա, վիրահատուրյունից հետո էր... Բոլորը նրան աղաչում էին հրաժարվել համերգից: Նույնիսկ Սիմոնան: Բայց նա անդրդվելի էր: «Եթե չերգեմ՝ կսատկեմ», - ասաց ու գնաց քեմ: Անտիբիոտիկներից դեմքը ուռել էր, նման էր դիմակահանդեսի տիկնիկի, որ մի փոքր հիշեցնում էր Էղիտ Պիաֆին: Երգեց առաջին երգը, երկրորդը, երրորդը... Հետո քուլացավ: Որպեսզի չընկնի, հենվեց դաշնամուրին: Երկու մարդ էին կրվում նրա մեջ այդ համերգի ժամանակ՝ մեռնող կինը և համար երգչուիին: Դա իսկական

մենամարտ էր: Ամեն երգը նոր ռատունդ էր: Վեցերորդ երգի ժամանակ հանկարծ դահլիճը գոռաց. «Չհանձնվե՞ս, Էղիտ, չհանձնվե՞ս»: Էղիտը ժպտաց ու բղավեց. «Ես սիրում եմ ձեզ, դուք իմ կյանքն եք...»: Ու սկսեց երգել: Դա այնքան անկեղծ էր: Բեմի բանվորներից սկսած՝ բոլորն արտավում էին կուլիսներում: Էղիտը երգեց ութերորդ երգը: «Չհանձնվե՞ս, Էղիտ, չհանձնվե՞ս...», դարձյալ բղավեց դահլիճը: Ինչպես բռնցքամարտիկին են բղավում, ոգլորում: Բայց մենամարտի ելքը կանխորոշված էր: Հիվանդությունը հաղթեց... Իններորդ երգի ժամանակ նա ընկավ՝ նոկառու: Ընկավ ու մնաց ընկած: Շշովկ չլսվեց դահլիճից: Դահլիճը դատարկվեց քար լուսիրյան մեջ: Լուս ու անխոս՝ հանդիսատեսը ցրվեց: Բոլորը գլխահակ էին: Նրանք իրենց հետ տանում էին այդ կնոջ կավիծն ու ցավը: Մի կնոջ, որ փորձում էր մինչև վերջին կարիլը քամել իրեն ու տալ հանդիսատեսին ունեցած ամենաքանչ քամը՝ կյանքն ու իր երգերը:

**Լության մեջ պայքում է Պիաֆի ճիշը:** Սրբնաց ներս են բերում ակներով մահճակալը, որի վրա ցավերից գալարկում է Պիաֆի մարմինը: Նա ոռնում է վիրավոր գագանի նման: Ներս է նտնում Հեֆկեն, հետևից՝ Սիմոնան: Երկուսն էլ սպիտակ խալաքով են: Պիաֆը վեր է թռչում տեղից, փորձում է փախչել: Երկու բժիշկ քռնում են նրան, ուժով պառկեցնում մահճակալին:

**ՀԵՖԿԵ - Կապեք:** Կապեք նրան:

**ՊԻԱՖ - Ֆաշլիստ...** Փաշխատներ... բաց բողեք ինձ, բողեք... (Քրիստինը կապում է նրա ձեռքերն ու ուսքերը: Տղամարդիկ ուժով պահում են Պիաֆին, որն անմարդկային աղաղակներ է արձակում:) Թողեք... վայրենիներ: Թողեք... Քրիստին, օգնիր ինձ... Խնդրում եմ... Սիմոնա... Բաց բողեք ինձ... Սիմոնա...

**Պիաֆը շարունակում է գալարվել:**

**ՀԵՖԿԵ - Քնարեր սրսկեք:** (Սիմոնային.) Սի նայեք, այս կողմ եկեք: Նրան կրկնակի դոզա կսրսկեն, ու նա կընի: Եկեք այս կողմ:

**ՊԻԱՖ - Թողեք... Թողեք ինձ... Սիմոնա...**

**Պիաֆին սրսկում են:**

**ՊԻԱՖ - Տուն տար ինձ, Սիմոնա, աղաշում եմ... Սիմոնա... անխիղճներ... Ել չեմ դիմանում... Տեր Աստված... (Պիաֆի ճայնը մարտում է:)**

**ՀԵՖԿԵ - (Աերկաներին):** Դուրս եկեք... (Բռնում է Պիաֆի զակերակը, լուսում է:) Ամեն ինչ կարգին է: Զեր քույրը միայն մի առողջ օրգան ունի՝ սիրտը: Ուզում եք մնալ նրա կողքին:

**ՍԻՄՈՆԱ - (կուցած Պիաֆի վրա):** Սա Էղիտը չէ: Չէ... Սա Էղիտը չէ:

**ՀԵՖԿԵ -** Ես ձեզ նախազգուշացրել էի: Դուք պետք է պատրաստ լինեիք: Թմրադեղերի ծարավը հատկանիս սրվում է երրորդ, վեցերորդ, տասներկուերրորդ և տասնութերորդ ամիսներին: Զեր բախտը չի բերել: Դուք եկաք «առանց ասեղի» օքը:

**ՄԻՍՈՆԱ - Սարսափելի է:**

**ՀԵՖԿԵ - Բոլորն էլ անցնում են այս ճանապարհը:** Պետք է դիմանալ, եթե ուզում ես բուժվել:

**ՄԻՍՈՆԱ - Նա կարծես անշունչ մսի կտոր լինի:** Սա Էդիտը չ...

**ՀԵՖԿԵ - Նարկոմանիան, մադամ, դժոխային տոն է:** Դա սատանայական կարուսել է, որի արագործունն ավելանում է օրըստօրե: Պտտվում է ավելի ու ավելի արագ... այնքան, մինչև շորջը ամեն ինչ սկսում է պտտվել, իրերը խառնվում են իրար, սվաղվում իրար մեջ: Ծխախոտ ուզո՞ւմ եք:

**ՄԻՍՈՆԱ - Ոչ, շնորհակալ եմ:**

**ՀԵՖԿԵ - Նստեք:** Համեցեք...

**ՄԻՍՈՆԱ - Ձեր լեսքն ինձ ծանոք է:** Նախկինում չե՞նք հանդիպել: Երեկվանից տաճքում եմ, չեմ կարողանում իշշել:

**ՀԵՖԿԵ - Մի տաճքվեք:** Տարիներ առաջ երկու գեստավոյական եկան մադամ Պիաֆի մոտ: Հիշեցի՞ք:

**ՄԻՍՈՆԱ - Այդ դր՞ւ եք:**

**ՀԵՖԿԵ - Այո:** Մայրս Փրանտիի է: Պատերազմից հետո մնացի Ֆրանսիայում: Դեռ այն ժամանակ օգնում էի Դիմադրության շարժմանը: Մասնագիտությամբ բժիշկ էի:

**ՄԻՍՈՆԱ - Ձեզ հետ քննախույզ, ծակող աչքերով մի տղամարդ էլ կար, որին հետագայում հաճախ էր հիշում Էդիտը:** Նա մեծ տպավորություն էր բողել Էդիտի վրա:

**ՀԵՖԿԵ - Հա, Շվարցկոֆը:** Ստույգ տեղեկություն չունեմ, մի անգամ, շատ պատահական լսեցի, որ

տարվել է բուդրիզմով ու մեկնել արևելք... Հայտնի չէ, թե՝ ուր: Վերջերս էլ իմացա, որ մի քանի տարի առաջ ինքնասպան է եղել Հնողկատանում, իրեն նետելով Արջունայի Սուրբ անիվի տակ: Կրոնական ինչ-որ տոնի ժամանակ: Զգիտեմ...

**ՄԻՍՈՆԱ - (Այդելով քնած Պիաֆին):** Ե՞րբ կարբնանա:

**ՀԵՖԿԵ - Սովորական մահկանացուներն այդ դոզայի տակ քնում են մի քանի ժամ:** Բայց մադամ Պիաֆին դա չի վերաբերում: Կես ժամից:

**ՄԻՍՈՆԱ - Իսկ կարուսելը մի օր կանգնելո՞ւ է:** Հույս կա՞:

**ՀԵՖԿԵ - Իհարկե:** Նա պտտացնում է, բարձրացնում վեր, իջնում, նորից բարձրացնում ու բափով իջեցնում, նետում է անդունդը: Այդ օրն էլ հենց կանգ է առնում: Ցավալին այն է, որ այդ օրը սովորաբար հանրնկնում է մահկան օրվա հետ:

**ՄԻՍՈՆԱ - Սարսափելի է:** Սարսափելի է:

**ՀԵՖԿԵ - Դրա համար էլ մեր հիվանդներին խիստ հսկողության տակ ենք պահում:** Բոլոր այցելություններն արգելված են: Ձեզ բացառության կարգով քոյլ տվեցի:

**ՄԻՍՈՆԱ - Շնորհակալ եմ:**

**ՀԵՖԿԵ - Հիմա Պիաֆի համար ամենածանր շաբաթն է սկսվում:** Միայն թե դիմանա: Եթե նույնիսկ մի ասեղ ընդունեց՝ տասնութ ամիսների մեր աշխատանքը ապարդյուն կանցնի: Մեր աշխատանքը՝ գրողի ծոցը, ափսոս են նրա տառապանքները: Աշխատեք սատար լինել նրան, կողքին եղեք, հսկողության տակ պահեք:

**ՄԻՄՈՆԱ - (զլխով է անում):** Հասկանում եմ:

**ՀԵՖԿԵ - (դուրս զալով):** Ափսոս է:

Միմոնան մոտենում է Էղիսին, երկար նայում է, հետո սկսում է գորչորեն արձակել նրա կապերը: Ըոյում է Էղիսի գլուխը: Կռանում է, հաճրուրում ճակատը: Պիաֆը դանդաղորեն արքնանում է:

**ՊԻԱՖ - (քնասու):** Մոմոնա...

**ՄԻՄՈՆԱ -** Ես եմ, Էղիս:

**Դադար:** Նայում են իրար:

**ՊԻԱՖ -** Մոմոնա, ինձ մենակ շրողնես:

**ՄԻՄՈՆԱ -** Չեմ թողնի, Էղիս, չեմ թողնի:

**ՊԻԱՖ - (նվաղած ձայնով):** Մոմոնա, ես վախենում եմ... Հիմա նորից կսկսվի: Տեր Աստված, ես ինչ արի ես իմ կյանքի հետ... (Տնրում է:) Մոմոնա, սկսում է... Կանչիր դրանց, կանչիր, աղաջում եմ... Թող գոնե մի ասեղ... (Տնրում էր ուժեղանում են: Գլուխը թաղում է բարձի մեջ: Դիմադրում է ցավին:) Ել ուժ չունեմ, ես չեմ դիմանա... (Շըռ է:) Օգնիր ինձ, Մոմոնա...

**ՄԻՄՈՆԱ - Կամաց:** Զբղավես... Շը՞շ... (Նայում է շուրջը, գրպանից հանում է լիքը սրակիչը:) Վերցրու... Էղիս: (Պիաֆը ապշահար, աչքերին շհավատարով նայում է նրան:) Դե, արագացրու... հիմա ներս կգան, կտեսնեն...

**Պիաֆը հափշտակում է, շրջվում է մեջքով դեախի դահլիճը և ներարկում:** Սրակիչը սահում է նրա ձեռքից, ընկնում ցած: Միմոնան կուանում է, վերցնում, արագ

թաքցնում է: Նայում է շուրջը: Մոտենում է Պիաֆին, գրկում թիկունքից: Պիաֆը թեթևացած շունչ է քաշում:

**ՊԻԱՖ -** Ծնորհակալ եմ, Մոմոնա:

**Ջույրերը գրկախառնվում են:**

**ՊԻԱՖ -** Ախ, Մոմոնա, չես պատկերացնի, թե ինչ ցավեր են: Ոնց որ գլխիդ մեջ լիքը սառույցի մանր, սուր կտորներ լինեն: Դրանք բոլոր կողմերից խրվում են ուղեղիդ մեջ, ծակում, ծակծկում... Ծակում, ծակում, ծակում... Բայց ամենամեծ ցավը գիտե՞՞ս որն է, Մոմոնա: Ամո՞թը: Դա ամենից ուժեղն է ծակում:

**ՄԻՄՈՆԱ -** Ոչ մի ամոթ բան չկա:

**ՊԻԱՖ -** Ի՞նչ անեմ, Մոմոնա: Ինձ ոչ մի բուժում արդեն չի օգնի:

**ՄԻՄՈՆԱ -** Միայն չփորձես նորից ինքնասպան լինել:

**ՊԻԱՖ -** Ինքնասպանությո՞ւն... Չէ: Այլս երբեք: Ես Նրան... (Մատը երկինք պարզելով:) Ես Նրան այդպիսի նվեր չեմ անի: (Նայում է վեր:) Լսո՞ւմ ես, ապրելու եմ: Ի հեծուկս քեզ՝ ապրելու եմ: Ինչ էլ բերես գլխիս, ինչ էլ անես՝ ապրելու եմ: Արյուն քբելով, ցավերից կծկված, գալարվելով, աղերի կուտակումով, սայիերով, ծոված, կորացած, դեֆորմացված ուկրներով... Ապրելու եմ: (Բղավում է:) Լսո՞ւմ ես, ապրելու եմ, չեմ մեռնելու: Քեզ այդպիսի նվեր չեմ անելու: Ուզածդ չի լինելու, ապրելու եմ: Մինչև վերջ դիմանալու եմ: Ինչքան ուզում ես, բզկտիր ինձ՝ դիմանալու եմ, չեմ կոտրվելու, ապրելու եմ:

Երգելու եմ: Որ ձայնս էլ կտրվի՝ երգելու եմ: Որ կոկորդս էլ կտրես՝ երգելու եմ: Որ վերջին շունչս էլ առնես՝ երգելու եմ: (*Ավելի ուժզիմ:*) Ապրելու եմ... Մեռնելուց հետո էլ եմ ապրելու: (*Ավելի ուժզիմ:*) Ապրելու եմ... Երգելու եմ...

**Բեմը հետզիեսն մքնում է: Հնչում է Պիաֆի երգը:**

### ԱՐԱՐՎԱԾ ՅՈԹԵՐՈՐԴ

**Անցումային տեսարան:** Ներս է ընկնում լրազրավաճառ տղան՝ թերթերը ձեռքում բափահարելով:

**ԼՐԱԳՐԱՎԱԾԱՌ** - Գներք թերթեր, պարոնայք... Սենսացիա՝, սենսացիա՝... Ուսւներք մարդ են քոցրել տիեզերք... սենսացիա՝... Ուսւներք մարդ են քոցրել տիեզերք... Գնեցեք թերթերին...

**Բեմի մի կողմից ներս են մտնում Նավաստին, Ծխամործով մարդը, թերթ են գնում, դուրս գալիս մյուս կողմից:**

**ԼՐԱԳՐԱՎԱԾԱՌ** - Սենսացիա՝, սենսացիա՝... Էղիսու Պիաֆը հիվանդանոցում է: Գնեցեք թերթերը... Պիաֆի մոտ հայտնաբերել են քաղցկեղ... Պիաֆի մոտ հայտնաբերել են քաղցկեղ... Գնեցեք թերթեր...

**Իրար հետևից մտնում, թերթ գնում ու դուրս են գալիս խմբակային տեսարանների մասնակիցները:**

**Մքություն: Հիվանդանոց: Սիսին Պիաֆի ձեռքից քոնած՝ սովորեցնում է քայլել:**

**ՍԻՍԻ** - Ազ ոտքը առաջ: Կեցցես, Է-լիս... Հիմա ձախը: Լավ է: Երեք քայլ էլ... Մեկ, երկու, երեք: Կեցցես... Լավ, այսօր հերիք է:

**ՊԻԱՖ** - Չէ: Եվս երկու քայլ: Մեկ... (*Դժվարությամբ առաջ է տանում ոտքերը:*) Երկու... Սիսի, ճիշտն ասա, ես ավերակ եմ, չէ... Շա՞տ եմ սարսափելի:

**ՍԻՍԻ** - Սի քիչ դեմքդ է ուռած: Անտիրություններից է:

**ՊԻԱՖ** - Հեքիաքները մի պատմիր, ես շատ լավ գիտեմ, թե ինչի եմ նման: Ծոճարողը թեր ինձ մոտ... (*Սիսին մոտ է թերում ծոճարողը:*) Եղ մետաստագները ծաղիկի նման եմ պատկերացնում: Սկզբում սերմն է ընկնում մեջդ, ու դու չես տեսնում: Հետո ծիլ է տալիս, ծաղկում, ու թերթիկները տարածվում են տարթեր կողմերով, ավելի աճում, զնալով մեծանում... Հետաքրքիր է, ինչքա՞ն կդիմանամ:

**ՍԻՍԻ** - (*ծածկոց է զցում նրա ոտքերին:*) Փառք տվեր Աստծուն, որ դեռ ողջ եք: Վերջին տասը տարվա ընթացքում քանի<sup>շ</sup> վիրահատություն եք տարել:

**ՊԻԱՖ** - Յոր:

**ՍԻՍԻ** - Ու յորն էլ՝ ծանր:

**ՊԻԱՖ** - Դե, ինձ մոտ թեքն քան չի նում: Բացի քաշից, ոչ մի թեքն քան չունեցա: (*Ծիծաղում է:*)

**ՍԻՍԻ** - Չորս վրար, յոր վիրահատություն, թմրադեղերի բուժման չորս կուրս՝ երկար ամիսներով, ինքնասպանության երկու փորձ...

**ՊԻԱՖ** - Հոգեբուժարանը մոռացար: Սի անգամ էլ՝ գժանց:

**ՄԻՍԻ** - Ձեր սխրագործությունների ցուցակն անվերջանալի է:

**ՊԻՍՖ** - Թքա՞ծ: Կարևորն այն է, որ դեռ երգում եմ: (*Նայելով վերև, դիմելով երկարիս:*) Ոչ միանգամից տանում ես, ոչ բողնում ես՝ հանգիստ շունչ քաշեմ: Ուզում ես տեսնել՝ ինչքան կդիմանա՞մ: Շատ հետաքրքրասերն ես, Տեր Աստված (*Քրքջում է: Սիսիմ կաք է խմեցնում գդալով:*) Ֆո՞ւ... Կյանքում կաք չեմ խմել: Մորս կաքի համն էլ չեմ տեսել: Ծնել է ու գցել փողոց: Հայրս էլ տարավ բորդել: Բորդելում կաքի փոխարեն զիմի են տվել ինձ: Դրան էլ սովորել եմ: Լավ, բավական է, էլ չեմ ուզում...

**ՄԻՍԻ** - Բժիշկն ասաց, որ մի բաժակը պարտադիր է: Խսի՞ր:

**ՊԻՍՖ** - Ֆո՞ւ... Ոնց որ նորից գժանցում լինեմ: Չոռով ուտեցնում եք, զոռով քնեցնում, զոռով խմեցնում...

**ՄԻՍԻ** - Քիչ մնաց... Վերջին գդալն է:

**ՊԻՍՖ** - Սիսի, միակ բանը, որից խկապես վախեցել եմ ամբողջ կյանքում՝ խելագարվելն է: Որպեսզի չխելագարվեմ, պիտի նորից սիրեմ: Պատկերացնո՞ւմ ես, Սիսի... Ես այնքան ապուշ եմ, որ դեռ հավատում եմ: Հավատում եմ, որ Աւերը, խկական սերը մի օր կայցելի ինձ: Միայն, ափսոս, որ նա կզայն ժամանակ, երբ արդեն սիրո համար պիտանի չեմ լինի:

**ՄԻՍԻ** - Ես էլ եմ հավատում:

**ՊԻՍՖ** - (*Երեխայի պես:*) Ծի՞շտ... Սիսի, ես շատ սերեք եմ ունեցել, բայց... (*Դադար:*) Բայց: (*Մտածում է:*) Թեև ոչնչի համար չեմ ափ-

սոսում: Չէ, Սիսի, ոչ մի բանի համար չեմ ափսոսում: Ես կեղտոտվել եմ հաճախ, լինել, նորից բարձրացել: Ես սիրել եմ, լրել եմ, հարթել եմ, փխսել եմ, խրվել եմ ճահճի մեջ... Երգել եմ... Չէ, ոչինչ, ոչինչ չեմ ափսոսում: Ինչ որ արել եմ՝ տեր եմ: Իմն է: Ոչինչ չեմ ափսոսում... Լսիր, ինչ լավ վերնագիր կարող է լինել երգի համար: Չէ՞ Սիսի... «Ոչ, ոչինչ չեմ ափսոսում»: Հը՞ Սիսի...

**ՄԻՍԻ** - Իհարկե, մաղամ Պիաֆ:

**ՊԻՍՖ** - Ինչ «մարդամ», Սիսի: Ասա՞ Եղիս: Ես ձեզնից մեկն եմ: Դոր չերգող պիաֆներն եք, ես երգողն եմ: Մենք նույնն ենք:

**ՋՐԻՄՏԻՆ** - Քո երգը մեզ նման աղջկենի հեկեկոցն էր Փարիզի վրա: Դու ստիպեցիր, որ մեզ համար արտասվեն աշխարհի հարուստները: Երկու հազար յոթ հարյուր հանդիսատես կաք: Ու նրանց մեջ՝ Զերչիլը, Էյգենհաուերը, Իրանի շահն ու շահուիին, Մարոկոյի թագավորը, Իսպանիայի թագավորը, արքայադատերը ու լորդեր, կոմսեր ու իշխաններ... Աղամանդների մեջ շողշողացող կանայք՝ Ավա Գարդները, Սոֆի Լորենը, Օդրի Հերբորնը... Դու դեռ չեիր սկսել երգել, դեռ ձայն չեիր հանել, դեռ չեիր մոտեցել միկրոֆոնին, իսկ նրանք արդեն ծափահարում էին ու բղավում՝ «քռավոն, բռավոն, բռավոն»: Նրանք ծափահարում էին ոչ թե քո երգելուն, այլ քեզ: Այդ պահին նրանցից յուրաքանչյուրը երանի էր տալիս քեզ, ո-

բովիեսու նրանցից ոչ ոք երբեւ չի արժանացել այդպիսի ծափերի: Իսկ ինձ թվում էր, թե նրանք երանի են տախս ինձ: Այդ օրը ես երջանիկ էի:

**ԺԱՆԵՏ** - Իսկ ես... իսկ ես երջանիկ էի այն օրը... այնքան երջանիկ էի: Այն օրը, երբ դու վիրահատությունից հետո աշքերդ բացեցիր: Ոչ ոք հույս չուներ, ոչ ոք, Էղիտ: Ես մտքիս բան էի պահել, չգիտեմ, թե ինչ, բայց մտքիս մեջ ասացի. «Եթե նա կենդանի մնա, ուրեմն կլինի»: Ի՞նչը... Զգիտեմ: Ու երբ աշքերդ բացեցիր, ես ասացի. «Շնորհակալ եմ, Էղիտ»: Ինձ թվաց, որ ես ու դու միասին հաղթեցինք: Ո՞ւմ... չգիտեմ: Բայց հաղթեցինք:

#### Պիաֆը գրկում է Ժանետին:

**ՊԻԱՖ** - Իմ փոքրիկ Ժանետ... Իմ քշված, մոլորված ճնճղուկ: Իսկ դու, Քրիստին, մեր սրափ, խելոք ընկերուիի:

**ՔՐԻՍԻՆ** - Ես երջանիկ չեմ եղել: Ոչ մի օր: Ես երջանիկ կլինեմ այն օրը, երբ դու կհանդիպես մի տղամարդու, որը կսիրի քեզ այն սիրով, որին դու արժանի ես: Դա ինձ հույս կտա, որ այդպիսի սեր հնարավոր է: Հնարավոր է նաև իմ կյանքում:

**ՊԻԱՖ** - (ասես զառանցում է): Սի գեղեցիկ օր ինձ մոտ կգա մի գեղեցիկ երիտասարդ՝ Արևի որդին: Նա կսիրի ինձ արտասովոր, մեծ սիրով: Այնպիսի սիրով, ինչպիսին լինում է միայն կինոյում: Ու բոլորը կզարմանան: Կասեն. «Ինչպե՞ս

կարելի է սիրել այդ պառավին, այդ ավերակին»: Իսկ նա կպատասխանի. «Մինույն է, սիրում եմ»: Կասեն. «Բայց նրա զիսին մազ չկա, նրա մատները պիտի ուժով բացես, որ պատառաքաղը ձեռքի մեջ դնես: Նրա մարմինը կտրտված է, սպիներով, մետաստազներով ծածկված... Նա խրտվիլակ է»: Իսկ Արևի որդին կպատասխանի. «Մինույն է, սիրում եմ»: Նրան կասեն. «Բայց նա հաշմանդամ է, քշված, ողորմելի: Նա արատավոր է, մեռքի մեջ է ապրել, փող չունի: Նա հիվանդ է, շուտով կմեռնի...»: Իսկ Արևի որդին կպատասխանի. «Մինույն է, սիրում եմ: Եվ ամուսնանում եմ»: Ու երբ նա խնդրի իմ ձեռքը... Փրկած երակներով, աղերի կուտակումից փայտացած իմ ձեռքը, ես կմտածեմ, որ իրավունք չունեմ: Ու պետք է մերժեմ, որ ես չեմ վաստակել այդ երջանկությունը, որ արժանի չեմ... դա էգոիզմ է... Բայց մերժելու ուժ չեմ գտնի իմ մեջ: Ես կասեն. «Այո, այո, այո»: Ու մենք կերգենք: Միասին կերգենք սիրո հիմնը: Ու այդ երգը կինի եկեղեցու դողանջների պես... (Դադար: Ժանետը փղձկում է, երեսը փակում ձեռքերով, դուրս է գալիս:) Ժողովինի, Տեր Աստված, քող լինի: Տուր ինձ մի շաբաթվա... շատ չեմ ուզում... մի շաբաթվա երջանկություն: Հետո, մի շաբաթից հետո առ հոգիս: Ես համաձայն եմ: (Խաչակնքում է:) Ես համաձայն եմ:

**Լուություն:** Ներս է մտնում Միշելլ:

**ՄԻԾԵԼ** - Էղիս... Էղիս, ձեր քույրն է եկել: Ինչո՞ր տղա էլ կա հետք:

**Քոլորը պահվում են:** Ապասում են Պիաֆի պատասխանին:

**ՊԻԱՖ** - Սիմոնա՞ն...

**ՄԻԾԵԼ** - Ապասում են ներքևում, կանչե՞մ:

**ՊԻԱՖ** - Սիմոնա՞ն...

**ՄԻԾԵԼ** - Հա՛: Ուզում է տեսնել ձեզ: ճամպուկով է:

**ՊԻԱՖ** - Եկել է... Բախում է դուռս... Ի՞նչն է բախում դուռս... Հիմա ի՞նչն է բախում դուռս:

**ՄԻԾԵԼ** - Ի՞նչ պատասխանեն: Կանչե՞մ:

**ՋՐԻՍԻՆ** - Ասա՝ թժիշկն արգելել է տեսակցությունները:

**ՄԻԾԵԼ** - Բայց նա երկար ճանապարհ է կտրել: Դրսում ուժեղ քամի է:

**ՊԻԱՖ** - Տար իմ տուն, փող տուր: Ասա, քող մի քիչ էլ սպասի: (*Դադար:*) Ես դեռ չեմ ուզում մեռնել: (*Միշելլ դուրս է զալիս:* Հետևից, հանկարծ, բղավում է:) Միշել... (*Միշելլ կանգ է առնում:* Անհանգիստ): Պինդ փակիր պատուհանները: Ինչո՞ր տեղից փշում է... Երգս... Երգս տվեր... (*Ջրիստինը տալիս է երգի տերստը:*) Ես խարոյիկ կվառեմ իմ հիշողություններից... Իմ վշտերս, ուրախություններս այլևս պետք չեն ինձ... (*Սեղմում է կրծքին երգի տերստը:* Գնացեք, ուզում եմ մենակ մնալ իմ երգի հետ...)

**Լավում է քամու սուլոցը:**

**ՄԻՍԻ** - Խսկապես որ... քամի է: Ե՞ր սկսվեց:

**ՊԻԱՖ** - Ծածկեք բոլոր փեղկերը... Դուռը պինդ փակեք: Ամո՞ր, ամո՞ր ծածկեք...

**Զարագոյժ քամին ուժգնանում է:** Սպիտակ վարագույրները ծածանվում են բեմում:

**ՋՐԻՍԻՆ** - Սիայն թե նորից կոմայի մեջ չընկնի: (*Ծածկոցը զցում է Պիաֆի վրա:*) Երկրորդ ծածկոցը բեր... (*Սիսին հավաքում է սավանները:*) Դա՞ էլ բեր, դա՞ էլ...

**Ներս է մտնում Միշելը:**

**ՄԻԾԵԼ** - Էղիս, պարզվեց, այդ երիտասարդը Սիմոնայի հետ չէ: Ես կարծեցի, նրանք միասին են, բայց տղան քեզ մոտ է եկել: Ասում է՝ Կլողի ընկերն է, ազգությամբ՝ հույն: Իր ասելով, դու պիսի որ հիշես նրան:

**ՊԻԱՖ** - Ի՞նչ հույն... Չեմ հիշում: Սիսի, մի ծածկոց էլ զցիր վրաս:

**ՄԻԾԵԼ** - Դու նրան զիտես, Կլողի ընկերն է: Թեռֆանո... կարծեմ՝ Լամբուկաս: Հա՛:

**ՊԻԱՖ** - Ի՞նչ թեռֆանո, ի՞նչ Լամբուկաս: Ոչ մեկի հավեսր չունեմ, ես մրսում եմ:

**Քամին մեղմանում է:**

**ՄԻԾԵԼ** - Լավ, այդպես էլ կիաղորդեմ: (*Դուրս է զալիս:*)

**ՋՐԻՍԻՆ** - Էղիս, զիտե՞ս՝ ինչ է նշանակում թեռֆան:

**ՊԻԱՖ** - Ի՞նչ:

**ՋՐԻՍԻՆ** - Հոմարեն թեռֆանո նշանակում է Արևի որդի:

**ՊԻԱՖ** - Թեռ - Աստված, ֆան - որդի... Թեռ... Տեր Աստված, ի՞նչ է լինելու: Նորի՞ց...

**ՋՐԻՍԻՆ** - Վախեցա՞ր:

**ՊԻԱՖ** - Հա, վախսենում եմ: Չեմ ուղարկում: Իսկ եթե չստացվի՞, եթե...

**ՄԻԾԵԼ** - Իսկ եթե ստացվի՞:

**ՊԻԱՖ** - Ուրեմն, մի շաբաթից կմեռնեմ: (Դադար:) Ինձ մենակ բռղեք: (Բոլորը դուրս են գալիս:) Թեոփան... Թեո... Չէ, չէ, մոռացիր, Էղիս: Սա դու ես, սա՝ քո նոր երգը: Ակսցինք... «Ես խարոյկ եմ վառել իմ հիշողություններից... Իմ վշտերս, ուրախություններս այլևս պետք չեն ինձ, որովհետև իմ կյանքը, իմ ապրելը... այսօր... սկսվում է քեզնից, Թեո...» Ի՞նչ Թեո: Ոչ մի Թեո չկա: Սա դու ես, սա՝ քո երգը: Երգից բացի ուրիշ ոչինչ չկա: Դե, սկսիր, Էղիս: Դե, Էղիս... «Ոչ, ոչինչ, ոչինչ չեմ ափսոսն»: Դե, քեզ տեսնեմ, Էղիս...

Հնչում է Պիաֆի «Ոչինչ չեմ ափսոսն» երգը: Բեմը հետզհետև մթնում է:

### ԱՐԱՐՎԱԾ ՈՒԹԵՐՈՌԴ

Բեմն աստիճանաբար լուսավորվում է: Պիաֆի երգից հետո դահլիճում տարածվում է ճայնապնակի միալար խզզոցը: Լոռություն է: ճոճարորի մեջ Պիաֆի փոխարեն Սիմոնան է՝ ծերացած, սպիտակած: Նա քնած է: Խզզոցը շարունակվում է: Զգուշորեն, աշխատելով չարքնացնել նրան, ներս է մտնում Սիմոն, անշատում է ճայնարկիչը, ճայնասկավառակը վերցնում: Խզզոցը կտրվում է:

**ՍԻՄՈՆԱ** - (արթնանալով): Սիսի՞:

**ՍԻՄՈՆ** - Հա, Սիմոնա, ես եմ: Երգը վաղուց վերջացել է:

**ՍԻՄՈՆԱ** - Երազ տեսա... Ո՞ւր է Սի- շելք:

**ՍԻՄՈՆ** - Գնաց քնելու: Ուրքի վրա կանգնել չեր կարողանում: Ինչքան ես ծխել... (Դատարկում է մոյսրամանը:)

**ՍԻՄՈՆԱ** - Կանչիր, քող գա:

**ՍԻՄՈՆ** - Ներիր, բայց չեմ կարող: (Պատրաստվում է դուրս գալ:)

**ՍԻՄՈՆԱ** - Սպասիր... Ի՞նչ է նշանակում՝ «չեմ կարող»: Արթնացրու, ասում եմ:

**ՍԻՄՈՆ** - «Չեմ կարող» նշանակում է՝ չեմ ուզում: Քո այդ գիրքը (ցույց տալով կոկորդը), այս, այստեղ է նատած: Դու դիտավորյալ ես գողանում նրան ինձնից:

**ՍԻՄՈՆԱ** - Չեմ հասկանում: Երդվում եմ՝ չեմ հասկանում:

**ՍԻՄՈՆ** - Ի՞նչը չես հասկանում: Գերազանց հասկանում ես ամեն ինչ: Չեր մի՛ բավիր...

**ՍԻՄՈՆԱ** - Ո՞ւմ մասին է խոսքը: Սիշելի՞... Քո և նրա միջև ինչ-որ բա՞ն կա:

**ՍԻՄՈՆ** - Ես երեխա եմ ունենալու նրանից, մադամ: Ես սիրում եմ նրան, իսկ դու օրվա մեջ մի ժամ ել չես բողնում, որ ինձ հետ լինի: Դու դիտավորյալ ես անում, դու...

**ՍԻՄՈՆԱ** - Երեխա՞... Սիշելի՞ց... Երեխա՞... Գրողը տաճի:

**ՍԻՄՈՆ** - Գրողը քեզ տաճի... (Հուզվում է:) Ե՛ր եմ վերջապես ազատվելու քեզնից: Այստեղ միայն Սիշելի հանար եմ մնում: Անընդհատ ծխում եք... ծուխը տանել չեմ կարողանում: Չեր դեղերի հոտից բռակն մեկ զուգարան եմ վազում, սիրտս

ես տալիս, զիշերներն անքում լուսացնում ձեզ հետ, կես ժամը մեկ սուրճ սարքում...

**ՍԻՍՈՆԱ** - Սիսի՞... Արի համբուրեմ քեզ: Ինչո՞ւ եք թաքցրել ինձնից այսրան ժամանակ:

**ՍԻՍԻ** - Սիշելը չգիտի: Հանկարծ չասես նրան:

**ՍԻՍՈՆԱ** - Զգիտի՞... ինչո՞ւ: Դա երջանկություն է, դու հայր ես դարձնում նրան: Նա պիտի մոմ վառի, որ քեզ նման աղջիկ է գտել:

**ՍԻՍԻ** - Ինձ նման աղջի՞կ... Իսկ ո՞վ եմ ես, իմ անցյալը դաշված է վրաս, մաքրել չի լինի: Նա երբեք չի ների ինձ, երբեք չի մոռանա, երբեք չի ամուսնանա:

**ՍԻՍՈՆԱ** - Միշել...

**ՍԻՍԻ** - Չհամարձակվե՞ս: Եքե նա իմանա երեխայի մասին, կրողնի ինձ: Չհամարձակվես... Չի էլ հավատա, որ իրենն է:

**ՍԻՍՈՆԱ** - Կանչիր, ես կիսում հետոր: Թող փորձի շհավատալ: Ես նրան...

**ՍԻՍԻ** - Եքե հավատաց, անմիջապես փող կտա, կուղարկի թժկի: Իսկ ես ուզում եմ մայր դառնալ, հասկացա՞ր: Չխառնվե՞ս:

**ՍԻՍՈՆԱ** - Եքե նա սիրում է քեզ...

**ՍԻՍԻ** - Նա կենակցո՞ւմ է ինձ հետ: Այդքանի համար էլ շնորհակալ եմ բախտից: Ես չեմ կարող առանց Սիշելի, չեմ կարող... (Նորից հողվում է:)

**ՍԻՍՈՆԱ** - Մոտ արի: Ուզում եմ գրկել քեզ: Արի՛: (Գրկում է Սիսիին:) Ինչ-քա՞ն կուրախանար Եղիտը: Եքե տղա ծնվեց, անունը կղնես Մար-

սել: Խնդրում եմ: Եքե աղջիկ ծնվեց՝ Եղիտ:

**ՍԻՍԻ** - (Կրկնում է): Եղիտ:

**ՍԻՍՈՆԱ** - (Հյուրում է Սիսիի գլուխը):

Ես մի քիչ փող եմ կուտակել: Գիրքը լույս կտեսնի՝ էլի փող կգա: Քիչ փող չի: Կրողնեմ քեզ ու երեխայիդ: Կապրեր... Իսկ Սիմոնան կմեռնի շուտով:

**ՍԻՍԻ** - Սի ասա, խնդրում եմ, ես հոգնել եմ կորցնելուց: Բոլորը գնում են... Եղիտը, հետո ժամանուր, հետո քրիստինը...

**ՍԻՍՈՆԱ** - Մարդիկ մեռնում են, Սիսի: Եղիտը կանչում էր ինձ: Երկի այնտեղ էլ պետք եմ նրան: Սիայն քեզ քիչ պիտի դիմանա, որ գործու կիսատ չքողնեմ: Ես պիտի ավարտեմ Պիաֆի մասին գիրքը: Գնա, Սիսի, կանչիր Սիշելին: Ես քիչ ժամանակ ունեմ: (Սիսին դուրս է գալիս: Սենակ մնալով): Երեխա... Եղիտ: Եվս մի քշվառ:

Ներս է մնանամ Սիշելը՝ քնատ:

**ՍԻԾԵԼ** - Ի՞նչ է... Ժամը քանի՞սն է:

**ՍԻՍՈՆԱ** - Նստիր: Բեր թղթերը...

**ՍԻԶԵԼ** - Սիմոնա, ի վիճակի չեմ: Կոպերս փակվում են:

**ՍԻՍՈՆԱ** - Ժամանակ չկա: Վերցրու գրիչը:

**ՍԻԶԵԼ** - Սիմոնա, խնդրում եմ...

**ՍԻՍՈՆԱ** - Հանուն Եղիտի՝ նստիր:

(Սիշելը դմկամ վերցնում է թղթերն ու գրիչը, մասում է Սիմոնայի դիմաց:) Կարդա... Որտե՞ղ էինք կանգառել: Վերջին էջը...

**ՍԻԶԵԼ** - (Կարդում է): Հոռնն արգելեց հուղարկավորման ժամերգությունը, հայտարարելով, որ «Պիաֆը ապրել է մեղքի մեջ»:

**ՍԻՄՈՆԱ - (բմծիծաղով):** Նա՛, որ ամենահավատացյալն էր բոլոր հավատացյալներից:

**ՄԻՉԵԼ - Գրե՞՞մ դա:**

**ՍԻՄՈՆԱ - Չե, պետք չէ:** Շարունակիր...

**ՄԻՉԵԼ - Հոկտեմբերի 14, 1963 թիվ:** Արևոտ փարիզյան մի օր:

**ՍԻՄՈՆԱ - Արևոտ, փարիզյան մի օր:** (Թելադրում է:) Նրա թաղումը...

Նրա թաղումը ճիշտ այնպիսին եղավ, ինչպիսին ինքն էր՝ սովորականի սահմաններից դուրս: Երբ նրա փոքրիկ մարմինը դագաղի հետ բարձրացրին վեր, ահօնի մարդկային զանգվածն ալեկոծվեց, կորցրեց բանականությունը: Մարդկային հսկայական ալիքը խելացնոր պոկվեց տեղից, ծավալվեց առաջ՝ շուր տալով արգելափակոցները: Կարծես մի նոր ֆրանսիական հեղափոխություն էր սկսվում: Ամբոխի գվլոցը տարածվել էր Փարիզով մեկ: Երբեք Փարիզն այդպիսի կսկիծ չի ապրել: Քաղաքը խոլ կաղկանձում էր ցավից: Դա Էղիտ Պիաֆի վերջին համերգն էր: Ինչպես միշտ՝ տրիտմֆ: (Ծանր շնչում է:)

**Ներս է մտնում Սիմին՝ սուրճ է թերեւ:**

**ՄԻՍԻ - Շաքարը...**

**ՄԻՉԵԼ - (Ժեսուով լրեցնում է Սիմին):** Շը՞շ... Դիր այստեղ:

**ՍԻՄՈՆԱ - Հաջորդ օրը Փարիզը թաղում էր Ժան Կոկտոյին:** Նա մնացավ նույն օրը, Էղիտի հետ: Հենց այն պահին, երբ պատրաստվում էր ուղիղոյն մահախոսական

կարդալ Էղիտի հիշատակին: Կոկտոն շհասցրեց ասել այն բառերը, որ գրել էր նրա մասին: Սիջակետ: Բաց չակերտները: «Սիայնակ աստղի նման նա վառվեց իր ներսի այրող բոցերից... գիշերային Փարիզի երկնակամարում»: Սիշե՞լ...

**ՄԻՉԵԼ - Հա, գրում եմ:**

**ՍԻՄՈՆԱ - Սիսի՞...**

**ՄԻՍԻ - Այստեղ եմ:**

**ՍԻՄՈՆԱ - Զենոանաք կողքիցս...**

Լավ չեմ զգում: Կողքիս եղեք: Շարունակիր, Միշել: (Թելադրում է:) Մահից առաջ Աստված խղճաց Էղիտին: Նրա կյանքում հայտնվեց Արևի որդին՝ գեղեցիկներից ամենագեղեցիկը: Դա անբացատրելի սեր էր: Հանդիպման առաջին օրից մինչև Էղիտի մահվան օրը թեռն շինուածավ նրա կողքից: Նա խնամում էր Էղիտին մոր պես... ջնջիր... երեխայի պես: Էղիտին, որի մեջ արդեն ոչինչ չէր մնացել մեծն Պիաֆից: Սիայն աչքերը... Մանուշակների պես աչքերը, որոնք հաճախ լցվում էին աղի արտասուրով և այրում նրա դեմքը, երբ նայում էր իր սիրեցյալին. «Թեռ, մի՞թե դու սրան էիր արժանի... Ինչո՞ւ այսքան ուշ...»: Նրանք ամուսնացան: Հնչեցին եկեղեցու զանգերը: Դա սիրո հիմնն էր... և Էղիտի մահվան օրորոցայինը: (Դադար:) Լավ չեմ...

**Միշելն ու Սիմին օգնում են նրան:**

**ՄԻՍԻ - Գուցե քննե՞ս մի քիչ, հետո կշարունակեք:**

**ՍԻՄՈՆԱ - Նրա մահվանից հետո ար-**

դեն քանի տարի է՝ ես քնած եմ, ես չեմ ապրում: Քիչ է մնացել, պիտի հասցնեմ: Միշե՞լ...

**ՄԻԾԵԼ** - Հա, Սիմոնա, գրում եմ:

**ՄԻՍՈՆԱ** - Որպես Էպիգրաֆ դիր Սաշա Գիտրիի բառերը: «Երա կյանքը այնքան վշտալից էր, որ պատմությունն այդ մասին ճշմարտանման չէ: Այնքան էր գեղեցիկ»: Վերջ: Հիմա կարող եմ քննել:

**ՄԻԾԵԼ** - Իսկ վերնազի՞րը... ի՞նչ ես դնելու, Սիմոնա:

**ՄԻՍՈՆԱ** - Երկու քույր: Կամ՝ հանձար և անառակություն:

**ՄԻԾԵԼ** - Երկու քույրերից ո՞րն է հանձարը և որը՝ անառակությունը:

**ՄԻՍՈՆԱ** - Երկուսն էլ: Սա երկու հյեղիների պատմություն է, որոնք դրված են իրար դիմաց՝ իրար անդրադարձնելու համար: Ես ունա... Նրա կյանքը իմ կյանքն էր: Ես իմը չունեցա: Չե, ջնջի՞ր... Վերնազիրը կիմնի «Սիմոնա Բերտոն»: (Անսպասելի ծիծաղում է:) Հա, այս զիրքն ի՞մ մասին է: Երբ նա սիրում էր, սիրում էի նաև ես, երբ նա տառապում էր՝ տառապում էի ես, երբ նա երգում էր՝ երգում էի ես: Երբ նա մեռավ՝ մեռա նաև ես: Սեր ընդհանուր ծանոթը... է՛ն, որ երկնքում նստած է, անոնք՝ Աստված, քոյլ տվեց, որ մի քանի տարի նրանից ավելի շնչեմ... (Վախեցնող ծիծաղում:) Որպեսզի զի՞րը գրեմ նրա մասին: Նույնիսկ քո մահից հետո չըրդեցիր, որ մի քիչ ինձ համար ապրեմ: Ողջ մնացի, որ զիրք գրեմ քո մասին:

Հիսուսիկ ծիծաղում է, դիվային ու վախեցնող:

**ՄԻՍԻ** - Ի՞նչ պատահեց նրան:

Սիմոնայի ծիծաղը վերածվում է հազի: Թվում է՝ սկսում է խեղդվել ծիծաղի ու հազի անքնական խառնուրդից:

**ՄԻՍԻ** - (զուր մեկնելով նրան): Խմիր, Սիմոնա, խմի՛ր...

**ՄԻՍՈՆԱ** - Միշել... ջնջի՞ր: «Սիմոնա Բերտոնի» տեղը գրիր «Էղիս Պիաֆ»: Տարբերություն չկա:

**ՄԻՍԻ** - Սիմոնա՛... Սիմոնա՛... Միշել, նա մեռնում է... Մամա, ես վախենում եմ:

**ՄԻՍՈՆԱ** - (խզված ձայնով): Ամունացիր նրա հետ... Ամունացիր... Կանիծեմ... Անունը կրնեք Էղիս...

**ՄԻԾԵԼ** - Ի՞նչ է ասում:

**ՄԻՍՈՆԱ** - Էղիս... ո՞ր ես... Գալիս եմ: Սի քիչ էլ... մի քիչ էլ...

**ՄԻՍԻ** - Զառանցում է:

**ՄԻՍՈՆԱ** - Ո՞ր ես... Չեմ տեսնում, ո՞ր ես: Միայն քեզ եմ սիրել, Մարսել... Մարսել... Շատ սերեր են եղել, բայց միշտ սպասել եմ քեզ, թեո՞ւ... Ո՞ր ես, թեո՞ւ... Ուզում եմ երգել... Գրկիր ինձ... Ժամանակն է, վատեր լույսերը, ես զնում եմ քեմ... Ե՛յ, ակորդեոնիստ, արի, սկսում ենք... Բացեք վարագույրը, ես զնում եմ քեմ...

**ՄԻԾԵԼ** - Սա հոգեվարը է:

**ՄԻՍԻ** - Ես չեմ դիմանում, Միշել, ես վախենում եմ... Ես մահ չեմ տեսել: (Կծկում է, բռնում փորը:)

**ՄԻԾԵԼ** - Ի՞նչ եղավ...

**ՄԻՍԻ** - Ոչինչ... ոչինչ, կանցնի: Ինձ չեր կարելի... (Կծկում է:)

Միշելը Սիսիին դուրս է տանում:

**ՄԻՍՈՆԱ** - (մենակ): Ամրոխը... ամրո-

խը քշում է մեզ... (*Բեմը հետզհետև մքնում է:*) Պտտվում է, պտտվում է... Մենք միասին ենք... քամին տանում է քեզ... Սպասիր, գալիս եմ... Զեռքդ, ձեռքդ տուր ինձ... Աչքերս մքնում են, ոչինչ չեմ տեսնում... Վառվում են, վառվում են...

**Մքություն:** Երաժշտություն: Խավարի մեջ հայտնվում է փոքրիկ եղիսը:

**ՓՈՁՐԻԿ ԷԴԻՏ -** Արի... մի վախեցիր: Բոնիք ձեռքս:

**ՄԻՄՈՆԱ -** (*տեղից վեր կենալով*): Գալիս եմ... Ω՞ր ես տանում ինձ...

**ԷԴԻՏ -** Գնանք, այնտեղ լույս է... Դեպի լույսը:

**ՄԻՄՈՆԱ -** Այրում է... Աչքերս այրվում են...

**ԷԴԻՏ -** Մի վախեցիր, ես քեզ հետ եմ: Բաց արա աչքերդ...

**ՄԻՄՈՆԱ -** Էդի՞ս... դո՞ւ ես, Էդիս...

**ԷԴԻՏ -** Ես եմ, Մոմոնա... Եկա քեզ դիմավորելու: Արի...

Գնում են դեպի խորքը քեմի, որի հետևում թերև լույսն սկսում է պայծառանալ:

**ՄԻՄՈՆԱ -** Սա ի՞նչ է... որտե՞ղ եմ ես: **ԷԴԻՏ -** Աշխարհ: Աշխարհ է, Մոմոնա:

Արի...

Հնչում է ֆինալային երաժշտությունը: Կորացուցիչ լույս: Միմոնան ու փոքրիկ եղիսն անհետանում են: Նրանց կլանում է Անհայտը:

**ՄԻՄՈՆԱ -** Ի՞նչ է՝ աշխարհ:

**ԷԴԻՏ -** Աշխարհը գույներ են: Կարմիր, կանաչ, դեղին... Արի...

**ՄԻՄՈՆԱ -** Ի՞նչ է կարմիրը:

Խավարի մեջ լուսավորվում են փուչիկները, որ բռնել են Ժանետն ու Քրիստինը՝ ճերմակ շոբերով:

**ՋՐԻՄԻՆ -** Կարմիրը սերն է:

**ԺԱՆԵՏ -** Կապույտը երազանքն է:

**ՄԻՄՈՆԱ -** Իսկ դեղի՞նը:

**ՋՐԻՄԻՆ -** Դեղինը հույսն է:

**ԺԱՆԵՏ -** Իսկ սկը ցավն է:

**ՄԻՄՈՆԱ -** Այստե՞ղ էլ ցավ կա:

**ԷԴԻՏ -** Իհարկե, Մոմոնա: Սա կյանք է:

**ՄԻՄՈՆԱ -** Ի՞նչ կյանք... ի՞նչ կյանք...

**ԷԴԻՏ -** Կմեծանաս՝ կիմանաս:

**ՄԻՄՈՆԱ -** Կիմանա՞մ:

**ԷԴԻՏ -** Կիմանաս, Մոմոնա, կիմանաս: Արի... Արի ինձ հետ...

Նրանք բարձրանում են աստիճաններով դեպի վեր:

**ՄԻՄՈՆԱ -** Գալիս եմ, Էդիս... Միայն քեզ ձեռքս բաց չքողնես, ձեռքս բաց չքողնես...

**ՓՈՁՐԻԿ ԷԴԻՏ -** Բաց չեմ բողնի, Մոմոնա, չեմ բողնի...



## Սամվել ԽԱԼԱԹՅԱՆ

Պասպուի ջուրը թերել էր տնաւմերքի մարզերին, բայց հենել ծիրանենուն ու խոնջացած, ծաղին թիկն տված նատել, կիսախոսի աչքերը հատել էր տերևներից ծիկրակող արևի կայծերին: Առուն բչքում էր ու վաղուց կատարված չափատված հերքար էր պատմում նրան: Զառամյալ պասպուի կողացած՝ հիշողությունների մեջ, ժայռում էր ու հանկարծ, ասես երկնքից ծորաց մեղեդին, ու նրա շուրջերը թրթռացին.

- Կ' իրիշկեմ Խանդութ խանում, ձեռ-ոտ կալամով քաշած է,  
Այս, հալա տրգոն, կալամով քաշած է,  
Կ' իրիշկեմ՝ Էսոր Եղնօներ, ունսդայով տաշած է,  
Այս, հալա տրգոն, ունսդայով տաշած է,  
Կ' իրիշկեմ՝ Էսոր ծամեր, քառսուն ճուղ ծամ է,  
Այս, հալա տրգոն, քառսուն ճուղ ծամ է...

*Ես, մարզերը լոք տալով, ուզեցի մոտենալ նրան, բայց քաղաքանող տասու կանխեց, մատոք դրեց շրբին՝ «Ծըշ... մի խանգարի»:*

- Կ' իրիշկեմ՝ Երեսի կարմրություն, նոռան գինի է,  
Այս, հալա տրգոն, նոռան գինի է...

*Խանդութ տասու, հենված թորիսու կորին, խանդադատանքով,  
երանությամբ նայում, լսում էր իր 65 տարվա ամուսունուն ու երգի  
ամեն բառի հետ ուղղովում էր նրա կորացած մեջքը:  
Տասու գոգնոցի գրավանից հանեց կարմիր, կապույտ, ոսկեգույն  
ասեղնագործ թաշկինակը, հավեց կոպին ծանրացող արցունքին:  
Դողացող մատներից թաշկինակը սահեց, ընկալ ուղարկ  
տեղուներին, ու ուղարկ ծաղեց կարմիր,  
կապույտ, ոսկեգույն բույրով...*

# **ՊԱԴԱՄ, ՊԱԴԱՄ, ՊԱԴԱՄ...**

*Հիրիկական դրամա մեկ գործողությամբ*

---

## **Գործող անձինք**

**ՀԱՍՏԻԿ ԱՎԱԳՅԱՆ - 60-ն անց,**

**քուակառու ուսուցչուհի**

**ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ - 62 տարեկան,**

**դաւտոնաբող գեներալ**

**ԱՐԱՄ**

**ՍԱՐԻԾԿԱ | 18 տարեկան,  
սիրահարված զոյզ**

**ԳԵՎՈՐԳ ԱՎԱԳՅԱՆ - Հասմիկի որդին**

---

## **ՊՐՈԼՈԳ**

Յուրաքանչյուրս մի հեքիաք ենք պահում մեր մեջ. նվիրական, անմոռաճալի: Տարիներ են անցնում, իսկ հեքիաքն այդ երրեք չի կորցնում իր հնայքը, հրապուրանքը, և մեր ողջ գիտակցական կյանքում, ենթագիտակցորեն, ծգուում ենք դեպի նա, ուզում ենք լինել նրա հետ, նրա մեջ ու վերապրել, վերապրել նրա հետ առաջին հանդիպման հրաշքը:

Սա միակ հրաշքն է, որին հավատում ենք ամբողջ կյանքում:

Ահա, զրոյացի է մտնում մի կին: Հասմիկ Ավագյանն է: Նրա դեմքը դեռևս պահպանում է երբեմնի գեղեցկությունը: Սովորաբ, ճամպրուկով մարդիկ շտապում են: Հասմիկ Ավագյանը չի շտապում: Այդպես է լինում, երբ մեկնելուց առաջ հրաժեշտ են տալիս նվիրական վայրին,

որտեղ ապրել են իրենց առաջին հրաշքը:

Հասմիկ Ավագյանը, քոշակառու ուսուցչուհին, տարտամ քայլվածքով, ենքաղիտակցությանը իրու, քայլում է ծառուղով...

**Զրոսայզու ծառուղի:** Ձախ կողմում՝ նստարան, որի հարևանությամբ, քիչ խորցում, մանկական կարուսել է: Բեմառաջքին հարող սիզամարգում, գրեթե նստարանին դիմահայաց, կաղնու անսաղարք ծառարունն է՝ տպավորիչ փշակով: Կարելի է կարծել, որ նորացված այգում այդ փշակն է եղել պատճառը, որ ծերացած, քիչ բերքած, բայց դեռ ապրող ծառը խնայել պահպանել են:

**Սնուակայքում** գործող սրճարանի<sup>o</sup>ց, թե՛ ճամարուկը ձեռքին ծառուղի մտնող Հասմիկի հիշողությունն է լսելի դարձնում Էղիս Պիաֆի «Պաղամ, պաղամ» երգը:<sup>\*</sup>

**Հասմիկը քողարկված** տխրությամբ մի պահ կանգ է առնում, ասես երգի բերած հիշողությունն է ուզում վերականգնել, ապա շարունակում է քայլել դեպի միայնակ նստարանը:

**Մարիշը համարյա վազելով առաջ է անցնում նրանից ու նյարդայնացած փլվում է նստարանին:** Նրան հետևող Արամը մոտենում, կանգնում է նրա դիմաց:

**ԱՐԱՄ -** Այսր, ի՞նչ ասի, որ նեղացար... (Աղջիկը ցուցադրաբար շրջում է դեմքը.) Ծն՞ս ուզում՝ չենք գնա, աշխարհը չի քանդվի: (Նստում, փորձում է բռնել աղջկա ձեռքը, վերջինս հետ է քաշվում:) Այ Մարիշ, լա՞վ, էլի... Ամեն անգամ մի բան մոգոնում ես, փուչ բանից՝ նեղանում, տեսարան սարցում... (Աղջիկն անհաղորդ է:)

**Հասմիկը նստում է նստարանի մյուս ծայրին՝ կողքի դմելով ճամպուկը:** Նա չի նայում երիտասարդների կողմը, բայց ակամա լսում է նրանց խոսակցությունը:

**ԱՐԱՄ -** Քեզ դուր է զայիս, հա՞՞, որ ինձ նյարդայնացնում ես... (Աղջիկը փուրով քրքրում է պայուսակը,

գունում քջային հեռախոսը, նյարդային սեղմում է կոճակներին: ) Սկսե՛ց... Ելի մեսիջով ենք խոսելո՞ւ իրար հետ: (Նրա հեռախոսը զանգում է:) Խնդրե՛մ... (Գրասելից հանում է քջայինը, էկրանին նայելով՝ կարդում է:) «Քեզ հետ խոռվ եմ: Վե՛րօ»: Այ Մարիշ, բատրուն մի սարքի, վեր կաց, գնանք, մեր մասին ի՞նչ կմտածեն... (Աղջիկն արագ ականջներմ է խցկում հեռախոսի ականջակալները, շուրբերը սեղմած, ըմբուտ նայում է տղային: ) Այսր, ի՞նչ ասի, որ նեղացար... (Մարիշն անդրդվելի է: Արամը, հոգոցով հանելով, ստիպված սկսում է հեռախոսով նամակ գրել՝ հընթացս գրածը հեղելով:) «Մեզ ըս-պա-սում են, ան-

\* Այս երգը, բեմադրիչի հայեցողությամբ, երբեմն կարող է հնչել որպես սրճարանից լսվող երաժշտություն, որպես հուշ, որպես հերոսների տրամադրություն՝ միայն մեղեղիով կամ տեքստով, տարրեր գործիքավորմամբ, կես կամ ամբողջական ֆրազով և այլն: Միաժամանակ, ուղղորդվելով սյուժեի և հերոսների հոգեբանական դրսուրումների լիարժեք արտահայտման շահերից, հեղինակը խոնարհաբար պնդում է, որ իր կողմից արված երաժշտական հրումները պահպանվեն ճիշտ տեղում, և երգը լինի միակ երաժշտությունը՝ ողջ ներկայացման ընթացքում:

հար-մար է, վե-րա-դառ-նանք սրբ-  
ճա-րան»...

**Նրանք շարունակում են հաղոր-  
դագրություններ տալ-ստանալ,  
ընթերցել, իսկ այդ ընթացքում  
Հասմիկն իր քջայինով համար է  
հավաքում:**

**ՀԱՍՏԻԿ -** (անսպասելի առույգ տո-  
նով): Ալո՞, պարոն Լևոն, դո՞ւք  
եք... Հասմիկն է: Ուշանո՞ւմ եք,  
հարգելիս, ուշանում եք... Ես վա-  
ղուց այստեղ եմ՝ մեր նատարանին  
նստած: Հրաշալի օր է: Այնքան  
բարի, հաշտ մքնուրոտ է այգում,  
որ ստիպում է մոռանալ բոլոր վի-  
րավորանքները: Ներում եմ, իհար-  
կե, ներում եմ: (Երիտասարդներն  
ակամա նրան են նայում, Հասմիկն  
ավելի է ոգևորվում:) Լևոն, սիրելիս,  
այսօրվա դեպքը լուրջ մի ընդունիք,  
հոգուդ հետ էի խաղում... Դե, բո-  
լոր կանայք են այդպես, ի՞նչ կա-  
րող ես անել: Բայց դա չի  
նշանակում, որ նրանք չեն սի-  
րում... Չե, ուզում են ավելի սիր-  
ված լինել: Այն՝ ժամանակն  
անցնում է, նոր ենք հասկանում  
վատնած վայրկյանների գինը:  
Սպասում եմ... Սպասում եմ, սիրե-  
լիս: (Անջատում է հեռախոսը, հե-  
տուարրրությամբ ուսումնասիրում  
կաղամ փշակը:)

**Արամի հեռախոսը զանգում է:**

**ԱՐԱՄ -** Այն՞:

**ՍԱՐԻԾ -** (հեռախոսով, շարաճի):  
Զգնա՞նք սրճարան: Մեզ են սպա-  
սում:

**ԱՐԱՄ -** Գի՞՛ծ... (Գրկում է աղջկա ու-  
սերը, ոտքի են կանգնում՝ հեռախո-  
սուց առաջ երախտազետ հայացը  
մետեղով իրենց շնայող Հասմիկին:)

**ՀԱՍՏԻԿ -** (ներողամիտ ժպիտով նա-  
յում է հեռացող զույգին, ու մինչև  
այսկին տիրությունը կստվերեր  
դեմքը՝ անսպասելի հեռախոսա-  
զանգից ցնցվում է, միացնում է  
քջայինը): Այն... լսում եմ: Այն,  
Հասմիկն է... Լևո՞ն... ի՞նչ Լևոն...  
Ե՞ս եմ զանգել: Ախ, հա՝, ներեցեք,  
ներեցեք, խնդրում եմ, շփոթել էի  
համարը: (Խիստ:) Երիտասարդ,  
Լևոն ձևանալու փոխարեն, լավ  
կլիներ՝ ուրիշ զբաղմունք գտնեիք:  
Ես ձեր հասակի թոռ ունեմ: (Հեռա-  
խոսն անջատում, տեղավորում է  
պայուսակում, վերադառնում է իր  
մտքերին, բայց հեռախոսն էլի է  
զանգում: Չոր: ) Լսում եմ: (Չեր-  
մությամբ:) Անուշիկ, հոգիս... Լավ  
եմ, բալիկս, լավ եմ, մի անհան-  
գըտացիք: (Չսպում է հուզմուն-  
քը:) Ես արդեն օդանավում եմ,  
շուտով ող կբարձրանանք: Նա-  
խապես էի տոնս պատվիրել...  
(Սրբում է արցունքի կարիլը:) Չե,  
հոգիս, մի մեղադրիք նրանց...  
Նրանք երիտասարդ են, իսկ թոշա-  
կի անցած ուսուցչուին՝ ծեր սկե-  
սուրը, անհարմարություններ է  
ստեղծում: Դու արդեն հասուն աղ-  
ջիկ ես, պետք է հասկանա... Չեզ  
հետ համաձայն չեմ: Յուրաքանչ-  
յուրն ինքն է տնօրինում իր կյան-

քը: Այդ տանը ես մենակ եմ և... չէի ուզում ասել՝ արհամարհված: Սի մեղադիրի ծնողներիդ: Այսպես, գուցե, լավ չէ, բայց ճիշտ է, Անուշիկս... Ես քեզ շատ եմ սիրում... (Սրբում է արցումքը:) Իհարկե, կտեսնվենք, տեղ հասնեմ, աշխատանքի կանցնեմ ու արձակուրդիս անպայման հյուր կզամ: Դու զիտես, որ տիկին Ամալյան իմ վաղեմի, մտերիմ ընկերուիին է, նրա հետ ինձ լավ կզգամ: (Ավելի շատ՝ իրենից վաճելով միտքը:) Չէ, չէ, ի՞նչ ես ասում, նա չի մահացել, դու լավ չես հիշում: Սի հուզվիր, աղջկս և ինձ էլ մի ստիպիր ծանր տանել... համբուրում եմ: (Կապն ընդհատված է:) Համբուրում եմ... (Հեռախոսը հպում է այտիմ, շորքերն անձայն նոյն բառերն են կրկնում:)

**Հայտնվում է Գևորգը, փոքր-ինչ  
առաջ է անցնում նրանից ու հան-  
կարծակի կանգնում, շրջվում է  
Հասմիկի կողմը:**

**ԳԵՎՈՐԳ** - Բարև ճեղ... (Հասմիկը  
բարձրացնում է հայացքը: Պա-  
տասխանն ուշանում է:) Կարելի՞ է  
այստեղ նստել:

**ՀԱՍՄԻԿ** - (դարձյալ չի շտապում պա-  
տասխանել, հետո՝ անտարբեր):  
Համեցեք:

**Գևորգը** նստում է քիչ հեռու:  
**Հասմիկը** գողտով հետ է հրու-  
ճամպրուկը, որ չնկատվի:

**ԳԵՎՈՐԳ** - (իրրև թե ըմբոշխնում է  
այզու զովությունն ու լուրջումը,

բայց ներքուստ անհանգիստ է,  
մղվում է խոսակցության): Զար-  
մանակի մարդիկ են, այզին սե-  
փականաշնորհեցին ու բոլոր  
նստարանները հանեցին: Նստել-  
հանգստանալու տեղ չկա... (Հա-  
միկը վերաբերմունք ցոյց չի  
տալիս:) Դիտմամբ արեցին, որ  
ստիպված սրճարան մտնեն: Ցայ-  
տաղբյուրն էլ հանեցին, որ սրճա-  
րաններում հագեցնես ծարավդ:  
(Հասմիկը չի արձագանքում: Դա-  
դար:) Վաղո՞ւց եք այստեղ:

**ՀԱՍՄԻԿ** - (մրան չմայելով): Շատ վա-  
ղուց:

**ԳԵՎՈՐԳ** - (անտեսելով կնոջ վերա-  
բերմունքը): Հաճելի եղանակ է...  
Ինչ որ մեկին էի ուզում տեսնել:  
Նա... նա այստեղ է զրունում: Ա-  
մեն օր զային եմ ու չի հաջողվում...

**ՀԱՍՄԻԿ** - Եթե նա ճեղ համար ինչ որ  
մեկն է, սարսափելի ոչինչ չկա:  
(Ծրջվում, իրը՝ պայտսակում քան  
է փնտրում, հասկացնելով, որ զրո-  
ցել չի ցանկանում:)

**ԳԵՎՈՐԳ** - (հաշտվելով իրավիճա-  
կին՝ պիշտակի զրպանից հանում է  
ծալած օրաբերքը, դնում է ակնոցը,  
սկսում է ընթերցել: Քիչ անց, իրը՝  
ինքն իրենն): Ի՞նչ ասես չեն հնա-  
րի... Ցնորվել են: (Հարևանցին,  
բարձրածայն կարդում է:) «Բրի-  
տանական հեռուստասերիալների  
աստղերը, ի նշան տարիքային  
խտրականության դեմ բողոքի,  
մերկ նկարահանվել են... Ըերբի

Հյուսնը, Անդրեա Մաքքինը, Բւեռլի Սալարդը և Ջիլիան Թեյլֆորտը, որոնց տարիքը տաստանվում է 50-ից 60-ի միջև, բրիտանական Best magazin-ի էջերում հայտնվել են «մորեմերկ»... Խայտառակուրյունն է:

**ՀԱՍՏԻԿ** - (*Արան չնայելով*): Խայտառակուրյուն է, եթք արհամարհում են կնոջը:

**ԳԵՎՈՐԳ** - Բայց մերկանալ հասարակուրյան առջևում ու նկարահանվել միլիոնավոր տպաքանակ ունեցող թերքո՞ւմ...

**ՀԱՍՏԻԿ** - Ի՞նչ կա որ... Դա խիզախուրյուն է, հոգու ճիշ, ընդվզում՝ արհամարհանքի դեմ:

**ԳԵՎՈՐԳ** - (*զոհ է, որ զրոյցն սկսվեց*): Դուք գտնում եք, որ արհամարփած կանայք պետք է մերկանա՞ն:

**ՀԱՍՏԻԿ** - Ես գտնում եմ, որ կանաց շպետք է արհամարհել, ինչ տարիք էլ նրանք ունենան:

**ԳԵՎՈՐԳ** - Բայց նրանք կարող են բողոքի այլ ձև ընտրել:

**ՀԱՍՏԻԿ** - (*անմիջապես չի պատասխանում, ապա՝ անհասցե, դառը մեղադրանքով*): Նրա՞նք... մե՞նք... Սե՞նք ինչ ձև ենք ընտրում... Խխունջի պես պարփակվում ենք պատյանում ու ճիշը խեղդում անպաշտպան հոգու մեջ, փորձում սպանել, անէացնել անցյալը, բոլոր հուշերը, ապրած կյանքը: Ինքը քեզ համոզել, թե դա դո՞ւ չեն եղել, թե դա տեղի չի ունեցել և եղածն ընդամե-

նը հերիար էր, անիրական, քո իսկ հնարած հերիարը... (*Մեղադրանքով*) Այդպես, հա՞, այդպե՞ս...

**ԳԵՎՈՐԳ** - (*մեղադրանքից շփորփած*): Ներեցեք...

**ՀԱՍՏԻԿ** - (*դառնորեն*): Ինչի՞ համար, հերիարի՞... (*Դադար*): Ասացի, չէ՞, դա հնարած է, իրականություն չէ:

**Դադար**: **Գևորգն անհանգիստ է,** հուզված: **Փորձում, չի կարողանում կենտրոնանալ, ծալում, ակնցի հետ քերքը դնում է գրանքը:**

**Զիտի անելիքը**: **Հասմիկը քաքրած խոռվով շարունակում է անտարբեր մի կողմ նայել:**

**ԳԵՎՈՐԳ** - Բայց... բայց կյանքը հնարած հերիար չէ, պարզապես... պարզապես իրականությունը, անցյալը այնքան քաղցր, տպավորիչ ու անմոռաց է լինում, որ թվում է, թե հերիար էր:

**ՀԱՍՏԻԿ** - (*դառը հոգոցով*): Քա՞նցը, տպավորիչ չէ, անմոռաց... (*Ծրջվում, ակնդեւու նայում է Գևորգին*): Պարզվում է, դուք ոռմանտիկ եք, պարոն: (*Հեզմանքով*): Քա՞նցը, տպավորիչ չէ, անմոռաց... Տեսնո՞ւմ եք այն փշակը: (*Մատնացույց է անում կաղմին*): Այդ փշակը քանի՞ անգամ լսած կիմի այդ խոսքերը: Եթե լեզու առներ, քանի՞ այդպիսի հերիար կպատմեր նա... (*Ծրջվում է*:)

**ԳԵՎՈՐԳ** - (*անհամարձակ, ցածրածայն*): Ի՞նչ կպատմեր: (*Հասմիկը չի պատասխանում*: **Վեհերոտ խնդրանքով**): Ի՞նչ կպատմեր...

**ՀԱՍՏԻԿ** - (պայուսակից հանում է ծխախոտը, իրահանով վառում, սկսում է ծխել: Հանդարտվելով, առանց կողքին նայելու, ասես՝ ինքն իրեն): Կապատմեր, որ եղել, ապրել է մի առջնակ: Եղբ փոքր էր, հայրը մի անգամ նրան բերեց զրուայզու հսկա կաղնու մոտ ու ասաց, որ եթե փշակի մեջ երազանք շշնջա, անպայման կկատարվի: Աղջիկը Զմեռ պապից տիկնիկ ուղեց ու երկու օր անց, Նոր տարվա առավոտյան, բարձի տակ գեղեցիկ տիկնիկ գտավ... (Ծարումակում է ծխել:)

**ԳԵՎՈՐԳ** - Հետո՞...

**ՀԱՍՏԻԿ** - (ամշտապ): Հետո՞... Աղջիկն այդ օրից հավատաց իրաշքների, հավատաց հեքիաթների: Մեծացավ ու երբ հասուն օրիորդ էր, սիրահարվեց գաճրահեր մի տղայի: Աղջիկը հավատում էր իրաշքների ու մի օր, գարնանային մի տաք երեկո, եկավ փշակի մոտ, շշնջաց տղայի անունը, խնդրեց նրա փոխադարձ սերը... Շշնջաց, շրջվեց ու՝ այ քեզ իրաշք... տղան նստած էր մոտակա նստարանին ու կրակոտ հայացքով իրեն էր նայում: (Դադար: Ծխում է:) Ասես կախարդված, չզգաց՝ ինչպես մոտեցավ ու նստեց նրա կողքին: (Դադար:) Ծանոթացան, սիրեցին իրար... (Գևորգը գրպանից հանում է դեղահարի սրվակը, լեզվի տակ հար է դնում:) Նրանք երջա-

նիկ էին... Տե՛ր Աստված, մի՞թե ուրիշ ավելի հարմար բառ չկա՝ այդ երջանիկից բացի... Քիչ է ասել, թե երջանիկ էին, դա ուրիշ զգացում էր... Նրանք կարոտում էին, անգամ եղբ կողք-կողքի էին... Ժամերով նստում ու լուս նայում էին իրենց երազանքներն իրականցնող կախարդական փշակին: Նրանք լուս էին, բայց փշակը լսում էր նրանց: Նրանց շնչառությունը, նրանց հայացքը, աղջկա ձեռքերը՝ տղայի ափերի մեջ, նրանց սրտի զարկերն ամրնդիատ ու ամրնդիատ երազներ էին հյուսում և այդ երազները օծվում, օրհնվում էին փշակի կախարդանքով ու թևում էին հեռո՛ւ՝ երկնակամարին պատկերելով երջանիկ զոյզի ապագան, դրախտային կյանք՝ մինչև խոր ծերություն... (Դադար:) Դպրոցն ավարտեցին: Տղան երազում էր զինվորական դառնալ: Մեկնեց այլ քաղաք՝ սովորելու, հազար ու հազար անգամ երդվելով, որ կվերադառնա: (Հանգցնում է ծխախոտը, կորուկը փարարում անձեռոցիկի մեջ, դնում պայուսակը:) Այդպես ավարտվեց հեքիաթը, որը չէր էլ եղել...

**Դադար:**

**ԳԵՎՈՐԳ** - Ծխախոտ կարելի՞ է:

**ՀԱՍՏԻԿ** - (պայուսակից տուփը, իրահանը հանելով՝ մեկնում է նրան): Դուք դեղահարը դեռ կուլ չեք տվել: (Հեղմանքով:) Երևի շատ էր դառը:

**Գևորգը ծխախոտը վառում է, վերադարձնում է տուփն ու հրահանը:** Նա ծխող չէ, անվարժ, միքանի անգամ ծովխը պահում է քերանում, դուրս է փչում: Անօգուտ համարելով ծխելը՝ տեղ է փնտրում կոքուկը նետելու համար:

**ՀԱՍՏԻԿ -** Աղքամանն այնտեղ է:  
(Գլխի շարժումով ցույց է տալիս կաղնու հարևանությամբ դրված աղքամանը:)

**ԳԵՎՈՐԳ -** (մոտենում է կաղնուն, նետում է կոքուկը, հապաղում է փշակի դիմաց ու շրջվելով, կարծես պատմում է փշակին): Տղան հեռավոր հյուսիսում սովորում էր զինվրական ուսումնարանում, ժամերն ու օրերն էր հաշվում, թե երբ է ավարտելու ուսումը, նշանակում ստանալու, որ իր մոտ կանչի աղջրեկան ու ամրող կյանքում միասին լինեն, բայց... Իր քերեամտության, անփորձության պատճառով խճճեց բարձրաստիճան հրամանատարի կանխամտածված ցանցում, հրապուրվեց նրա հովանավորությամբ ու... (Հոգոց է քաշում:) Ուսումնարանն ավարտեց որպես նրա փեսան: Նա ամաչում էր իր արարքի համար, դավաճանության համար չէր ներում իրեն: Կյանքն ամիմաստ էր դարձել: Ծառայության մեջ ամենավտանգավոր գործն էր անում, անհուսալի տեղեր նետվում, որ գոնե պատա-

հարար փորձանքի գա: Իսկ նրա վարքը շրջապատում դիտվում էր որպես երիտասարդ սպայի խիզախուրյուն: (Դադար:) Եվ մի անքուն, տառապալից գիշեր վճռեց ինքնասպան լինել: Լիցքավորեց ատրճանակը, մի վերջին անգամ նայեց օրորոցում քնած նորածին երեխային ու դուրս եկավ տնից, բայց հենց շեմի վրա, արքնացած երեխայի լացը... (Օրորվում է, բռնելով սիրտը՝ հենվում է ծառար- միա:)

**ՀԱՍՏԻԿ -** (ծալով վրա է հասնում):  
Գևորգ... Գևորգ, ի՞նչ պատահեց...

**ԳԵՎՈՐԳ -** (ազահարար օդը կուլ տալով): Ոչինչ, նոպա է... ստեն- կարդիա: Հիմա կանցնի:

**ՀԱՍՏԻԿ -** Ներիր, խնդրում եմ... (Ժև- անցուկ ուղեկցում է դեպի նստա- րանը:) Ես չեի ուզում... Ես չգիտեի... Նստիր, հանգիստ նըս- տիր... (Չորս կողմն է նայում:) Նման դեպքերում հարկավոր է մի քիչ կոնյակ խմել, օգնում է... Դու հանգիստ նստիր, ես արագ կրե- րեմ...

**ԳԵՎՈՐԳ -** (կանխում է): Պետք չէ, հի- նա կանցնի:

**ՀԱՍՏԻԿ -** Չե, նստիր... քթով շնչիր... Ես հիմա կգամ...

**ԳԵՎՈՐԳ -** Սպասիր: Ավելի լավ է՝ միասին... Սրճարանում բար կա, խմիչք կլինի: (Փորձում է կանգնել:)

**Հասմիկն օգնում է նրան ոտքի կանգնել, թևանցուկ ուղեկցում է,**

բայց առաջին խսկ քայլից հիշելով ճամպրուկի մասին, մի պահ տատանվում է, ապա վճռական ճանկում է այն ու կրկին թևանցուկ անելով Գևորգին՝ դանդաղ ուրպիում են սրճարան: Նրանց ընդառաջ՝ հնչում է Պիաֆի երգը: Ձեռք-ձեռքի, ծիծաղկոտ մտնում են Արամն ու Սարիշը: Հասնելով կաղնուն՝ երկու կողմից փարփում են ծառին:

**ՄԱՐԻԾ - (Ճեռքերը մեկնում, ափերով հսկում է ծառը գրկած տղայի ճեռքերին):** Դե խոսիր, ջա՞նս... մի բան ասա, ես կարոտում եմ քո ձայնին: Ի՞նչ ես մտածում, ինձ հետ մտածիր, որ լցվեմ քեզնով...

**ԱՐԱՄ - (Առյան տոնով):** Զգիտեմ, թե քեզ ի՞նչ ասեմ... Ես չգիտեմ, թե քեզ ի՞նչ ասեմ... Եթե մենք լինեինք արևի վրա, ես կասեի, որ քո հուրն է նրան ջերմացնում, եթե լինեինք բողբոջի մեջ՝ կասեի, որ քո բույրն է բռվում նեկտարին... Ես չգիտեմ, թե քեզ ինչ ասեմ...

**ՄԱՐԻԾ -** Դու չգիտես, թե ինձ ի՞նչ ասես... Խենքո՞ւկ, դու արդեն ասացիր: Խոսիր, Էլի խոսիր...

Նրանք պտտվում են ծառի շուրջ-բողբոջ, հեռանում, մոտենում, փայում են միմյանց, փարփում են ծառին...

**ԱՐԱՄ -** Ես քեզ փնտրեցի մարդաշատ քաղաքների կոշտ մայթերին ու չգտա...

**ՄԱՐԻԾ -** Ինչ լա՞վ է, որ ինձ չգտար

կոշտ մայթերին, ես հիվանդ էի մարդեղեն ախտով...

**ԱՐԱՄ -** Ես քեզ փնտրեցի կուսական անտառներում ու չգտա...

**ՄԱՐԻԾ -** Ինչ լա՞վ է, որ ինձ չգտար կուսական անտառներում, ես անցողիկ էի բուսնել-փտելով...

**ԱՐԱՄ -** Ես քեզ փնտրեցի լեռների ծերպերին ու չգտա...

**ՄԱՐԻԾ -** Ինչ լա՞վ է, որ ինձ չգտար լեռների ծերպերին, ես անշունչ էի ու կոշտ...

**ԱՐԱՄ -** Ես քեզ փնտրեցի ջրերի խորքերում ու չգտա...

**ՄԱՐԻԾ -** Ինչ լա՞վ է, որ ինձ չգտար ջրերի խորքերում, ես համր էի ու անմիտ...

**ԱՐԱՄ -** Ես քեզ գտա այստեղ՝ երկրնքում աստղերի հետ ճախրելիս և ճարդանին...

**ՄԱՐԻԾ -** Ինչ լա՞վ է, որ գտար ինձ այստեղ, երկմքում աստղերի հետ ճախրելիս, ուր աղոքներն են միայն հասնում, ուր ապրում են միայն երազները: Մենք երջանիկ ենք... (Հեռու է փախչում ծառից:) Ես լո՞ւս եմ, հասիր ինձ: (Արամը հետապնդում է նրան:)

Առժամանակ ծառուղին դատարկ է: Գինովցած, ուրախ տրամադրությամբ վերադառնում են Գևորգն ու Հասմիկը: Գևորգի ձեռքին ծաղկեփունջ կա, որը նա պահում է անվարժ:

**ԳԵՎՈՐԳ - (Ծիծաղի միջից):** Ես նրան ասում եմ՝ փունջ թեր, խսկ նա կոնյա-

կը, ոռմը, լիկյորը խառնում է ու հրամցնում... Ես ել, կարծելով, թե լինոնադ է, մի շնչով քաշեցի զլուխս...

**ՀԱՍՏԻԿ - (Առյժ տրամադրությամբ):**  
Նրա իմացած փունջն էլ դա է, սոլան մեղք չունի: (Տամարուկը ձեռքից-ձեռք է տեղափոխում:)

**ԳԵՎՈՐԳ - (Արակիվում, մեխսվում է տեղում):** Եդ ի՞նչ ես անում:

**ՀԱՍՏԻԿ - (զարմացած):** Ի՞նչ եմ անում:

**ԳԵՎՈՐԳ -** Հապա ինձ տուր: (Ձեռքը մեկնում է ճամպուկին:) Տեսնողն ի՞նչ կասի՝ տղամարդը ծաղկեփունջ է բռնել, կինը՝ ճամպուկ:

**ՀԱՍՏԻԿ - (ընկրկում է):** Չե, չէ: Քեզ ծանրություն վերցնել չի կարելի:

**ԳԵՎՈՐԳ -** Ո՞վ ասաց: (Կեղծ քարկությամբ:) Ո՞վ համարձակվեց:

**ՀԱՍՏԻԿ -** Ե՛ս:

**ԳԵՎՈՐԳ -** Իսկ դուք զիտե՞ք, հարգելի տիկին, որ այդ «փունջ» կոչվածը խմելուց հետո ես կարող եմ սարե՞ր շրջել:

**ՀԱՍՏԻԿ -** Չես կարող: Ես ընդամենը մի կում խմեցի՝ զլուխս պտտվեց:

**ԳԵՎՈՐԳ -** Որովհետև քոնք ծաղկեփունջն է, ոչ թե՝ փունջը: Սա՝ քեզ: (Մեկնում է ծաղկեփունջը:) Իսկ ճամպուկը տուր ինձ:

**ՀԱՍՏԻԿ -** Ուշացար, արդեն տեղ հասանք: (Ճամպուկը դնում է նստարանին, վերցնում է ծաղկեփունջը:)

**ԳԵՎՈՐԳ -** (Անյեղով ճամպուկին): Ի դեպ... ըմմ... մեկնո՞ւմ ես, թե՞ ժամանում:

**ՀԱՍՏԻԿ -** (Հարողաճալով ձևանալ, տրտությամբ): Ոչ՝ այս, ոչ՝ այն:

**ԳԵՎՈՐԳ -** (Ճամպուկը զննելով, ուշադիր նրան է նայում): Ուրեմն՝ գտել ես:

**ՀԱՍՏԻԿ -** (կոտրված ժպիտով): Գուշակեցիր: Գտել եմ...

**ՀԵռվում հայտնվում են վիճաքանող Սարիշն ու Արամը: Վերջինս բռնել է աղջկա պայուսակի փոկից, քաց չի բռղնում:**

**ՍԱՐԻԾ -** Թո՞ն... Թո՞ն, ասում եմ... քաց թող պայուսակ:

**ԱՐԱՄ -** Մարիշ ջամ, ախր... դատարկ բանից...

**ՍԱՐԻԾ -** Քեզ համար է դատարկ, ինձ համար դատարկ չի: (Ձգում, ազատում է փոկը:) Զհամարձակվես ինձ հետևել... (Արտասվելով փախչում է՝ վազրով անցնելով Գևորգի ու Հասմիկի կողքով: Արամը հետևում է նրան:)

**ԳԵՎՈՐԳ -** (Կողքով անցնող Արամիմ՝ զինվորական խստությամբ): Կա՞նգ առ: (Տղան մեխսվում է տեղում:) Ե՞տ դարձ: (Արամը զինվորական կանոնով շրջվում է:) Դեպի ինձ՝ քայլո՞վ մարձ:

**ԱՐԱՄ -** (Հարային քայլով մոտենում, զգաստ կանգնում է): Պարոն գեներալ, պահեստի սերժանտ Արամ Ռեալյանս, ձեր հրամանով...

**ԳԵՎՈՐԳ -** Թողմենի: (Մեղմացած:)  
Ինձ ճանաչո՞ւմ ես, զինվոր:

**ԱՐԱՄ -** Ծիշտ այդպես: Դուք մեր զորամասն էիք եկել զորավարժային

ստուգայցի և ինձ պատվողիր հանձն նեցիք:

**ԳԵՎՈՐԳ -** (կարծես շփորփում է):  
Հըմ... Երբ դու... Երբ ծառայում էինք, զինվոր, արդյո՞ք չէինք կարոտում սիրած արջկան:

**ԱՐԱՄ -** Կարոտում էինք, պարոն գեներալ:

**ԳԵՎՈՐԳ -** Երազո՞ւմ էիր հանդիպել նրան:

**ԱՐԱՄ -** Ծիշտ այդպես:

**ԳԵՎՈՐԳ -** Վիրավորելու, լացացնելու համա՞ր:

**ԱՐԱՄ -** (արդարանում է): Պարոն գեներալ, ախր նա... այ, ձեր տիկինն էլ տեսավ, մի փուչ բանից...

**ԳԵՎՈՐԳ -** Լու լ: (Կարճ դադար:) Իսկ ո՞ւր մնաց ասպետությունը, զինվոր: Գնա, ներողություն խընդուիր, տղաս: Հաշտվիր նրա հետ: Հիշիր՝ թշնամուն զենքով ու խիզախությամբ են հաղթում, կնոջը՝ սիրով ու ջերմությամբ: Գնա:

**ԱՐԱՄ -** Լուս եմ: (Տեղից պոկվում, վազում է Մարիշի հետևից):

Հասմիկը գրիւնակ ժայխոր քաքցնելով ծաղկեփնջի մեջ՝ աղջկական նազանքով ճոճվում է տեղում:

**ԳԵՎՈՐԳ -** (անզգուշորեն բացահայտվածի պես չիմանալով անելիքը՝ չորս կողմն է նայում, ապա, զրեք գործնական): Նստենք:

Նստում են:

**ՀԱՍՄԻԿ -** (հիացական զարմանքով):

Դու գեներալ ես:

**ԳԵՎՈՐԳ -** Եի: Այժմ՝ պաշտոնարող գեներալ: (Դեմքը ծածկելով ծաղկեփնջով՝ Հասմիկն անցուաց քրջում է: Գևորգը մոայլվում է:) Պաշտոնարողը ծիծառելի՞ է:

**ՀԱՍՄԻԿ -** Ոչ, գեներալն է զվարճակի:

**ԳԵՎՈՐԳ -** Երկի չես հավատում:

**ՀԱՍՄԻԿ -** (հոգու հետ խաղալով): Իհարկե, չեմ հավատում: Այնքան խիստ խոսեցիր, որ խեղճ տղան քեզ գեներալի տեղ դրեց:

**ԳԵՎՈՐԳ -** (լրջիտ արժանապատվությամբ ծոցագրպամից հանում է դրամապամակը, այմտելից՝ այցեքարտ, մեկնում է Հասմիկին): Պատիվ ունեմ:

**ՀԱՍՄԻԿ -** (այցեքարտը վերցնում, պայտսակից անշտապ հանում է ակնոցը, ուշադիր կարդում է): Պատահականություններ լինում են:

**ԳԵՎՈՐԳ -** Քառասուն տարի ծառայելը պատահականություն չեմ:

**ՀԱՍՄԻԿ -** (մաքում ծանր ու քերել է առու): Քառասուն... Իսկ ինչո՞ւ ոչ՝ մարշալ...

**Գևորգը կարծես վիրավորված է:** Առժամանակ լուս եմ՝ Գևորգը արժանապատիվ անշարժությամբ, իսկ Հասմիկը մեկ նրան, մեկ այցեքարտին նայելուց հետո, ակնոցի հետ այն տեղավորում է պայտսակում, դուրս է քերում քջայինը, համար է հավաքում: Գևորգի քջայինը զանգում է:

**ԳԵՎՈՐԳ -** (զրպանից հանում է հեռախոսը): Հայրապետյանը լսում է:

**ՀԱՍՏԻԿ** - (*հեռախոսի մեջ*): Խոկ ո՞ւր  
մնաց ասպետը, պարոն զեներալ:  
(Ծիծաղում է:)

**ԳԵՎՈՐԳ** - Ախ, սատանա... խաղ էիր  
խաղում, հա՞... (Փորձում է գրկել  
նրան:)

**ՀԱՍՏԻԿ** - (*ծիծաղուտ խոսափում է:*)  
Դե-դե... ես քո իմացած աղջիկնե-  
րից չեմ:

**ԳԵՎՈՐԳ** - (*շփորփում, ամմիջապես  
հետ է քաշվում, տխրամած*): Ես  
«իմացած» աղջիկներ չեմ ունեցել:

**ՀԱՍՏԻԿ** - Բանակում ծառայողներ  
չկայի՞ն: (*Պայտակից ինչ-որ պա-  
րագաներ է հանում:*)

**ԳԵՎՈՐԳ** - Կային: Հիմա էլ կան:  
Շտարում են ծառայում կամ զենի-  
քայիններ են:

**ՀԱՍՏԻԿ** - Շրջվիր, ուզում եմ թար-  
մացնել շրթներկս:

**ԳԵՎՈՐԳ** - Նայելը խաճարո՞ւմ է:

**ՀԱՍՏԻԿ** - Կոռեկտ չէ: (*Գևրգը շրջ-  
վում է, Հասմիկն անմիջապես, քա-  
փով, մի կողմ է նետում բջջային  
հեռախոսը, ապա փոքր հայելու  
մեջ իրեն զննելով՝ քարտացնում է  
շրթներկը:» «Զենիթային»՝ դա ի՞նչ  
է: Զենիթում ճախրող հրեշտակ-  
նե՞ր են:*

**ԳԵՎՈՐԳ** - (*նրա չիմացուրյանը՝ նե-  
րողամիտ*): Ընդհակառակը: Օպե-  
րատորներ են, կապավորներ,  
նշանառումներ:

**ՀԱՍՏԻԿ** - Կրակո՞ւմ են: (*Ավարտում  
է հարդարանքը:*)

**ԳԵՎՈՐԳ** - Այն էլ ինչպե՞ս:

**ՀԱՍՏԻԿ** - (*պարագաները տեղափ-  
րում է պայտակում*): Ինչպե՞ս:

**ԳԵՎՈՐԳ** - Դե... ինչպես բացարձեմ:  
Նստում են զենիթային հրանորի  
նշանառուի տեղում... (*Նկատում է  
կարուսելը:*) Ահա, գտա, գնանք,  
ցոյց տամ: (*Հասմիկի ձեռքից  
բռնած մոտեցնում է կարուսելին:*)  
Սա մեր մարտական զենքն է՝  
տասնչորսուկես միլիմետրանոց զե-  
նիթային գնդացիրը, որը մեկ րո-  
պեում իրականացնում է 80-300  
կրակոց:

**ՀԱՍՏԻԿ** - Այդքան շա՞տ:

**ԳԵՎՈՐԳ** - Ավելի կատարելագործ-  
վածները կան, բայց մեր մարտկո-  
ցը, սերժանտ Ավազյան, նոր  
տեխնիկայով դեռ չի համարվել:  
Ստիպված ենք յոլա գնալ սրանով:  
Նստիք: Նստիք նշանառուի տե-  
ղում: (*Հասմիկը նստում է:» Դու մեր  
նշանառուն ես: (*Հրում է կարուսե-  
լը:*) Երկնքին նայիր, փնտրիր  
թշնամու ինքնարիոը... Լսո՞ւմ ես  
հոնոյունը, նա ամպերի տակ է, հի-  
նա դուրս կգա: Զգո՞ն, ուշադիք:*

**ՀԱՍՏԻԿ** - (*բռնակից կառչած, հա-  
յացըը երկնքին՝ պտտվում է:*)  
Կարծես թե գտա... գտա... (Մատ-  
նացոյց է անում Գևրգին:) Ահա  
նա...

**ԳԵՎՈՐԳ** - (*ձեռքերը տարածած՝  
իմքնարիոն է ձևանում, իբր՝ մանե-  
լիում է օդում:*) Հը՝ ոռոռ... Նշան  
բռնիր... Հը՝ ոռոռ... Կրակիր, կրա-  
կիր...

**ՀԱՍՏԻԿ** - (*հասնելով դեմ-դիմաց՝*

«կրակում է»): Տա՛-տա՛... տա՛-տա՛-  
տա՛-տա՛...

**ԳԵՎՈՐԳ** - (խփված իմքնարիու և  
ձևանում): Վուուն՝ և... (Ընկնում է  
սիզամարդի վրա:)

**ՀԱՍՍԻԿ** - Հաղթեցի՞... Դու պարա-  
շյուտով քուր... (Անսպասելի  
ճարպկությամբ իջնում է կարուսե-  
լից:) Ես քեզ գերի եմ վերցնում...  
Չեռքերդ վե՛ր: («Չենքը պարզած»  
մոտենում է:) Օ-հո՛, գեներալ է և...  
հանձնվի՛ր, գեներալ...

**ԳԵՎՈՐԳ** - (արհարար): Գեներալնե-  
րը չե՛ն հանձնվում: (Ցուցամատը  
հպում է քումքին, «կրակում է»,  
ցնցվում, ընկնում է կողքի:)

Հասմիկը երկար նայում է ոտքե-  
րի մոտ ընկած, «անշնչացած»  
Գևորգին: Այգում մեղմորեն արբ-  
նանում է Պիաֆի երգը: Հասմիկը  
տիրամած շրջվում, տարտամ  
քայլերով մոտենում է կաղնուն,  
փարփում է փշակին: Տրամա-  
դրության, հոգեվիճակի տերը  
երգի է: Երգում և վերիշում է այ-  
գին, երգում է երկինքը, երգում է  
բեմից դուրս տարածված դահլի-  
ճը: Գևորգն այնքան աննկատ է  
մոտենում կաղնուն, որ նրան  
տեսնում ենք արդեն Հասմիկին  
դիմահայաց՝ ծառին փարփած: (Այսինքն՝ տեսարանում, նրանք  
հեռանում են կաղնուց, ձեռք-ձեռ-  
քի տալիս, եթերային պտտվում,  
գգվում ու փայում են միմյանց:  
Այդ անիրական, երազային պատ-

կերը, որ վերարտադրվում է  
նրանց հիշողության մեջ, պետք է  
ավարտվի երկխոսության վերջին  
նախադասության հետ, եթք  
կրկին կհայտնվեն կաղնու մոտ՝  
նույն դիրքով, որով սկսվել էր տե-  
սարանը: Ամբողջ ընթացքում  
հնչում է մեղեղին):

**ԳԵՎՈՐԳ** - Ինձ պահիր քո հոգու մեջ,  
որ հոգիս տուն ունենա...

**ՀԱՍՍԻԿ** - Ինձ պահիր քո հոգու մեջ,  
որ հոգիս շտոշորվի ծարավլից...

**ԳԵՎՈՐԳ և ՀԱՍՍԻԿ** - (միասին): Մեր  
սերը գեղեցիկ է, և մենք գեղեցիկն  
ենք սիրո...

**ՀԱՍՍԻԿ** - Ինձ պահիր քո հոգու մեջ,  
որ հոգիս ճախրանք ունենա...

**ԳԵՎՈՐԳ** - Ինձ պահիր քո հոգու մեջ,  
որ հոգիս աղոքք ունենա...

**ԳԵՎՈՐԳ և ՀԱՍՍԻԿ** - (միասին): Մեր  
սերը հրճվանք է և մենք հրճվանքն  
ենք սիրո...

**ԳԵՎՈՐԳ** - Ինձ պահիր քո հոգու մեջ,  
որ հոգիս ապական չլինի...

**ՀԱՍՍԻԿ** - Ինձ պահիր քո հոգու մեջ,  
որ հոգիս տկար չլինի...

**ԳԵՎՈՐԳ և ՀԱՍՍԻԿ** - Մերը աղոքք է  
և մենք աղոքքն ենք սիրո...

Մերը հավերժ է և հավերժություն է մեր  
սերը...

Երածշտությունն ուժգնանում է  
ու կտրուկ լուս:

**ԳԵՎՈՐԳ** - (հենվում է ծառին): Աղջկաս  
անոնը Հասմիկ դրեցի: Բայց նա մե-  
ծացավ ու պարտադրեց, որ իրեն  
Ասյա կոչեն: (Դադար: ) Նրա մայ-

րը, որ երկու տարով մեծ էր ինձնից, նախընտրեց հինգ տարով փոքր մեկին, աղջկաս վերցրեց ու հեռացավ... Ծառայեցի հյուսիսում, Մոնողիայում, Աֆղանստանում: Իրադարձությունները ստիպեցին վերադառնալ հայրենիք, նոր կազմավորվող Հայկական բանակ:

#### **Դադար:**

**ՀԱՍՏԻԿ - (իմքս էլ հենվում ծառաբնին):** Ինչո՞ւ նամակ չգրեցիր:

**ԳԵՎՈՐԳ - (հառաշելով):** Մեղքի զգացումը... Ետիարձի հույս չկար, շատ էր ուշ: Միակ հույսը, որ պահպանել եմ՝ ներվելու հույսն է, ինքնահուսադրման վերջին խարիսխ... սարդաստայնի քելի պես թույլ, բայց՝ հույս էր: Երազում էի հանդիպել քեզ, բայց վախենում էի, սարսափում, որ չես ների...

**ՀԱՍՏԻԿ - Քեզ համար այդքան կարևո՞ր է ներված լինելը:**

**ԳԵՎՈՐԳ - Կյանքից առավել:**

**ՀԱՍՏԻԿ - (վճիռ հրապարակելու պես):** Ներված ես: Մնաս քարով: (Վերցնում է ճամպրուկը:)

**ԳԵՎՈՐԳ - (խուճապահար կտրում է նրա ճանապարհը):** Հասմիկ, դու... Դու դա չես անի: (Ճամպրուկը մի կողմ է դնում:) Սի գնա, խնդրում եմ, այդպես չեն ներում: Սա դատավճիռ է:

**ՀԱՍՏԻԿ - Իսկ ինչպես են ներում,** Գևորգ: Լաց ու կո՞ծ են դնում, թե՞ո՞որախությունից, վերագտած երջանկությունից թռչկոտո՞ւմ են, փա՞ռ տալիս Աստծուն, որ վե-

րադարձար, քառասուն տարի հետո հայտնվեցի՞ր: Մե՞ծ բան է արել, աղջկա անունը Հասմիկ է դրել... Դու իմ կարոտից չես նրան Հասմիկ կոչել, այլ քեզ արդարացնելու համար, ամեն անգամ այդ անունը տալով՝ դավաճանիդ մեղքը թերևացնելու համար: Եվ ճիշտ է վարվել Ասյան, իմաստուն է վարվել: Ամեն հանցանք իր արժանի պատիժն ունի, նա ստիպել է քեզ կրել քո արժանի պատիժը: Նրա մայրն էլ ճիշտ է վարվել: Հաշվենկատ էիր ամուսնացել, նա էլ հաշվենկատորեն լքեց քեզ: Կանայք լավ են զգում սիրված-չսիրված լինելը...

**ԳԵՎՈՐԳ - (կարկամած):** Չե՞ որ մենք... չե՞ որ դու սիրել ես ինձ: Ներիր, խնդրում եմ, աղաչում եմ՝ ներիր:

**ՀԱՍՏԻԿ - Տուր ճամպրուկս:** Սերը ներում է ամեն ինչ՝ սիրո դեմ գործած հանցանքից բացի:

**ԳԵՎՈՐԳ - Ես հանցազո՞րծ եմ:**

**ՀԱՍՏԻԿ - (դառը քմծիծաղով):** Սի՞թէ օրենսգրքի հողված է պետք՝ սահմանելու համար սիրո դեմ գործած հանցանքը: (Ուզում է զմալ:)

**ԳԵՎՈՐԳ - Սպասիր...** նստիր՝ խստեմք: Սի՛ ներիր, բայց լսիր ինձ վերջին անգամ:

**ՀԱՍՏԻԿ - Վերջը վաղուց է եղել,** Գևորգ: Գնացիր ու շվերադարձար: Հիմա էլ չես վերադարձել: Բաց թող ճամպրուկս: (Գևորգը ճեղքը հետ է քաշում:) Հեռացիր:

**Գևորգը** հապաղում է, ապա  
ճամպրուկը դնելով նատարանին՝  
շրջվում, ձեռքերը խոթելով  
պիջակի գրապանը՝ հեռանում է:  
**Հասմիկը** քարացած է տեղում:  
**Համկարծ** սրափվում է, այն է՝  
նետվելու է **Գևորգի** հետևից,  
բայց թևաթափ շրջվում, մոտե-  
նում է կաղնուն, բռունքը ներով  
հարվածելով բնիմ՝ ողբում է:  
**Խաղաղվերով**, ճամպրուկը քարշ  
տալով վերադառնում, նստում է  
նստարանին, գլուխն առնում է ա-  
փերի մեջ: Ծառուղում վառվուն  
են լամպերը. մքնում է: Երգն  
արթնանում է՝ միայն նվազակ-  
ցությամբ:

**ՀԱՍՏԻԿ** - (վերցնում է ծաղկեփունջը,  
արտասանում է):

Եվ կրկին ինձ հանգիստ չի տալիս,  
Գիշեր, թե ցերեկ, ամենուր,  
Մեղեղին վաղեմի, որ լալիս,  
Ու խեճքացնում է, տանում է,  
բայց՝ ո՞ւր...

Ծառ անգամ եմ փորձել հարցմել,  
Բայց մա ինձ հուշում է, հուշում,  
Եվ ճայմս փորձելով խլացմել,  
Թաղում է ինձ անցյալի մուժում...

**Արտասանության** ընթացքում,  
թիերի միջից անընդհատ լսվում  
է **Հասմիկի** հեռախոսի զանգը:

Պաղամ, պաղամ, պաղամ...  
Նա ամենուր հետևում է ինձ,  
Պաղամ, պաղամ, պաղամ...  
Հոգուս մեջ ինձ ցալ է տալիս.  
Պաղամ, պաղամ, պաղամ...

Այդ երգն իմ մասին է, ես ինքու եմ,  
Իմ սերմ է, կարոտն է իմ անափ,  
Որն իմ մասին ամեն ինչ զիտե...\*)

Ոտքի է կանգնում, ձեռքը մեկ-  
նում է ճամպրուկին և նոյն պա-  
հին հայտնվում է տղան՝ **Գևորգը**:

**ՀԱՍՏԻԿ** - (ընկրկում է): **Գևորգ...**

**ԳԵՎՈՐԳ** - Մայրի՞կ... (*Սեկ ճամպ-  
րուկին է նայում, մեկ՝ նրան:*) Ուրիշ  
օյին ունե՞ս... Քաղաքը ոտքի տակ  
տվեցի... Ոչ դրի չի ասում՝ ո՞ւր է  
գնում, ոչ մեկը բանից տեղյակ չի...

**ՀԱՍՏԻԿ** - (անտարբեր): Չարունա-  
կիր, տղաս: (*Նստում է:*) Ասա, որ  
անհանգստացել ես, զանգել ես ոս-  
տիկանություն, շտապ օգնության  
կայան... Կիւյան կամքջի տակ ես  
փնտրել... (**Գևորգը** նյարդային  
նստում է:) Հին ու նոր հարևաննե-  
րին, ծանոթ-անծանոթներին ես  
հարցում արել...

**ԳԵՎՈՐԳ** - Դու ինչո՞ւ ես մեզ տան-  
ջում, մա'...

**ՀԱՍՏԻԿ** - (դառը քմծիծաղով): Ընդ-  
հակառակը, տղաս, ես ձեզ խաղա-  
ղություն ու երջանկություն եմ  
պարզեցում իմ հեռանալով:

**ԳԵՎՈՐԳ** - Այսը, ի՞նչն է խանգարում  
թեզ, ինչո՞ւ ես այդպես վարվում:  
Խելացի կին ես, ամբողջ կյանքում  
ուրիշներին ես դաստիարա-

\*) «Պաղամ, պաղամ».  
տեքստը՝ Ա. Կոնտեի,  
երաժշտ.՝ Ն. Գլամարերի,  
ուսերենից բարգմ.՝ Ա. Խալաթյանի

կել: Խայտառակությունն... Հավ է, գտա, թե չէ վաղը աշխարհով մեկ կքնդար, թե հարազատ մայրը լցել է Ավագյանին: Թերթերը կվայրահաշեիմ՝ պատգամավորը տնից վոնդել է ուսուցուիի, թոշակառու մորը: Խայտառակությունն... Մի՞թե հնարավոր չէ բոլորի պես ապրել:

**ՀԱՍՏԻԿ - (մտախոհ):** Բոլորի պե՞ս...

**ԳԵՎՈՐԳ -** Հա, ինչպես բոլորն են ապրում: Քեզ ի՞նչ է պակասում: Մեր տաճը միայն Անուշիկն է քո հարազատը, նույնիսկ ինձ հետ չես կիսվում: Կեր, խմիր, գիրք կարդա, այցելիր իին հարևաններիդ, ծանոթներիդ, զբոսնիր այգում, զրուցիր թոշակառուների հետ...

**Դադար:**

**ՀԱՍՏԻԿ -** Դու զանգե՞լ ես ոստիկանատուն:

**ԳԵՎՈՐԳ -** Ի՞նչ կարևոր է:

**ՀԱՍՏԻԿ -** Չէ, ասա, զանգե՞լ ես ոստիկանատուն, շտապ օգնության կայան:

**ԳԵՎՈՐԳ -** Ասենք թե՝ չեմ զանգել, հետո՞... Դա նշանակում է, որ չե՞ն անհանգստանում քեզ համար:

**ՀԱՍՏԻԿ -** Դա նշանակում է, որ անհանգստանում ես միայն քեզ համար, պարոն պատգամավոր: Համարձ մեկը շիմանա, որ մայրդ հեռացել է տնից: Իսկ դու զանգելիր ու ասեիր, որ կնոջ սիրած շունն է կորել... (Կարճ դադար:) «Կեր, խմիր, գիրք կարդա», բայց չհամարձակվես քո ննջարանում հե-

ռուստացույց միացնել, քո սիրած հաղորդումները, հնացած երգերը նյարդայնացնում են քանկացին հարսին: Այցելիր իին հարևաններիդ, մտերիմներիդ, բայց չինի թե մեկին հյուր կանչես, միլիոնատերի մեր փողոցում ապրողներն ի՞նչ կմտածեն՝ բոմֆ դասատուներն են մոր շրջապատը: Գնա այգի, բայց բոռնիկիդ հետդ շտանես, քո խրատները, դաստիարակությունը նախնադարյան են: Երբ հայրդ կար, դուք չեիք համարձակվում ինձ հետ այդպես վարվել: Քո առանձնատան մեջ ես ո՞վ եմ... Միայն սպասուինուդ զրուցընկերը, այն էլ՝ կնոջդ ներկայությամբ, որ աղջիկ-պարոնը հանկարծ չմտածի, թե իրեն բամբասում ենք: Ես թիծ եմ այդ տաճ մեջ, կեղտոտ ճարպարիծ՝ ձեր վարագույրների, ուղեգորգերի, արձանիկների, կահույքի վրա, զորշ ստվեր՝ ձեր լուսավոր, փառահեղ պալատում...

**ԳԵՎՈՐԳ -** Վե՛րջ տուր, մա՛: Ուրախանալու, հապատանալու փոխարեն անընդիատ դժգոհում ես ու դժգոհում: Ես հասկանում եմ, իինը կարոտում ես: Կարոտում ես, որովհետև երիտասարդ էիր, հաջողակ, հայտնի ուսուցուիի: Բայց դա ի՞նչ տվեց քեզ, մի քանի պատվոգիր ու երեսունինգ հազար դրամ թոշա՞կ: Հորս ազնվությունն ինչ տվեց: Քսանիհնագ տարի գործարան դեկավարեց, հետ զցածը խրուշով-

կա շենքի երկու սենյականցն էր:  
Նոր ժամանակներ են, նոր սերունդ  
է եկել, ամեն սերունդ իր օրենքնե-  
րով է ապրում...

**ՀԱՍՏԻԿ** - Դրսում՝ ջունգլիների, տա-  
նը՝ քաղընո՞ւ...

**ԳԵՎՈՐԳ** - Էլի սկսե՞ց... Վե՛ր կաց,  
գնանք, հազար գործ ունեմ: Ուշ է:  
(Ուրի է կանգնում:)

**ՀԱՍՏԻԿ** - (Վճռական): Ես չեմ գա:

**ԳԵՎՈՐԳ** - Այսո՞ւմ ես զիշերելու:

**ՀԱՍՏԻԿ** - Ինչո՞ւ այգում: Ինքնարիոի  
շվերը կեսզիշերին է: Օդանավա-  
կայան զմայուս ժամանակն է:

**ԳԵՎՈՐԳ** - (Հշմած): Ո՞ւր ես բռչում:

**ՀԱՍՏԻԿ** - Մարդկանց մոտ:

**ԳԵՎՈՐԳ** - Մամ, դա... դա նորմալ չէ:  
(Վերցնում է ճամպրուկը:) Գնա-  
ցինք:

**ՀԱՍՏԻԿ** - Շամպրուկը տեղը դիր,  
տղաս: Չհամարձակվես մորդ վրա  
բռնանալ:

**ԳԵՎՈՐԳ** - (Ճամպրուկը ցած է դմում,  
խորամանկելով): Լավ: Թող քո ա-  
սածը լինի, մեքենայով քեզ օդա-  
նավակայան կտանեմ:

**ՀԱՍՏԻԿ** - (Ժաղրով): Իսկ եթե ծանոք  
հանդիպի, ի՞նչ ես ասելու, մորդ  
ո՞ւր ես տանում:

**ԳԵՎՈՐԳ** - (զապված քարկությամբ):  
Իսկ եթե ծանոք հանդիպի, մա-մա՝,  
կասենք, որ տուրիստական ճամ-  
փորդության ես մեկնում:

**ՀԱՍՏԻԿ** - Պետք չէ:

**ԳԵՎՈՐԳ** - Ուրեմն, ծանոք-ընկերնե-  
րին ասելու ենք, թե տղայիդ ու

հարսիդ պատճառով տնից փախ-  
չո՞ւմ ես:

**ՀԱՍՏԻԿ** - Ծանոք-ընկերներիդ կարող  
ես ասել՝ ինչ ցանկանաս: Իսկ ինձ  
ուղեկցել պետք չէ:

**ԳԵՎՈՐԳ** - Մենա՞կ ես գնալու:

**ՀԱՍՏԻԿ** - (Խապաղելով): Ես մենակ  
չեմ:

**ԳԵՎՈՐԳ** - (Աստեղով): Հա, լավ հիշեցի:  
Այսօր ո՞ւմ հետ ես մտել սրճարան:

**ՀԱՍՏԻԿ** - Ի՞նչ իմացար:

**ԳԵՎՈՐԳ** - Մոռանո՞ւմ ես, որ սրճա-  
րանն ու այգին ինձ են պատկա-  
նում, իմ սեփականությունն են:  
Սրճարանից զանգում ու ապշած  
ասում են՝ մայրդ այստեղ փունջ է  
խմում մի բիձու հետ:

**ՀԱՍՏԻԿ** - (Խանդարու): Իսկ դու ի՞նչ  
ասացիր: (Գևորգը լուս է:) Իհար-  
կե, ասացիր՝ շփոթել եք, մայրս  
տանը նստած հեռուստացույց է  
դիտում: Այդպես չէ...

**ԳԵՎՈՐԳ** - (անտեսում է հարցը):  
Լավ, մամ ջան, ինչ եղավ՝ եղավ:  
Գնում ենք տուն: (Կանգնում, վերց-  
նում է ճամպրուկը:) Անուշիկը քեզ  
է սպասում: Մոռացա ասել՝ այսօր  
հյուրեր ունենք: Անհարմար է, մեզ  
են սպասում:

**ՀԱՍՏԻԿ** - Ես անցանկալի հյուր եմ,  
տղաս, դու գնա:

**ԳԵՎՈՐԳ** - Վերջ տուր: Եթե... մտե-  
րիմ ունես, նրան էլ հրավիրիր, ես  
դեմ չեմ, որ քո... հին ընկերներին  
հանդիպես: Ո՞վ է նա:

**ՀԱՍՏԻԿ** - Կարևոր չէ:

**ԳԵՎՈՐԳ** - Ինչպե՞ս թե՝ կարևոր չէ...

Վաքսունն անց մայրս սրճարան-ներում հանդիպում է ինչ-որ մեկին, ու ես չափե՞տք է իմանամ՝ ում հետ: Դու հասկան՞ում ես՝ ինչ ես անում: Դա կարող է սաղրանք լինել, բեզ թակարող գցելով՝ կործանեն ինձ... (Խիստ:) Ω°ψ է այդ մարդը:

**ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ - (սովերից դուրս դուրս գալով):** Ես եմ: (Մոտենում է:)

**ԳԵՎՈՐԳ - (ընկրկելով):** Սա՞ ով է... այս մարդն ո՞վ է, մա...

**ՀԱՍՍԻԿ - (անշտապ, հապարտության բոլոր մշույլով):** Գեներալ է:

**ԳԵՎՈՐԳ - Գեներալ... հետո՞ ինչ... (Սորբ՝ խիստ:)** Սա ո՞վ է, մամ:

**ՀԱՍՍԻԿ - (ոտքի է կանգնում):** Նա... իմ ամուսինն է:

**ԳԵՎՈՐԳ - Ի՞նչ... (Շամպունով ձեռքից ցածր ցածր է ընկնում:)**

Գևորգ Հայրապետյանը, երիտասարդի աշած հայացքի ներքո, մոտենում, վերցնում է ծաղկեցունջը, հանձնում է Հասմիկին, ապա վերցնում է ճանապրուկը:

**ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ - (գորոշությունով):** Ուշ է, սիրելիս, գնանք:

**ՀԱՍՍԻԿ - (վճռական):** Իսկապես... Առանց այն էլ շատ ուշացանք: (Թևանցուկ է անում Գևորգին, հեռանում են:)

**ԳԵՎՈՐԳ - (գոռալով):** Դու... դուք

այդ ի՞նչ եք անում: Ես թոյլ չե՞մ տա: Սրա՞նց տեսեք... (Կաղնուա մատնացույց անելով:) Կկտրեմ էս ծառը... քո խնդրանքով պահեցի, բայց արմատահան կանեմ էս փտած քորուկը:

**Գևորգ ու Հասմիկը մեխսվում են տեղում:**

**ՀԱՍՍԻԿ - (դանդաղ շրջվում է):** Սի շտապիր, տղաս: Խորհրդակցիր դատերդ հետ... Ω°ψ գիտե, գուցե սա արդեն Անուշիկի՞ ծառն է: (Հեռանում են:)

Սրճարանից տարածվում է երգը: Թռչկոտելով ծառուղի են մտնում Արամն ու Մարիշը: Անցնելով նստարանին վիլած, գլուխն ափերի մեջ առած Գևորգի կորքով, փարվում են ծառին:

**ՄԱՐԻԾ -** Ես ծիածան եմ՝ կամարված երկնքին ու երկրին...

**ԱՐԱՄ -** Ես գույն եմ, ծիածանի յոթ գույնը...

**ՄԱՐԻԾ -** Ես բույր եմ ծաղկի բերքերի վրա...

**ԱՐԱՄ -** Ես հովն եմ, որ քաղում է քո բույրը...

**ՄԱՐԻԾ -** Ես լույս եմ, բռնի՞ր ինձ... (Փախչում է:)

**ԱՐԱՄ - (նրան հետապնդելով):** Եղիցի լույս...

**Երգն ուժգնանում է:**



## Կարինե ԽՈԴԻԿՅԱՆ

21-րդ դարի երկրորդ  
տասնամյակում, Զքիսի  
հազարամյակում կինը կարող է  
քիթը խոթել ամենուր՝ անգամ  
բիզնես տարածք, եթե, իհարկե, կարող է դիմանալ ու դիմակայել  
այդ տարածքում տղամարդկանց թելադրած խաղին:  
Բայց այս պիեսը, որ ընդամենը սև հումոր է, ընդհանուր ոչինչ  
չունի այդ տարածքի հետ, թեև հերոսուհին բիզնես լեղի է, կամ,  
գոնե, այդպիսին է իրեն երևակայում:  
Իսկ պատմությունը 21-րդ դարի երկրորդ տասնամյակում, ու  
կարևոր չէ՝ ինչի հազարամյակում ապրող մարդու (կնոջ) մասին է,  
ում բաժին ընտրությունը վատրագույնի ու...  
վատրագույնի միջև է:

# ՔԱՐԻ ԵՂԵՔ, ՍԱՏԿԱՑՐԵՔ ԴՐԱՆ

*Աև հումոր*

---

## Գործող անձինք

**ԿԻՆ - գործարար, տղավորիշ արտաժինով, 30-ներ անց  
ՀԱՐԵՎԱՆՈՒՇԻ - նաև՝ միակ մտերիմ ընկերություն, ում  
հետ Կինը շատ թե ֆիշ անկեղծ է, բարեհա-  
ջող ամուսնացած, կյանքից միանգամայն  
գոհ «ընդոզոլիկ», 30-ին մոտ**

**ԱԽԾԱՆՈԹ - մինչև ոլիեսի ավարտը համարյա մնում է  
անծանոթի կարգավիճակում, հետաքրքր  
տղամարդ է, կլինի և 30, և 40, և ավելի**

**ՔՄՄԻՉ - ջահել է, փորձի դակասը փորձում է փոխ-  
հառուցել ավելորդ ինքնավատահությամբ**

**ԶԱՅՆ - սա որ չլիներ, ոլիեսն ինսրիգ չեր ունենա,  
հավանական սղանված՝ ևս**

---

Գործողությունը կատարվում է միայն Կնոջ քնակարանում, մի քանի  
ժամերի ընթացքում:

Քացվում է դրազ, ներս է մտնում Կինը: Ականջով և ուսով պահել է բջջային հե-  
ռախոսը, մի ձեռքում կոկորդիլոսի կաշվից ուղեայուսակն է, մյուսում՝ թխված-  
քի տուփի, ուսից ճոճվում է պայուսակը: Հազնված է զուսպ ու ճաշակով,  
քարձրակրունկ կրծիկներով է: Ուղրով ճարպկորեն փակում է դրազ, քանակին,  
որ մի կերպ հարմարեցված պահում էր ուղեայուսակի հետ, վարժ շարժումով  
շարսում է դրան մոտի կախիչի փոքրիկ դարակին:

Այդ ընթացքում խոսում է հեռախոսով:

**ԿԻՆ - ... Իսկ ես ասում եմ, որ ապ-  
րանքը այսօր պիտի պահեստում  
լինի... Ինձ չի հետաքրքրում՝ ինչ-**

պես... Ինչպես միշտ է եղել: Ինչ է  
ասում մենեցե՞՞րը... ախ, այսօր  
հնարավոր չէ՞: Գլուխը պատո՞վն

է տվել... Նրան որ լսեի, հիմա սովից սատկելու էիք: Ու են դանդալոշին ուղարկիր, հերիք է վեր ընկնի կոմայի առաջ...

**Այս ընթացքում հաճում է կոշիկները, ուղեալյայուսակն ու պայուսակը նետում է քազմոցին ու տուփով անհետանում է խոհանոցում:** Վերադառնում է, բռիկ է, ձեռքին՝ փափուկ հողաքափեր, որոնք հագնում է՝ ոտքերը հերթով վեր բարձրացնելով:

**ԿՐՆ -** Աշխարհի վերջը չէ, բայց ապրանքը դրսում չպիտի մնա, ու վե՞րջ: Արմենն ո՞ւր է կորել... Ինչպե՞ս թե՝ տեղում չէ, ի՞նչ... Թաղման է զնացել... Էս օրո՞վ: Լավ, նրա հետ քաղումից հետո կխոսեմ: Իսկ դուք հենց հիմա շարժվեք: Հա, տեղակալս այնտեղ է, ձեզ է սպասում: (*Հեռախոսն անջատելով: Իրը՝ խոսակցին*): Մնում է՝ թեզ բացատրություն տամ, թե ինչու ապրանքը չպիտի դրսում մնա... (*Համար հավաքելով:*) Հա, նորից ես եմ, հենց որ տեղներիցդ շարժվեք՝ այսինքն՝ հիմք րոպեից հետո ինձ կզանգեք: (*Հեռախոսն անջատելով: Ինքն իրեն:*) Ու դու համոզված ես, որ դրանք հիմք րոպեից զանգելո՞ւ են... Սիայս իմանամ, թե այդ ինչ լորջ մեռել է, որ վերահսկողության պետը ամեն ինչ քողել ու զնացել է... (Ասես նոր հասկանալով, որ տանն է, շուրջն է նայում ու քրմիում է քազմոցին: Եղունգներով բմբկահարում է հեռա-

յուսի փայլուն կողին՝ մտածում է: Սա ճրա ժեստն է, որը կըրկնավի ամեն անգամ, երբ նա որոշում կընդունի: Ու նայած տրամադրությանը՝ մատները համապատասխան տակտով եմ բմբկահարում: Հիմա նա ելք է որոնում ստեղծված իրավիճակից: ) Դերիները մինչև զնան... Արմեն տղա, թե ձեռքս կընկնես... Բայց դա՝ հետո: Հիմա ուրիշ բան է պետք, բայց ի՞նչ... կամ՝ ո՞վ... (Զգացվում է, որ ահավոր լարված է:) Ո՞վ... Երկի Սիմոնը: Պայքում եմ դրանից, բայց էս պահին նրանից լավ թեկնածու չկա... ոնց որ թե... (Վերջին բառերն ասելիս արդեն հեռախոսի մեջ համարն է գտնում: Սիանգամից փոխվում է՝ մտերիմ-զործնական: ) Ո՞նց ես, զիզյար... Ես ել՝ ոչինչ, ասա՝ թշնամիս լավ չլինի: Ի՞նչ... չէ, լորջ... Ասում ես՝ քե՞լ եմ: Թող ինքը մտածի, ինձ ի՞նչ... Չե, նա ինձ՝ ի՞նչ թշնամի, մի թերև կայել ենք, են ել՝ երբ... Այս, որ ուրախանա՞մ... Հաշվիր՝ ուրախացա: Հիմա... պրոբլեմ կա, ապրանքը օդանավակայանից մեր պահեստը պիտի հասցնես: Գնա՞լս... ընտիր, պայմանագիրն էլ եղավ, ապրանքն էլ թերեցի... Սի թփրտա, էս անգամ կանացի էքսկլուզիվ է, ենպես որ՝ ծներիդ աչքը լույս, քննն էլ հետքը: Ո՞նց թե՝ թեզ ինչ, զնողը դու ես, չէ՞... Իսկ կնոջդ համար՝ անվճար: Իմ կողմից... հաշվիր, ամրացնում եմ ձեր ընտանիքի սուրբ կապը:

Չհամողեցի՞... որեմն՝ համարիք կաշառք: Համողեցի՞... ի՞նչ աղջիկ եմ: Դե, որ այլպես է, հենց իինա վերցնում ես տղերքիդ ու բռնում օդանավակայան... հա, արդեն բարձում են: Տեղակալս այնտեղ է, քեզ կդիմավորի: Իմո՞ւր... Զե՞զ ինչ, թե իմոնք ուր են, որու քո գործն արա: (*Հեռախոսն անջատում է, մատմերն ավելի որիթմիկ են խփում:*) Հորմոններդ մի օր զլսիդ կտան՝ օրգազմիդ կեսին ինսուլտ կկպնես, բայց մինչև այդ բաղձալի օրը՝ վայելիք ծտերիդ, կյանքը կարճ է: (*Համար է հավաքում, խիստ:*) Կես ժամից Սիմոնը էդտեղ կլինի: Ինչի նա՞... որովհետև Արմենը չկա, իսկ դո՞ւք բանի պետք չեք: Կդիմավորես: (*Հեռախոսն անջատելով:*) Կոփին, քեզ հետ վաղը կխոսեն: (*Համար է հավաքում:*) Ժաննա՞ դրանց ասա՝ օդանավակայանի փոխարեն պահեստ գնան, մի ժամից ապրանքը տեղ կհասնի, թող տեղավորեն: Ո՞ր գնաս... ստ՞ուն: (*Չար, բառերը շեշտելով:*) Դու կսպասես, մինչև ես կասեմ՝ զնա՞ս, քե՞ մնաս օֆիսում: Զեր արևին մի շաբաթ առանց ինձ տժժում էիք, չէ՞: (*Հեռախոսն անջատում է:*) Ուեֆերենտ-խորհրդակա՞ն... ժամանակին քեզ պեսին սուրճ եփող, դիվանին պառկող բարուղարուիի էին ասում: Բրոն՞ջ...

**Բարձրանում է տեղից, դիմ «Եփ գալով», հանում է պիջակը, ուղեապայուսակի ու պայուսակի հետ**

**տանում ննջարան: Վերադառնում է՝ հեռախոսը նորից ականջին:**

**ԿԻՆ - Եկել եմ: Արի: (*Հեռախոսն անջատում, զնում է խոհանոց, իյորիք բաժակով վերադառնում է:*) Արմենի ի՞նչն է մեռել, որ զնացել է բաղելու: Առանց իրեն չէին բաղի... Դերիլներ... (Խմում է, հեռախոսացանց, առանց նայելու էկրանին՝ կատաղած:) Ասա՞:**

**ԶԱՅՆ - Էդպես միանգամի՞ց:**

**ԿԻՆ - (նայելով էկրանին): Ո՞վ է:**

**ԶԱՅՆ - Պառավում ես...**

**ԿԻՆ - (ճանաչելով՝ լարվում է): Համա՞րդ ինչի ես փակել:**

**ԶԱՅՆ - Ում պետք է՝ կճանաչի:**

**ԿԻՆ - Իսկ եթե չճանաչի...**

**ԶԱՅՆ - Էդ մեկը չի լինի:**

**ԿԻՆ - Իսկ եթե չի ուզում ճանաչե՞լ:**

**ԶԱՅՆ - Էդ՝ ուրիշ: Բայց մեր դեպքում ոչինչ չի՞ մնացել, որ ճանաչել չուզնաս:**

**ԿԻՆ - Դե... լավ որ մտածեմ՝ գուցե մի բան իիշեմ:**

**ԶԱՅՆ - Իսկ դու իիշիր:**

**ԿԻՆ - Փորձեամ... (Սուտենում է զրաւելակին, դարակից սուփ է հանում, դանդաղ բացում է, նայում մեջն այնպես, որ հանդիսատեսը դեռ չի տեսմում պարունակությունը:)**

**ԶԱՅՆ - Հիշելու բան չկա՞:**

**ԿԻՆ - (երկիմաստ): Պատկերացրու՝ կա:**

**ԶԱՅՆ - Հաստատ են մատանին է, վերջին նվերս... բանի՞ կարատ էր:**

**ԿԻՆ** - (դեռ զննելով սուփի պարունակությունը): Զգիտեմ... մոռացել եմ:  
**ԶԱՅՆ** - Գեղել ես մի տեղ ու մոռացե՞լ:  
**ԿԻՆ** - Լրիվ հակառակը. հենց հիմա նայում եմ ու հիշում:  
**ԶԱՅՆ** - Հա, ձեր ցեղը միայն եր պլայլուն բաներն է հիշում:  
**ԿԻՆ** - Կոահենցիր: Ինչո՞ւ ես զանգել:  
**ԶԱՅՆ** - Հենց թեկուզ «քարե» ասելու համար:  
**ԿԻՆ** - Առանց քարեկիդ կապրեմ: Ասա:  
**ԶԱՅՆ** - Միանգամից կոնկրետին անցար:  
**ԿԻՆ** - Ժամանակը փող է:  
**ԶԱՅՆ** - Ուրեմն՝ հաշիվդ ճիշտ արա:  
**ԿԻՆ** - Մխալ ինֆորմացիա են տվել:  
**ԶԱՅՆ** - Ասածիդ հավատացի՞ք:  
**ԿԻՆ** - Դո՞ւ հավատա՞ս:  
**ԶԱՅՆ** - Ուզում եմ Աստծուն հավատալ, են էլ, ասում են, չկա:  
**ԿԻՆ** - Աստծուն հանգիստ քող:  
**ԶԱՅՆ** - (ծիծաղում է): Խե-խե-խե... Գիտե՞ս, որն է մեր տարրերությունը:  
**ԿԻՆ** - (սարկազմով): Ին ու քո՞...  
**ԶԱՅՆ** - Դու դեռ Աստծու անունից քաշվում ես, իսկ ես...  
**ԿԻՆ** - Ասացի՝ Աստծուն հանգիստ քող:  
**ԶԱՅՆ** - Թողած է: Իսկ դու մտածիր, թե ինչի քեզ զանգեցի: (Հեռախոսան անջատվում է:)  
**ԿԻՆ** - (մտագրադ տակտ խփելով հեռախոսին): Այդ դու ես պառավել... անասո՞ն: Ուրեմն, նվիրած պլայլուն քարե՞րդ եմ հիշելու: Մոռացե՞լ ես, որ մի անգամ, հենց

այնպես, կատակի համար, սա ես նվիրել: (Տուփի միջից հանում է ասորձանակ, վարպետորեն ստուգում է պահունակը, արդյունքից զի՞ օրում նշան է բռնում իմշ-որ մելին ու ամսպասելի ամփուրույամբ մետում քազմոցին: Ասորձանակն ընկնում է քազմոցի ու քարձի արանքը:) Ջո ամենալավ նվերը սա է, որի մասին, հաստատ, մոռացել ես: (Դատարկ սուփը դնում է դարակը, կարճ մտորումից հետո համար է հավաքում, խաղացկում:) Ընկեր... լավ, լավ, կոչումով չեմ դիմում, թեև վերջերս մի աստղ էլ ավելացրիր ուսադիրներիդ վրա: Նվերս տեղ է հասել, չէ՞... Դե, ես ուշադիր աղջիկ եմ, քարեկամիս հաջողությամբ ուրախանալու առիքը բաց չեմ քողնի... Լավ, կարճ կապեմ, զբաղված մարդ ես: Քիչ առաջ զանգեց... (Երկիմաստ:) Ինըըլ: Հա, անձամբ: Չհասկացա, ինչու է հիշել... (Մոայլվելով): Պարզ է, նրա ախորժակը միշտ էլ լավ է, քայց... Կարծո՞ւմ ես: (Խաղացկում:) Օգնության համար՝ մեռսի: Մի ժամից գեղեցկուիդ դստրիկիդ սյուրաբիզ է սպասում: (Հեռախոսն անջատելով:) Ուզում ես գեներալ դարձիր՝ էլի նոյն բոշա մենքն ես: (Համար է հավաքում:) Վահե, հենց հիմա բոխչա սարքիր: Շտապ: 18 տարեկան աղջկա համար: Լրիվ կոնպլեկտը... Կարտին ժամացույցը չմոռանաս: Ում համա՞ր... նայիր, ցուցակի մեջ հինգերորդն է:

Մի ժամ հետո դրան առաջ լինես: Ու մի ֆիրմա փափուկ խաղալիք... ինչ ուզում է լինի, թեկուզ պանդա: (*Հեռախոսն անջատելով, հեզմանը բռվ:*) Եքա աղջիկ է, խաղալիք է խաղում...

**Դասն զան:** Սոտենում, ճայում է դիտակից, դեմքին անհոգ արտահայտություն է տալիս ու ժախտով քացում դրուք:

**ԿԻՆ -** Ծիշտ ժամանակին եկար:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ -** (Աերս է մտնում, ձեռքիմ՝ սոպրակ): Ծի՞շտ... (Ողջագորկում եմ:) Բարի վերադարձ:

**ԿԻՆ -** Բարի ասիր ու բողի՞ր... իմաս սուրճ կխմենք:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ -** Յոք բաժակ արդեն խմել եմ:

**ԿԻՆ -** (Հարածճի): Թխվածքո՞վ...

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ -** Եի չսկսես... Շաբարով դիետա եմ պահում, մի ժամում եքս անիծում ես:

**ԿԻՆ -** Եքս անիծում է, ուրեմն ճիշտը անիծելն է: (Գնում, բերում է սովոր ու ափսենեղը:) Դասավորիր, ես իինա... (Գնում է մնջարան, այնուեղից:) Թեյնիկը միացրու:

Հարևանուիին սովորակը գցում է բազմոցին, գնում է խոհանոց, վերադառնում անձեռոցիկով, պատառաքաղմերով: Սոված մարդակերի հաճույքով քացում է սուփը, բխվածքները տեղափորում ափսեի մեջ՝ նրանցից ինչ-ոք բան պոկտելով ու բերանը գցելով, և ամբողջ ընթացքում անընդեղ խոսում է:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ -** Մի շաբաթ չկայիր՝ երկու կիլո գցեցի... (Մի կտոր կող տալով:) Տանը ամրող օրը եփում եմ, մի փշուր բերան չեմ առնում... Անհարմար էլ է՝ հյուրերին ուտեցնում եմ, ինքս՝ սոված զկոսում: Բայց հենց քեզ եմ տեսնում՝ ինձ կորցնում եմ... կազմվածքս էլ՝ հետք: Կազմվածք ասի՞ հիշեցի: Երեկ մի կոստյում եմ գնել՝ Արմանի... վե՛րջն է, թկերը, օձիքը՝ ոսկեկար, ինքը՝ թեքն երկնագույն, բա կոճակները... շեղե՞վը, Լուվրը դեմք պառկած է իր եղած-չեղածով: Հազիվ եմ մեջը մտել: (Զննելով տորքի հերթական կտորը՝ դատապարտվածի պես կող է տալիս, համակերպված:) Լավ է, գոնե երեկ հասցրի հագնել, Դինայի ծնունդին: Թե չէ Արմանիս անորոշ ժամանակով բանտարկվեց պահրանում:

**ԿԻՆ -** (զալիս է՝ սպորտային կոստյումով է, մազերը պոչ կապած): Արդեն սկսե՞լ ես:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ -** Առայժմ վրայի պոպոք-պնդուկն եմ հուաց տվել: Սուրճը բեր:

**ԿԻՆ -** (գնում, երկու մեծ զավարով սուրճ է բերում): Դրասում ամենաշատը մեր այս «ռազմական» եմ կարուտում, երբ դիետա ու կալորիա մոռացած՝ ուզածիս չափ ուտում եմ:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ -** Լավ ճամփորդեցի՞ր:

**ԿԻՆ -** (քմծիծաղով): Ֆանտասի-կ...

հանդիպումներ, ելի հանդիպումներ, նորից հանդիպումներ, վերջում՝ մի երկու քուղը ես ստորագրում ու...  
(Հֆելսով դադար: ) Բրենդային հագուստի միակ ներկրողն այստեղ են եմ:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ - Wow!**

**ԿԻՆ** - Եռակի վիվատ, ինչպես ասում էին Հին Հռոմում: Ասենք, նոր Հռոմն էլ՝ ոչինչ: Թեև այս անգամ էլ ոչ մի տեղ չկարողացա գնալ:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ - (անհող):** Հետոն կգնաս: Հիմա խմել է պետք, առիթն էլ կա:

**ԿԻՆ** - Վաս միտք չէ, զիտե՞ս... (Բարից կոնյակի շիշ ու բաժակներ է հանում, լցնում:)

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ -** Հաղբանակիդ կենացը: (Խոնում է մինչև վերց:)

**ԿԻՆ** - (մտագրադ): Հաղբանակը դեռ շուտ է... (Կեղծ անհոգությամբ:) Նախ՝ մեր «ռազմական» կենացը: (Մի կում է անում:)

Այնպես են ոտելու, որ ներկայացումից հետո բոլոր գնան թխվածք գնելու:

**ԿԻՆ** - Ի՞նչ կա...

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ - (անհող):** Գողություն:

**ԿԻՆ** - Ի՞նչ...

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ -** Չորս օր առաջ քո վերևի բնակարանն են մաքրել:

**ԿԻՆ** - Են ուաքիս երգչի...

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ -** Հա: Երեկ էլ՝ մեր կողքինը...

**ԿԻՆ** - Սուպեր-պուպերի...

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ - (անհող):** Հա:

**ԿԻՆ** - Ենպես էլ հանգիստ ես ասում...

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ -** Որ իխտերիկ բղավեմ՝ բան կփոխվի:

**ԿԻՆ** - Փիլիսոփա արևի՝ դ մեռնի մարդու:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ -** Մարդուս պետքն էլ չի՝ ինչ ունենք՝ բանկի սեյֆում է:

**ԿԻՆ** - Դրանո՞վ է բացատրվում հանգլասությունը:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ -** Չե, հանգիստ եմ, որովհետև շիկահեր չեմ:

**ԿԻՆ** - Դա՞ ինչ կապ ունի գողության հետ:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ -** Են էլ ի՞նչ կապ... մանյակը միայն շիկահերներին է կպոշկում: Երեսում է, առաջին օնանիստական սեանսը Սեղլին Մոնրոյի նկարի առաջ է անցկացրել:

**ԿԻՆ** - Սպասիր, թող հասկանամ... Զասացի՞ր՝ գողություն, իիմա էլ՝ բռնաբարությո՞ւն...

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ -** Երկուսն էլ: Բայց քալանում են մեզ, ինքը ես հասկանում, էլիտար շենք է, կոնտինգենտն էլ՝ դատախազից մինչև աստղեր: Իսկ բռնաբարությունը կատարվում է թաղում, ինչքան հասկանում եմ, քաղաքի ամենափուլ շիկահերներն այստեղ են ապրում:

**ԿԻՆ** - Մի շաբաթ ուրս քաշեցի՝ ոչ միայն օֆիսում, փաստորեն շենքում ու թաղում էլ բարդակ է:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ -** Չե, դա երկար պատմություն է... մանյակին նկատի ունեմ: Նրան արդեն քանի ամիս է՝ բռնել չեն կարող: Իսկ գողությունը բարձ է, մի քանի օրվա:

**ԿԻՆ** - Ախորժակս կորավ:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ** - Վախեցա՞ր:

**ԿԻՆ** - Ինչի՞ց պիտի վախենամ: Ես ել քանիում սեյք ունեմ, մազերս ել, տեսնում ես, սև են, թե... արդեն ուզում էի ներկել, սալիտակ մազեր են հայտնվել: Պիտի հետաձգեն, թե չէ... վաղուց շեմ բռնաբարվել:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ** - (Աայելով դրամը):

Դուռդ ինչո՞ւ շեմ փակում:

**ԿԻՆ** - Ո՞վ չի փակում:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ** - Հա, ներսից ինքն ի-րեն փակվում է, քայց քանալին մեծ ջր քող: Համենայնինեպս:

**ԿԻՆ** - Հիմա ո՞վ է վախենում: (Հեռախոսազանգ:) Ներիր... (Հեռախոսի մեջ:) Սիմո՞ն... քայց դու ուրիշ ես, ին զոռով չի՞: Էղտեղ նորմա՞լ է... Քեզ տեսնեմ: (Հեռախոսն անջատելով:) Այ, հիմա կարող եմ խսել: (Խմում է մինչև վերջ:)

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ** - Շշեցի՞ր, ինչպես կասեր մարդս: Մարդս ասի՝ հիշեցի: (Տոպրակը մեկնելով:) Ես՝ քեզ:

**ԿԻՆ** - (Չփորված): Ես եմ Խոտալիայից գալիս, դու ես նվեր տալիս... Հոռմում խանութ մտնել չհասցրի, քայց վաղը...

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ** - Վաղն՝ անպայման նվերս կստանամ, իսկ հիմա...

**ԿԻՆ** - (Աայելով տոպրակի մեջ, տարակուսած): Սա՞ ինչ է:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ** - Բաց՝ տես:

**ԿԻՆ** - (Խանում է մետաքսն զիշերաշապիկն ու խալաքը): Ես ել վերջին մե՞ղքս եր: (Կանացի հետաքրքրությամբ զննելով:) Բայց ինչո՞ւ

մարդուդ անունը տալուց հետո սրա մասին հիշեցիր:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ** - Դա կոչվում է ասցիատիվ մտածողություն:

**ԿԻՆ** - Էղքանն ասիր, ու լեզուդ չօարդվե՞ց:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ** - Հույս չունենա՞ս, ինտերնետում ֆոֆոացող աղջիկ եմ: Իսկ եղ երկուսին իրար կապողը միջանկյալ հարցս է, եթե, իհարկեն, բոյլ տաս, որ հարցնեմ:

**ԿԻՆ** - Այսօր քարի եմ:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ** - Վերջին անգամ ե՞րբ ես տղամարդ տեսել:

**ԿԻՆ** - Սի ժամ չկա:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ** - Մերկ տղամարդու նասին է խսպը:

**ԿԻՆ** - Այնքան վաղուց, որ եթե հանկարծ տեսնեմ՝ լեղաճաք կլինեմ: Հատկապես, եթե կարճարոյ, կորոիկ փորով, խոտածածկ... ուզում էի ասել՝ բրդոտ է ու գուլպաներով...

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ** - Մղձավա՞նջ: Հորնենային ֆոնդ զրոյից ցածր է: Մեկնեկ սա վրադ քաշիր, հանկարծ ու քեզ կին զգաս:

**ԿԻՆ** - Դե, զիտե՞ս...

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ** - (լրջանալով): Գիտեմ, խելքդ տվել ես բիզնեսիդ, եղ որձերին մատներիդ վրա ես ֆոռացնում, քայց մի քսոտ սիրեկանն ի՞նչ է՝ չունես:

**ԿԻՆ** - Սիայն իմանաս, թե ինչքան պրոբլեմ ունեմ:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ** - Պրոբլեմներդ հա՛ ել շեն պրծնի:

**ԿԻՆ** - Ու՝ փառք Աստծո: (*Անկեղծ:*)  
Ես՝ ի՞նչ կին: Տղամարդկանց հետ  
գործ բռնողը ինքն էլ տղամարդու  
պես մի բան է դառնում:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ** - Իսկ դա մենք հիմա  
կսուզենք... (*Բարձրամում, բռնում  
է շապիկը, դմում իր վրա, հետո հե-  
ռու պահում, հիանում, «զայրակդում  
է»): Ի՞նչ կասես:*

**ԿԻՆ** - (*հայացը՝ հեռախոսին, մատ-*  
*ներով տակու է խփում, մտա-*  
*զրադարձութեան գործութեան մասին:*) Ի՞նչ ես ուզում, որ ասեմ:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ** - Ասա՝ «Wow, վերջն է»:

**ԿԻՆ** - Հավեսդ չունեմ:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ** - Ասա՝ «Հիմա որ  
չփորձեմ՝ կցնդեմ»:

**ԿԻՆ** - Էկլերը զլխիդ է խփել:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ** - Ասա՝ «Ուզո՞ւմ եմ,  
ուզո՞ւմ եմ հագնել այդ օդեղեն  
հրաշքը»...

**ԿԻՆ** - Ուաղդ քաշիր, հա՞՛, ու ընդհան-  
րապես, զնալուդ ժամանակն է, ե-  
րեխեքդ սովածացան:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ** - Փա՛յտ, գերա՛ն,  
բեսո՞ն...

**ԿԻՆ** - Գրանի՛տ: Ել ուտել չե՞ս ուզում:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ** - Ուրո՞ւտ...

**ԿԻՆ** - Այփող ու կոմպոտ... Վե՛րջ,  
դեպի սուն... (*Նրան ուղղորդում է  
դեպի դուռը:*) Ինքդ կիագնես ու  
մարդուդ դեմքը կփռֆոաս:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ** - Ես առանց հագնե-  
լու եմ ֆոփում... (*Ծարպկորեն  
խոլոյ է տալիս, շապիկը զցում է ա-  
թոռին ու ինքնակամ գնում դեպի  
դուռը:*) Կարող ես չհագնել, բայց  
բող աշքիդ առաջ մնա, որ նայես ու

անբավարարվածությունից քեզ  
բգիկ-բգիկ անես:

**ԿԻՆ** - Զե, էսօր էկլեր շատ կերար:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ** - Իզուր ի՞նչ եմ խո-  
սում, քեզ համար «ոտագվոհատը»  
ընդհամենը տորք ուտելն է: (*Ան-  
սպասելի համքուրում է ընկերուու  
այտը:*) Սիևնոյն է, քեզ շատ եմ սի-  
րում: Նվերս վաղը կստանա՞մ:

**ԿԻՆ** - Ստացար:

**Հարեանուիին** դուրս է գնում,  
բայց դուռը լրիկ չի փակում, մի  
պահ անց կամաց բացում ու ներս  
է նայում: Կինը համար է հավա-  
քում, հեռախոսը ականջին ու  
ուսին սեղմած՝ դատարկ բաժակ-  
ներն ու ափսեները տանում է  
խոհանոց ու չի նկատում հարեա-  
նուին արածը: Հարեանուիին,  
չարաճճի ժամանակը, դուռը լրիկ  
չի փակում ու անհետանում է:

**ԿԻՆ** - (*Վերադառնալով խոհանոցից:*)

Սիմոնը եկա՞վ... իսկ դու որտե՞ղ  
ես: Ուրեմն, արագացրու եղ թղբա-  
րանությունը: (*Անշատում է:*) Կոխս:  
(*Սերում է վիզը:*) Գլուխս պայթում  
է... օստեղիսնդրոց: Զարմանալի  
չէ, վերջին անգամ ե՞րբ եմ լողավա-  
զան գնացել: Իհարկե, չեմ հիշի: (*Աչքն ընկնում է շապիկին:*) Թեևս,  
ասում են, մի սեքսը երկու ֆիտնես  
է: Եթե կա: Բայց՝ չկա: (*Վերցնում,  
զմանում է շապիկը:*) Բայց ինչ օձն  
է... ճաշակն էլ օձի է, այսինքն՝  
գայթակղիչ... (*Նայելով պիտա-  
կին:*) Մարդը Ֆրանսիայից է բերել:  
(*Բազմոցից վերցնում է խալարը,*

զննում, հետո երկուսն իրար հետ անփոյթ ծալելով վերցնում, գնում է դեպի ննջարան:») Լեզուն էլ օճի է... (Նմանակելով:) «Քեզ համար ռազմատը ընդամենը տորք ուտելն է»: (Միացնում է հեռուստացույցն ու մտնում ննջարան:)

**ՀԱՎՈՐԴԱՎԱՐԻ ձայնը** - Քաղաքի, այսպես կոչված, էլիտար շենքերից մեկի բնակիչները խուճապահար են՝ մեկ շարաբում երեք կողոպուտ: Ավելի ճիշտ՝ երկու, որովհետև երրորդը ձախողվել է: Ինչպես հայտնեց ոստիկանության աշխատակիցը՝ այսօր տաճտիրոց անսպասելի տուն գալը խանգարել է գողին: Նա խիել է ձախորդ տաճտիրոց գլխին ու դուրս է փախել: Նույն աշխատակցի հավաստմամբ՝ գողին բռնելու գործողությունը շարունակվում է:

**Դուրս է գալիս Կինք՝ զիշերաշապիկով ու խալարով:** Ինքն էլ է իր արածից զարմացած՝ մոտենում է հայելուն, զննում իրեն:

**ՀԱՎՈՐԴԱՎԱՐԻ ձայնը** - Իսկ նոյն բաղամասը սարսափի մեջ պահող մոլազարի մասին նոր տեղեկություն չկա: Ամեն անգամ, հերթական գողին բռնարարելուց ու սպանելուց հետո, նրան հաջողվում է անհետանալ՝ ոչ մի հետք չքողմելով:

**Կին** - (անջատում է հեռուստացույցը): Զզվեցրի՛ք... չեք կարող բռնել՝ ձեմներդ կտրեք: Իմն ինձ հերիք չէ՝ գողին ու մոլազարն էլ՝ վրադիր: (Համար է հավարում:

Քարտուղարուին.) Ժաննա, ապրանքը պահեստ էլ որ հասնի՝ կմնաս... Կմնաս այնքան, ինչքան ինձ է պետք: (Հեռախոսն անջատելով:) Բբոե՛ջ... (Մատներով տակտ խփելով, մտազրադ:) Վասչի հնչում՝ բբոեց, հետաքրքիր է, ի՞նչ տեսք ունի, կենդանի՞ է, թե՞ բռչուն... Ինչ էլ լինի, իրեն շատ է սազում: ԲԲՈԵՋ: (Հայելու մեջ իրեն նայելով:) Դու էլ պակաս բբոեցը չես: Բայց՝ պիժամով, որովհետև պիժամը միջին սեռի համար է... Իսկ սա վառ արտահայտված իգական սեռի համար է նախատեսված՝ նուրբ, փափուկ... (Այլ տոնով:) Փափուկ... խաղալիք: (Համար է հավարում:) Վահե, բոխան պատրաստեցի՞ր: Հիշեցնե՞ն, թե՞ զիտես, որ խաղալիքից բացի վարդերն ել չես մոռանալու: (Հեռախոսն անջատելով:) Քիբս կարեմ, թե չեր մոռացել: (Հայելու մեջ նայելով:) Բայց հնարավո՞ր է սրանով քերել... տղամարդու հետ: (Հարմարվում է բազմոցի վրա, բայց իհաճ-որ բան խանգարում է, տեղից ելնում, բազմոցի ու բարձի արանքում ընկած ատրճանակը պտտեցնում է ձեռքի մեջ, խորում է բարձի տակ, ուորերը դնում է թիկնակին ու փակում է աշքերը:) Տղամարդու հետ՝ չզիտեմ, բայց բազմոցի վրա, ատրճանակն էլ բարձիդ տակ, շատ լավ էլ հնարավոր է գոնեն մի տասը բռպել մրփել:

**Լոռություն:** Քիչ անց դրան բըռնակն սկսում է շարժվել, հետո կամաց բացվում է դրուք: Կիճը աղմուկից բացվում է աչքերն ու զարմացած հետևում, թե ինչպես զգույշ բացվում է դրուն ու ներս է մտնում Անձանոքը: Համբ տեսարան:

**ԿԻՆ -** (փորձելով ցույց չտալ, որ վախեցած է, ձեռքը տանում է բարձի տակ, աննկատ վերցնում է ատրքանակը): Սիայն չասեք, որ ձեզ եմ սպասում:

**ԱՆԾԱՆՈԹ -** Որտեղի՞ց մեզ այդքան բախստ...

**ԿԻՆ -** Հերիք չէ՝ անկոչ հյուր, հետն էլ՝ անհաջող շողոքորք:

**ԱՆԾԱՆՈԹ -** Ինչո՞ւ անհաջող...

**ԿԻՆ -** Այսինքն՝ անկոչ հյուր ու շողոքորք լինելուն համաձայն եք ու միայն «անհաջող» բառը ձեզ վիրավորե՞ց:

**ԱՆԾԱՆՈԹ -** Անկոչ հյուրը վիրավորվելու իրավունք չունի: Ի դեպ, կարելի՞ է... առաջ գալ:

**ԿԻՆ -** Վերջապես հիշեցիք: Ներս իրավիրեմ, որ վիրավորվելու իրավո՞ւնքը ունենար:

**ԱՆԾԱՆՈԹ -** (ձգվող դադար, երկուսն էլ չեն ուզում առաջին խոսել:): Դե, ի՞նչ որոշեցիք:

**ԿԻՆ -** Դեռ որոշելու բա՞ն ունեմ:

**ԱՆԾԱՆՈԹ -** Կարող եք ասել՝ չըվիր...

**ԿԻՆ -** Կչքվե՞ք:

**ԱՆԾԱՆՈԹ -** Հա, բայց ավելի ուշ: (Հանելով բաճկոնը, կախում է կախիչից, նախապես նրա գրպանից

հանելով սիզարետը, վառիչը: Տեսանելով, որ Կիճն ուզում է ուորերն իջեցնել թիկնակից:) Կարիք չկա, դուք ձեր տանն եք:

**ԿԻՆ -** (առերես հանգիստ): Լավ է՝ հիշեցրիք, թե չէ արդին կասկածում էի, որ իմ տանն եմ:

**ԱՆԾԱՆՈԹ -** (շորջը նայելով): Ի դեպ, դա հարաբերական հասկացություն է: Այսօր ձեր տունն է, վաղը կարող է ուրիշինը դառնալ: Մենա՞կ եք:

**ԿԻՆ -** Ի՞նչ եք կարծում, այսպես հագնված կիմը կարո՞ղ է մենակ լինել:

**ԱՆԾԱՆՈԹ -** (նրան զննելով): Ավելի ճիշտ՝ այսպես հանված... Ես այդ այդ հարցը չեմ տա, եթե դուք այսպես հանված... պարտոն, հագնված՝ ննջարանում լինեիք:

**ԿԻՆ -** Հենց նոր այնտեղից դուրս եկա: Նա սերսից հետո քննելու սովորություն ունի:

**ԱՆԾԱՆՈԹ -** Ու դուք չեք ուզում նրան խանգարել:

**ԿԻՆ -** Կոսիեցիք:

**ԱՆԾԱՆՈԹ -** Իսկ նա... լա՞վ սիրելան է:

**ԿԻՆ -** Շշմելո՞ւ:

**ԱՆԾԱՆՈԹ -** Կասկածում եմ:

**ԿԻՆ -** Այդ ինչո՞ւ...

**ԱՆԾԱՆՈԹ -** Շշմելու սերսից հետո նա խոնմփացնո՞ւմ է:

**ԿԻՆ -** Ե՞ն եք պակաս:

**ԱՆԾԱՆՈԹ -** Եի բան է... թե չե նա այստեղ՝ քննած, դուք այստեղ՝ չքավարված...

**ԿԻՆ -** (ատրճանակը աջ ձեռովով քի-

կունքում պահած՝ տեղից ելնելով): Ի՞նչ...

**ԱՆԾԱՆՈԹ** - Իզուր ելաք... Ասացի, չէ՞ դուք ձեր տանն եք, թեև՝ չբավարարված: Հակառակ դեպքում քնած կիմնեիք նրա տաք գրկում: Տես, է, հանգը կպավ:

**ԿԻՆ** - Հիմա ուրիշ բան կկանի:

Կինը ձախ ձեռքը ձեռքը տանում է քիչածքին, Անծանոքը հասցենում է մոտենալ, բռնել նրա ձեռքն ու իր ձեռքով ստիպել սեղմել-ճգնել քիչածքը: Հետո բարձրացնում է Կնոջ ձեռքի մեջ ճմլված քիչիլիուրը:

**ԱՆԾԱՆՈԹ** - Սեքսից հետո դուք մոտավորապես սրա վիճակում պիտի լինեիք:

Իրեն է մոտեցնում Կնոջ ձեռքը, ասես պատրաստվում է լպստել: Կինը ատրճանակը պահում է նրա վրա: Անծանոքը կայծակնային արագությամբ այնպես է սեղում նրա աջ դաստակը, որ ատրճանակը ընկնում է հատակին: Անծանոքը ռորով հրում քշում է բազմոցի տակ: Այդպես լուս, հայացքներով մենամարտում են: Ի վերջո Անծանոքը բաց է քողնում նրա ձեռքերը:

**ԿԻՆ** - Ի՞նչ է ուզածի:

**ԱՆԾԱՆՈԹ** - Առայժմ՝ ոչինչ: (Ասես երեխայի հետ է խոսում:) Բայց եքս մեզ խելոք պահենք, գնանք, բարիկները լվանանք՝ այդ ընթացքում ուղենալու բան հաստատ կգտնվի:

**ԿԻՆ** - Երկու հաջողված գողությունը հերիք չէ՞ր, այսօր կարող էիք հանգստյան օր հայտարարել:

**ԱՆԾԱՆՈԹ** - Նախ՝ բարիկները լվանալ: (Նրան ուժով բարձրացնում է տեղից: Կիմը ճարահատյալ ենթարկվում է:)

**Կինը գնում է լոգարան, Անծանոքը հետևում է նրան: Շեմի մոտ Կինը շրջվում է:**

**ԿԻՆ** - Ի՞նչ ես շնչիս կայել: (Արդեն մերսից): Ասում եմ՝ ինձնից հեռու մնա:

**ԱՆԾԱՆՈԹ** - Որ դու զանգես:

**ԿԻՆ** - (դուրս գալով): Ո՞ւմ:

**ԱՆԾԱՆՈԹ** - Թեկուզ քնած Կազանովայիդ:

**ԿԻՆ** - (ուղիղ նայելով Անծանոքի աչքերին): Ես մենակ եմ:

**ԱՆԾԱՆՈԹ** - Սպասում էի՝ երբ կիսուտովանես: Նշանակում է՝ մենակ ես ու զինված: Չե, արդեն՝ զինաբափված:

**ԿԻՆ** - Դա հետո կտեսնենք:

**ԱՆԾԱՆՈԹ** - Էղ համարձակությունդ վախի նշան է, զիտե՞ս:

**ԿԻՆ** - Դու քո մասին մտածիր: Շենքը մենքերով լցոնված է:

**ԱՆԾԱՆՈԹ** - Ես էլ բողեցի, որ օգնության կանչես:

**ԿԻՆ** - Մենքերը շուտ գնացողը չեն:

**ԱՆԾԱՆՈԹ** - Շատ հնարավոր է:

**ԿԻՆ** - Բայց էղ խեղճի զլխին ինչո՞վ խփեցիր:

**ԱՆԾԱՆՈԹ** - (հարցը չհասկանալով): Ե՞ս...

**ԿԻՆ** - Գողը դու չե՞ս...

**ԱՆԾԱՆՈԹ** - Նմա՞ն եմ:

**ԿԻՆ** - (Արան զմնելով ոտից-զլոյի): Ա-  
վելի շատ ժիգոլոյի ես նման:

**ԱՆԾԱՆՈԹ** - Ինձ դուք չի գալիս  
մտքերիդ ընթացքը:

**ԿԻՆ** - (լրջանալով): Ինձ էլ շատ բան  
դուք չի գալիս, դու համար էլ հենց  
հիմա խելոք դուրս ես գնում, թե չէ,  
չգիտեմ՝ ոնց, բայց շենքը ոտքի  
կհանեմ:

**ՀԵռախոսազամք:** Կինը նայում է  
էկրանին, մռայլվում է: Զգիտի՝  
խոսի՞, թե՞ ոչ: Անծանոթը հե-  
տևում է:

**ԿԻՆ** - (փոխված ձայնով): Ես պիտի  
խոսեմ:

**Զանգերը չեն դադարում:** Անծա-  
նոթը նայում է էկրանին:

**ԱՆԾԱՆՈԹ** - Համարը փակ է:

**ԿԻՆ** - Մի վախենա, մենք չենք:

**ԱՆԾԱՆՈԹ** - Մենքից վատն էլ է  
լինում: (Նկատի ունենալով զանգո-  
ղին) Համառն է... Լավ, կարող ես  
խոսել:

Կինը մոտենում է քենեզրին ու  
վերջապես միացնում համարը:  
Անծանոթը, առիքը բաց շրողնե-  
լով, մոտենում-նստում է սեղանի  
մոտ, իսկ քիչ անց սկսում է  
ոչնչացնել քիվածքը:

**ԶԱՅՆ** - Մտածեցի՞ր...

**ԿԻՆ** - Նախ՝ բարկիր:

**ԶԱՅՆ** - Բարկը կարևոր չեն, դու մտա-  
ծիր՝ ցտեսությո՞ւն կասեմ, թե՞  
մնաս բարով:

**ԿԻՆ** - Չես վախեցնի: Ում ինչքան  
հասնում է՝ տալիս եմ: Ցուցակով:

**ԶԱՅՆ** - Ասում եմ՝ չե՞ս տալիս:

**ԿԻՆ** - Բա էլ ի՞նչ...

**ԶԱՅՆ** - Իսկ դու մտածիր:

**ԿԻՆ** - Ախորժակդ բորբոքվել է, հա՞:

**ԶԱՅՆ** - Ախորժակս միշտ էլ նույն է:  
Իտալիա՞ էիր գնացել:

**ԿԻՆ** - Եթե հարցնում ես, ուրեմն՝ զի-  
տես:

**ԶԱՅՆ** - Դու էլ աղջկա զիտես:

**ԿԻՆ** - Աղջկա՞ն...

**ԶԱՅՆ** - Հաստատ պառավում ես:

Ժամանակին խոսքը բերանիս  
մեջ՝ պատասխանն արդեն ունեիք:

**ԿԻՆ** - Հիմա էլ ունեմ: Ուրեմն՝ աղջկիդ  
իմ բիզնեսն է ուզում:

**ԶԱՅՆ** - Իր ասելով՝ հա:

**ԿԻՆ** - Ե՞ր է հասկացել, որ ուզում է:

**ԶԱՅՆ** - Երկու օր առաջ:

**ԿԻՆ** - Երկու օր առաջ Իտալիայում  
պայմանագիրն էի կնքում: Ի՞նչ ի-  
մանայի, որ այստեղ նրա սիրտն  
ինչ է ուզում:

**ԶԱՅՆ** - Դրա համար էլ ապրանքի  
անվնաս է... առայժմ: Փոխարենը  
Արմենը... հա, ախրանայիդ պե-  
տը... չեն, դեռ սեփական բաղմանը  
չի մասնակցում, առայժմ՝ պա-  
տաճան է: Բայց եթե երկար մտա-  
ծես՝ բաղման ծախսերը վրադ  
կմնան:

**ԿԻՆ** - Դրա համա՞ր օֆիսում շունը  
տիրոջը չեր ճանաչում:

**ԶԱՅՆ** - Հասկացող ես, երբ քեզ պետք է:

**ԿԻՆ** - Պայմանդ ասա:

**ԶԱՅՆ** - Գիտես, որ աղջկա համար  
ոչինչ չեմ խնայի:

**ԿԻՆ** - Մի ժամանակ նույն բառերն  
ինձ էիր ասում:

**ԶԱՅՆ** - Թողի՞ր, որ...

**ԿԻՆ** - (*Կոպիտ ընդհատելով*): Փաստաբրդերն ինձ մոտ են: Բայց միայն քեզ կտամ: Առանց վկաների:

**ԶԱՅՆ** - Խե-խե-խե... համ էլ կտեսնըվենք:

**ԿԻՆ** - Դե, երեւ ասածս այդպէս հասկացար... Հիշում ես, որտեղ էինք հանդիպում:

**ԶԱՅՆ** - Ե՞րբ կգաս:

**ԿԻՆ** - Սի ժամից... ամենաուշը: Երեւ հենց հիմա տղային բաց քողնես:

**ԶԱՅՆ** - Արդեն բողած է:

**ԿԻՆ** - Ուրեմն, նաև կտեսնվենք: (*Անջատում, քարացած նայում է անորոշ կետի:*)

**ԱՆԾԱՆՈԹ** - (*Ժամելով*): Պրոբեմ կա՞:

**ԿԻՆ** - (*Արափվում, նայում է նրան*): Դեռ այստե՞ղ ես:

**ԱՆԾԱՆՈԹ** - Կհասցնեմ գնալ, միշտ չէ, որ հաջողվում է տորբ ուտել:

**ԿԻՆ** - Զզվում եմ քաղցրակեր տղամարդկանցից:

**ԱՆԾԱՆՈԹ** - Թխվածքն ու կինը նույնն են՝ երկուսն էլ հեշտ են ուտվում:

**ԿԻՆ** - (*այս ընթացքում իմշ-որ բան է մտածում, զմում-զալիս է սենյակ-ներում*): Ասացի՝ չքվիր:

**ԱՆԾԱՆՈԹ** - Ու չե՞ս վախենում, որ քո զլիսին էլ կխփեմ...

**ԿԻՆ** - Խփողը ներս մտնելուն պես կխփեր:

**ԱՆԾԱՆՈԹ** - Չոկեցիր, էսօրվա պլանս կատարել եմ:

**ԿԻՆ** - Ուրեմն՝ քշվիր էստեղից:

**ԱՆԾԱՆՈԹ** - (*Հայելով դատարկ ափ-*

*սեին*): Արդեն կարելի է... (Ի պատասխան Կնոջ կատաղած հայցրին:)

**ԿԻՆ** - Բախստդ բերել է, որ մենքերին տանել չեմ կարող, թե չէ արդեն քեզ տարել էին: (Յոյց է տալիս դրուր:)

Ես պիտի գնամ:

**ԱՆԾԱՆՈԹ** - Գնա, քեզ կսպասեմ...

(Այլ տոնով:)

**ԿԻՆ** - Դո՞ւ... (Կամաց, բայց որ նալի): Դու էիր պակաս... ծախորդ դերիլ:

**ԱՆԾԱՆՈԹ** - Դա էլ հարաբերական հասկացույթուն է, քիչ առաջ ես էի ծախորդը, հիմա հերթը քոնն է:

**ԿԻՆ** - Քեզնից ծախո՞րդ... (Դուան զանգ:)

**ԱՆԾԱՆՈԹ** - (առաջին անգամ տագնապած): Ի՞նչ ես ուզում անել:

**ԿԻՆ** - Երբ զանգում են, դուռը բացելու բնազդս արքնանում է:

**ՔՆՆԻՉ** - (դուան ետևից): Բացեք, ուժիկանությունն է:

**ԿԻՆ** - Հիմա ո՞վ է ծախորդը:

**ԱՆԾԱՆՈԹ** - Գործ տվո՞ղ ես:

**ԿԻՆ** - Ժարգո՞նը, ի՞նքը... Իսկ գործ չուլու օգուտս ո՞րն է:

**ԱՆԾԱՆՈԹ** - Պարզ հաշիվ՝ դու ինձ կօգնես, ես՝ քեզ:

**ԿԻՆ** - Ի՞նչ կարող ես անել՝ զողությունից բացի: Են էլ՝ տեսանք...

**ԱՆԾԱՆՈԹ** - Դեռ չես տեսել: Ես ուրիշ բանի էլ ընդունակ եմ: (Երկիմաստ:)

**ԿԻՆ** - Մազերիդ զոյնը... վատը չէ: Ներկա՞ծ է:

**ԿԻՆ** - (ակնդետ նայում է նրան, ասես

**Առոր է տեսնում:** Բնականից սևա-  
հեր եմ: Կարող է՝ բախտու թերել է:

**ԱՆԾԱՆՈԹ - Հնարավոր է:**

**ԿԻՆ -** Պատասխանատու հայտարա-  
րույթուն է... (Մատները տակու են  
խփում՝ մտածում է:) Ինչ էլ ասեմ՝  
կանե՞ս:

**ԱՆԾԱՆՈԹ -** Ընտրույթուն ունե՞մ:

**ԿԻՆ -** Չունես:

**ԱՆԾԱՆՈԹ -** Ուրեմն՝ կանես:

**ԿԻՆ -** Ստրուկի պե՞ս:

**ԱՆԾԱՆՈԹ -** Ախորժա՞կը...

**ԿԻՆ -** Ստրուկի պե՞ս...

**ԱՆԾԱՆՈԹ -** Դրանց ձեռքը չպիտի  
ընկնեմ:

**ԿԻՆ -** Պայմանավորվեցինք: (Մոտե-  
նում, քաշում-հանում է նրա պիջա-  
կը:)

**ԱՆԾԱՆՈԹ -** Ժամանա՞կ գտար:

**ԿԻՆ -** Հալովդ մնա:

**ՔՆՆԻՉ - (դրսից):** Չե՞ք լսում... ասում  
եմ՝ բացեք, ոստիկանուրյունն է:  
Կինը քանդելով վերնաշապիկի  
կոճակները՝ նրան հրում է ննջա-  
րան: Հայելու առաջ թերևակի  
զգում է նազերը, հանում խալաքն  
ու բացում է դուռը:

**ԿԻՆ - (Ավաղկոտ):** Ի՞նչ եք գոռում:

**ՔՆՆԻՉ - (դրսից):** Չեք լսո՞ւմ... մի  
ժամ է՝ գոռում եմ:

**ԿԻՆ -** Բայց ինչո՞ւ եք գոռում:

**ՔՆՆԻՉ - (Աերս է մտնում՝ ցույց տա-  
լով վկայականը):** Ինչո՞ւ դրուր չեք  
բացում:

**ԿԻՆ - (հաճույքով ձգվելով, երկի-  
մաստ):** Բացեցի, երբ... կարողա-  
ցա:

**ՔՆՆԻՉ - (Առոր տեսնելով նրա վիճա-  
կը):** Այս ժամի՞ն...

**ԿԻՆ -** Իսկ դրա համար հատուկ ժա՞մ  
կա... (Ասես առոր նկատելով, որ  
շապիկով է, արագ վրան է քաշում  
խալաքն ու գնում դեպի ննջարան:)  
Գամփոիկս... այստեղ քննիչ կա:

**ԱՆԾԱՆՈԹ - (Աերսից):** Ինչ կա՞...

**ԿԻՆ -** Քննիչ: (Հայացքով «Համփ-  
րելով» Քննիչին: ) Շատ ջահել... ու  
շատ սերսուալ:

**ԱՆԾԱՆՈԹ - (Աերսից):** Ինչուա՞լ...

**ԿԻՆ -** Կարևոր չէ, դուրս արի:

**ԱՆԾԱՆՈԹ -** Գուցե դո՞ւ լուծես նրա  
հարցերը:

**ԿԻՆ -** Այդ մեկը՝ կարող եմ... (Կատ-  
վի նազանքով մոտենում է նրան: )  
Ի՞նչ եք ուզում ինձնից:

**ՔՆՆԻՉ - (Հիրոված):** Զեզնից՝ ո-  
չինչ... Շենքում գողություն է կա-  
տարվել:

**ԿԻՆ -** Լսել եմ, բայց ի՞նձ ինչ:

**ՔՆՆԻՉ -** Անձանոք, կասկածելի մարդ  
չե՞ք տեսել:

**ԿԻՆ -** Այս շենքում եքե կասկածելի  
մեկը կա՝ պառկած է իմ ննջարա-  
նում, բայց նա... հասկանում եք,  
քե ով է նա:

**ՔՆՆԻՉ - (Խեղդուկ հազարով):** Այն, ի-  
հարկե...

**ԿԻՆ -** Շաբաթից ավելի քաղաքում  
չէի, ու դուք պիտի իմանաք, թե ինչ  
են անում կինն ու տղամարդը  
այդքան երկար բացակայությու-  
նից հետո... Թե՞՞ բացատրության  
կարիք կա: Ես կարող եմ: («Մար-  
տական» կեցվածքով նրան ուղ-  
ղորդում է դուրս:)

**ՔՆՆԻՉ - (նահանջելով դեպի դուռը):**

Ոչ, ոչ, պետք չէ, ես ինքս... ի վիճակի եմ հասկանալ... Միայն զգույշ եղեք... դուռը փակ պահեք...

**ԿԻՆ - (նրա հետևից դուռը փակելով):**

Ու բանալին անպայման՝ դրան վրա: (Բանալին դնում է փականի մեջ: Գոհ: ) Այսպեսն... (Անձանորի պիջակի ծոցագրպանից համում է անձնագիր ու էլի ինչ-որ թղթեր, խցկում բազմոցի տակ: Դեպի մնջանալը:) Կարող ես դուրս գալ: Գնաց:

**ԱՆՁԱՆՈԹ - (դուրս է գալիս՝ կիսամերկ): Զգնաց, փախսավ:****ԿԻՆ - (նրան զննելով): Ինձ միայն սա՛ եր պակաս...****ԱՆՁԱՆՈԹ - (երկիմաստ): Պակասը կարող եմ լրացնել...****ԿԻՆ - Կասկածելի սերսուալ տեսքիդի համար չխաղացի քիչ առաջվարարությունը, որն, ի դեպ, քրեական օրենսգրքում համապատասխան հոդված ունի:****ԱՆՁԱՆՈԹ - (զնում, մնջարանից դուրս է գալիս վերճաշապիկի կոճակները կոճկելով): Ուրեմն, երբ ասում էիր՝ ամեն ինչ, սերսուալ ծառայությունները այդ ամենի մեջ չեն մտնում:****ԿԻՆ - Այդքանը՝ հասկացար: Մնում է հասկանաս, թե ինչ ես անելու:****ԱՆՁԱՆՈԹ - Հիմա՞:****ԿԻՆ - Հենց հիմա:****ԱՆՁԱՆՈԹ - (ամեն բառը շեշտելով): Ի՞նչ պիտի ամեն հենց հիմա:****ԿԻՆ - Սպանես:****ԱՆՁԱՆՈԹ - Ի՞նչ...****ԿԻՆ - Սպանես... վերացնես... վերջը տաս... սատկացնես:****ԱՆՁԱՆՈԹ - Ընդամենը:**

**ԿԻՆ - Ընդամենը:** Միայն այսօր: Միայն մի սրիկայի:

**ԱՆՁԱՆՈԹ - Եթե նորից կրկնես...**

ինչ-որ դժվար եմ հասկանում:

**ԿԻՆ - (ինքն է՝ ամեն բառը շեշտելով):**

Բարի եղեք, սատկացրեք դրան:

**ԱՆՁԱՆՈԹ - Իսկ եթե ես միայն գո՞յն եմ:**

**ԿԻՆ - Գոդից մինչև մարդասպան՝ մի քննիչ է, որը ֆոֆում է շենքում:**

**ԱՆՁԱՆՈԹ - Ինչպես... սպանեմ, վերացնեմ և, վերջապես, սատկացնեմ:****ԿԻՆ - Պրոբլեմ չէ: Ասրճանակի տեղն էլ գիտես:**

Անձանորը բազմոցի տակից հանում է ատրճանակը, ստուգում է պահունակը:

**ԱՆՁԱՆՈԹ - Լուրջ գենք է... Ահա թե ինչն եր հանգստությանդ պատճառը, լավ էլ զինված ես:****ԿԻՆ - Անգամ էլիտար շենքում քեզ ապահով զգալ չես կարող: (Գործնական: ) Մաքուր է, զործի մեջ չկա: Կլրակես, կողքը կցցես:****ԱՆՁԱՆՈԹ - Քիլերի պես խոսեցիր:**

**ԿԻՆ - Եթե ուզում ես մարդապարի այլրել՝ քիլերի պես պիտի խոսես:**

**ԱՆՁԱՆՈԹ - Ես կարող եմ հրաժարվել:**

**ԿԻՆ - Կարող ես: Բայց անձնագիրդ ու մնացածը իմձ մոտ է:**

**ԱՆՁԱՆՈԹ - (կատաղած նրա կողմը մետվելով): Քա՞ ծ...**

**ԿԻՆ - Ստո՞ւպ: Կարող ես շարունակել, եղ բառերի հերթականությունն**

ու շարունակությունը գիտեմ: Համ էլ՝ ժամանակ չկա: Նա քեզ է սպասում:

**ԱՆԾԱՆՈԹ - (շար):** Սիրեկանդ:

**ԿԻՆ -** Նմա՞ն եմ խանդից ցնդած հավիկի:

**ԱՆԾԱՆՈԹ -** Ուրիշ տարբերակ չգիտեմ:

**ԿԻՆ -** Որտեղի՞ց իմանաս... ձախորդ դամուշնիկ: Բիզնեսս է ուզում վերցընել:

**ԱՆԾԱՆՈԹ -** Եթե քեզնից վերցնելու հույս ունի՝ ուրեմն լուրջ մարդ է: Նրա մո՞տ էիր գնալու:

**ԿԻՆ -** Ինձ է սպասում, բայց դու կը գնաս: Սի վախենա, նա մենակ է:

**ԱՆԾԱՆՈԹ -** Տանը՝ ու մենա՞կ... Չես համոզի:

**ԿԻՆ -** Տանը ինչպե՞ս կարող է մենակ լինել՝ կին, երեխա, ծառա, թիկնապահ... Գաղտնի հանդիպումների համար որք ունի:

**ԱՆԾԱՆՈԹ -** Ելի չհամոզեցիր:

**ԿԻՆ -** Եթե հանդիպումը գործնական է՝ պարզ է, որ մենակ չի լինի: Բայց եթե կնոջ է սպասում...

**ԱՆԾԱՆՈԹ -** Չասացի՞ր՝ սիրեկանդ չի:

**ԿԻՆ -** Դա վաղուց էր: Իսկ դրանից հետո...

**ԱՆԾԱՆՈԹ -** Թշնամուց վատ է:

**ԿԻՆ -** Տես, Է՛, հասկացավ... (Պոռք-կալով:) Տականքն ուզում է վայելել իր հաղբանակը: Բա ո՞նց, վերջապես կարողացավ ծնկի քերել՝ իր լակոտի համար կիսի բիզնեսս ու ձեռի հետ էլ ինձ կպառկացնի...

**ԱՆԾԱՆՈԹ -** Ո՞նց եմ հասկանում իրեն... (Նրա հայացքին ի պատասխան:) Բիզնեսի մասը նկատի ունեմ: (Վերցնելով ատրճանակը, զննում, դնում է գրպանը:) Հասեն:

**ԿԻՆ -** (քրքի վրա ինչ-որ բան է գծում): Փողոցի կողմով շնունես... Տարը մետք ներքն՝ դրնակ է, այնտեղից... աջ կողմի դուռը... հետո՝ աջ...

**ԱՆԾԱՆՈԹ -** (ափակը հազնելով): Գիտեիր, որ առանց շանտաժի ել ասածդ կանեի:

**ԿԻՆ -** Գիտեի:

**ԱՆԾԱՆՈԹ -** Ու գողացար անձնագիրս:

**ԿԻՆ -** Որ վերադառնաս:

**Անձնանոքը գնում է:** Խավարում:

**Քեմը լրսավորվում է:** Կինը սպորտային կոստյումով ու հոդաքափերով է: Անհանգիստ քայլելով սենյակում՝ խոսում է հեռախոսով:

**ԿԻՆ -** Զիգյա՞ր... ամեն ինչ նորմա՞լ է: Մաղարիչ, էն էլ՝ ինչ մաղարիչ... Էս մեկն արդեն քեզ, անձամբ, ծուերդ ու կնիկդ՝ բորբոքիմ: Բա ո՞նց, իրենց տեղն էլուել է: Ցե: (Անջատում է հեռախոսը:) Կազյոլ: (Նոր համար է հավաքում:) Ժաննա... Կարող ես տուն գնալ: (Հեռախոսն անջատում է:) Բքե՞զ: (Հեռախոսազանգ: Նայում է էկրանին, փորձում է զսպել հուզմունքը:) Արմե՞ն... Բաց բողի՞ն: Գիտեմ... հա, մի քիչ էլ ուշանայի՝ սեփական քաղմանդ կմասնակցեիր: Եսօք

տուն գնա, վաղը կխոսենք: (*Հեռախոսն անջատում է:)* Լուզեռ... (*Գնում է խոհանոց:* Դուն զանձ: Վերադառնում է սուրճի բաժակով, բացում է դուռը՝ ճախապես ճայտլով դիտակից:)

**ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ - (Աերս ընկնելով):** Երանի քեզ... Սադ շենքը ականջին տնկված՝ գող է բռնում, սա դինջ, իր հաճույքին սուրճ է խսում: (*Նրա ձեռքից վերցնելով բաժակը՝ ինքն է խսում մի քանի մեծ կում, վերադառնում Կնոջը:*) Բերանս վառվեց... (*Տեսնի մեջ լինի ասես՝ աղբենալինը գոլուսն է խփել:*) Մենակ իմանաս՝ ինչ էր կատարվում... սաղը դուրս են թափվել, ով ինչ է ասում, ով ինչ է անում կամ ում է անում՝ պարզ չէ, մենքերը մեկ պարզալ են մտնում, մեկ տաճիք են բարձրանում, ժուռնալիստներն ել մի կողմից են վրա տվել... Մղձավա՞նց: Անուշը երեք անգամ ուշաբափեց, մեկը՝ իսկական, երկուսը՝ կեղծ:

**Կիւ - (հայացրով նրան հետևելով, մելամխոյիկ):** Ինչի՞ց որոշեցիր:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ - Ընկնելու ձևից:** (*Նորից է վերցնում բաժակը, խսում է, ճայում քիչածքի ափսեին:*) Ես ալծա՞վ...

**Կիւ - (ինքն էլ ճայելով ափսեին):** Փաստորեն՝ հա:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ - Սադ շենքը գող է բռնում, դու տորք ես հուպ տալիս... ու մի գրամ չես գիրանում:**

**Կիւ - Իմ պրոբլեմներից դու էլ ունենաս՝ չես գիրանա:**

**ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ -** Դու մի պրոբլեմ ունես՝ մոռացված սեքս, են էլ՝ կամավոր ես հրաժարվել:

**Կիւ -** Երանի՝ քեզ, սադ շենքը գող է բռնում, դու իմ պրոբլեմով ես տապակվում...

**ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ -** Արդեն բռնեցինք:

**Կիւ - Գողի՞ն:**

**ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ -** Բա էլ ո՞ւմ: Շենքը կանգնի՝ գող կրօնի... քեն մեր շենքում գողի պակասություն չկա: Պարզապես մերոնք մեծ մասշտարի գողեր են, ոչ թե եղ քսոս թանձին:

**Կիւ - (զարմացած-տագնապած):** Որտե՞ղ բռնվեց:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ -** Տանիքում, դատախազը բուխարիկ է սարքել տվել, են, որ զառ է խորովում մեջը... Շենքից դուրս գալ չէր կարող՝ դոները փակել էին, մնում էր՝ մի տեղ թարնվեր, նա էլ բարձրացել է տանիքը, մտել բուխարու մեջ ու լովել... բա՞:

**Կիւ -** Իրեն տեսա՞ր...

**ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ -** Բա ո՞նց... մրի մեջ կորած, զլուխը քաշալ, անդուր բոյվ... երկրորդ Բարաքը:

**Կիւ - Օքամա՞ն...**

**ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ -** Նրա ականջից հեռու: (*Նոր մկատելով Կնոջ ուսակցիան:*) Ասած դուրդ չի՞ զալիս:

**Կիւ -** Ինչի՞ց որ...

**ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ -** Ոնց որ... դժգոհ լինես:

**Կիւ -** Հոգնած եմ:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՀԻ -** Եղբանը մենակ ու-

տեի՝ գերհոգնածություն կստանա-  
յի: (*Մինչև վերջ սուրճը խմելով՝*  
*բաժակը տալիս է Կառշն ու զնում*  
*դեպի դուռը:*) Կինոն պրծավ, սկրս-  
վում է առօրյան ու ձանձրույթը:  
Գոնք մի քիչ ուշ բռնեին էդ գորին...  
Ի՞նչ աղքենալին էր:

**ԿԻՆ** - (*մտախոհ*): Ուրեմն, գողը բռնը-  
վեց:

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ** - Մնաց մաճյակը,  
բայց նա մեր շենքում գործ չունի,  
ո՞ւմ պիտի բռնաբարի:

**ԿԻՆ** - Հա, մեզ կարելի է կողոպտել,  
բայց բռնաբարել՝ իր՝...

**ՀԱՐԵՎԱՆՈՒՔԻ** - Մենք ում պետք է՝  
ինքներս կրոնաբարենք: (*Նայելով*  
*դռան բանալուն:*) Բայց բանալին  
թող մնա փականի մեջ: Համենայն-  
դեպս: (*Գնում է:*)

Կինը, դրան մոտ կանգնած, ինչ-  
ոք բան է մտածում՝ մատները  
մարտական տակտ են խփում, հե-  
տո հանում է բանալին, զցում դա-  
րակին՝ դուռը բան է: Մոտենում է  
պասուհանին, դրւու է նայում:  
Քիչ անց կամաց բացվում է դուռը:

**ԱՆԾԱՆՈԹ** - (*բաճկոնը կախելով*):  
Սիայն շասես, որ ինձ չես սպասում:

**ԿԻՆ** - Սպասում եմ, ինչ կասես:

**ԱՆԾԱՆՈԹ** - Ես ասելու բան չունեմ:  
Նա ասաց:

**ԿԻՆ** - Ե՞րբ հասցրեց:

**ԱՆԾԱՆՈԹ** - Սիրում եմ սպանելուց  
առաջ նայել զոհի աչքերի մեջ:

**ԿԻՆ** - (*փորձելով ցույց շտալ հուզ-*  
*մունքը*): Պրոֆեսիոնալի հետ գործ  
բռնելը ուրիշ է:

**ԱՆԾԱՆՈԹ** - Ինքն էլ հասկացավ...  
Քնծիծաղեց...

**ԿԻՆ** - Ու հայինեց...

**ԱՆԾԱՆՈԹ** - Կրկնե՞մ ասածները...

**ԿԻՆ** - Պետք չէ:

**ԱՆԾԱՆՈԹ** - Ատրճանակը կողքը գլ-  
ցեցի, ինչպես ասել էիր:

**ԿԻՆ** - Գողին բռնեցին:

**ԱՆԾԱՆՈԹ** - Զախորդի մեկն է:

**ԿԻՆ** - Հա, թե չէ տաճիք բարձրանա-  
լու փոխարեն մեկի տունը կմտներ:

Սի խոսքով, ամեն ինչ ավարտվեց:

**ԱՆԾԱՆՈԹ** - Ինչո՞ւ... մոլագարին չեն  
բռնել:

**ԿԻՆ** - (*շրջվելով՝ ակնդետ նայում է*  
*մրան*): Դե՞ն չեն բռնել:

**ԱՆԾԱՆՈԹ** - Չեն էլ բռնի:

**ԿԻՆ** - Ես էլ եմ այդպես կարծում: Ու  
նա ինչքան շուտ այստեղից գնա,  
այնքան լավ: (*Դադարից հետո:*)  
Փաստարդերդ սեղանին են:

**ԱՆԾԱՆՈԹ** - Տեսա: Թող մնան այդ-  
տեղ:

**ԿԻՆ** - Սինչև ե՞րբ:

**ԱՆԾԱՆՈԹ** - Դեռ չգիտեմ...

**ԿԻՆ** - Սինչև վաղը տնից դրւու չեմ  
գա:

**ԱՆԾԱՆՈԹ** - Ուրեմն՝ մինչև վաղը ես  
այստեղ եմ:

**ԿԻՆ** - Ավելացնելու բան չունե՞ս:

**ԱՆԾԱՆՈԹ** - Սագերդ չգունաբավես:

**ԿԻՆ** - Շիկահերմերին չե՞ս սիրում:

**ԱՆԾԱՆՈԹ** - Պաշտոն եմ: (*Ակնդետ*  
*նայում են իրար:*)

**Հեռախոսազանգ:** Կինը, առանց  
համարին նայելու, վերցնում է հե-  
ռախոսը:

**ԶԱՅՆ** - Ես ո՞ւր ես... Մի ժամն անցավ, երկրորդն էլ՝ հետը...

**ԿԻՆ** - (Չփորահար նայելով Անծանոթին, որն այնպես է իրեն պահում, ասես այս ամենը նրան չի վերաբերում): Ինչպես քե... (Անծանոթին): Դու որտե՞ղ էիր:

**ԶԱՅՆ** - (կարծելով՝ ասածն իրեն է վերաբերում): Հին օրերի պես՝ մեր որջում:

**ԿԻՆ** - (Չայնին): Ու դու... դեռ այդ տե՞ղ ես:

**ԶԱՅՆ** - Սորինդ ի՞նչ է...

**Անծանոթն անվրդով տեսքով  
հետևում է խոսակցությանը:**

**ԿԻՆ** - Ոչինչ... Շուտով... շատ շուտով ամեն ինչ կհարթեն:

**ԶԱՅՆ** - Հա, որ իիշեցի, նվիրած ատրճանակս պահե՞լ ես, թե՞ դրա մասին էլ ես մոռացել:

**ԿԻՆ** - (Իոզմած ձայնով): Ես ոչինչ չեմ մոռանում:

**ԶԱՅՆ** - Դե, տեսնենք, տեսնենք...  
(Կապճ անջատվում է:)

**ԿԻՆ** - (ակնդետն նայելով Անծանոթին,  
սեփական ենթադրությունից ոչ  
այն է՝ սարսափած, ոչ այն է՝ զոհ):  
Ինչպես էի մոռացել... Այսր, մոլա-

գարը սպանում է միայն իր ընտրած զոհին:

**ԱՆԾԱՆՈԹ** - Հա, պատվերով սպանելը նրա գործը չէ:

**ԿԻՆ** - Այդ դեպքում... Որտե՞ղ էիր:  
Ո՞ւր էիր գնացել:

**ԱՆԾԱՆՈԹ** - Ոչ մի տեղ, հարևաններին հետ գողին էի բռնում... (Իր դադարից հաճույք է ստանում):

**ԿԻՆ** - Բոնեցի՞ր:

**ԱՆԾԱՆՈԹ** - Բոնեցին: Տարան, հարևաններդ էլ հանգստացան:

**ԿԻՆ** - Չեմ հասկանում... Շենքում դեռ մենք կա՞:

**ԱՆԾԱՆՈԹ** - Ոչ մի հատ:

**ԿԻՆ** - Ուրեմն, մուտքն ազատ է, կառող էիր գնալ... թեկուզ գրողի ծոցը:

**ԱՆԾԱՆՈԹ** - Կարող էի գնալ: Նախընտրեցի վերադառնալ:

**ԿԻՆ** - (Վորձելով ցոյց շտալ տագանապը): Եվ... ի՞նչ ես պատրաստվում անել:

**ԱՆԾԱՆՈԹ** - (զինարավող ժպիտով:)  
Ուու ի՞նչ ես անելու:

**ԿԻՆ** - (Ասոում, կոնյակ է լցնում, կումկում խմելով: ) Կամ ատրճանակն առած պիտի գնամ այդ անասունի նոտ... կամ էլ... մազերս կգունաբափեմ ու կդառնամ... շիկահեր:

**Անծանոթը նստում է նրա դիմացը: Անթարք նայում են իրար:**  
**Խալարում:**



## Հովհաննես ԹԵՔԳՅՈԶԱՆ

Իմ հարազատները (ոչ արյունակիցները) դժոխքիս դոնապաններն են: Նրանք հաճախ կորցնում են բանայինները: Եվ կորցնում են հատկապես այն ժամանակ, երբ

ես ներսում եմ: Երկու տարի առաջ, երբ բանալին կրկին կորավ, հարազատներից մեկը սրեց «Մաշկացալ» վեպիս բառերի ատամները: Ամեն բառը մի հիտեր էր: Հետո ային գրելու առաջարկ ստացա: Ու քանի որ «Մաշկացալ» արյանս մեջ էր՝ վեպից մի հատված որոշեցի այինի վերածել: Մի զույում էլ դա էր, քանի որ վեպից դուրս ընկած Կատուն բոլորովին ուրիշ բնավորություն ձեռք բերեց և գործը լրիվ ուրիշ ուղղությամբ տարավ՝ գրական նախնական հիմքից թողնելով ընդամենը երկու աղավաղված միտք: Փաստորեն, հիմա ես երկու Կատուն ունեմ, մեկը՝ անավարտ «Մաշկացալում», մյուսը՝ Օդի մեջ կախված ծառի վրա...

# ԾԱՌ՝ ՕԴԻ ՄԵԶ

Ինտերակտիվ տրագիֆարս՝  
կես գործողությամբ

## Գործող անձինք

**ԶՈԿԵՐ**

**ՄԱՐԴ**

**ԿԱՏՈՒ**

**ՀԵՂԻՆԱԿԻ ՎԼՈՒԽ**

**ՆԱՏՈՒՐԱԼ ԵԶ**

**Զայն՝ ռադիոյով**

Վառվող մշուշով պատած անհասկանալի տեղ: Ու լրություն... Լուսայան մեջ  
ժանգից փայլվող մի արռո, դիմացն էլ՝ քաշալ-ապիտակ զլուխ:  
Հաստա՞տ Հեղինակի գանգն է: Ներս է մտնում Սարդը: Ծառի ճյուղերի մեջ  
կարմիր կեղծամով Կատվի կերպարանքն է երևում:  
Նրա հայտնվելն անսպասելի է Սարդու համար:

**ԶՈԿԵՐ** - Ստո՞ւպ: Պատկերացրեք՝  
դուք ոչինչ չեք տեսնում: Չէ, տես-  
նում եք, բայց... չեք տեսնում: Ավե-  
լի պարզ խոսեմ... Եվ այսպես, կար  
ծառ, նրան տեսնում էինք: Հիմա  
չկա ծառը: Ի՞նչ ենք անում... Զգում  
ենք նրա բացակայությունը: Աստծո  
նման... Չէ՝ որ նրան էլ եք հավա-  
տում, երբ դանակը ոսկորին է հաս-  
նում: Չէ, մի վախեցեք, սա թատրոն  
է... Պարզ է, որ դուք հիմա ներկա-  
յացումը կդիտեք, կգնաք տուն և ա-  
մեն ինչ կմոռանաք, այսինքն՝ այն,  
ինչ տեսաք, կիամարեք չտեսած:  
Լավ... Սի խոսքով, ինքներդ վեր-

ջում որոշեք. այս ներկայացումը  
տեսե՞լ եք, թե՞ չեք տեսել:

**ԿԱՏՈՒ** - Բա՛րն... (Սարդը ցնցվում է,  
կատուն՝ ծիծաղում:) Վախեցա՞ր:

**ՄԱՐԴ** - Քոքված շուն:

**ԿԱՏՈՒ** - Ես շուն չեմ, կատու եմ:

**ՄԱՐԴ** - Ենքան չես մլավել՝ մոռացել  
եմ:

**ԿԱՏՈՒ** - Փոխարենը՝ սկսել եմ մարդ-  
կային լեզվով խոսել: (Գանգին նա-  
յելով:) Ի՞նչ ես անում:

**ՄԱՐԴ** - Նամակ էի ստացել, պատաս-  
խանն եմ գրում:

**ԿԱՏՈՒ** - Ըհը... Գանգային պապի-  
րուս: Եվ ո՞վ է եղ երջանիկ հաս-  
ցեատերը, չինի՞՝ ես:

**ՄԱՐԴ** - Չէ հա՛ դու... Լավ, քանի որ եկել ես՝ ասեմ: Հնում դաջվածքները ուազմական մեծ նշանակություն են ունեցել: Մեր թվարկությունից շատ առաջ, կովի ժամանակ, ստրուկի գլուխը խուզում, գաղտնի հաղորդագրությունը գանգին դաջում, սպասում էին էնքան՝ մինչև մազերը կաճեին, և ուղարկում էին:

**ԿԱՏՈՒ** - Հա, բայց դու, կարծեմ, դաջվածքների պատճառով չես դեմքդ կորցրել:

**ՄԱՐԴ** - Ես դեմքս կորցրե՞լ եմ... Զենո՞ կտրիք: Եթե չես ուզում պոչիցդ բանկաներ կապեմ ու քեզ ծեծելով բաց բողնեմ՝ ավելի լավ է՝ լոիր:

**ԶՈԿԵՐ** - Ստո՞պ: Ծանոթագրություն: Մարդ... Ստեղծվել է երկու հարյուր հազար... լավ, կոնկերտ ժամանակահատվածը չնշենք: Առաջացել է, ոմանք ասում են՝ Աստծո շնորհիվ, ոմանք՝ կապկից: Մի խոսքով... Բաղկացած է՝ ջուր, արյուն, միս... Էլ ինչ կա՞... Հա, նաև մի քիչ հոգի: Ծնորհակալություն:

**ԿԱՏՈՒ** - Չէ, հաստատ դեմքը կորցրել ես: Պատմությո՞ւն ես ուզում, դեմքիր... Նույն քո ասած հնում մարդիկ երկրագում էին ծառերին և կենդանիներին: Մեզանից շատերը սուրբ էին համարվում: Իսկ զիտե՞ս՝ ինչ էին անում իին Գերմանիայում: Զգիտե՞ս... Երբ մարդը

ծառի կեղևը պոկում էր՝ նրան հանցագործ էին համարում: Բռնում, նոյն այդ մարդու... ասենք, պորտը կտրում էին ու կացնում ծառի կեղևազորկ մասին:

**ՄԱՐԴ** - (առաջին անգամ ապտակում է Կատվիհ): Չափդ ճանաչիր, դու սովորական կատու ես, լնտանի կենդանի, հայվան...

**ԶՈԿԵՐ** - Ստո՞պ: Ծանոթագրություն: Կատու: Ստեղծման օրից ապրում է Երկիր մոլորակի վրա: Համարվում է սուրբ կենդանի, բնության գավակ: Ընդհանրացնում է բոլոր կենդանիների դրական կողմերը և ներկայացնում երկրագնդի շահերը: Հա, շատ մարդամոտ է:

**ԿԱՏՈՒ** - Գիտեմ: Ի՞նչ էիր ասում ստրուկների մասին... Ես գլուխը, փաստորեն, ստրուկի գլո՞ւխ է:

**ՄԱՐԴ** - Չէ... Հեղինակինն է:

**ԿԱՏՈՒ** - Ի՞նչ Հեղինակ:

**ՄԱՐԴ** - Պիեսի:

**ԿԱՏՈՒ** - Ըհը... Չէի պատկերացնի, որ ուղեղիդ մեջ միայն պատերազմներն ու հեղափոխությունները չեն: (*Պարետիկ:*) Նաև պիես կա, թատրոն, օդում պտտվող ծառեր, տներ, արև...

**ՄԱՐԴ** - Մեկ է՝ քեզ նման ապուշ կենդանիներ... Չէ, երևում է, քեզ իրոք ծեծելու եմ:

**ԿԱՏՈՒ** - Չեմ կասկածում: (*Ցինիկ:*) Ի

դեպ, ի՞նչ է գրում քո այդ չոր գանգը:

**ՄԱՐԴ** - Ասում է, որ ժամանակին Երկիր մոլորակի վրա լիքը դաշտեր, անտառներ են եղել...

**ԿԱՏՈՒ** - Որոնք վառվել, կտրվել են:

**ՄԱՐԴ** - Ինչի՞ համար...

**ԿԱՏՈՒ** - Պատերազմելու, իրար կորդ կրծելու...

**ՄԱՐԴ** - Աչքին ալարուա են երեսւ:

**ԿԱՏՈՒ** - Էս տարածքում երկու շնչարոր ենք մնացել. ես ու դու:

**ՄԱՐԴ** - Բա Նատուրալ Ե՞զը...

**ԶՈԿԵՐ** - Ստո՞ւ: Նատուրալ Եզ: Ունի շատ փող, կրկնում եմ՝ շա՞տ փող: Առաջացել է Երկիր մոլորակի վրա շուրջ երկու հարյուր հազար տարի առաջ: Բաղկացած է ջրից, մսից և արյունից: Հա, ի միջի այլոց, հոգի չունի: Նախնական տեսքը՝ մարդ...

**ԿԱՏՈՒ** - Նա մարդ չէ, անասուն է:

**ՄԱՐԴ** - Դու էլ ես հայվան...

**ԿԱՏՈՒ** - Գիտեմ, բայց ինձ, ըստ «Աստվածաշնչի», Աստված է ստեղծել: Ի դեպ, այսօր ուսդիոյով նրա նոր ուղերձը դեռ չե՞ն հաղորդել:

**ՄԱՐԴ** - Ո՞ւմ՝ Աստծո՞...

**ԿԱՏՈՒ** - Չէ, Նատուրալ Եզի: Տեսնես, մարդկության վրկության մասին ի՞նչ նոր մետաֆիզիկական վարկած է առաջ քաշելու:

**ՄԱՐԴ** - Հերիք է փիլիսոփայես...

Զգիտեմ էլ՝ ինչի համար ես, միայն ավելորդ օդ ես շնչում:

**ԿԱՏՈՒ** - Ծիշտ ես, ոչ մուկ կա, ոչ՝ առնետ... Պըրծ:

**ՄԱՐԴ** - Առնետները, կարծեմ, առաջնն են, չէ՞ նավը լրում:

**ԿԱՏՈՒ** - Լրում են: Տվյալ դեպքում՝ Երկիր մոլորակը: Գիտես, չէ՞ տեսա՞ ոնց են երամ դարձած դեպի Լուսին շփում... Թոշող առնետների երամ...

**ՄԱՐԴ** - Չէ, դու լրիվ ես ցնդել:

**ԿԱՏՈՒ** - Հիշո՞ւմ ես, ինչ կար այստեղ:

**ՄԱՐԴ** - Որտե՞ղ...

**ԿԱՏՈՒ** - Այ, այստեղ, այս հողի վրա:

**ՄԱՐԴ** - Ո՞նց շեմ հիշում... Այստեղ իմ կառուցած ամենամեծ գործարանն էր... իր հսկա շարժիչներով, մեծ ծխնելույզով...

**ԿԱՏՈՒ** - Որից դեղին ծո՞վս էր դուրս գալիս:

**ՄԱՐԴ** - (հիացած): Հա, բայց ի՞նչ հոտ ուներ...

**ԿԱՏՈՒ** - Թունավոր: Չե՞ս հիշում, մինչև գործարան կառուցելն այստեղ անտառ էր: Հետո գտնվեց մի Նատուրալ Եզ, ով, իբր, կարևոր ուղիուակտիվ տարրի հաճքաշերտեր հայտնաբերեց: Անտառը կտրեցին: Սի տարի էլ չանցավ, երբ ամեն ինչ, երկինքն էլ հետը՝ ժանգագոյն դարձավ... Հիշում եմ՝ սկյուռիկները ոնց էին փախչում...

**ՄԱՐԴ** - Նրանք է՞լ էին Լուսին չվում:  
**ԿԱՏՈՒ** - Չգիտեմ, չգիտեմ... (*Սկսում է հազար: Դադար:*)

**ՄԱՐԴ** - Երևի... սոված ես...

**ԿԱՏՈՒ** - Էդ հարցում ինքնաֆինանսավորման եմ անցել:

**ՄԱՐԴ** - Այսի՞նքն...

**ԿԱՏՈՒ** - Ավգրում գիշատիչ էի՝ մկներ, բռչումներ էի ուսում: Հետո՝ բոլորը... Մի խոսքով, հասկացար, դեպի Լուսին չվեցին: Ես ել ստիպված սկսեցի ինքս ինձ ուտել: Գիտե՞ս, հասկացա, ես զանգը ինչի համար ե... (Գանգիմ) Սա մեր իիշողությունն է (պարետիկ), գենետիկ պահութը... Իսկ դու վրան նամակ ես գրում:

**ՄԱՐԴ** - Ամբողջ օրը ի՞նչ ես արել:

**ԿԱՏՈՒ** - Ոչ մի բան: Ծառ ել չկա՝ բռչեմ-մազլցեմ... Պառկեցի: Չիմացա էլ՝ Լուսնի՝ լույսի տակ էր, Արեգակի՝, թե՞ ռադիոակտիվ ճառագայթման: Կյանքում առաջին անգամ ծառ ուզեցի... Ի՞նչ զգացնություն էր... Աստված իմ... Ուզում էի մազլցել, խաղալ տերևների հետ: Զկար: Մի հատ ծառ չկար: Ուղեղումս օդից կախված ծառ հորինեցի...

**ՄԱՐԴ** - Նա է՞լ դեպի Լուսին չվեց:

**ԿԱՏՈՒ** - Չգիտեմ, համենայնդեպս, այնքան տարվեցի, որ անձրևի տակ ընկա: Հեղեղի նման էր ու կարմիր գույն ուներ:

**ՄԱՐԴ** - Երկու օր առաջ էլ ասացիր, որ դեղին ձյան տակ ես մնացել:

**ԿԱՏՈՒ** - Կարծում ես՝ խարեցի՞...

**ՄԱՐԴ** - Չե, քեզ նման տարօրինակ կենդանին ամեն ինչ կարող է տեսնել: (Կատուն հազում է, Մարդը ծիծաղում է:) Չլինի՞ բոքախտ ես...

**ԿԱՏՈՒ** - Չե... Գործարանախտ եմ:

**ՄԱՐԴ** - Էդ ի՞նչ նոր հիվանդություն է:

**ԿԱՏՈՒ** - Դու կիմանաս... Ծխո՞ւմ ես:

**ՄԱՐԴ** - Չե, ես առողջ ապրելակերպի կողմնակից եմ:

**ԿԱՏՈՒ** - Գիտե՞ս, այն տպավորությունն ունեմ, ասես մեր այս կապո՞ւյտ մոլորակի բերանին մի հսկա ծխախտ են դրել ու ստիպում են անընդհատ ծխել:

**ՄԱՐԴ** - Համա թե երևակայություն ունես, հա~...

**ԿԱՏՈՒ** - Ու էդ սիգարետը քո գործարանի աշտարակի ձևն ունի: Կոկորդս չորացել է: Չե, չի չորացել... ոնց որ թիկս մեջ քաղցր մաղձ լինի, որ չեմ կարողանում կուլ տալ: Ու չգիտես ինչո՞ւ էդ մաղձը դեղին գույն ունի:

**ՄԱՐԴ** - Հիվանդու...

**ԿԱՏՈՒ** - Գոնե երեխաներիդ մասին մտածիր:

**ՄԱՐԴ** - Երեխաներ չունեմ: Դու գիտես, չէ՞ որ երեխաներ չունեմ: Քեզ եմ հարցնում՝ գիտե՞ս, որ ես երեխաներ չունեմ:

**ԿԱՏՈՒ -** Այ, հենց էղ դեղին մաղձի պատճառով էլ չես կարողանում ունենալ:

**Մարդու երկրորդ անգամ է ապակում կատվին:**

**Զայն՝ ռադիոյով -** Այսօր ժամ չկա, քանի որ ժամանակն իր շավդից դուրս է սայրաքել... Հա-հա-հա... (Հազում է, փոշուում, խնչում:) Եղանակի տեսություն: Այսօր և ընդհանրապես մնացած բոլոր ցերեկները սպասվում է մնխրագույն կարկուտ, տաք ձյուն և սև արև: Բայ... Հա, մոռացա ասել... Օդը քանի գնում՝ քշանում է: Երկուսիդ էլ չի հերիքի:

**ԿԱՏՈՒ -** Տեսա՞ր, քա որ ասում էի՞...  
Լսիր, տանի հարցերն ի՞նչ եղան:

**ՄԱՐԴ -** Տեսնում ես, էլի...

**ԿԱՏՈՒ -** Բա էն քաղաքները, հսկա շենքերն ու գործարանները, որ կառուցեցիր, ո՞ւր կորան:

**ՄԱՐԴ -** Քե՞զ ինչ... Շո՞ւն ես, կատո՞ւ ես, թե՞ դիմոզավր, դո՞ւ էիր մնացել՝ ինձ հարց տայիր:

**ԿԱՏՈՒ -** Խե՞ղա մարդ... Հեղինակիդ գանգի հետ քո սարքած աղբանոցում մենակ ես մնացել:

**ՄԱՐԴ -** (կարծես չլսելով՝ շարունակում է գրել՝ Հեղինակի գանգի վրա): Գիտե՞ս, չեմ էլ հիշում, երբ էր՝ ռադիոյով լսեցի, որ արամվայի գծերը հանում են: Ասում են՝ քաղաքը էկո-

լոգիապես մաքուր տրանսպորտի կարիք չունի:

**ԿԱՏՈՒ -** Չե, որու դրդացրու: Մեկ էլ տեսար՝ եղ նամակից աշխարհի փրկության, մարդասիրության և զլորալ տաքացման դեմ պայքարի մի հիասքանչ մանիֆեստ դուրս եկավ: (*Մարդն ապտակում է Կատվին: Դադար:*) Գիտե՞ս, մահվան դատապարտված շնչավորի հանար ինչ է նշանակում տրամվային սպասել, որը քեզ կարող է Ա կետից Բ կետը տանել, փախցնել, փրկել: Ամայության ու անապատի մեջ մի քոստ տրամվայ, որը չի գալիս: Իսկ որու սպասում ես, չգիտեմ՝ ինչքան ժամանակ: Երկի ժամանակ էլ չկա: Սպասում ու ամեն վայրկյան վախենում ես՝ բռնեն, այրեն, ոչընշացնեն քո տեսակը: Իսկ տրամվայը չկա ու չկա, քանի որ անապատը էկոլոգիապես մաքուր տրանսպորտի կարիք հաստատ չունի:

**ՄԱՐԴ -** Ես միշտ փորձել եմ պաշտպանել քեզ:

**ԿԱՏՈՒ -** Ասում են՝ կատուն ազատանկախ կենդանի է: Պաշտպանե՞լ... Երկի... Ի՞նչ՝ Երկի... Սինչև աշխարհի վերջին օրը հաստատ չէի ապրի, եթե զառան միս ու կարիսի մորթի ունենայի: (*Դադար:* Մոտենում, վերցնում է Հեղինակի գանգը:) Տարիներ առաջ մի ֆիլմ

տեսա, թե ո՞նց էին առյուծները քրիստոնյաներին հողոսում: Տեսա ու հավատից ձեռ քաշեցի, քանի որ իմ մեջ էլքան ուժ չկար, որ համուն հավատի ինձ էլ քրքրեն: Բայց հիմա հասկանում եմ, որ ամենասարսափելի առյուծները մեզ են: Ու դրանք են մեզ ամենից շատ հողոտում:

**Մշուշը խտանում է:** Լոության մեջ Հեղինակի գլուխն սկսում է անտաճելիորեն վառվել: Անսպասելի միանում է ռադիոն:

**ԿԱՏՈՒՐԱԼ ԵԶ** - Ուրեմն՝ ըստնոց... Այսօր... Սի խոսքով, ել ոչ ժամ կա, ոչ պատարագ: Ասած էլ ականջներիդ ող արեք: Էստեղ՝ մոլորակ եք ասում, ինչ եք ասում, միայն մի հոգու համար է շնչելու ող մնացել: Հիմա դուք պիտի որոշեք՝ ով է մնալու. մա՞րդք, թե՞ անասունը: Եղ հայվանի անոնք ի՞նչ էր... Հա, Կատուն... Որոշեք: Էս խեղկատակության ավարտին մի հինգ բոպե ժամանակ է մնացել: Արագ... Արագ... Ա-րագ...

**ԿԱՏՈՒ** - (դադարից հետո): Ի՞նչ ես լրում...

**ՄԱՐԴ** - (Հեղինակի գանգը դոդոաց- մելով): Նամակ եմ գրում:

**ԿԱՏՈՒ** - Ըիր... Գանգային պապի- րում... Սի էդախի նամակ էլ իմ գլխին դաջիր, վրան գրիր՝ «կա- տու», որ բոլորն իմանան, թե ես ով

եմ: Որ ծառերի նման սպանեն, վա- ռեն, շան ու գելի բերանը գցեն...

**ՉՈՎԵՐ** - Ստո՛պ: Պատկերացրեք. դուք ոչինչ չեք տեսնում... Ավելի ճիշտ՝ չտեսաք: Այդ իսկ պատ- ճառով առաջարկում եմ մի հե- տաքրքիր խաղ խաղալ: Անմեղ, անմեղսունակ, նույնիսկ խենթ, նո- րածնի զգացողություններով մի խաղ: Չեք պատկերացնի, թե ինչ հեշտ է... Պարզապես պետք է իմ տված հարցին պատասխանեք... Օ՛, տիկնայր և պարոնայր, մի՞թե ես՝ նվասոս, բույլ կտամ, որ դուք նեղություն քաշեք, խոսեք, արտա- հայտվեք: Ուղղակի խնդրում եմ քվեարկել՝ բարձրացնելով ձեր մարդկային ձեռքը:

Եվ այսպես... Սկսում ենք մեր ուսալիքի շուռն: Ինչպես տեսաք, ոչնչացման երկու թեկնածու կա, ո- րոնցից մեկը պետք է լիի այս տա- րածքը: Ովքեր են նրա՞նք... Գիտեք, լավ գիտեք: Բանական էակ Մարդը և շնչավոր, սակայն ոչ բանական էակ Կատուն: Եվ այս- պես, ի՞նչ եք կարծում, փրկե՞նք Կատվին, թե՞ ևս մի հնարա- վորություն տանք Մարդուն՝ ուղ- դելու իր սխալները: Խնդրեմ՝ քվեարկենք, ո՞վ է կողմ, որ խա- ղահրապարակը լիի Կատուն... Իսկ ո՞վ է կողմ, որ հրապարակը լիի Մարդը...

**Եթե նոյնիսկ դահլիճում նատած մարդիկ քվեարկում են Կատվի օգտին, Զոլերը պարտավոր է կեղծել քվեարկության արդյունքները՝ հօգուտ Մարդու:**

**Վառվող մշուշ, Կատուն անհետանում է: Մարդը մնում է բեմում մենակ՝ Հեղինակի զանգը ձեռքին: Սիանում է ռադիոն: Հնչում է Բերիովենի իններորդ սիմֆոնիա-**

**յի ֆինալը:**

## ՆԱՏՈՒՐԱԼ ԵԶ - Ապրես, ապրես...

Էսպես է, պիտի սպանես, որ ապրես: Կարևոր չէ՝ ում կամ ինչ ես սպանում, ի՞նչ, ծա՞ռ, քամի՞,

մա՞րդ, շո՞ւն, կատո՞ւ, հայվա՞ն, անասո՞ւն, թե՞ արև: Էղ է, մի աննկարագրելի դաժան պարադրս. կյանքի շարունակականությունը սպանելու շնորհիվ է: Գիտե՞ս, Կատվի պատմածը՝ օդի մեջ կախված ծառերի մասին, շատ է տպավորիչ: Հիմա թեև օդը քիչ է, բայց ամեն ինչ օդի մեջ է, նոյնիսկ՝ ծառը...

Բայց դու երևի իմ խոսքերը լավ շհասկացար... Ես ասել եի, որ ընդունենք մեկ հոգու համար բբվածին կա: Եվ էղ մեկը ես եմ:

**Տարօրինակ կերպով անջատվում է դահլիճի բբվածինը: Մարդիկ, տեսնելով իրենց նախատիպի՝ Մարդու մարելը, սարսափահար դուրս են վազում: Բեմում միայն Հեղինակի զանգն է՝ վառվող ու սպիտակ, նման՝ մեր անիմաստ հիշողությանը:**



## Մանե ԽԱՌԱՏՅԱՆ

Մոտ երեք տարեկան էի (գուցե մի քիչ ավելի կամ պակաս), երբ ծնողներս առաջին անգամ ինձ տարան թատրոն։ Չեմ հիշում ոչինչ, բացի իմ զգացողություններից... Չեմ հասկանում ինչ է, չեմ հասկանում ինչ են անում «ձյաձյաները» բեմի վրա... բայց ինչ-որ կերպ զգում էի, որ դա իմն է, այդ ամենն իսկական է, այն է, ինչ ես զգում եմ, ինչին ձգում եմ, ինչը սիրում եմ...»

Տարիներ շարունակ, իմ մեջ պահելով այդ սերը, մեծացա... Եղի սերեր ունեցա, որոնցից մեկն էլ գրելն էր։ Գրելու առիթը բաց չէի թողնում. դա ինձ համար տոն էր... Գրում էի առանց նշանակություն տալու ժամանքին կամ ոճին... Գրելը իմ փրկությունն էր, իմ էմոցիաները, տիեզերքները, որտեղ միայն ես եմ ու ճշմարտությունը,

ես ու աշխարհը, ես ու հոգին...

Հանկարծ մի օր իմ այս երկու սերերը միացան, ու ես գրեցի թատրոնի համար...

Ոմանց պիեսը դուր եկավ, մի քանիսը նոյնիսկ հասկացան... (իսկ ես կարծում էի՝ ինձ հասկանալ չի լինի... ինչպիսի մեծամուսություն... լավ է, որ սխալվել եմ...): Զգիտեմ ինչ կստացվի այս ամենից, բայց սկսել եմ գրել, ու հետդարձի ճամփա չկա...

# ՀՅՈՒՐԸ, ՈՐ ԵԿԱՎ ԺԱՄԱՆԱԿԻՆ

Գործող անձինք

ԳԱՅԱՆԵ - միջին տարիքի կին

ՍԱՌԱ - մոտ բան տարեկան, Գայանեի դուստրը

ԱՆՁԱՌՈԹ

Բնմում, սեփական տաճ հյուրասենյակ է՝ համեստ կահավորմամբ: Երևում է մուտքի դուռը: Գիշեր է: Դրսում կայծակ է ու ամպրոպ: Կայծակից մերքընդմերք լուսավորվում է սենյակը: Բնմում ոչ ոք չկա:  
Դուռը թակում են: Քիչ անց թակոցը կրկնվում է ավելի ուժեղ: Խալաքը հազնելով, սենյակ է շտապում Գայանեն:

ԳԱՅԱՆԵ - Ո՞վ կարող է լինել այս ժամին... (Դուռը թակում են: Գայանեն փորձում է լույսը վառել, այն չի վառվում:) Հիմա՝ հիմա... (Խալաքի գոտին կապելով:) Ես այդպես ել զիտեի, որ կանջատեն: Թյուն... (Դուռը կրկին թակում են:) Գալի՞ս են: (Դարակներում փընտրում է լապտերը, մի պահ աչք նետելով Սառայի սենյակի կողմը:) Հանկարծ չարքնանա՞... Ո՞ւր է այդ գորոդի տարած լապտերը... Հիմա կրացեմ...

Գայանեն գտնում է լապտերը, միացնում, նոտենում, բացում է դուռը: Շեմին կանգնած է քարձրահա-

սակ, լրիվ թրջված, սիրքնած դեմքով մենք:

ԱՆՁԱՌՈԹ - (մրսած է, դողալով): Ներողություն, երկի ձեզ վախեցրի: Զարմանալի չէ, այս ուշ ժամին, այս եղանակին...

ԳԱՅԱՆԵ - Շիշտն ասած, մի քիչ վախեցրիք: Դուք ո՞վ եք:

ԱՆՁԱՌՈԹ - Անկեղծ՝ չզիտեմ: Դժվարանում են պատասխանել...

ԳԱՅԱՆԵ - Ինչպե՞ս թե...

ԱՆՁԱՌՈԹ - Երկի անհեթեր է հնչում, բայց ես... ոչինչ չեմ հիշում: (Փողտում է:)

ԳԱՅԱՆԵ - Ինչպե՞ս թե՝ չեք հիշում:

ԱՆՁԱՌՈԹ - Այո, հանկարծ ուշքի

Եկա ձեր դուան առջև: Երկի ձեր տուն էի գալիս... Ես, պատահաբար, ձեր ազգականը չե՞մ:

**ԳԱՅԱՆԵ** - Ո՞Շ: Եթե ազգականս լինեիք՝ ես կիմանայի: Զգիտեմ նույնիսկ... ինչով ձեզ օգնեմ:

**ԱՆԾԱՆՈԹ** - Եթե կարողանայիք ասել՝ ես ով եմ...

**ԳԱՅԱՆԵ** - Ցավում եմ... Իսկ... գուցե մեր հարեաններից մեկի՞ տուն եք գնում:

**ԱՆԾԱՆՈԹ** - Զգիտեմ: Գուցե: Իսկ... կարելի՞ է ներս գալ: Մի րոպեով:

**ԳԱՅԱՆԵ** - Ճիշտն ասած... (Նայում է Սառայի սենյակի կողմը:) Այնքան էլ հարմար չէ, առավել ևս, որ ձեզ չեմ ճանաչում:

**ԱՆԾԱՆՈԹ** - Իրավացի եք: Ես շմտածեցի այդ մասին...

**ԳԱՅԱՆԵ** - Ներեցեք, բայց...

**ԱՆԾԱՆՈԹ** - Ներողություն չխնդրեք, դուք իրավացի եք: Ավելի լավ է՝ ես գնամ:

**ԳԱՅԱՆԵ** - Իսկ ո՞ւր եք գնալու:

**ԱՆԾԱՆՈԹ** - (քրովում է ուսերը): Զգիտեմ... (Փոշտում է:)

**ԳԱՅԱՆԵ** - (Նայում է Սառայի սենյակի կողմը): Լավ, ներս եկեք, մինչև... տեսնենք...

**ԱՆԾԱՆՈԹ** - Վստա՞ն եք:

**ԳԱՅԱՆԵ** - Այո, այո: Ներս եկեք:

**ԱՆԾԱՆՈԹ** - Շնորհակալություն: (Ներս է մտնում:)

**ԳԱՅԱՆԵ** - Մի վայրկյան սպասեք, գոնե մոմ վառեմ... (Պահարանիկի վրա դրված մոմակալն է վառում:)

Մեզ մոտ, կայծակի ժամանակ, հաճախ անջատում են լույսերը: Վքարներից են խուսափում: Արդեն սովոր ենք... (Վառվող մոմը դնում է սեղանին:) Ասում եք՝ ոչինչ չե՞ք հիշում: (Անծանոթը բացասարար օրորում է գլուխը:) Բացարձա՞կ...

**ԱՆԾԱՆՈԹ** - Կցանկանայի հիշել գոնենի չնչին մանրուք, բայց....

**ԳԱՅԱՆԵ** - Իսկ ձեզ մոտ որևէ փաստաբուր չկա՞:

**ԱՆԾԱՆՈԹ** - Փաստաբո՞՞ւր:

**ԳԱՅԱՆԵ** - Օրինակ՝ անձնագիր:

**ԱՆԾԱՆՈԹ** - Անձնագի՞ր... (Փոշտում է:)

**ԳԱՅԱՆԵ** - Այո, նորատեսրի պես մի քանի, որտեղ գրված է, թե ով եք դուք և որտեղ եք ապրում: Փնտրեք ձեր գրպաններում:

Անծանոթը, դողացող ձեռքերով, սկսում է գրպաններում փնտրել: Ծոցագրպանից նորատեսը է հանում:

**ԱՆԾԱՆՈԹ** - Սա, պատահաբար, անձնագիր չէ... (Նորատեսը տախի է Գայանեին:)

**ԳԱՅԱՆԵ** - Ցավում եմ, բայց սա հենց նորատեսը է: Էլի փնտրեք:

**ԱՆԾԱՆՈԹ** - Սրանից բացի ոչինչ չունեմ:

**ԳԱՅԱՆԵ** - (թերթում է նորատեսը): Այստեղ անուններ ու հասցեներ կան: Շատերը նաև հեռախոսահամար ունեն:

**ԱՆԾԱՆՈԹ** - Դրանք իմ ծանոթնե՞րն են:

**ԳԱՅԱՆԵ** - Գուցե: Կարդացեք, զուցե որևէ մեկին հիշեք կամ ճանաչեք... (Նորատեսորը տալիս է Անձանտին:)

**ԱՆԾԱՆՈԹ** - (թերթում է նորատեսորը, ապա շվարած նայում գայանեին): Ես... չե՞մ կարող:

**ԳԱՅԱՆԵ** - Դուք... կարդալն է՞լ եք մոռացել:

**ԱՆԾԱՆՈԹ** - Երկի... (Փոշտում է:)

**ԳԱՅԱՆԵ** - Լա՛վ, տվեք ինձ... (Վերցնում է նորատեսորը, ուշադիր զբանում է ցանկը:) Շատ հետաքրքիր է... (Հանկարծակի:.) Ահա՛, այս մեկը մեր քաղաքում է բնակվում: Զանգե՞նք:

**ԱՆԾԱՆՈԹ** - Շատ շնորհակալ կլինեմ:

**ԳԱՅԱՆԵ** - Թեև լավ չէ այս ժամին մարդկանց անհանգստացնել: Փող ունե՞ք:

**ԱՆԾԱՆՈԹ** - (զրպանները քշփորելով): Կարծես թե ոչինչ չունեմ, այդ նորատեսրից բացի:

**ԳԱՅԱՆԵ** - Դա լավ չէ: Առանց փորի ձեզ հյուրանոց չեն քողնի: Իսկ ես այդքան չունեմ, որ տամ ձեզ: Ու հետո... դուք կմոռանաք վերադարձնել... Ներողություն, անհաջող կատակեցի: Լա՛վ, ստիպված պիտի անհանգստացնենք մարդկանց...

Ներս է մտնում Սառան: Նա գունատ է, հյուծված:

**ՍԱՌԱ** - Այս ի՞նչ իրարացնում է:

**ԳԱՅԱՆԵ** - (շփորված): Քեզ արքնացրի՞նք:

Անձանորին տեսնելուն պես Սառան քարանում է տեղում: Մի քանի ակնքարք ակնդես նայում է նրան:

**ՍԱՌԱ** - (Անձանորին): Ինչո՞ւ ես եկել... Ինչո՞ւ ես եկել...

**ԳԱՅԱՆԵ** - Սառա՞...

**ՍԱՌԱ** - Ինչո՞ւ ես նրան ներս քողել:

**ԳԱՅԱՆԵ** - Դու նրան ճանաչո՞ւմ ես:

**ՍԱՌԱ** - (զրեք բղավելով, Անձանորին): Ես չե՞մ զա քեզ հետ... (Գայանեին...) Մայրիկ, ինձ չքողնես, որ գնամ նրա հետ:

**ԳԱՅԱՆԵ** - Հանգստացիր, աղջիկս: Նա սովորական անցորդ է, կորցրել է հիշողությունը և մոլորվել...

**ՍԱՌԱ** - Նա սովորական անցորդ չէ, ուշադիր նայիր: Նա մահն է: Եկել է իմ հետևկից:

**ԳԱՅԱՆԵ** - (կարեկցանքով նայելով Սառային): Ահա՝ թե ինչ... Լավ, աղջիկս, հանգստացիր...

**ՍԱՌԱ** - Դու ինձ չե՞ս հավատում, մայրիկ, չե՞ս հավատում...

**ԳԱՅԱՆԵ** - Հավատում եմ, հավատում, միայն մի հուզվիր, խնդրում եմ:

**ՍԱՌԱ** - Դուրս փոնդիր նրան, մամա:

**ԳԱՅԱՆԵ** - (զրկելով Սառային՝ տանում է մրա սենյակը): Հիմա կվոնդեմ, անպայման, միայն դու մի հուզվիր... (Քիչ անց վերադարձնում է:) Ներեցեք... Աղջիկս պարզապես տեսիլքներ է ունենում երբեմն... դեղերի ազդեցությունն է:

**ԱՆԾԱՆՈԹ** - Դեղերի՞:

**ԳԱՅԱՆԵ** - Նա ծանր հիվանդ է... անբուժելի: (*Նստում է քազմոցին:*) Սառան գլխուղեղի չարորակ ուռուցք ունի: Շատ ուշ իմացանք, կարծում էինք, գլխացավի պատճառը նիզունն է, այնինչ... Շատ ուշ էր, բայց որոշեցինք պայքարել: Բժիշկներն ինչ ասում էին՝ անում էինք, փորձում... Բուժումն էլ այնքան բանկ, բա դեղերը... Ամուսինս մեկնեց արտագմա աշխատանքի: Բայց... հույս չկա: Աղջկաս չեմ ասում, բայց ինձ թվում է՝ նա զգում է, զիտե: Ինչպե՞ս կարող է մահացողը չզգալ, որ մահանում է... (*Հեկեկում է:*)

**ԱՆԾԱՆՈԹ** - Երկի դժվար է...

**ԳԱՅԱՆԵ** - Ամեն օր նայում եմ նրան ու մտածում, որ սա կարող է նրա վերջին օրը լինել... վերջին զիշերը...

**ԱՆԾԱՆՈԹ** - Այո...

**ԳԱՅԱՆԵ** - (*Խալաքի գրպամից քաշկինակ է հանում, պրում աչքերը:*) Ներեցեք... չաետք է ձեզ մտահոգեի: Հիմա դուք օգնության կարիք ունեք... Բայց ինձ էլ պետք է հասկանալ: Մոր սիրու է, ի՞նչ արած... Ամեն առավոտ, երբ Սառայի ննջասենյակից լսում եմ նրա լսցը, ուրախանում եմ, մտածում՝ Աստվածի իմ, նա դեռ ողջ է: Բայց միաժամանակ սիրոս կտոր-կտոր է լինում, քե ե՞րբ է ազատվելու այդ տառապանքից:

**ԱՆԾԱՆՈԹ** - Բա ինչո՞ւ եք ուրախանում, որ... ողջ է:

**ԳԱՅԱՆԵ** - Գիտեք, հրաշքով ապարհնվելու շատ օրինակներ կան, ու քանի դեռ նա ողջ է, հրաշքի հույս կա...

**ՍԱՌԱՆ ՎԵՐԱՊԱՌՆՈՒՄ Է ՀՅՈՒԱՍԵՆՅԱԿ:**

**ՍԱՌԱՆ** - Նրան դեռ չե՞ս վոնդել... Չե՞ որ խնդրեցի...

**ԳԱՅԱՆԵ** - Այսի, նա հյուր է: Նա կորցրել է հիշողությունը և մոլորվել, հասկան՞ում ես: Ինչպե՞ս նրան վոնդեմ այս ժամին, այս եղանակին: Եվ ո՞ւր...

**ՍԱՌԱՆ** - Մայրիկ, ինձ ծաղրո՞ւմ ես: Մի՞թե չես տեսնում, թե ով է նա:

**ԳԱՅԱՆԵ** - Սովորական մարդ է, աղջիկս:

**ՍԱՌԱՆ** - Ուշադիր նայիր, իսկապե՞ս չզիտես՝ ով է:

**ԳԱՅԱՆԵ** - Նոյնիսկ ի՞նքը չզիտե, թե ով է:

**ՍԱՌԱՆ** - Ինչպե՞ս թե...

**ԱՆԾԱՆՈԹ** - Ցավում եմ, օրիորդ, բայց ես, իսկապես, ոչինչ չեմ հիշում:

**ՍԱՌԱՆ** - Չես հիշո՞ւմ:

**ԱՆԾԱՆՈԹ** - Բացարձակ ոչինչ:

**ՍԱՌԱՆ** - Դու դիտավորյա՞լ ես անում:

**ԱՆԾԱՆՈԹ** - Ի՞նչը:

**ՍԱՌԱՆ** - Հիմա՞ր ես ձևանում:

**ԱՆԾԱՆՈԹ** - Չեմ հասկանում....

**ՍԱՌԱՆ** - Լավ, եթե ես դադարեմ քեզանից վախենալ, կզմա՞ս:

**ԱՆԾԱՆՈԹ** - Դուք ինձանից վախենո՞ւմ եք:

**ՍԱՌԱՆ** - Իսկ ո՞վ չի վախենում... (*Անձանորքը քորվում է ուսերը:*)

Լա՞վ դերասան ես...

**ԱՆԾԱՆՈԹ** - Օրիորդ, եթե իրոք զիտեք ով լինելու, խնդրում եմ, ասեք...

**ՍԱՌԱ** - (Երերազով մոտենալում է Անծանորին, ճայում աչքերի մեջ): Ուզում ես ասել, որ չես հիշում, թե ինչու ես եկե՞լ: (Անծանորը բացասարար շարժում է զլուխը: ) Իսկ ես կարծում էի, թե միայն ես խնդրելու ունեմ ուղեղի հետ:

**ԳԱՅԱՆԵ** - Սառա, ճանաչո՞ւմ ես այս մարդուն:

**ՍԱՌԱ** - Նրան բոլորն են ճանաչում, մայրիկ: (Անծանորին): Գնա՛ մեր տնից: Հենց հիմա...

**ԳԱՅԱՆԵ** - Ավելի ճիշտ կլինի, եթե հիմա զանգենք որևէ մեկին: Կամ կգամ՝ կտանեն, կամ, գոնե, կպարգենք... որևէ բան...

**ՍԱՌԱ** - Զանգես... ոստիկանությո՞ւն:

**ԳԱՅԱՆԵ** - Ոչ: Նրա նորատետրում հեռախոսահամարներ կան, գուցե...

**ՍԱՌԱ** - Ուրեմն հենց հիմա զանգիր:

**ԳԱՅԱՆԵ** - (Անծանորին): Ի սեր Աստծո, ներեցեք, խնդրում եմ...

**ԱՆԾԱՆՈԹ** - Ես ամեն ինչ հասկանում եմ:

**Գայանեն նստում է հեռախոսի մոտ:**

**ԳԱՅԱՆԵ** - (Անծանորին): Երեկ զիտեք, որ ձեր նորատետրում պատրված էքեր կան... (Համար է հավաքում:) Ներողություն եմ խնդրում այս ժամին անհանգրատացնելու համար... Դուք ինձ չեք

ճանաչում, բայց, եթե կարելի է, հեռախոսի մոտ կկանչե՞ք Արգարին... Ի՞նչ... ներեցեք, չգիտեի: Շատ եմ ցավում... Ներեցեք, ցուտություն: (Կախում է լսափողը, Անծանորին:) Ցավում եմ, բայց ձեր այս ծանոթը մահամերձ վիճակում է: (Լսափողը կրկին վերցնելով:) Ես մեկին զանգենք... Բարև ձեզ, ներողություն եմ խնդրում այս ուշ ժամին զանգելու համար: Դուք ինձ չեք ճանաչում, բայց, եթե կարելի է, կարո՞ղ եք հեռախոսի մոտ կանչել Ռիտային: Ցավում եմ... Ներեցեք, բարի գիշեր: (Լսափողը դնում է: Անծանորին:) Այս ծանոթն էլ մահամերձ պառկած է հիվանդանոցում:

**ՍԱՌԱ** - Նրան ճանաչող բոլոր մարդիկ մահանում են:

**ԳԱՅԱՆԵ** - Վե՛րջ տուր, սիրելիս, պարզապես ցավալի գուգաղիպություն է:

**ՍԱՌԱ** - Զանգիր բոլորին, և կտեսնես, որ բոլորն էլ մահանում են: Կամ արդեն մահացել են:

**ԳԱՅԱՆԵ** - Սառա, այնպես ես խոտում, կարծես հիմա ամբողջ աշխարհը կմահանա ու կմնանք միայն մենք:

**ՍԱՌԱ** - Գուցե: (Անծանորին.) Դա այդպե՞ս է...

**ԱՆԾԱՆՈԹ** - Ինչո՞ւ եք ինձ հարցմում:

**ՍԱՌԱ** - Դրսից ես եկել, պիտի որ ինանաս: (Գայանեին.) Մայրիկ, նայիր, այդ նորատետրի մեջ (ծաղ-

*րով),* պատահաբար իմ անունն  
ու մեր հեռախոսահամարը չկա՞ն:

**ԳԱՅԱՆԵ** - Սառա...

**ՍԱՌԱ** - Նայիր: Ես քեզ խնդրում եմ...

**ԳԱՅԱՆԵ** - (*մեղավոր՝ Անձանորին*):

*Ներեցեք... (Նորատեսորը քերթե-  
լուց հետո, հանդիմանական սո-  
նով՝ Սառային:)* Ջոն անունը և մեր  
հեռախոսահամարը այս նորա-  
տեսորում չկան:

**ՍԱՌԱ** - (*Անձանորին*): Հասցրել ես  
պոկե՞լ այդ էջը, խոստովանի՞ր,

ներս մտնելուց առաջ պատռե՞լ ես:

**ԳԱՅԱՆԵ** - Վերջ տուր, Սառա: Այս  
մարդը քեզ ի՞նչ է արել...

**ՍԱՌԱ** - Մա՞րդը... Մարդը՝ ոչինչ:

*(Անսպասելի արագույրյամբ դուրս  
է զալիս:)* Ես քեզ կապացուցեմ:

**ԳԱՅԱՆԵ** - (*անակնակալի եկած*): Սա-  
ռա, Սառա, ո՞ւր... (*Փորձում է հա-  
սել հողաքափերն ու կոշիկ  
հազնել:*) Աստված իմ, խելք  
քոցրել է...

**ՍԱՌԱ** - (*վերադառնում է՝ ձեռքին մի  
փունջ քաց տերևներ, որոնք լցնում  
է սեղանին, դիմում Անձանորին:*)

Ահա, նայիր...

**ԱՆԾԱՆՈԹ** - Սրանք ի՞նչ են...

**ՍԱՌԱ** - Տերևներ: Մեռած տերևներ:

**ԱՆԾԱՆՈԹ** - Դրանք ինչի՞ համար  
են... ինձ պետք:

**ՍԱՌԱ** - Ուշադիր նայիր: Դրանք քեզ  
այսոք է ինչոր քան հիշեցնեն:

**ԱՆԾԱՆՈԹ** - Ինչո՞ւ:

**ՍԱՌԱ** - Որովհետև դու դրանով ես  
զբաղվում:

**ԱՆԾԱՆՈԹ** - Տերևներո՞վ:

**ՍԱՌԱ** - Երբ ինչոր քան կամ ինչոր  
մեկը մեռնում է, զալիս ես ու տա-  
նում:

**ԱՆԾԱՆՈԹ** - Ո՞ւր:

**ՍԱՌԱ** - Իմ դեպքում, հուսով եմ,  
դրախտ:

**ԱՆԾԱՆՈԹ** - Տերևներին է՞լ եմ տա-  
նում:

**ՍԱՌԱ** - Զգիտեմ: Մարդկանց մոտ,  
համենայնդեպս, զալիս ես:

**ԱՆԾԱՆՈԹ** - Ինչո՞ւ:

**ՍԱՌԱ** - Երկի... որ մեռնող մարդը ի-  
րեն մենակ չզգա:

**ԱՆԾԱՆՈԹ** - Տերևներն է՞լ եմ միայ-  
նակ:

**ՍԱՌԱ** - Կարծում եմ՝ ոչ: Նրանք միա-  
սին են թափվում:

**ԱՆԾԱՆՈԹ** - Իսկ եթե չթափվե՞ն:

**ՍԱՌԱ** - (*պոռքկալով*): Լսի՞ր, հերիք  
հիմար հարցեր տաս... (*Սառայի  
քրից արյուն է հոսում:*)

**ԳԱՅԱՆԵ** - (*զրպանից հանում է քաշ-  
կիմակը, մոտենում Սառային*): Հի-  
մա, հիմա կանցնի... ոչինչ...

**Սառան**, քաշկիմակը քիմի սեղ-  
մած, գնում է իր սենյակը: Գայա-  
նեն հուսահատ նստում է  
քազմոցին: Անձանորը մոտենում,  
նրա ձեռքից վերցնում է նորա-  
տետրը:

**ԳԱՅԱՆԵ** - Տեսնո՞ւմ եք, Սառային  
ուր է հասցել հիվանդությունը:

**ԱՆԾԱՆՈԹ** - Ես... ցավում եմ ձեզ հա-  
մար:

**ԳԱՅԱՆԵ** - Դուք առողջ ծանոթ չու-

նե՞ք: (Անձանորը թորվում է ուսերը:) Լավ, մնացեք՝ ինչքան պետք է:

**ԱՆԾԱՆՈԹ - Այսի՞նքն...**

**ԳԱՅԱՆԵ -** Մնացեք մեր տանն այնքան, մինչև ինչ-որ բան կպարզվի:

**ԱՆԾԱՆՈԹ -** Դուք շատ բարի եք իմ հանդեա: Նոյնիսկ՝ չափազանց...

**ԳԱՅԱՆԵ -** Ես ել մարդ եմ ու ամեն ինչ հասկանում եմ... Դեմ չե՞ք քնել բազոցին:

**ԱՆԾԱՆՈԹ - Հատակին ելլավ կզգայի:**

**ԳԱՅԱՆԵ -** Ի՞նչ եք խոսում, իմաս բարձ ու ծածկոց կրերեմ: Իսկ դուք հանդեք բաց անձրևանոցը:

**ԱՆԾԱՆՈԹ -** Շնորհակալություն...  
(Փոշտում է:)

**Գայանեն գնում է կողքի սենյակ:**

**ԱՆԾԱՆՈԹ հանում է անձրևանցը, կախում դրան մոտ:** Զննում է սենյակը, նստում է բազոցին:

**Գայանեն քերում է բարձն ու ծածկոցը, դնում է բազոցի վրա:**

**ԳԱՅԱՆԵ -** Մեզ մոտ գիշերը ցուրտ է, լավ կծածկվեք:

**ԱՆԾԱՆՈԹ -** Շնորհակալություն...  
Ես նոյնիսկ զգիտեմ ձեր անունը:

**ԳԱՅԱՆԵ - Գայանե:**  
**ԱՆԾԱՆՈԹ -** Իսկ իմ անունը, ցավոք, չեմ հիշում:

**ԳԱՅԱՆԵ -** Կասեք, երբ կիշեք: Իսկ հիմա քնեք:

**ԱՆԾԱՆՈԹ -** Շնորհակալ եմ, Գայանե: Ինձ ներեք, որ նեղություն տվեցի ձեզ:

**ԳԱՅԱՆԵ -** Ոչինչ: Հուսով եմ, հանգիստ կընեք: Բարի գիշեք:

**ԱՆԾԱՆՈԹ -** Բարի գիշեք...

**Գայանեն գնում է իր սենյակը:**  
**ԱՆԾԱՆՈԹ նստած է բազոցին:**  
**Իր սենյակից դրս է գալիս Սառան:**

**ՍԱՌԱ -** (հանդարտ սոռնով): Ե՞րբ եմ մահանալու: Այսօ՞ր... զիտեի, որ կզաս:

**ԱՆԾԱՆՈԹ -** Սպասո՞ւմ էիր:

**ՍԱՌԱ -** Իհարկե:

**ԱՆԾԱՆՈԹ -** Հրաշալի մայր ունես: Ինձ բույլ տվեց մնալ այնքան, մինչև ինչ-որ բան կիշեմ:

**ՍԱՌԱ -** Գիտեմ: Իսկ դու զիտե՞ս, թե ինչու այդպես վարվեց:

**ԱՆԾԱՆՈԹ -** Որովհետև շատ բարի է:

**ՍԱՌԱ -** Որովհետև շատ միայնակ է: Նա հոգմել է մենակ պայքարելուց:

Գոնե հայրս այստեղ լիներ...

**ԱՆԾԱՆՈԹ -** Իսկ ի՞ր կզա:

**ՍԱՌԱ -** Երբ մահանամ: (Նստում է Անձանորի կողքին, ուշադիր նայում է աչքերի մեջ:) Գիտե՞ս, սարսափելի չես: Բայց երբ քեզ տեսա, վախեցա: Հետո մտածեցի, որ իգուր եմ քեզնից փախչում...

**ԱՆԾԱՆՈԹ -** Նկատի ունես համակերպե՞լլ մահվան հետ:

**ՍԱՌԱ -** Իմ դեպքում դա երևի փրկություն է: Ուղղակի... մարդը չի կարող չվախենալ մահից:

**ԱՆԾԱՆՈԹ -** Իսկ ի՞նչ կլինի, եթե մարդիկ դադարեն մեռնել: Օրինակ՝ այսօրվանից...

**ՍԱՌԱ -** (դադարից հետո): Հիշո՞ւմ ես՝ ինձ հարցրիր, թե ի՞նչ կլինի, եթե չքափեն տերևները:

**ԱՆԾԱՆՈԹ -** Հիշում եմ:

**ՄԱՌԱ** - Պատասխանեմ. այդ դեպքում նոր տերևներ չեն աճի:

**ԱՆԾԱՆՈԹ** - Ինչո՞ւ:

**ՄԱՌԱ** - Մեռած տերևը պիտի փափի, ներծծվի հողի մեջ, ծառի արմատների մեջ, որպեսզի նոր տերևներ աճեն: Հասկանո՞ւմ ես...

**ԱՆԾԱՆՈԹ** - Ըիր...

**ՄԱՌԱ** - Այդպես և մարդիկ: Եթե շմեռնեն, չեն էլ ծնվի: Աշխարհում երեխաներ չեն ծնվի: Աշխարհից կվերանա հրաշքը:

**ԱՆԾԱՆՈԹ** - Իսկ մարդկանց հետ ի՞նչ կլիմի:

**ՄԱՌԱ** - Երկի սկզբում կուրախանան, կոգևորվեն: Պատկերացնո՞ւմ ես, որքա՞ն բան կարելի է հասցնել՝ սովորել, կարդալ, նոր զբաղմունքներ, նոր մասնագիտություններ....

**ԱՆԾԱՆՈԹ** - Հետո՞:

**ՄԱՌԱ** - Հետո... երկի կսկսեն տեղափոխվել այլ երկրներ... Կծանաչեն իրար... բոլո՞րը:

**ԱՆԾԱՆՈԹ** - Հետո՞:

**ՄԱՌԱ** - Հետո, մի պահ, իրարից կիող նեն:

**ԱՆԾԱՆՈԹ** - Հետո՞:

**ՄԱՌԱ** - Կծանձրանան...

**ԱՆԾԱՆՈԹ** - Հետո՞:

**ՄԱՌԱ** - Կզզվե՞ն:

**ԱՆԾԱՆՈԹ** - Հետո՞:

**ՄԱՌԱ** - Էլ ի՞նչ՝ հետո: Խոսքը հարյուր, հազար, կամ միլիոն տարվա մասին չէ: Հավերժության մասին է: Հավերժ ապրել նույն մարդկանց հետ, ինքը քեզ հետ... Հաստատ

կզզվեն իրենք իրենցից: Կսկսվեն զանգվածային սպանություններ, ինքնասպանություններ....

**ԱՆԾԱՆՈԹ** - Ի՞նչ սպանություններ մի աշխարհում, որտեղ մահ չկա:

**ՄԱՌԱ** - Քառս, կատարյալ դժոխք, խելահեղություն...

**ԱՆԾԱՆՈԹ** - Իսկ հիվանդությունները կրուժվե՞ն:

**ՄԱՌԱ** - Չեմ կարծում: Լինել առողջ ու լինել անմահ՝ տարբեր բաներ են: (Գլուխը բռնելով:) Աստված իմ... հավե՞րժ...

**ԱՆԾԱՆՈԹ** - Ստացվում է՝ մահն անհրաժեշտ է:

**ՄԱՌԱ** - Այո, կյանքի համար մահն անհրաժեշտ է:

**ԱՆԾԱՆՈԹ** - (տերև է վերցնում, հոսք քաշում): Ի՞նչ հրաշալի է...

**ՄԱՌԱ** - Սինչդեռ, դիակն այդպես չի բուրում:

**ԱՆԾԱՆՈԹ** - Իսկապե՞ն...

**ՄԱՌԱ** - Հեշտ է մահացածների հետ գործ ունենալ:

**ԱՆԾԱՆՈԹ** - Դե, զիտե՞ս... Մարդը մեռնելուց հետո շատ չի փոխվում:

**ՄԱՌԱ** - Իսկ... այնտեղ լս՞վ է:

**ԱՆԾԱՆՈԹ** - Նայած՝ ում համար...

**ՄԱՌԱ** - (գլուխը կախում է): Երկի մեզ սպասողն ը կան:

**ԱՆԾԱՆՈԹ** - Այո, դրսում են:

**ՄԱՌԱ** - Չես վախենո՞ւմ՝ փախչեն:

**ԱՆԾԱՆՈԹ** - Ինձնի՞ց: Ո՞ր...

**ՄԱՌԱ** - Առավոտյան, երբ արկը ծագեց, նայեցի ու զգացի, որ այլս չեմ տեսնելու նրան, որ դա վերջին

անգամն է: Այնքա՞ն զեղեցիկ էր այդ լուսաբացը: Շատ հաճախ եմ բաց աչքով լուսացրել, անթիվ ու անհամար լուսաբաց եմ տեսել, բայց այս մեկն ուրիշ էր: Վերջի՞նը: Ես դա զգում էի... ես գիտեի, որ այսօր... զիշերը... (Անծանորին.) Հիմա՞...

**ԱՆԾԱՆՈԹ** - Ժամանակն է... Եթե պատրաստ ես:

**ՍԱՌԱ** - Եթե պատրաստ չլինեմ, չե՞նք գնալու:

**ԱՆԾԱՆՈԹ** - Ցանկացած դեպքում գնալու ենք:

**ՍԱՌԱ** - Ուրեմն, իմաստ չունի սպասելը: (Կտրուկ գնում է դեպի դրսի դուռը:) Գնացինք:

**ԱՆԾԱՆՈԹ** - (առանց շարժվելու, քիչ զարմացած): Ուզում ես մահանալ դրսո՞ւմ, անձրևի տա՞կ...

**ՍԱՌԱ** - (կտրուկ շրջվում է: Անծանորը լուր է: Սառայի դեմքին հազիվ նշմարվող ժայիռ է հայտնավում): Հասկացած քեզ... Ժամանակ կրտսա՞ն, մայրիկիս հրաժեշտ տամ:

**ԱՆԾԱՆՈԹ** - Անկասկած:

**ՍԱՌԱ** - Խղճում եմ նրան:

**ԱՆԾԱՆՈԹ** - Իսկ նա խղճում էր քեզ: Սառան մտնում է Գայանեի սենյակը: Անծանորը մնում է տեղում նստած: Ջիշ անց Սառան դուրս է գալիս Գայանեի սենյակից և

մտնում է իր սենյակը: Անծանորը լուր հետևում է նրան: Սենյակից դուրս է գալիս Սառան:

**ՍԱՌԱ** - Գնացինք... (Անծանորը հազնում է անձրևանցը, զրպանից թղթի կտոր է ընկնում: Նկատելով հատակին ընկած քուղը:) Ձո՞ն նորատերի էջերի՞ց է:

**ԱՆԾԱՆՈԹ** - Այո:

**ՍԱՌԱ** - Այստեղ զրված է իմ անունն ու հասցե՞ն:

**ԱՆԾԱՆՈԹ** - Արդին նշանակություն չունի: (Հարժկում է դեպի դուռը:)

**ՍԱՌԱ** - Գիտե՞ն, ինձ հաճար մի հարց մնաց անպատճախան՝ ո՞վ է ավելի մեղք, մահացո՞ղը, թե՞... Անծանորն ու Սառան դուրս են գալիս: Դուռն աղմուկով փակվում է: Դուռն ձայնից արքնացած՝ հյուրասենյակ է մտնում Գայանեն:

**ԳԱՅԱՆԵ** - (Ակատի ունենալով Անծանորին): Գնա՞ց... (Գնում, դուրս է նայում ու փակում է դուռը:) Տարօրինակ են հիշողությունը կորցրած մարդիկ... (Նկատում է հատակին ընկած քուղը: Վերցնում է, կարդում:) Սառա՞... (Նետվում է Սառայի սենյակը: Լսվում են ողբածայն հեծկուոցները:) Սառա՝, աղջի՞կս... Սառա՞... սիրելի՞ս...

# ԱՐԱՋ ԱՐՍԵՆՅԱՆ

## ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ԴՊՐՈՑԸ

ըստ Վիլյամ Սարոյանի, եթե նա ապրեր մերօրյա երևանում

**ՈՒՍՈՒՑԻՉ** - Ո՞վ է հիշում, ո՞րն է այսօրվա պարապմունքի թեման:

**Ա ԱԾԱԿԵՐԸ** - Անցյալ դասին ասացիք, որ այսօր զբուցելու ենք ճիշտ մատուցելու մասին:

**ՈՒՍՈՒՑԻՉ** - Ճիշտ է: Իսկ ի՞նչ է նշանակում «ճիշտ մատուցել»:

**Ա ԱԾԱԿԵՐԸ** - Մատուցել այն, ինչ պատվիրել է հաճախորդը:

**ՈՒՍՈՒՑԻՉ** - Ուրիշ ի՞նչ է նշանակում «ճիշտ մատուցել»:

**Բ ԱԾԱԿԵՐԸ** - Չխախտել ճաշատեսակների հերթականությունը:

**ՈՒՍՈՒՑԻՉ** - Ո՞վ կարող է այլ քան ավելացնել:

**Գ ԱԾԱԿԵՐԸ** - Քաղաքավարի, քարեհամրույր և ժպտադեմ լինել:

**ՈՒՍՈՒՑԻՉ** - Ուրիշ՝

**Դ ԱԾԱԿԵՐԸ** - Ճիշտ մատուցել՝ նշանակում է արագ մատուցել:

**ՈՒՍՈՒՑԻՉ** - Այո՛, դա է ամենազլիսավորը: Իսկ ի՞նչը պետք է արագ մատուցել:

**Բ ԱԾԱԿԵՐԸ** - Ուտելիքը:

**ՈՒՍՈՒՑԻՉ** - Ավելի՝ ստույգ:

**Գ ԱԾԱԿԵՐԸ** - Տաք ուտելիքը:

**ՈՒՍՈՒՑԻՉ** - Ավելի՝ ստույգ:

**Ա ԱԾԱԿԵՐԸ** - Նախուտեստը:

**ՈՒՍՈՒՑԻՉ** - Ո՞վ կարող է ավելի ճիշտ պատասխան տալ:

**Դ ԱԾԱԿԵՐԸ** - Սառը ըմպելիքը:

**ՈՒՍՈՒՑԻՉ** - Ո՞ր սառը ըմպելիքը:

**Ա ԱԾԱԿԵՐԸ** - Հանքային ջրերը և անուշահամ խմիչքները:

**ՈՒՍՈՒՑԻՉ** - Ավելի ստո՞յգ:

**Գ ԱԾԱԿԵՐԸ** - «Զերմուկ», «Քժնի», «Կոկա», «Պեպսի»:

**ՈՒՍՈՒՑԻՉ** - Ո՛չ, մենք «Կոկա» և «Քժնի» չենք մատուցում, որովհետև պայմանագիր ունենք միայն «Զերմուկի» և «Պեպսիի» հետ:

**Բ ԱԾԱԿԵՐԸ** - Իսկ եթե հաճախորդը դա՞ է ցանկանում:

**ՈՒՍՈՒՑԻՉ** - Ժպտալով պատասխանում եք, որ հենց նոր սպառվել է: Ամեն դեպքում, ձեր պատասխանը ճիշտ չէր, քանի որ, այսպես թե այնպես, զովացուցիչներ բոլորն են խմում և մեծ քանակությամբ, և ուզենք թե չուզենք, դրանք ավելի ու ավելի հաճախ ենք մատուցելու: Ուրեմն, ի՞նչն ենք արագ մատուցում:

**Դ ԱԾԱԿԵՐԸ** - Սուրճն ու թեյը:

**ՈՒՍՈՒՑԻՉ** - Երբեք:

**Ա ԱԾԱԿԵՐԸ** - Ինչո՞ւ:

**ՈՒՍՈՒՑԻՉ** - Որովհետև սուրճի և թե-

- յի մեկ գավառը զովացուցիչ ընպետիքի մեջ մեկ շաբաթում:
- Գ ԱԾԱԿԵՐԸ** - Ավելի լավ, արագ կմատուցենք, որպեսզի վճարվելիք հաշիվը մեծ լինի:
- ՈՒՍՈՒՑԻՉ** - Ընդհակառակը: Ո՞վ կարող է ասել՝ ի՞նչո՞ւ:
- Բ ԱԾԱԿԵՐԸ** - Եթե դանդաղ մատուցենք, հաճախորդների մի մասը չի խմի, և դա մեզ օգուտ կինի:
- ՈՒՍՈՒՑԻՉ** - Ո՞րն է մեր օգուտը:
- Դ ԱԾԱԿԵՐԸ** - Նորից կտարացնենք և ուրիշներին կմատուցենք:
- ՈՒՍՈՒՑԻՉ** - Սխալ է, որովհետև թեյի և լուծվող սուրճի դեպքում դա անհնար է: Ուրեմն, ի՞նչն ենք արագ մատուցում:
- Ա ԱԾԱԿԵՐԸ** - Սառը խորտիկները:
- ՈՒՍՈՒՑԻՉ** - Ի՞նչո՞ւ:
- Ա ԱԾԱԿԵՐԸ** - Որպեսզի արագ ուտեն-հազենան և տաք խորտիկները մեզ մնան:
- ՈՒՍՈՒՑԻՉ** - Սխալ է, որովհետև այսօր մեր հաճախորդները որքան ել կուշտ լինեն, տաք խորտիկները մինչև վերջին կտորն ուտում են:
- Բ ԱԾԱԿԵՐԸ** - Մասց միայն խմիչքը:
- ՈՒՍՈՒՑԻՉ** - Վերջապես: Դիշտ է: Եվ ի՞նչո՞ւ ենք ոգելից խմիչքն արագ մատուցում:
- Գ ԱԾԱԿԵՐԸ** - Որպեսզի արագ խմեն:
- ՈՒՍՈՒՑԻՉ** - Իսկ արագ խմելու համար դուք ի՞նչ պետք է անեք:
- Ա ԱԾԱԿԵՐԸ** - Քաժակներն արագ լցնենք:
- ՈՒՍՈՒՑԻՉ** - Եվ՝ մինչև պունկը:
- Բ ԱԾԱԿԵՐԸ** - Ենթադրություն է անելու:
- Ա ԱԾԱԿԵՐԸ** - Քայլություն է անելու:
- Գ ԱԾԱԿԵՐԸ** - Խորոշ է անելու:
- ՈՒՍՈՒՑԻՉ** - Ո՞վ կարող է ասել, այդ դեպքում ի՞նչ եք անելու:
- Ա ԱԾԱԿԵՐԸ** - Քաղաքավարի ժամանությունը ենք անելու:
- ՈՒՍՈՒՑԻՉ** - Ուրիշ ինչ եք անելու:
- Բ ԱԾԱԿԵՐԸ** - Հաջորդ պահին նորից ենք բաժակը լիքը լցնելու:
- ՈՒՍՈՒՑԻՉ** - Հրաշալի է: Իսկ մեզ ի՞նչ օգուտ, որ նրանք արագ խմեն:
- Դ ԱԾԱԿԵՐԸ** - Արագ կհարրեն:
- ՈՒՍՈՒՑԻՉ** - Եթե արագ հարրեն...
- Ա ԱԾԱԿԵՐԸ** - Էլի կուզեն խմել:
- ՈՒՍՈՒՑԻՉ** - Այո՛: Սեր փողը հիմնականում խմիչքից է: Ուրեմն, եթե արագ հարրեն...
- Գ ԱԾԱԿԵՐԸ** - Վերջում կմոռանան, բեր որքան են խմել:
- ՈՒՍՈՒՑԻՉ** - Է՞լ ինչ կմոռանան:
- Բ ԱԾԱԿԵՐԸ** - Թե իրենց պատվիրած խորտիկներից քանի՞սն ենք բերել և ի՞նչ քանակությամբ:
- ՈՒՍՈՒՑԻՉ** - Արդեն ընկալում եք:
- Դ ԱԾԱԿԵՐԸ** - Թեյն ու սուրճն էլ կմոռանան:
- Ա ԱԾԱԿԵՐԸ** - Զովացուցիչների քանակն էլ:
- Գ ԱԾԱԿԵՐԸ** - Տաք խորտիկներն էլ կմոռանան ուտել:
- ՈՒՍՈՒՑԻՉ** - Ապրե՛ք: Իսկ դուք ի՞նչ չեք մոռանան:
- Ա, Բ, Գ, Դ ԱԾԱԿԵՐԸՆԵՐ** - (միասին):  
Եղ ամենը, դեռ մի բան էլ ավելի գույն հաշվի մեջ:
- ՈՒՍՈՒՑԻՉ** - Հոյակա՞պ է: Հաջորդ պարապմունքի թեման նախութեստն է: Ցուեսություն:



**Թամարա  
ԲԱՐԹԱՒԱ**

## **ԽԱՂԱԼԻՔ ԱՏԲՃԱՎԿԸ**

*Պիես մեկ գործողությամբ*

---

**Գործող անձինք**

**ՄԵՐ (Շույն ինքը՝ ՄԵՂԵՍ) - տարբեր տարիքի երեխ  
դերասանուհի**

**ԻՈ (Շույն ինքը՝ ԻՈՐԱՍ) - տարբեր տարիքի երեխ  
դերասան**

---

Բեմեզը է զայիս Մեամ՝ տարեց, համակրելի կին, ձեռքում՝ կիքված մեծ ծրաբ: Որոշ ժամանակ թերև ժայտով դիտում է շուրջը և խորհրդավոր ձայնով, կամաց արտաքերում:

- Այսօր ծրաբ եմ ստացել իմ մահացած ընկերոջից, դեռ չեմ բացել... Մի քիչ նյարդայնանում եմ:

## Երկար ու լուս զննում է դահլիճը:

- Ամեն իմշ սկսվեց այսպես...

Դահլիճի խավարում կարծես փնտրում է ինչ-որ մեկին, ապա արագ դուրս է զնում: Վառ լույսը բեմի երկու կողմներուն ցուցադրում է իրարից անկախ երկու տարածք: Մի կողմում փոքրիկ աղջիկ է՝ դպրոցական Սեան: Մյուս կողմում երիտասարդ Իոն է: Նրանցից յուրաքանչյուրը գոյություն ունի իր տարածքում, նրանք իրար չեն տեսնում, ուշադրույթուն չեն դարձնում և անմիջական գրույցի չեն բռնկում:

**ՄԵԱ** - Դե... ամեն ինչ սկսվեց այսպես: Ես տասնչորս տարեկան եմ: Ավելի ճիշտ՝ տասնչորս կլրանա չորս օրից, բայց կես տարի է՝ հաճախ են հարցնում՝ քանի՞ տարեկան ես: Պատասխանում եմ՝ տասնչորս: Հետո՞ ինչ... ինչ կա՞ որ...

**ԻՌ** - Թույլ տվեք ներկայանալ՝ ես Իոն եմ: Թեև ծննդյան վկայականում գրված է Իորամ:

**ՄԵԱ** - Իսկական անունս... Մեղեա է: Բայց բոլորն ասում են Մեա: Ճիշտն ասած, Մեան ինձ ավելի է դուր գալիս:

**ԻՌ** - Ես քսանիին տարեկան եմ ու շատ հանրահայտ...

**ՄԵԱ** - Ինձ ոչ ոք չի ճանաչում, ոչ մեկը...

**ԻՌ** - Հայտնի դերասան եմ: Կարող եմ անգամ ասել՝ իմ սերնդի ամենահայտնի դերասանը:

**ՄԵԱ** - ... իհարկե, համադասարանցիներիցս ու հարեաններիցս բացի: Դե, գուցե էլի մի քանիսը իմանան, երբ ամռանը գալիս են գյուղ՝ հանգստանալու: Մի խոսքով՝ շատ քչերն ինձ զիտեն:

**ԻՌ** - Ես այնքան հայտնի եմ, այնքան եմ հայտնի... (Զետքը տանում է կոկորդին:) Այ, էստեղս է այդ ճանաչված լինելը, շնչել չի լինում:

**ՄԵԱ** - Ի դեպ, ես շատ եմ դուր գալիս իմ երկու համադասարանցի տղաներին: Ճիշտ է, նրանք դեռ չեն խոստովանել, բայց ինձնից բա՞ն բաքցնել կինի: Երեկ նրանցից մեկը առաջինը հասցրեց բաճկոնը կախել վերարկուիս վրայից, կարծես ուրիշ տեղ չգտավ: Իսկ երկրո՞րդը... Նա ավելի լավ բան էր մտածել՝ խեց պայտասակս ու երրորդ հարկից ցած շպրտեց՝ հանգիստ նայելով ուղիղ աչքերիս մեջ:

**ԻՌ** - Դիմանալ այդքան սիրահարված դեգեներատների սիրո հորձանքին, բայդանց բառե՞րը, արցունքնե՞րը... անտանելի է: Է՛յ, հանգիստ բողեք ինձ: Ատում եմ ձեզ...

**ՄԵԱ** - Բայց, մի բոպե... Այն, ինչ կատարվեց անցյալ ամառ՝ արդեն իսկական սեր էր: Մի տղա ընտրեց ինձ, նկատեց մեկ, երկու, երեք... իինգ աղջիկների միջից: Պատկերացնո՞ւմ եք, մենք իինգն էինք, իսկ նա ցույց տվեց ինձ ու ասաց. «Եթե նա չկանգնի դարպասի մոտ՝ ֆուտրոյ չեմ խաղա»: Ի՞նչ, չե՞ք հավատում: Մամային արև:

**ԻՌ** - Երդվում եմ մորս արևով, մանայիս արև... տաճել չեմ կարող այս բառերը:  
Բոլորը հոգիս հանում են սիրո երդումներով: Նամակներ է, որ գրում են:

**ՄԵՍ և ԻՌ** - (միասին): Չմոռանաք, որ այս ամենը կատարվել է կես դար առաջ:  
Ոչ ինտերնետ կար, ոչ էլ՝ բջջային հեռախոս:

**ԻՌ** - Այդ նամակներից սար էր գոյացել: Անհնար էր կարդալը:

**ՄԵՍ** - Չեր հավատո՞ւմ, որ այդ տղան սիրահարվել էր ինձ: Ահա նամակը. «Մեա, ես սիրում եմ քեզ»: Ծիշտ է, գրված է անհավասար տառերով, սկզբում՝ մեծ, հետո՝ փոքրացող տառերով ու ծուռումութ: Երևում է, սովոր չէ զժավոր թղթի վրա գրել: Բայց փաստը մնում է փաստ: Ով չի հավատում, կարող է նայել ու անձամբ համոզվել:

**ԻՌ** - (ծիծաղում է): Նամակների այդ կույտի մեջ վառվող մի ածուխ որ զցեմ, նրանց իինար զգացմունքները մի ակնթարթում կվերածվեն ծիսի ու մոխրի: Այս, ո՞նց եմ ես տառապում...

**ՄԵՍ** - Այս նամակը կպահեմ ամբողջ կյանքում: Ցույց կտամ երեխաներիս, բոռներիս: Այս, ննան փաստարդերը պիտի լավ պահես: Ես եմ սիրում: Սիրում եմ նրանց, ովքեր սիրում են ինձ: Իսկ ինչո՞ւ՝ ոչ: Ծիշտ է, դեռ նամակի պատասխանը չեմ գրել, բայց անպայման կգրեմ: Նույն չափի, կարճ նամակով պատասխանելը դժվար չէ: Պարզաբեն դրա համար դեռ ժամանակ չեմ գտել:

**ԻՌ** - Ոչ մի նամակի չեմ պատասխանել: Մեծ մասն անգամ չեմ կարդացել: Իսկ ինչ վերաբերում է իսկական սիրո՞ւն...

**ՄԵՍ** - Ինչ վերաբերում է իսկական սիրո՞ւն...

**ՄԵՍ և ԻՌ** - (միասին): Համոզված եմ, որ իսկական սեր գոյություն ունի:

**ԻՌ** - Է՛յ, ո՞վ է համարձակվում խոսել ինձ հետ միասին:

**ՄԵՍ** - Ես Մեան եմ... Տեր Աստված, միայն թե ոչ մեկը չմի...

**ԻՌ** - Հանրաճանաչ լինելու պատճառով ստիպված եմ մասնակցել հազար տեսակի հիմարությունների: Հենց թեկուզ այդ ապուշ մրցույթը... Մի խոսքով, աստղերն ամենուր պետք են: Մեզ խնդրում են, թափալվում են ոտքներիս տակ: Զգվելի է, բայց ես վարժվել եմ:

**ՄԵՍ** - Հիմա փորձում են թեմադրել «Ռումեն և Զուլիետը»: Մրցույթին մասնակցելու համար աղջիկներ են հրավիրել: Տասնչորս տարեկան: Իհարկե, եթե կացանկություն ու դերասանական տվյալներ:

**ԻՌ** - Այս անգամ ես ռեժիսորի դերում եմ:

**ՄԵՍ** - Իսկ գիտե՞ք, թե ով է թեմադրելու: Իորամը: Այս, այս, ծիշտ լսեցիք, ԻՌ-ՐԱՎՈՒ: Գժվել կարելի է: Ու մեկը՝ ես... Տեր Աստված, եթե ինձ չընտրեն... չէ, չէ: Բացառված է: Այդ դերը ես պիտի խաղամ:

**ԻՌ** - Ժյուրիի նախագահն էլ ես եմ: Զգիտեմ, ոնց եմ դիմանալու, բայց ելք չունեմ...

**ՄԵՍ** - Բա որ հանկարծ դասարանցի աղջիկներն իմանան, որ պատրաստվում

եմ մասնակցել Զուլիետ խաղալու մրցույթի՝ ասարսափելի է անգամ մտածելը: Էլ նրանց ուրիշ բան պետք չէ...

**Ի՞Ո -** Մտքովս չեր անցնում, որ մեր քաղաքում այսքան տասնչորս տարեկան աղջիկ է ապրում: Սիայն տեսնեիք, թե ինչի էին նման:

**ՄԵԱ -** Այնպես են զարմանում, երբ ասում եմ, որ տասնչորս տարեկան եմ, ասես մի տասը տարի էլ ավելացրել եմ: Ոչինչ, ես զիտեմ, ինչպես ձեզ համոզեմ...

**Ի՞Ո -** Մրցույթն սկսվեց...

**ՄԵԱ -** Կյանքում նա ավելի հետաքրքիր էր:

**Ի՞Ո -** Չեմ հասկանում, սա երեխա՞՞ է, թե՞ կի՞ն: Թե՞ լիլիպուտ է:

**ՄԵԱ -** Համադասարանցի աղջիկներից կարճ եմ, բայց տասոս հավատացնում եմ, որ հայրս էլ իմ տարիքում բոյով չի եղել: Վերջը. մորս կրծկալի մեջ քամբակ խորեցի, շորբերս թերևակի ներկեցի, մի քիչ ուղղեցի հոնքերս...

**Ի՞Ո -** Սա ինչի՞ է նման: Աչքերն էլ տարօրինակ փայլում են:

**ՄԵԱ -** Համարձակության համար էլ մի քիչ կոնյակ էի կուլ տվել: Վերջերս էի կարդացել, որ մի զավաք կոնյակը համում է ամեն տեսակի ներքին լարումները: Պարզվեց՝ այդպիս է:

**Ի՞Ո -** Այդպես էլ շիակացա՝ գեղեցկուիի՞ է, թե՞ այլանդակի մեկը:

**ՄԵԱ -** Կոնյակից զիշումս ամեն ինչ տակնուվրա էր... Սիայն թե բեմի վրա չընկնեմ:

**Ի՞Ո - (մեկուսի):** Ինչպես եմ հոգնել կամեն ինչից... Չեր անո՞ւնը:

**ՄԵԱ - (կամաց):** Ի՞նձ եք հարցնում:

**Ի՞Ո -** Այո, ձեզ:

**ՄԵԱ -** Մեա... Իմ անունը Մեա է:

**Ի՞Ո -** Քանի՞ տարեկան ես:

**ՄԵԱ -** Ե՞ս... Օյ, ոնց որ թե զիսի ընկավ... Տասնինս լրացել է:

**Ի՞Ո -** Պարեք:

**ՄԵԱ -** Ի՞նչ պարեմ... Այդ պահին զգացի, որ կոնյակն սկսել է ազդել, իսկ մայրիկիս ֆրանսիական բարձրակրունկները ճգնում են ոտքերս... Բամբակի երրորդ փարերը դրանց մեջ էի ճիստել:

**Ի՞Ո -** Ի՞նչ է, դժվարանո՞ւմ եք քայել...

- Ի՞նչ է կատարվում այս աղջնակի հետ:

- Գուցե հիվա՞նդ է:

**ՄԵԱ -** Մրցույթի անդամներն այնպես էին խոսում, որ ես լսեի: Նկատել էին վիճակը և ուզում էին քաջալերել: Դե, դուք զիտեք, ինչպես է դա արվում...

Թե մի բան զիտեմ՝ պարեն է: Տատիկս բալետի ստուդիա էր տանում, ժողովրդական, պարահանդեսային պարերի խմբակներ... Ինչ պար ասես՝ կպարեմ: Տանը, դպրոցում, հյուրերի մոտ միշտ պարում եմ... Բայց հիմա, զգում եմ, ոտքերիս մեջ ասես արձիճ են լցրել, ի՞նչ պարել, տեղից շարժել չեմ կարող...

- Ի՞նչ է կատարվում... - ինձ ես հասնում դժգոհ շշուկները: Իսկ ես կանգնած եմ, ինչպես խարույկի բոցերով պարուրված ժաննա դ'Արկը, և այրվում եմ այդ կրակի մեջ ոչ միայն ամոթից...

**ԻՌ** - Ես դանդաղ մոտենում եմ նրան:

**ՄԵԱ** - Նա դանդաղ մոտենում է ինձ: Ահա, համարյա կողքիս է, կանգնած է իմ դիմաց... Առաջին անգամ եմ նրան տեսնում այսքան մոտիկից: Իմ տասնմեկ սանտիմետրանոց կրունկների վրա կանգնած՝ ձգում եմ վիզս, որ նայեմ ու հալվեմ նրա աշքերի կապույտ լույսի մեջ:

**ԻՌ** - Նայում է ինձ անամոք, անիմաստ հայացքով:

**ՄԵԱ** - Ահա նա, այստեղ, իմ կողքին...

**ԻՌ** - Երածշոտություն:

**ՄԵԱ** - Լեռնականի պար: Մենապար է, անգամ մրցանակ եմ ստացել: Մի քանի ֆրազից հետո դաշնակահարը, կարճ դադարից հետո, անցավ դասականի... «Կարապի լիճք»: Կարծում էին, չէի պարելո՞ւ... Հետո՝ վալս: Այս, ինչպես կպարեի քեզ հետ, Իո: Փորձիր, գրկիր ինձ, ու կզգաս, թե արձնով լցված ոսքերս ինչպես կրոչեն թերևասահ թիթեռի նման:

**ԻՌ** - Պետք է ուշադիր լինել... դատելով աչքերից՝ գժի մեկն է:

**ՄԵԱ** - Նա արդեն շատ մոտիկ է, իսկ ես շարժվել չեմ կարողանում, ոտքերիս մեջ քետոն են լցրել:

**ԻՌ** - Անքարք հայացքով ուղիղ նայում է ինձ:

**ՄԵԱ** - Ինչ որ պատմել էի մինչ այս պահը՝ ամեն ինչ սուստ է, փչո՞ց: Ե՞վ իմ երկու համադասարանցիները, և զյուղի այն տղան, և սերը, և նամակը...

**ԻՌ** - Գուցե իրեն վա՞ս է զգում:

**ՄԵԱ** - Վա՞տ: Ինձ երբեք այսքան լավ չեմ զգացել:

**ԻՌ** - Ի՞նչ է կատարվում նրա հետ:

**ՄԵԱ** - Ի՞նձ հետ... Ես սիրում եմ քեզ, Իո... Եվ այրվում եմ, այրվում եմ, այրվում եմ այդ սիրո մեջ:

**ԻՌ** - Լավ, դուք ազատ եք:

**ՄԵԱ** - Ինչի՞ց եմ ազատ...

**ԻՌ** - Սեղանից... Կամ մենք՝ քեզանից:

**ՄԵԱ** - Ինչ... ի՞նչ...

**ԻՌ** - Երե կարելի է, բող հաջորդը ներս զա:

**ՄԵԱ** - Կարծես մի դույլ պաղ ջուր լցրին գլխիս: Կրակը հանգավ, ածուխները մխացին: Ես դեռ փորձում էի ինչ-որ քան հասկանալ, իսկ հանձնաժողովն արդեն զննում էր հաջորդ թեկնածուին...

Ոսկեմազ, ոտքերն աճել են ուսերից, կուրծքը՝ երկու պինդ կոկոն ու մեծ, կանաչ աչքեր: Իոն նայում էր իմ կողմն ու երազում, որ հնարավորինս արագ չըվեմ, իսկ ես չեղ կարողանում զնալ:

- Ինչո՞ւ,- հարցրի՝ դժվարությամբ ճանաչելով սեփական ձայն:

**ԻՌ** - Որովհետև:

**ՄԵԱ** - Որովհետև... Բայց ինչո՞ւ՝ որովհետև:

**ԻՌ** - Որովհետև:

**ՄԵԱ** - Չեմ հասկանում:

**ԻՌ** - Բացատրում եմ՝ որովհետև, որ անշնորհք ես: Այսպիսի լայիրշների հետ այլ կերպ խոսել չի լինի:

**ՄԵԱ** - Ու դա ասում ե նա, ում աշխարհից ավելի եմ սիրում:

**ԻՌ** - Ամենայն բարիք:

**ՄԵԱ** - Ել ի՞նչ բարիք: Եթե աշխարհում ամենաքանիկ մարդը չի ուզում տեսնել ինձ... Ոսկեմազ, կանաչ աչքերով օրիորդը հմայիչ ժպտաց ինձ: Դավաճան: Այս փերին իմ գիշավոր թշնամին է սիրային եռանկյան մեջ... Ու սկսվեցին մեծագույն տառապանքներս: Երկու ձեռքով հրելով դուռը՝ դուրս եմ բռչում իմ արձնե ոտքերով: Վազում եմ ծնողների ու երկրապագուների բանակի կողքով ներքն՝ մարմարե աստիճաններով... Լավ է, որ այդ ամոքալի պարտություն չտեսան մերոնք... Չեմ հիշում, ինչպես տուն հասա: Դռան մոտ դիմավորող տատիս ասացի. «Պիտի պարապեն», - ու շրխկացրի դուռը: Այս կախարդական նախադասությունը ինձ մշտապես մենակ մնալու հնարավորություն է ընձեռում... Արքնացա բազկաքորին, հեծկլտոցներից կծիկ դարձած: Նայեցի ժամացույցին՝ շուտով վեցը կլինի: Նա դեռ այնտեղ է, մտածեցի ես ու զգացի ամորի տաք ալիքը իմ ներսում: Հիմա ամբողջ կյանքում տառապելու եմ: Ի՞նչ կարող եմ անել, եթե չեմ ծնվել ոսկեմազ ու կանաչ աչքերով: Ես շագանակ եմ՝ շագանակագույն մազեր, աչքեր... Չե, ես չեմ դիմանա: Ինչ էլ լինի, նախ և առաջ պիտք է ապացուցել, որ ես անշնորհք չեմ: Այ, հիմա կվերցնեմ հորս որսորդական հրացանը, ու նա իրենը կստանա:

Չենքն առնում եմ ձեռքս:

- Մեա, ի՞նչ ես անում,- թիկունքիս սարսափած գոռում է տատս:

- Հանգիստ, տատ, դպրոցում ներկայացում ենք բեմադրում, կարող է՝ զենք պետք գա:

Այս, տատ, տատիկս, եթե բոլորին հնարավոր լիներ այսպես հեշտ խարել, ինչպես դու ես խարվում: Երկուսով խառնշտորում ենք եղբորս խաղալիքները:

- Այ, ես ատրճանակը... ոնց որ խկական լինի: Հեռվից ոչ ոք զլսի չի ընկնի, որ խաղալիք է...

Որշված է: Դոնից մինչև բեմ տասը քայլից ավելի չէ: Այդ հեռավորությունից նա չի կասկածի, որ եկել եմ խսկական գենքով: Ներս կմտնեմ, միանգամից ատրճանակը կուղղեմ նրա վրա ու կգոռամ.

- Դավաճան: Դու արժանի ես մահվան:

Թե ինչո՞ւ՝ դավաճան, նա միանգամից չի հասկանա: Հետո այսպես կվերալիցքավորեմ ատրճանակը, նշան կրոնեմ ու կճշամ.

- Չե՞ս ճանաչում:

Չենքից բոլորն են վախտենում:

- Անմիջապես թեմ բարձրացեք ու ներողություն խնդրեք ձեր խոսքերի համար:

- Ներեցեք, թանկագինս, զգիտեմ ձեր անունը... Երաժշտություն, խնդրեմ:

Դաշնակահարը դողացող մատներով կակսի նվազել ու ես, զենքը ձեռքիս, կապարեմ լեռնականի պարը, տաճող, վալս, հերքով կապարեմ բոլորը... Կապարեմ ազատ, անկաշկանի, ինչպես ոչ երբեք չի պարել: Զգիտեմ, ինչքան կտևի այդ ամենը, հանձնաժողովի անդամները, ծնկի իջած, ներողություն կհայցեն: Ու միայն Իոն չի վախտենա: Ես, պարս ավարտած, կանգ եմ առել, իսկ նա, ոտքի վրա մնացած, երկար ծափահարում է ինձ:

- Բուավո, բուավո,- գոռում է նա: Չեռքիցս վերցնելով ատրճանակը՝ շարտում է կուլիսները: Հետո, երկու ձեռքով գրկելով ինձ՝ սեղմում է իրեն ու համբուրում է, այ, այստեղ (*gnoig է տալիս շուրթերը*): Հանձնաժողովի շփոթահար անդամները, դեռ ծնկի իջած, ծափահարում են, գրկում են մեր ոտքերը: Հահա-հա... (*Ծիծաղում է:*) Զիլ է, չէ՞... Հիմա ավելի լավ տրամադրությամբ կշպարվեմ: Դոք դեռ կտեսնե՞ք...

**ԻՌ** - Արքնացա զզվելի տրամադրությամբ, ամբողջ մարմինս ջարդվում է: Երկի մրսել եմ:

**ՄԵԱ** - Դա դեռ ի՞նչ է... Այնպես եմ պարելու, ուշքի՝ չգաք:

**ԻՌ** - Զգիտես ինչու, այն աղջիկը մտքիցս չի դուրս գալիս: Շատ չարացած գնաց...

**ՄԵԱ** - Քանի մայրս չի վերադարձել, հարկավոր է տնից մաքրվել ու ամեն ինչ ավարտին հասցնել: Թե չէ ուշ կիහնի: Մայրս տատս չէ, հեշտ հավատացողներից չէ:

**ԻՌ** - Մրցույթն ավարտվեց: Հանձնաժողովի անդամները գրվեցին, բայց ես չուզեցի նրանց միանալ: Լուրջան մեջ, մեխանիկորեն նայում եմ թղթերը:

**ՄԵԱ** - Մոտենալով բատրոնին, բացում եմ դուռը: Ի՞նչ լուրջուն է...

**ԻՌ** - Շատ անսովոր լրություն է...

**ՄԵԱ** - Փառք Աստծո, «հանճարեղ» երեխաների ծնողները չկան:

**ԻՌ** - Ինչ-որ մեկը բարձրանում է աստիճաններով:

**ՄԵԱ** - Կրունկներիս ձայնը տարածվում է թույլ արձագանքով...

**ԻՌ** - Ինչ-որ մեկը հիմա ներս կմտնի: Դատելով կրունկների ձայնից՝ կին է:

**ՄԵԱ** - Քարացել եմ դրան հետևում:

**ԻՌ** - Դուան մոտ ինչ-որ մեկը կանգնած է...

**ՄԵԱ** - Սի՞թե զնացել է: Նայում եմ բանալու անցքից:

**ԻՌ** - Ոնց որ թե մեկը նայում է...

**ՄԵԱ** - Նա այնտեղ է:

**ԻՌ** - Հաստատ, դրան հետևում մարդ կա:

**ՄԵԱ** - Զգում եմ, սուպերաստղը կարծես թե նյարդայնանում է:

**ԻՌ** - Երևի իմ խելազար ֆանատներից մեկը ինքնազիր է ուզում, կամ էլ, սատա-նան զիտե, թե ուզածն ինչ է: Սիրտս վատ բան է վկայում. շատ վատ բան:

**ՄԵԱ** - Չեմ կարող ներս մտնել:

**ԻՌ** - Կանգնել է, ներս չի մտնում:

**ՄԵԱ** - Քանի ուշ չէ, հետ զնամ: Սոտիկ տարածությունից նա միանգանից կհաս-կանա, որ ատրճանակը իսկական չէ ու կծիծաղի վրաս:

**ԻՌ** - Զգիտեմ ինչու, բայց ուզում եմ հիշել գործած բոլոր մեղքերս: Անգամ չգոր-ծածները...

**ՄԵԱ** - Ի՞նչ... Ի՞նչ չգործածները... մեղքե՞րը:

**ԻՌ** - Կարծես զնաց:

**ՄԵԱ** - Նահանջելու համար ուշ է: Գնալ, իսկ հետո ամբողջ կյանքում ապրել այս-պիսի վերքո՞վ: Ոչ, ոչ մի տեղ էլ չեմ զնա, մինչև չապացուցեմ, որ ես դերասա-նուի եմ: Հա, ես մե՛ծ դերասանուի եմ:

**ԻՌ** - Լավ, ի՞նչ է կատարվում ինձ հետ: Զգում եմ, ինչ-որ բան է կատարվում: Հաստատ կատարվում է:

**ՄԵԱ** - Գալիս է... այստեղ է գալիս: Ոնց որ թե կանգնեց: Եթե հիմա ներս մտնեմ, մոտիկից միանգամից կիասկանա, որ ձեռքիս ատրճանակը խաղալիք է:

**ԻՌ** - Գլուխս պտտվում է: Գուցե ճնշո՞ւմս է բարձրացել:

**ՄԵԱ** - Որոշված է: Ատրճանակը ընդհանրապես ցույց չեմ տա: Ձեռքս այնպես կպահեմ գրպանիս մեջ, որ նա մտածի, թե այստեղ իսկական զենք կա: Վեր-ջերս կարդացի, որ եթե դերասանը բեմում ինչ-որ բանի իսկապես է հավա-տում, ապա դահլիճում հանդիսատեսն էլ է հավատում դրան: Դա, երևի, շատ դժվար է, բայց ես ուզում եմ դերասանուի դառնալ: Հիմա, այս բոպեին ամեն ինչ պիտի որոշվի՝ կարո՞ղ եմ, թե՞... Կարո՞ղ եմ, թե՞ խարում եմ ինքս ինձ: Նորից նայեցի բանալու անցքից... Նա կանգնած է ուղիղ իմ դիմաց: Դավա-ճան: Դու ուրերիդ տակ տրորեցիր իմ զգացմունքները: Ո՛չ, այսպիսի վիրա-վորանք ես չեմ կարող տանել:

- Մեա, Մեղեա: Կամ հիմա վրեմիսնդիր կիմնես, կամ վիրավորված ու նվաս-տացած կապրես կյանքդ: Լսո՞ւմ ես ինձ:

- Լսում եմ,- պատասխանում եմ ինքս ինձ: Կամ նա անմիջապես ներողութ-յուն կիսնորի ամեն ինչ համար, կամ հենց այստեղ նոր վերջը կտամ: Ամբողջ ուժով իրում եմ դուն ու դեն հանդիման կանգնում եմ ես՝ ձեռքս գրպանիս մեջ խորը թաքցրած մարդասպանը:

**ԻՌ** - Դուն անսպասելի բացվեց ու դիմացս հայտնվեց այն սարսափելի աղջի-կը: Բնազդս երբեք ինձ չի խարել: Կյանքիս վայրկյանները հաշված են:

**ՄԵԱ** - Շանաշեցի՞ք ինձ:

**ԻՌ** - Շանաշեցի:

**ՄԵԱ** - Հիշո՞ւմ եք, ինչ համարձակվեցիք ասել ինձ:

**ԻՌ** - Հաճգիստ, չի կարելի սխալվել: Այս հոգեվիճակում նա կարող է սպանել ինձ: Աշ զրաբանում ատրճանակ է, մատն էլ՝ ձգանի վրա: Մի փոքրիկ սխալ՝ և ամեն ինչ վերջացած է:

**ՄԵԱ** - Հարցու չլսեցի՞՞, թե՞ դու ձեզ համար ոչինչ չի նշանակում:

**ԻՌ** - Մի վայրկյանում հիշեցի ամեն ինչ ու ամենքին, ում երբեք կոպտել էի: Սարսափելի բաներ հիշեցի, որ ասում էի դերասաններին բեմի վրա, բայց հաջորդ օրը նրանք այնպիսի նվաստացումով էին ժպտում ինձ, որ ուզում էի էլ ավելի նվաստացնել, ու նվաստացնում էի: Դա սարսափելի էր, բայց նրանք լրում էին:

**ՄԵԱ** - Բեմ բարձրացեք:

**ԻՌ** - Դողացող ոտքերով բեմ եմ բարձրանում:

**ՄԵԱ** - Ներողություն խնդրեք ինձանից:

**ԻՌ** - Ներեցեք:

**ՄԵԱ** - Բարձր:

**ԻՌ** - Ներեցեք ինձ:

**ՄԵԱ** - Ավելի՞ բարձր:

**ԻՌ** - Ոտքերս ծալվում են, ես ծնկի եմ իշնում ու գոռում եմ՝ ներիք:

**ՄԵԱ** - Նա ծնկի է իջել: Լալիս է:

**ԻՌ** - Ներիք, ներիք... Սիայն չսպանես: Խղճա: Խղճա ինձ, ամբողջ կյանքում կաղորեմ քեզ համար:

**ՄԵԱ** - Ի՞նչ եմ լսում... խնդրում ես, որ խղճամ քեզ ու խոստանում ես ամբողջ կյանքում աղորե՞լ ինձ համար:

**ԻՌ** - Խոստովանում եմ, որ սխալ էի և արժանի եմ պատժի: Դու ամենաարժանավորն ես, դու պարզապես տաղանդավոր չես, դու ամենատաղանդավորն ես:

**ՄԵԱ** - Ու դա ասում է ինձ, ի՞նձ...

**ԻՌ** - Ներիք, սխալվել եմ: Դու ամենագեղեցիկն ես, ամենախելացին, ամենատաղանդավորը:

**ՄԵԱ** - Ասում է, իսկ ինքը դոդում է, ցնցվում, սիրտը թփրտում է... Աստված իմ, ի՞նչ խղճուկ է:

**ԻՌ** - Չսպանես: Ներիք: Սիայն չսպանես:

**ՄԵԱ** - Այդ պահին հասկացա, որ նա հավատաց: Հավատաց, որ զրաբանում խւկան ատրճանակ է, ու ես խւկան մարդասպան եմ: Հա-հա-հա... պատկերացնել չեմ կարող, որ այդքան հեշտ կհավատա: Ես ու ինքը, ես ու ինքը: Ահավոր է, չեմ կարող տեսնել այդ ամենը... Մոտենում եմ, նայում աչքերի մեջ: Սի՞թե սա այն նույն տղամարդն է: Սի՞թե այն մարդը, որի միայն հայտնվելը բեմում օվացիայի փոքրիկ է բարձրացնում դահլիճում: Սա այն մա՞րդն է, որն ուշադրություն շղարձնելով երկրպագուների ու ինքնազբերի սիրահար-ների ամբոխի վրա՝ հպարտ անցնում է, ասես չլսելով նրանց խնդրանքը:

Մի՞թե սա է այն մարդը, ով մի քանի ժամ առաջ... իր՞։ Ի՞նչ սարսափ... Ինձ թվաց՝ աշքերիս առաջ նա կծկվեց, փոքրացավ, փոքրիկացավ... Ոչ, ոչ, անտանելի տեսարան է։ Ասում եմ բոլոր դերասաններին։ Այս բոպեհն, այստեղ ավարտվեց դերասանի իմ կարիերան։ Շրջում, գնում եմ դեպի դուռը։ Դուն մոտ կանգնեցի, շրջվեցի, նայեցի արհամարհանքով լի հայացքով, գրպանիցու հանեցի ատրճանակն ու շարտեցի ուսքերի մոտ։

**ԻՌ** - Ամայի շենքում լավ լսվում էր, թե ինչ հանգիստ ու վստահ իջնում էր աստիճաններով։ Դեռ ծնկի իջած, երկար նայում եմ կողըս ընկած ատրճանակին։ Վերցնում եմ ծեռքս ու հասկանում եմ... խաղալիք է։ Ես ոչնչացված եմ։

**ՄԵԱ** - Տուն վերադառնալով՝ առաջինը, ինչ արեցի, Իոյի լուսանկարները պատերի վրայից պոկել, ճնորել ու աղբամանը զցելն էր։ Երեկոյան տնեցիներին հայտարարեցի, որ ընդմիշտ հրաժարվում եմ դերասանուի դառնալու մտքից։ Բոլորը թերևացած շունչ քաշեցին։

**ԻՌ** - Չգիտեմ, ինչքան կմնայի այնտեղ, առանց տեղիս շարժվելու, եթե դահլիճում լոյսերը շանչատեին։ Հրահանի բույլ կրակի տակ դժվարությամբ գտա բաձկոնս ու դուրս եկա մոտք շենքից։ Ոչ մեկին տեսնել չէի ուզում։ Զճանաչվելու համար գլուխս փաթաթեցի շարֆով։ Իզոր։ Առանց դրան էլ չէին ճանաչի։ Սի երեկոյի ընթացքում ես փոխվեցի, դեմքս ծերացավ։ Անգամ քայլվածքս փոխվեց։ Ոչ որի տեսնել չէի ուզում։ Հիվանդ ձևացա, անջատեցի հեռախոսն ու համարյա մի շաբաթ պառկեցի, տնից դուրս չեկա։ Որպես կատարվածի մղձավանշային հիշեցում՝ զիսավերևումս խաղալիք ատրճանակն էր։

**ՄԵԱ** - Կատարվածի մասին պատմեցի երկու ընկերուիներիս։ Իհարկե, այդ ամենը նրանք ընդունեցին որպես երևակայության հերքական նոպան։ Եվ որքան փորձում էի հավատացնել, որ պատմածս սուտ չէ, այնքան բարձր էին նրանք քրքրություն։ Թքա՛ծ։ Չե՛ք հավատում՝ միք հավատա։ Ես որ գիտեմ՝ ինչը ինչպես է եղել։

**ԻՌ** - Ինչքա՞ն կարելի է մնալ տանը։ Ես կենդանի մարդ եմ, ուզում եմ ծխել, ուտել, խսկ տանը ոչինչ չկա... Պետք է տնից դուրս գալ...։

**ՄԵԱ** - Այօր զանգեց դասընկերուին ու ասաց, որ անակնկալ է պատրաստել ինձ համար, ու քող գուշակեմ՝ ինչ։ Ու դու պիտի գուշակես, որ անակնկալը ներկայացման երկու տոմս է, որտեղ զիսավոր դերում Իոն է։ Համա՛ թե անակնկալ է։ Բայց զիալլ՝ կզնամ։

**ԻՌ** - Այօր ներկայացում ունեմ։ Նախորդ երկուսը հանել էի, խսկ այսօր առաջին անգամ տնից դուրս եկա։ Մուտքի մոտ հանդիպեցի երկու հարևանուիներիս։ Ինձ տեսնելով՝ շփորված լրեցին։ Զգում եմ, որ շշնջում են թիկունքիս։ Անհնար է, որ լսած լինեն այն պատմության մասին, թեև... ո՞վ գիտե...։ Սի շաբաթ հեռուստացույցը չէի միացրել, թերք չէի կարդացել։ Բացառված չէ, որ նա հասցրել է իմ պատմությունը պատմել արար աշխարհին։ Հաստա՛տ։ Պա-

տահական անցորդը, տեսնելով ինձ, ինչ-որ բան շշնջաց որդու ականջին: Ավելի լավ է, զլուս շարֆով փաթաթեմ, մինչև հասնեմ թատրոն ու ամեն ինչ պարզեմ: Իսկ եղանակը, հակառակի պես, տաք, արևային... Թատրոնի ավագ պահակը ուսքի կանգնեց, ողջունեց, իսկ ես նկատեցի նրա զարմացած հայացքը: Իմ հետևից կամաց զայիս է ոեկվիզիտորը... Ի՞նչ, դա է՞լ է աշխա երևում: Դժվարությամբ բացում եմ հարդասենյակիս դրությ: Ներս եմ մտնում, վառում եմ լույսը, նստում եմ հայելու դիմաց... Դեմքս պաղ քրտինքի մեջ կորած է:

- Պարոն Իո...- վախեցած հարցնում է դրան շեմին կանգնած ոեկվիզիտորը: Ըհը, սա էլ՝ բնազդը... ոչ մի անգամ ինձ չի խարել... Բոլորը, բոլորը զիտեն:

- Հսում եմ,- ասում եմ նրան:

Նա շփորփած ժպտում է:

- Ինչ-որ բա՞ն է պատահել:

- Չե, պարզապես ուզում էի հարցնել... ձեզ վա՞տ եք զգում:

- Վա՞տ: Ինչո՞ւ այսուի ինձ վատ զգամ:

- Չե, ոչինչ: Ես հենց այնպես...- ուզում է զնալ:

- Սպասեք, քանի եկել եք, ասացեք, ինչ ուզում էիք ասել:

- Դե չե... հասուկ բան չկա: Միայն թե ինձ ու Շալվային թվաց...

- Ի՞նչ թվաց:

- Մի տեսակ կծկված եկաք... Գուցե ուղիկովի՞տն է անհանգստացնում:

- Ոչ մի բան էլ չի անհանգստացնում: Էլ ասելու բան չունե՞ք:

- Հա, ու նաև բարեկցիք մեզ...

Լսվեց ավագ պահակի ճայնը.

- Լիիի, ես զնացի...

Քայլերի ճայնը մարեց:

- Բարեկցի՞օ: Պարզ է: Ահա թե ինչն է զարմացրել հարևաններիս, պահակին ու ոեկվիզիտորին: Նախկինում նրանց երբեք չեմ բարեկցի: Զննեցի հայելու միջից ինձ նայող դեմքին: Գուցե իրո՞ք հիվանդ եմ: Աստված իմ, ինչի՞ն նման: Կյանքում այսպիսի այլանդակի չեմ հանդիպել: Մարեցի լույսն ու աչքերս փակեցի: Մի շարաք է՝ չեմ կարող ազատվել այն ահավոր տեսարանից՝ ծնկի իջած խնդրում եմ ինձ չսպանել:

**ՄԵԱ** - Պատրաստվում եմ զնալ թատրոն: Գիտեմ, որ դերասանները բեմից չեն տեսնում դահլիճում նստածներին: Իսկ եթե տեսնում են, միևնույն է, չեն ճանաչում: Այսօր իմ զոհը նորից հերոսի տեսք կունենա: Հպարտ դուրս կցա ծափահարություններ ընդունելու և ամբարտավան տեսքով ինքնազդեր կրածանի կուլիսներում խոնված, անհույս սիրահարված կանանց:

**ԻՌ** - Ինչքան նստեցի մրան մեջ՝ չզիտեմ: Զայներից ճանաչեցի երկու սկսնակ դերասաններին: Երբեք չեմ հետաքրքրվել նրանց անուններով:

- Չլինի՞ մենք առաջինն ենք,- ասաց նրանցից մեկը:

- Ինչպե՞ս է պատահել, որ մեծ դերասանի հարդասենյակում լույսը չի վառվում:

Կարծում են՝ այստեղ մարդ չկա: Այ, հիմա կիմանամ ամեն, ամեն ինչ:

- Ի դեպ, վերջին օրերին, զգիտես ինչու, չեր երևում: Երկի սիրահարված կանայք հալից գցել են:

Ուրախ ծիծաղում են:

- Եթե միայն այդ հիմարներն իմանային, թե իրականում ինչ կեղտն է:

- Կամաց,- ընդիհատեց նրան մյուսը:- Հանկարծ չլսեն:

- Թող լսեն: Վաղ թե ուշ ինչ-որ մեկը նրա հախից կգա:

- Ո՞րն է իմ մեղքը:

- «Երբ ես քենում եմ, դեմս չկամագնես»: Երկու տարի է՝ աշխատում ենք, մի անգամ անունս չտվեց: Դա քի՞չ է:

- Մինչև այս քատրոնը չեկա, չեի հավատում քամբասանքներին:

Հարդասենյակիս դուռը կիսաբացվեց, լույսը վառվեց, ու ներս մտավ Կակոն:

- Է՛տ... դու այստեղ... Բան է պատահե՞լ:

- Քնիլ էի:

Ստում եմ՝ տրորելով աշքերս: Այս մեկը այնպես կխաղամ, որ ոչ ոք ոչինչ չի կասկածի:

**ՄԵԱ** - Ներկայացումն սկսվեց: Նստել եմ յոթերորդ շարքի հինգերորդ քազկարուին: Ամեն ինչ հրաշալի տեսնում եմ: Ես, իրոք, ճիշտ ընտրություն եմ արել... դահլիճում հանդիսատես լինելը քենում դերասան լինելուց ավելի հետարքիր ե...

**ԻՌ** - Զգում եմ, որ նա նստած է դահլիճում: Մեխանիկորեն արտասանում եմ տեքստը, մեխանիկորեն շարժվում եմ քենում: Այո, նա հաստատ դահլիճում է:

**ՄԵԱ** - Հիմա նա այդքան անկեղծ չէ, ինչպես այն ժամանակ:

**ԻՌ** - Այն զգացողությունն է, որ իմ փոխարեն ուրիշն է կանգնած քենում: Ինչպես միշտ, բուռն ծափահարություններ: Անհասկանալի է, ի՞նչն է նրանց դուր եկել:

**ՄԵԱ** - Ներկայացումն ավարտվեց: Դերասանները դուրս են գալիս խոնարհման: Գուցե ինձ է քվում, բայց նա շատ հիվանդ տեսք ունի: Տանջահար ժպտում է՝ զննելով դահլիճը:

**ԻՌ** - Զգելով ժամանակը՝ հանում եմ գրիմը, դանդաղ փոխում եմ հազուստս, ժամանակ եմ շահում: Լսում եմ, ինչպես են փակվում բոլոր հարդասենյակների դրները: Հազնում եմ քածկոնս, գտնում եմ մեքենայի բանալիները: Դուրս եմ գալիս մոտք փողոցն ու տեսնում ֆանատներիս ամբոխը, սովորականի նման մեքենայիս մոտ խմբված: Գուցե նա է՞լ է այստեղ:

**ՄԵԱ** - Գնանք, զնանք,- խնդրում եմ Ցիցիին:

- Սպասիր, տես, գալիս է: Նրա լուսանկարը չունե՞ս:

- Ոչ:

**ԻՌ** - Արան մեջ ինքնազբեր եմ դնում լուսանկարների վրա, ինչը նախկինում երթեր չեմ արել: Արագ նստում եմ մեքենան ու շարժիչը միացնում:

**ՄԵԱ** - Ես ու Ցիցին տարսի ենք բռնում: Իոն սլանում է մեր կողքով:

**ՄԵԱ և ԻՌ** - (միասին): Պետք է մոռանալ այդ ամենը:

**ԻՌ** - Փորձում եմ ինձ պահել նախկինի պես: Ներկայացումից հետո սիրում եմ լավ ուտել, կոնյակ խմել, աչքի անցկացնել թերթերը, կարդալ՝ որտեղ և ինչ են գրում իմ մասին: Հետո՝ բարեկամներիս մոտ: Երբ էլ նրանց այցելեմ՝ դրսերը միշտ բաց են իմ առջև, չէ՞ որ ես աստղ եմ:

**ՄԵԱ** - Այնպես եմ ստվորելու, որ դառնամ շատ խելացի, շատ հաջողակ, շատ ուժեղ: Դեռ չզիտեմ՝ ինչ կդառնամ, բայց մի բան պարզ է՝ դերասանուիի՞... երթեր:

**ԻՌ** - Կոնյակն արեց իր գործը, միանգամից թերևություն զգացի: Ուզեցի ինչ-որ տեղ գնալ: Ննջարանում, պահարանից հանում եմ պուլպերն ու... այդ պահին ինչ-որ բան սարսափելի աղմուկով զմփում է հատակին... ոտքերիս տակ ընկած է խաղալիք ատրճանակը: Վերցնում եմ ատրճանակը, բացում եմ պատուհանն ու ամբողջ ուժով շպրտում եմ զիշերվա խավարի մեջ: Ամեն ինչ լավ է... Ամեն ինչ լավ է...

**ՄԵԱ** - Ծատրոնից վերադարձա ու ծնողներիս խնդրեցի օգնել՝ կյանքում իմ արժանի տեղը գտնելու համար: Տրամադրությանս անսպասելի շրջադարձը նրանց և զարմացրեց, և՝ ուրախացրեց: Ինչպես միշտ, ամենախնասունը տատիկս էր: Չո տեղն այնտեղ է, որտեղ առավելագույն չափով կկարողանաս իրացնել քո կարողությունները,- ասաց նա: Բայց ի՞նչ անել, եթե ոչ մի առանձնահատուկ տվյալ չունեմ՝ դերասանականից բացի: Իմ այդ կարիերան ավարտված է, մնում է սպասել, մինչև ի հայտ կգա մի նոր տաղանդ:

**ԻՌ** - Ամբողջ զիշեր փնտրեցի ատրճանակը: Լապտերը ձեռքին թափառեցի բակում մինչև լուսաբաց, վերջապես գտա մի փոսի մեջ: Հարվածից ներկը պլոկվել էր ու էլ նման չեր խելականին: Տուն թերեցի ատրճանակն ու այնպես թաքցրի, որ նույնիսկ պատահաբար աչքիս չընկնի: Ասում եմ՝ ժամանակը ամենալավ բժիշկն է:

**ՄԵԱ և ԻՌ** - (միասին): Եթե այդքան մտածես այդ պատմության մասին, կարելի է խելազարվել: Ինչ եղել՝ եղել է: Վե՛րօ: Այդ ամենը պետք է մոռանալ, մոռանալ ընդմիշտ:

### *Տասը տարի անց*

**ՄԵԱ** - Այդ դեպքերից անցավ տասը տարի: Այդ ընթացքում ոչ մի «հատուկ տաղանդ» մոտս չբացահայտվեց: Ես ու Ցիցին, հիշում եք իմ դպրոցական ընկերութուն, միասին կոնսերվատորիա ընդունվեցինք, երաժշտագիտության

բաժինը: Ինչպես տեսնում եք, բավական փոխվել եմ: Բարձրահասակ եմ, սլացիկ կազմվածքով, նոյնիսկ ասում են, որ գեղեցիկ եմ: Ատրճանակի պատմությունը, իհարկե, մոռացել եմ: Անգամ երբ աջս ընկնում է Իոյի ազգանվանը ազդագրերի վրա, աշխատում եմ չիշել այն պատմությունը: Գժուկի մեկն էի, իհմար: Հա, ամուսնացել եմ, երկու երեխա ունեմ: Երեք տարեկան տղաս ու մեկուկես տարեկան աշնուն: Ամուսինս տաղանդավոր ֆիզիկոս է, շատ է սիրում իր մասնագիտությունը: Սի խոսքով, բոլորն էլ ասում են, որ շատ երջանիկ ընտանիք ունեմ: Միայն Աստծուն է հայտնի, թե ինչպես կդասավորվեր ճակատագիրս, եթե դերասանուին դառնայի: Ապրում եմ խաղաղ, հանգիստ ու երջանիկ: Երկու կողմի տատիկները պահում-մեծացնում են բոռներին: Նրանք վաղեմի ընկերություններ են: Ասենք, ամուսնուս էլ մանկությունից գիտեմ: Երկու տարով մեծ է ինձանցից ու ինչ-որ բանով հիշեցնում է Իոյին:

Կյանքիս ընթացքը համարյա չի փոխվել: Ամեն ամառ Բիշվինտա՝ ծով եմ գնում, ձմեռը՝ Բակուրիխանի: Սի երկու անգամ արտասահմանում եղա: Ամուսինս երբեք ժամանակ չունի, չափազանց է զբաղված իր գործով: Ընկերություններս չամուսնացան, ու մեր կյանքը նույնն է, ինչ նախկինում: Ատրճանակի պատմությունը ոչ մեկը չի հիշում:

**ԻՌ** - Վեց տարի է՝ ամուսնացել եմ: Երեխաներ չունենք: Երբեմն թվում է՝ նրա հետ ընդհանուր ոչինչ չունեմ, երբեմն էլ՝ լրիվ հակառակը: Ատրճանակի պատմությունը համարյա մոռացել եմ:

Իմ կյանքում ոչ մի նոր բան չի կատարվում: Թատրոնս ատեցի ու շատ շանցած հեռացա այնտեղից: Հիմա զբաղված եմ միայն կինոյում ու հեռուստատեսության մեջ: Սի քանի անգամ այն զիժ աղջիկը աչքովս ընկավ: Սի անգամ թվաց՝ զայխ է իմ հետևից: Անգամ մտածեցի՝ հն չի՞ հետևում... Տարօրինակ է, ինչո՞ւ իհմա հիշեցի վաղուց մոռացված այդ իհմար պատմությունը:

**ՄԵԱ և ԻՌ** - (միասին): Ժամանակն անցնում է ու անշան ամեն ինչ տանում է իր հետ: Իսկ ինչ չկա՝ ուրեմն և՝ չի եղել...

**ԻՌ** - Չեմ հասկանում, կյա՞նքս է անհետաքրքիր ու տխուր դարձել, թե՞ աշխարհն է շուր եկել ու մարդիկ են փոխվել:

**ՄԵԱ** - Ինչի մասին որ իհմա պատմելու եմ, ես էլ եմ դժվարությամբ հավատում: Սի շաբաթ առաջ, մեր խմբի աղջիկների հետ, լսարանում նատած երգում ենք: Դա հաճախ է պատահում: Անսպասելի բացվեց լրութ, լսարան մտավ մեր ոեկտորք՝ պարոն Դմիտրին: Մենք լրեցինք ու մեղավոր ժպտացինք...

- Ծարունակեք,- խնդրեց նա: Ծիծաղեցինք: Մեզ թվաց՝ կատակում է, իսկ ոեկտորն անառարկելի տոնով խնդրեց շարունակել երգը: Ի՞նչ կարող էինք անել. երգեցինք: Ոեկտորը մատնացույց արեց ինձ ու ասաց.

- Եւկեր ինձ հետ:

Դա մի շաբաթ առաջ էր, իսկ այսօր, կյանքումս երկրորդ անգամ, կանգնած

Եմ կոնսերվատորիայի Փոքր դահլիճի բեմում ու երգում եմ Կարմենի արիան: Դահլիճում, ոեկողոքի կողքին, երեք անձանոր են նստած: Տանը այդ մասին ոչ մեկին շպատմեցի: Կարճ ասած, ինձ ստժավորման հրավիրեցին Լա Սկալա: Դոք դրան հավատո՞ւմ եք: Ես էլ չեմ հավատում... Բայց երբ բեմ ելա, չգիտեմ՝ ինչու, մի ակնքարք Իոյին հիշեցի:

**ԻՌ** - Այսօր լրատվական ծրագրում մի շատ հնայիշ երիտասարդ կնոջ ցույց տվեցին, վաղուց այդպիսի լույս ճառագող դեմք չէի տեսել: Մեցցո-սոպրանոյի այդ երջանիկ տիրուիին ստաժավորման է մեկնում Լա Սկալա... Այս երկրում անհնար է ապրել, զնալով ամեն ինչ դառնում է անտառնելի:

**ՄԵԱ** - Օդանավակայայանում հրաժեշտ տալու էին եկել ամուսինս ու բարեկամներս: Հեռուստախցիկը նկարահանում է լուրերի համար:

**ԻՌ** - Այսօր հեռուստատեսությամբ նորից տեսա նրան: Հարցազրոյց վերցրին նրանից ու ամուսնուց... Տե՛ր Աստված, այնպես արա, որ կնոջս էլ հրավիրեն: Թող գնա: Գոնե ինչ-որ տեղ գնա:

### **Հսկում է Կարմենի արիան, ապա՝ բուռն ծափահարություններ:**

**ՄԵԱ** - Այսօր «Կարմենի» պրեմիերան էր: Զգիտեմ, ինչպես նկարագրեմ հոգեվիճակս: Ամրոդ քաղաքը ողողված է իմ ազդագրերով, թերթերի առաջին է-ջերին իմ լուսանկարներն են, ամեն կողմից գովասանք է, որ հնչում է ծայնիս մասին... իսկ սիրու տիսուր է: Սիրու կտոր-կտոր է լինում, երբ նայում են նորությունների թողարկումը: Իմ երկրում պատերազմ է... Քաղաքացիական պատերազմ:

**ԻՌ** - Այստեղի ամեն ինչն եմ ատում: Այս քաղաքը, երկիրը: Կնոջս հետ հայտնվեցինք քաղաքական բարիկադների տարրեր կողմերում: Չեմ հասկանում, ինչո՞ւ ենք տաճում իրար:

**ՄԵԱ** - Մայրս հաճախս է զանգում ու համոզում է, որ չվերադառնամ: Իսկ երեխանե՞րս, ամուսի՞նս: Հատկապես երեխաներս, նրանց շատ են կարոտել:

**ԻՌ** - Կինս բաժանվեց: Անսպասելի ամուսնացավ նախկին քաղանտարկյալի հետ: Առավոտյան միասին թեյ ենք խմում խոհանոցում, հենց այնպես զրուցում, իսկ երեկոյան զանգում է ու հայտարարում. «Ես ուրիշի մոտ եմ»: Զգիտեմ՝ տիսրե՞մ, թե՞ ուրախանամ:

**ՄԵԱ** - Չեմ կարող պատկերացնել ավերված Ռուսթավելու պողոտան: Դժվար է հավատալ այն ամենին, ինչ գրում կամ պատմում են կատարվածի մասին:

**ԻՌ** - Զգիտեմ՝ ինչ ամեն: Ում հանդիպում եմ, նոյն հարցն են տալիս՝ դու ո՞ք կողմում ես: Հասկացեք, այն ողորմելիներ, ես չեմ կարող լինել ոչ այս կողմում, ոչ՝ այն:

**ՄԵԱ** - Ուզում եմ վերադառնալ ու դեռևս չեմ կարող: Զափից ավելի շատ մարդկանց բարեկեցությունն է կախված ինձանից... Բնակարանի պատերից

հավաքեցի հարազատներիս լուսանկարները, որ ամեն վայրկյան նրանց տեսնելիս լաց չինեմ:

**ԻՌ և ՍԵԱ - (միասին):** Պատերազմ սկսվեց:

**ՀԱՅՈՒՄ ԵԱ ՕՎԿԵՐԱՅԻՆ ԱՐՔԱՆԵՐ, ԾԱԽԱԽԱՐՊՈՐՋՈՒՆՆԵՐ, ԽՍԼ ԱՐԱՆՑ ՖՈՆԻՆ՝ ԱՎ-ՍՊՄԱՏՄՆԵՐԻ ԿՐԱԿԱԽԵՐԹԵՐԻ ու պայթող ռումբերի ճայներ:**

**ԻՌ -** Ես Գագրայի ռազմաճակատում եմ: Երեկ աչքիս առաջ ուր մարդ սպանվեց: Ոչ մեկին չկարողացանք կրակի տակից դուրս քերել: Նահանջում ենք: Պատկերացնել չէի կարող, որ երբեւ զինվորական համազգեստ կհազմնեմ ու ձեռու կառնեն ավտոմատը:

**ՍԵԱ -** Այսօր արտասահմանում ապրող վրացիները բողոքի ակցիա են անցկացնելու:

**ԻՌ -** Սուխումին կրակների մեջ է: Բոլոր կամուրջները պայթեցրել են: Մենք շրջափակման մեջ ենք:

**ՍԵԱ -** Երեկ նորություններով ցույց տվեցին, թե ինչ է կատարվում Արխազիայում: Աչքերիս չհավատացի, երբ տեսա, թե ինչի են վերածվել Սուխումին ու Բիշվիլիտան, որտեղ ես ամեն քարն ու ծառը անգիր գիտեմ:

**ԻՌ -** Գումարտակից ողջ մնացինք երկուս: Ոտքից վիրավորվեցի... Այնպիսի բան էր կատարվում, որ անգամ ծովից արյան հոտ էր տարածվում: Չեմ կարող պատկերացնել, որ երբեւ կուզենամ լրող տալ այդ ջրերում:

**ՍԵԱ -** Անիմաստ է մտածել անձնական ինչ-որ հաջողությունների մասին, երբ երկրում պատերազմ է, արյուն է քափվում: Միակ ցանկությունս հարազատներիս հետ լինելն էր: Սրտին չես խարի, ինչ-որ վատ բան է լինելու: Շատ վատ... Ահավոր կանխազգացում է:

**ԻՌ -** Սուխումին հանձնվեց: Ինքնարիոններով էվակուացմում են միայն վիրավորներին ու կանան՝ երեխաների հետ: Տեսո զիշեցի անձանոք մի տղեկի: Ինձ համար արդեն ամեն ինչ միևնույն էր...

**ՍԵԱ -** Այդ ինքնարիոլ ոմբակոծեցին թրիչքի պահին:

**ԻՌ և ՍԵԱ - (միասին):** Ահավոր է այդ ամենը տեսնելը:

**ԻՌ -** Հիմա մահի ինձ համար ազատազրում է: Փնտրում ու չեմ գտնում իրեն:

**ՍԵԱ -** Մերոնք ինձնից թաքցրել էին, որ եղբայրս զնացել է կովելու: Միայն հետո իմացա, որ գերի է ընկել և արխազները նրան զնդակահարել են Սուխումիի հրապարակում:

**ԻՌ -** Ծգնավորի կյանքով եմ ապրում: Որ մեկին չեմ ուզում տեսնել, հեռուստացույցն անջատել եմ, թերբեր չեմ կարդում: Ոտքս քիչ-քիչ կարգավորվում է: Նորից մենակ եմ ապրում: Աստված, բարեգութ եղիր, վերցրու ինձ քեզ մոտ:

**ՍԵԱ -** Եղբորս թաղեցինք գյուղի գերեզմանոցում, տատիկիս կողքը: Սի՞թե այս ամենը կատարվում է ինձ հետ:

**ԻՌ** - Ոչ մեկին ոչ բատրոն է պետք, ոչ կինո, իսկ դերասանների մասին ընդհանրապես մոռացել են:

**ՄԵԱ** - Այնտեղ, Արևմուտքում, ստեղծագործող մարդուն շատ են զնահատում:

**ԻՌ** - Այստեղ ստեղծագործող մարդիկ ամենադժբախտ արարածներն են:

**ՄԵԱ** - Նրանք ինձ հսկայական գումարներ են վճարում ու ես պարտավոր եմ երգել, երգել, երգել... իսկ թե ինչ է կատարվում իմ հոգում...

**ԻՌ** - Սարսափելի նկող է, գիշերներով չեմ քնում: Սիայնությունը ինձ կլործանի:

**ՄԵԱ** - Զգվել եմ, ամեն ինչից զգվել եմ: Անավոր է: Ստիպված եմ երգել, երբ երգելս չի գալիս:

\*\*\*

**ԻՌ** - Ամուսնացած: Ամնման, հմայիչ կին է, նրագեղ նիստովացով, հագնվում է ճաշակով:

**ՄԵԱ** - Կյանքս տարիներ առաջ գրանցված է համարյա բոպենների ճշգրտությամբ, և ինչ-որ բան փոխելն իմ ուժերից վեր է:

**ԻՌ** - Ինչո՞ւ փողոցում շրեղ տեսք ունեցող կանայք տանը հագնում են տղամարդու գուլպաներ, չեն սանրվում ու խոսելիս նրանց ձայնի մեջ մշտապես դժգոհ նոտաներ են:

**ՄԵԱ** - Սարդն ամեն ինչի վարժվում է:

**ԻՌ** - Ես դրան վարժվել չեմ կարող:

**ՄԵԱ** - Ամեն մարդ ինքն է իր երջանկության դարբինը:

**ԻՌ** - Զգիտես ինչու, բայց ընտրելիս միշտ սխալվում եմ: Դա ի՞նչ է, ճակատագրական ձախորդությո՞ւն, թե՞ ես ընդհանրապես ստեղծված չեմ ընտանեկան կյանքի համար: Նորից մենակ եմ:

**ՄԵԱ** - Երեք տարվա պայմանագիր կնքեցի «Գրանդ օպերայի» հետ: Ամուսինս պատրաստվում է մեկնել Ամերիկա ու պահանջում է ամուսնալուծվել: Մայրս քերանից քոցրեց, որ նա վաղեմի սիրավես ունի իր կին-դեկավարի հետ: Նա հրեուի է, ու միասին են ուզում գնալ Ամերիկա: Դա ինձ շատ չզարմացրեց: Ավելի լավ է մերքերը խոստովանել: Իմ կյանքում էլ է հայտնվել մեկը: Ինձ միշտ անհանգստացնում էր, որ ես ազատ չեմ, հատկապես, երբ Սթիվի հետ միասին հայտնվում էինք ինչ-որ փոքրիկ քաղաքի հյուրանոցում: Երբեք ինձ հանգիստ չէի զգում, անընդհատ քվում էր՝ ահա կրացվի դրուն ու ներս կխուժի ամուսինս՝ ատրճանակը ձեռքին: Ի՞նչ վաղուց չէի հիշել Իոյին: Կարծում եմ, ոչ ոքի այնպես չեմ սիրել, ինչպես նրան: Գուցե որ նա առաջի՞նն էր...

**ԻՌ** - Օպերայում բարեգործական համերգ է պատերազմից տուժած ընտանիքներին օգնելու համար: Ինձ իրավիրեցին համերգը վարելու: Ամրող աշխարհից օպերային աստղեր էին եկել:

**ՄԵԱ** - Թոշում եմ Թբիլիսի: Շատ եմ հուզվում, ամբողջ ճանապարհին դեղ եմ կուլ տալիս, այնքան վաղուց չեմ եղել հայրենի քաղաքում: Վաղը օպերայում եր-

գելու եմ բարեգործական համերգին, իսկ մյուս օրը աղջկաս ծննդյան օրն է:

**ՄԵԼԱՆԻ** առաջ զանգեցի ու հարցրի՝ ի՞նչ նվեր քերեմ:

- Ոչինչ չըերես,- ասաց աղջկիս,- միայն ամբողջ օրն ինձ հետ անցկացրու: Երևի շկարողանամ, վաղուց ինք ինձ չեմ պատկանում... Շատ վաղուց:

**ԻՌ** - Ուզում էի հրաժարվել, հետ եմ վարժվել քենից, բայց ասացին, որ զալու է Սեղեան... Ուզում եմ մտտիկից տեսնել իսկական աստղին:

\*\*\*

**ՀԱՎՈՒՄ ԵԱ ԾԱԿԱԽԱՐՊՈՒՐՅՈՒՆՆԵՐ: ԻՆՆ ՍԵՆԱՅԻՆ ՔԵՄ Է ՄՊԱՋՈՒՄ «ՔԻՍ»-Ի:**

**ԻՌ** - Դուք իխասքանչ էիք:

**ՄԵԱ** - Շատ շնորհակալ եմ:

**ԻՌ** - Գիտե՞ք, ես ձեզ հիշում եմ:

**ՄԵԱ** - Լո՞ւրջ:

**ԻՌ** - Սլանգամայն: Հեռուստահաղորդման մեջ, երբ ձեզ ճանապարհում էին ստաժավորման Լա Սկալա: Կարող եք շհավատալ, բայց ես միանգամից զգացի, որ ձեզ մեծ ապագա է սպասում:

**ՄԵԱ** - Շատ շնորհակալ եմ:

**ԻՌ** - Չարժե շնորհակալ լինել, դա փաստ է: Իմ բնազդն ինձ երբեք չի խարել:

**ՄԵԱ** - Ես էլ ձեզ եմ հիշում:

**ԻՌ** - Լո՞ւրջ:

**ՄԵԱ** - Այս: Ես գալիս էի ձեր ներկայացումները դիտելու:

**ԻՌ** - Ինչպե՞ս... այն ժամանակ դուք փոքրիկ աղջնակ էիք:

**ՄԵԱ** - Դե, ոչ այնքան...

**ԻՌ** - Երջանիկ եմ անձամբ ծանոթանալու համար:

**ՄԵԱ** - Փոխադարձ:

**ԻՌ** - Հուսով եմ, կիանողիպենք:

**ՄԵԱ** - Հուսով եմ... Վաղը ես մեկնում եմ:

**ԻՌ** - Երևի երազում եք հնարավորինս շուտ այնտեղ հայտնվել:

**ՄԵԱ** - Ընդհակառակը:

**ԻՌ** - Ուրեմն՝ մնացեք:

**ՄԵԱ** - Արդեն վաղուց ես չեմ որոշում՝ երբ և ուր գնամ կամ մնամ:

**ԻՌ** - Ի՞նչ արած... աստղերի կյանքն է: Չեմ համարձակվում այլևս ձեզ անհանգստացնել: Ամենայն բարիք:

**ՄԵԱ** - Մնաք բարով:

**ԻՌ** - Շշմելու կին է:

**ՄԵԱ** - (մեկուսի): Հու ատրճանակի պատմությունը չի՞ պատմելու նրան: Կզմվի:

Բայց և այնպես, նա շատ համակրելի է, ալեխառն մազերն էլ սազում են, բա

աչքե՞րը: Այդպիսի կապույտ աչքեր ոչ մի տեղ չեմ տեսել: Շիշտն ասած, դեռ մի քիչ ժամանակ ունեմ: Առավոտյան եմ մեկնում...

**ԻՌ** - Ինչո՞ւ եք կարծում, որ կապույտ աչքերը գեղեցիկ են: Կամ կանաչը: Կամ որ գեղեցկությունը ստեղծում են հակադրությունները՝ սև մազեր ու խաժ աչքեր, կամ ընդհակառակը: Շատ սխալ միտք է: Ինձ որ հարցնեք, ամենահրապուրիշը մեղրագույն աչքերն են: Կայծկլտող ջերմության այդպիսի էֆեկտ ոչ մի ուրիշ գույն չունի:

**ՄԵՍ** - Իրենս եմ հավաքում: Ինչպե՞ս չեմ ուզում գնալ:

**ԻՌ** - Համերգը մի քիչ կենդանացրեց այս մերժող քաղաքը: Ի՞նչ կի՞ն էր: Բնական, ոչ մի կեղծ շարժում: Խսկ աչքե՞րը: Ինչո՞ւ այդպիսի կի՞ն ինձ շհանդիպեց:

**ՄԵՍ** - Երկու օր է՝ Լուսունում եմ: Տղայիս հետ գնացինք Կրանախի ցուցահանդեսը դիտելու: Նա իմա վերադառնում է Չեմքիջ, իմ մեքենայով նրան տանում եմ կայարան: Պատճում եմ թրիլիսյան տպավորությունները, խսկ նա նորություն է հայտնում՝ Ամերիկայում նրա եղբայրն է ծնվել: Ուզում էի պատմել Իոյի ու ատրճանակի մասին, բայց նկատեցի, որ դա նրան հետաքրքիր չէ, ու ձայնս կտրեցի: Այդ օրն ասաց, որ հոր պես ուզում է ապրել Ամերիկայում: Գեներն են: Գեներն անում են իրենց գործը: Շանապարհեցի ու վերադարձա: Մերենան կայանեցի Թաուերի մոտ, հազար քամլոնս ու աստիճաններով բարձրացա կամրջի վրա: Մթնշաղին քայլում եմ կամրջով: Սրիվը մեկ շաբարով թռել է Փարիզ ու ես հանկարծ անտանելի մենակություն զգացի: Ուզեցի հայտնվել այնտեղ, հայրենիքում, իմ թրիլիսյան տանը, Սև ծովի ափին՝ Բիշվինտայում... Կանգնեցի, նայում եմ Թեմզային: Ամեն անգամ այս տեղում ինձ համակում են մանկական հիշողություններս անգլիական գրականության մասին: Ցանկացած հիշողություն տան մասին արցունք է բերում: Հիմա եմ հասկանում, թե ինչն է ստիպում աստղերին ցած նետվել երկնաքերերից: Մտքերիցս վախ զգալով՝ հետ գնացի, աչքի ծայրով նկատելով բատրոնի ճակատին փակցրած իմ ազդագիրը: Աչքերիս իշեցրի զիսարկս, կարծես այս վիճակում ինչ-որ մեկն ինձ կճանաչեր:

\*\*\*

**ՄԵՍ և ԻՌ** - (միասին): Անցավ ավելի քան քսան տարի:

**ՄԵՍ** - Ոչինչ չեմ ուզում պատմել աստղային կյանքիս մասին: Տափակ ու միապաղաղ է, ցանկացած այլ կյանքի պես: Տափահարություններ, պրեմիերա, ծափահարություններ, հյուրախաղեր, ծափահարություններ, նոր օպերային շենք, ծափահարություններ, նոր երկրպագուներ, ծափահարություններ, ծափահարություններ, ծափահարություններ... Հիմա Կիարոսում եմ: Երեք օր կապրես Միջերկրական ծովին նայող հյուրանոցում: Եղել եմ բոլոր երկրներում, լողացել եմ բոլոր ծովերի ու օվկիանոսների ջրերում, բայց աշխարհում

ոչ մի տեղ չգտա սոճուտից ավելի լավ տեղ Սև ծովի ափին, Բիշվինտայում:

**ԻՌ** - Համարյա ամբողջ կյանքս անցավ միայնության մեջ, չհաշված ամուսնական մի քանի տարիները: Ասենք, երեխա ժամանակ էլ խկական ընտանիք չեմ ունեցել: Հայրս վաղոց էր լքել մեզ, մայրս շատ ջահել մահացավ: Ես անընդհատ փնտրեցի ինչ-որ առանձնահատուկ քան: Ինձ էլ էի համարում առանձնահատուկ և ուզում էի լինել միայն հայտնի, առանձնահատուկ մարդկանց շրջանակում: Անկեղծ ասած, այդ իմաստով իհմա էլ չեմ փոխվել:

**ՄԵՍ** - Ի՞նչ ասեմ իմ մասին, կարևորը՝ հարազատներիս կյանքը լավ է դասավորվել: Տղաս տեղափոխվեց Ամերիկա: Հոր պես հաջողակ ֆիզիկոս է: Թեև... շատ հազվադեպ են հանդիպում: Հիմա ես ունեմ մեկ ամերիկացի բոռնիկ, իսկ չորսը Վրաստանում են: Աղջիկս չորս որդի ծնեց՝ Սարա, Անդրո, Դաշի ու Նիկոլո: Ամերիկացի բոռնուհուս, իմ պատվիճ, անվանել են Սերենա: Դժվար է պատկերացնել, քայլ նրանցից ոչ մեկին դեռ չեմ տեսել:

**ԻՌ** - Թատրոնից այդպես էլ ձեռք չքաշեցի, թեև հիմա ամպլուաս այլ է՝ պիեսներ եմ գրում: Գրեցի երեքը, միանգամից բեմադրվեցին: Վաղն Անգլիայից պրոդյուսեր է գալու պիեսս դիտելու համար: Ինչ-որ քան տեղաշարժվում է այս երկրում: Ոչ որի չեմ ասում, քայլ այսօրվանից սկսեցի անգլերեն սովորել: Բոլորից գաղտնի եմ սովորում: Ուսուցչին էլ զգուշացրի, որ լոի, թե չէ խոսակցություններ կսկսվեն...

**ՄԵՍ** - Իմ երկրում նորից պատերազմ է: Այսօր հերթական պայմանագիրը պիտի կնքեի... հետաձգեցի մի շաբարով:

**ԻՌ** - Պատերազմ, պատերազմ... Անձամբ ես արդեն վարժվել եմ պատերազմներին ու անկարգություններին: Ոչնչի չեմ խառնվում, ոչ մի վայրկյան չեմ դադարում պիես գրելու ու շարունակում եմ անգլերենի պարապմունքները: Երեկ դասաստու՝ շատ հաճելի, ջահել աղջիկ, զանգեց ու ներողություն խնդրելով ասաց, որ երեխաներին չի կարող տանը մենակ բողնել ու գալ պարապմունքի: Ես չի ուզում նրանից հրաժարվել, իմացա հասցեն ու հիմա ինքս եմ զնում նրա տուն: Համառորեն անգիր եմ անում անգլերեն քաները: Իմ տարիքում լեզվի պարապմունքը մեկ օր անզամ չի կարելի բաց բողնել:

**ՄԵՍ և ԻՌ** - (միասին): Անցավ մեկ շաբար:

**ՄԵՍ** - Այսօր նորից հանդիպելու եմ պրոդյուսերի հետ:

- Դե, ի՞նչ, ավարտվե՞ց ձեր ենօրյա պատերազմը: Ես լրում եմ... Երեք օր, ավելի քան երեք հարյուր զոհվածներ, երեք հազարից ավելի դժբախտ ընտանիքներ... Երեք օր:

- Կարծում եմ, պայմանագրի պայմանները հրաշալի են,- իմ դեմ է դնում քուղբն ու գրիշը:

**ԻՌ** - Լավ է, որ այս պատերազմը ժամանակին ավարտվեց: Մի շաբար է՝ նրա տանն եմ պարապում: Չեք կարող պատկերացնել, թե ինչ հաճույք եմ ստա-

նում նրա երկվորյակ աղջիկներից: Անուսինը լրել է ու չքվել՝ սատանան զիտե՝ ուր: Երկվորյակները հրաշք են, նոր-նոր սովորում են քայլել:

**ՄԵՍ** - Ուզում եմ, որ իմանաս,- ասացի պրոդյուսերիմ:- Ես պետք է վերադառնամ:

- Ո՞ւր,- հեգնոտ ժախտով հարցնում է՝ կարծես չգիտի, թե՝ ո՞ւր:

**ԻՌ** - Որոշված է: Անզերեն կոսվորեն ու կգնամ: Կնատեմ Թեմզայի ափին, փարերից մեկում ու կգրեմ, կգրեմ...

**ՄԵՍ** - Իմ երկիրը:

- Այնտեղից բոլորը փախչում են, իսկ դու ուզում ես վերադառնա՞լ,- ծիծադում է ճան:

**ԻՌ** - Դասատուխ անունը Լիկա է: Շատ լավ աղջիկ է, նրա տարիքի աղջիկ կարող էի ունենալ: Շատ նրանկատն է: Նկատողություն է անում ու կարմրում է: Երեք ժամ մնացի այնտեղ: Սի աշոնին ես իր գրկել, մյուսին՝ ինքը: Այդպես ել պարապում էինք: Հավատացնում է, որ լեզուների նկատմամբ շատ ընդունակ եմ: Քիչ-քիչ սկսեցի խոսել անզերեն:

**ՄԵՍ** - Ո՞ւր վերադառնաս, Թրիլիսի տո՞ւնդ:- Հազարերորդ անգամ հարցնում է պրոդյուսերը:

- Կամ սոճո՞ւտ, Սև ծովի ափի՞ն, Բիշվիմտայո՞ւմ: Դու չէի՞ր ասում, որ այնտեղ պատերազմ է:

- Հա, այդպես է, բայց ուրիշ տուն ես չունեմ:

- Դու, ինչպես միշտ, անկանխատեսելի մարդ ես,- վշտացած տարածում է ձեռքերը:

**ԻՌ** - Երեկ իրավեր ստացա Լոնդոնից: Թատրոններից մեկում պատրաստվում են բեմադրել իմ պիեսը: Սի խորձ նվեր գնեցի երկվորյակների ու Լիկայի համար, տորթով ու շամպայնի շամպայնից հայտնվեցի նրանց տանը: Լիկան ուրախությունից բռչկոտեց, սիրեցյալ դստեր պես կախվեց վահցու: Շամպայնից մի քիչ հարրեցի: Հիմա տուն եմ վերադառնում: Մեկ ամսից մեկնելու եմ:

**ՄԵՍ** - Կատակ՝ կատակ, բայց պայմանագիրը ստորագրելու ժամանակ չունենք,- հաջորդ փորձն է անում պրոդյուսերը: Բացասարար օրորում եմ գլուխս: Նա հասկանում է, որ ոչինչ չի ստացվի, ես ել հասկացա, որ այլս ոչինչ չեմ փոխի:

- Ուրեմն, վերջնականապես որոշե՞լ ես:

- Այս,- ասում եմ ես:

Նա երկար, լարված մտածում է:

- Երկի մի կարգին տո՞ւն գնես Թրիլիսիում:

- Չե, Թրիլիսիում չեմ գնի:

- Իսկ որտե՞ղ:

- Այնտեղ, որտեղ թաղված են հարազատներս: Գյուղում:

- Գյուղում... Սկզբունքորեն, դու կարող ես գնել ամբողջ գյուղը:

**ԻՌ** - Չյունառատ ձմեռ է: Ես ու Լիկան միայն անզերեն ենք խոսում: Ավելի շուտ պիտի սպառքած լինեի... .

**ՄԵԱ** - Օրերն ու ժամերն եմ հաշվում: Այնքան երջանիկ եմ:

**ԻՌ** - Մոտենում է մեկնումիս օրը: Որոշեցի Լիկային ու աղջկներին տեղափոխել իմ տունը: Հիմա ինչի՞ս է պետք այդքան մեծ տունը: Իրենք էլ ավելորդ տեղը տան վարձ չեն տա:

**ՄԵԱ և ԻՌ** - (միասին): Մեկնումին մնացել է երկու օր:

**ԻՌ** - Հաճույքով եմ տունս մտնում: Երկվորյակներն ամեն ինչ տակնուվար են արել: Լիկան նեղվում է, իսկ ես ոչնչի չեմ խառնվում: Միակ խնդրանքս է՝ չպատռել ձեռագրերս, իսկ ճառողներն, իհարկե, ուզում են հենց այն քուղը ձեռք գցել, որի վրա գրում եմ: Այս երկու հրաշք բայիկներին սիրում եմ զժի պես: Իսկ Լիկան շատ համեղ ճաշեր է եփում:

**ՄԵԱ** - Բազամի մի մասն արդեն ուղարկել եմ: Նախնիներիս տանը տեր դարձա: Աղջիկս ասում է՝ չես պատկերացնում, թե ինչ երջանիկ է ամբողջ գյուղը: Ամեն օր հարևաններից մեկը զանգում ու առաջարկում է իր տունն էլ գնել:

**ՄԵԱ և ԻՌ** - (միասին): Այսօր մեկնում եմ: Ի՞նչ երջանկություն...

**ԻՌ** - Հիմա Հիթրոուի օդանավակայանում եմ:

**ՄԵԱ** - Հիմա Հիթրոուի օդանավակայանում եմ:

**ՄԵԱ և ԻՌ** - (միասին): Ինչ լավ է, որ ճանապարհող չկա: Տանել չեմ կարող հրաժեշտ տալը:

**ԻՌ** - Այն ինքնարիոնվ, որով ես եկա...

**ՄԵԱ** - Ես մեկնում եմ եկած ինքնարիոնվ:

**ԻՌ** - Այսօր պիեսիս պրեմիերան էր: Շատ վրացի կար: Ներկայացմանը ներկա էր դեսպանը, Անգլիայի մշակույթի նախարարն ու երկու հեռուստալմկերություն: Նյարդայնացած էի... մի քիչ: Զանգեցի տուն: Լիկան հրճվանքի մեջ է: Ինձ տեսել է հեռուստացույցով: Ասում է, որ ցնցող տեսք ունեի ու լավ էլ անգլերն էի խոսում: Հենց իհմա էլ, հեռախոսով, մենք անզերեն ենք խոսում:

**ՄԵԱ** - Ես իմ տանն եմ: Նստել եմ ծեր ընկույզնու տակ, և արցունքներս իրենք իրենց թափվում են աչքերից:

- Մամա, չե՞ս զդում,- կատակո՞վ է հարցնում աղջիկս: Գիտի լացիս պատճառը: Բակում վազվակում են քոռներս: Խոստանում են ամեն շաբաթ-կիրակի գալ: Հիմա ես ուզում եմ ապրել երկար, երկար:

**ԻՌ** - Թափառում եմ իին Լոնդոնի փողոցներով: Զարմանալի է, ինչքան սրտամոտ է այս ամենը ինձ: Բոլորն աշխատում են սիրաշահել:

- You are great playrighter.

- You are wonderful.

- You are brilliant.

- Ահա, այսպես, բարեկամներս, մեր երկրում գնահատել չգիտեն: Ինձ անընդհատ հարցնում են.

- Ոչինչ չե՞ք ուզում: Ո՞ւմ եք ուզում այցելել:

- Շերսալիրի գերեզմանին:

**ՄԵՍ** - Երեկ կով գնեցի:

**ԻՌ** - Հրավերս երկարաձգեցին: Առաջարկեցին նոր պիես գրել: Շուտով, երևի, կսկսեմ միանգամից անզլերեն գրել: Շատ եմ կարոտում մերոնց: Նրանք արդեն սկսել են խոսել:

**ՄԵՍ** - Հիշեցի, ինչպես էր պապս պատվաստում ծառերը: Նա շատ թեք ձեռք ուներ: Ամեն ծառ չէ, որ պատվաստումից հետո թեքը է տալիս: Հարևանները հերքով կանչում էին պապիս, ես էլ, նրան պոչ կպած՝ գնում-նայում էի: Հիմա հիշեցի, ինչպես էր անում: Հինգ ծառ պատվաստեցի այսօր:

**ԻՌ** - Պիեսի հինգ պատկեր արդեն գրել եմ:

**ՄԵՍ** - Ի՞նչ երջանկություն, որ ոչ ինտերնետ կա, ոչ հեռուստացույց: Շարարվա վերջում գալիս են մերոնք, ու ես նրանց կերակրում եմ իմ պատրաստած պանրով:

**ԻՌ** - Գրածու ուղարկում եմ Լիկային: Նա անմիջապես բարգմանում է, իսկ հաջորդ օրը նոր տեքստը տանում եմ քատրոն: Նրանց ամեն ինչ դուր է գալիս: Բա չէ... Այն ամենից հետո, ինչ տեսել եմ նրանց քատրոններում, իհարկե, դուր կգա:

**ՄԵՍ** - Հաճախ եմ այցելում հարազատներիս գերեզմաններին: Գերեզմանատանը փորբիկ եկեղեցի են կառուցել: Կիրակի օրերին համարյա ամբողջ գյուղը հավաքվում է աղոքքի: Հոգևորականը շատ ջահել է, երեսուն տարեկան չկա:

**ԻՌ** - Երեկ տուն զանգեցի (լալիս է): Հարցրի երկվորյակների մասին:

- Խոսիր նրանց հետ,- ասաց Լիկան

- How are you, grandfather?

- Grandfather... լսափողը ձեռքից ձեռք են խլում: Չղիմացա, լաց եղա:

**ՄԵՍ** - Կիրակի օրերին սկսեցի եկեղեցում երգել:

**ԻՌ** - Երկրորդ պիեսն եմ ավարտում:

**ՄԵՍ** - Հարևանի երեխաներին անզլերեն եմ սովորեցնում: Բնականաբար, անվճար:

**ԻՌ** - Հոնորարի մասին նախապես էինք պայմանավորվել: Ասացի, որ ուզում եմ թողնիկներիս ուղարկել: Նրանց լուսանկարը միշտ ծոցազրպանում է:

**ՄԵՍ** - Հանգիստ մնալ չեն կարող... Պարապմունքից հետո կամ զամբյուրով խնձոր են թողնում, մեկ՝ դրում, մեկ՝ չուրչխելա: Ինձնից բարեգործ չի ստացվի:

**ԻՌ** - Բարեգործության համար ժամանակ չունեմ, երեխաներին այնքան բան է անհրաժեշտ:

**ՄԵՍ** - Պատվաստված տնկիները պտուի են տվել: Հինգն էլ:

**ԻՌ** - Երեկ երկրորդ պիեսիս պրեմիերան էր: Իմ տարիքում և՛ դրական, և՛ բացասական էմոցիաները նույնքան վտանգավոր են: Ամբողջ օրը ճնշում

ունեի: Զահել չեմ, չի կարելի այսքան աշխատել: Ի վերջո, ես արդեն պապիկ եմ: Թե՞ այդպես չե...

**ՄԵԱ - Կովս շուտով կծնի, կաթ չի տալիս:** Փոխարենը շուտով երկու հորբուկ կունենանք:

**ԻՌ - Շատ եմ հոգնել:** Ել չեմ կարող այստեղ մնալ: Վերադառնամ Թրիլիսի: Տանը կգրեմ ու կուլարկեմ այստեղ: Թոռներիս կարոտել եմ, շատ եմ կարոտել: Տեսնենք, ինչ կստացվի: Կզնամ, հետո, գուցե և վերադառնամ: Կամ էլ նրանց այստեղ կրերեմ: Լեզուն զիտեն, ել ի՞նչ պլորելով կա: Հետդարձի տոմսն արդեն գնել եմ: Իմ նոր պիեսն ուզում եմ անվանել «Խաղալիք ատրճանակը»: Արդեն ամեն ինչ մտածված է: Երևի ինքնաթիռում էլ գրեմ: Դա կլինի իմ լավագույն պիեսը:

**ՄԵԱ - Այսօր երեկոյան, երբ աղորքի էինք գնում, դպրոցի ուսուցչուին խոսքի մեջ ասաց, որ Լոնդոն-Թրիլիսի ինքնաթիռի մեջ Իոն ինֆարկտ է ստացել ու ծանր վիճակում նրան օդանավակայանից անմիջապես հիվանդանոց են տեղափոխել: Նոյն օրը եկա Թրիլիսի: Այցելությունս չինտաձգեցի մինչև վաղը: Գիշեր էր, բայց հերթապահ բժիշկը ճանաչեց ինձ ու բողեց մտնել վերականգնողական բաժին: Նստեցի կողքը: Իոն անգիտակից վիճակում է, ամեն կողմից միացված է տարբեր ապարատների: Շերմակ մորուքով, արձանի գունատությամբ, բայց և այնպես՝ շատ հետաքրքիր: Նստեցի կողքը մինչև լուսաբաց: Ամեն ինչ պատմեցի՝ ատրճանակից մինչև այսօրվա օրը... Չգիտեմ, լսե՞ց... Ինձ համար դա նշանակություն չուներ:**

Հիվանդանոցից վերադարձած գյուղ, ճանապարհին հեռուստացույց գնեցի ու լսում էի լուրերի բոլոր բողարկումները: Մի շաբաթ հետո հայտնեցին, որ Իոն մահացել է: Բայց մահից առաջ հասցրել էին ճայնագրել նրա վերջին հարցազրույցը: Պարզվում է, ինքնաթիռում նոր պիես էր գրել: Հուղարկավորմանը չգնացի: Գյուղական եկեղեցում պատարագ մատուցեցի: Իսկ այսօր նրանից ստացած այս ծրարը: Դեռ չեմ բացել: Սկզբում մի քիչ զարմացա, բայց երբ նայեցի ամսաթվին՝ հասկացա, որ ծրարն ուղարկված է մահվանից մեկ օր առաջ: Զարմանալի է, որ սա ընդհանրապես հասել է ինձ: Չեռքերս դոդում են: Բացում եմ ծրարը, դնում եմ ակնոցը, թերթում եմ նամակը: Ահա թե ինչպիսին է նրա ձեռագիրը: Ընդհանեն մի քանի բառ է գրված: «Թանկագինս, շնորհակալ եմ քեզ ամեն ինչի համար»: Ծրարի մեջ էլի ինչ-որ բան կա: Համում եմ՝ չհավատալով աշքերիս: Այն նոյն խաղալիք ատրճանակը:

**Վրացերենից ռուսերեն թարգմանել են՝  
Ինգա Գարուչական և Պետրա Խոտյանովսկին:  
Ռուսերենից հայերեն թարգմանեց  
Կարինե Խոդիկյանը**



**Նաղեմդղա  
ՊՏՈՒՇԿԻՆԱ**

## **ԱՆՈՐՄԱԼ**

*Պիես մեկ գործողությամբ*

---

**Գործող անձինի**

**ԿԻՆ - հոգմած, սովորական արտավիճով,  
բառասնամյա, կիրք շարժուձևով  
ՏՂԱՄԱՐԴ - երիտասարդ, զեղեցիկ, երեսնամյա,  
կեզանի**

---

### **ԱՌԱՋԻՆ ՍԱՍ**

Սիջանցիկ բակ, կամ, ավելի ճիշտ, տարածություն: Հետնամասից, կողապատի ճակատին՝ գովազդային վահանակ. «Միայն «Այծեղյուրում» կխմեր ամենարարձ-րորակ սուրճը: Ամենացածր գները միայն «Այծեղյուրում» են»: Աչից գաղոն՝ դեղին փայտե պատաշարի մեջ: Գաղոնի մեջ՝ նույնարովանդակ գովազդային վահանակ: Ծենքի ճակատանակի և գաղոնի միջև ասֆալտապատ ճամապարի է: Շրջադարձի վերջում՝ առևտրական կրպակ: Հեռվում՝ մետրոյի նշանը՝ Մտառով:

**ԿԻՆԸ** կանգնած է զազոնի վրա, այն տպավորությունն է, թե կամ քաքնվում է վահանակի հետևում, կամ ուզում է աննկատ մնալ: **ՏՂԱՍՄՐԴԸ** դուրս է գալիս շենքի հետնամասից, գնում է դեպի կրպակը:

**ԿԻՆԸ** լարված հետևում է նրան, նյարդայնանում է:

**ՏՂԱՍՄՐԴ** - (*կրպակի պատուհանից մերս նայելով*): Մալրոր լայրս: (*Գրապանն է խցկում մի տուփ ծխախոտ, վերադառնում*)

**ԿԻՆ** - (*անսպասելի, փոքր-ինչ հուսահաս մետվում է Տղամարդուն ընդառաջ*): Ներեցեք, կարելի՞ է դիմել ձեզոք մեկ բռնուվ:

**ՏՂԱՍՄՐԴ** - (*կտրուկ շրջվում է դեպի կիճը, ազրեսիվ*): Ի՞նչ է պատահել:

**ԿԻՆ** - (*ծանր շնչելով*): Ես միայն ուզում էի հարցնել...

**ՏՂԱՍՄՐԴ** - (*ոչ ազրեսիվ, բայց խիստ զրադաշտ մարդու տոնով*): Լուսն եմ:

**ԿԻՆ** - Ինչպես կարող եմ գնալ երիտասարդական նորածնության տուն:

**ՏՂԱՍՄՐԴ** - (*անտարբեր, բայց հարգանքով*): Երիտասարդական նորածնության տոն՝ Դա առանձնատոն է: Մի տեսակ դեղին գույնի, զիզիրիզի զարդերով:

**ԿԻՆ** - Այս, կարծես թե...

**ՏՂԱՍՄՐԴ** - Գնացեք մինչև երրորդ լուսանցույցը, հետո՝ աջ: Գնացեք մինչև փողոցի վերջը: Խաչմերուկից՝ ձախ, ու, կարծեմ, երկրորդ թե երրորդ տունն է, ոնց որ թե աջ կողմում, մի քիչ խորքում... Պա՞րզ է:

**ԿԻՆ** - Շնորհակալություն:

**ՏՂԱՍՄՐԴ** - Ուրեմն, երրորդ լուսանցույցն ու դեպի ձախ, երկրորդից

դեպի աջ, մինչև վերջ, ձախ, հետո էլ՝ աջ: Երրորդն է, թե՞ չորրորդը... Տեղում կկողմնորոշվեք: Կիշշե՞ք:

**ԿԻՆ** - Շնորհակալություն:

**ՏՂԱՍՄՐԴ** - Օքեյ:

**ԿԻՆ** - Իսկ քաղաքային տրանսպորտով ինչպես կարելի է...

**ՏՂԱՍՄՐԴ** - Զգիտեմ: (*Ժպտում է*): Ներեցեք, զգիտեմ: Երբեք դրանցով չեմ երթեւելում:

**ԿԻՆ** - Իսկ ուրո՞վ:

**ՏՂԱՍՄՐԴ** - Իսկ ուրով, կարծում եմ, էլի այդպես, միայն թե պետք է մայրով գնալ: Օքեյ: (*Ուզում է հեռանալ*)

**ԿԻՆ** - (*կճռական*): Ներեցեք:

**ՏՂԱՍՄՐԴ** - (*չոր*): Էլ ի՞նչ:

**ԿԻՆ** - Հիմա ոչ տրանսպորտով, ոչ էլուրքով այստեղ չեմ գնա: Մեկ ուրիշ անգամ:

**ՏՂԱՍՄՐԴ** - (*զմայով*): Դա ձեր պրեւեմն է: Կներեք:

**ԿԻՆ** - (*շտայ*): Մեկ բռնե: Միայն մեկ բռնե: Ես ձեզ ուզում էի ինչ-որ բան ասել, ավելի ճիշտ՝ առաջարկել... Չե, ավելի ստույգ՝ խնդրել... Գուցե և համաձայնության զանք: Այսինքն, որ մեզ կհաջողվի... Հանկարծ ու ձեզ հետաքրքրի...

**ՏՂԱՍՄՐԴ** - (*շատ չոր*): Կարճ ասեք, խնդրում եմ: Եվ կոնկրետ:

**ԿԻՆ** - Գուցե մի կո՞ղմ քաշվենք: Այսեղ այնքան մարդ է լինում...

**ՏՂԱՄԱՐԴ -** (չի շարժվում): Ես նրանցից զաղտնիք չունեմ:

**ԿԻՆ -** Գիտեք, ես ունեմ զաղտնիք:

**ՏՂԱՄԱՐԴ -** Դա ձեր պրոբլեմն է: Իսկ ես շտապում եմ, ընդամենը ծխախոսի համար էի դուրս եկել: Ինձ սպասում են:

**ԿԻՆ -** Խնդրում եմ, միայն մեկ րոպե: Այսր, չգիտեք, թե ինչ նկատի ունեմ... բայց կանխակալ վերաբերմունք եք դրսևորում: Այն, ինչ պիտի ասեմ, գուցե ձեզ էլ կիետաքքրի:

**ՏՂԱՄԱՐԴ -** Ինձ չի հետաքքրում այն, ինչը դուք եք ուզում: (*Հեռանում է:*)

**ԿԻՆ -** (րոնում է նրա թկրից, հուսահատ): Ձեզ ուզում եմ առաջարկել... փող աշխատել:

**ՏՂԱՄԱՐԴ -** Մասնավոր անձանցից ապրանք չեմ ընդունում: (*Ազատում է թկրը:*) Ներեցեք:

**ԿԻՆ -** Ինձ ճիշտ չհասկացաք: Ես խնդրում եմ ինձ օգնել ու դրա դիմաց փող վաստակել:

**ՏՂԱՄԱՐԴ -** Ինչքա՞ն:

**ԿԻՆ -** Հարյուր դոլար:

**ՏՂԱՄԱՐԴ -** Հասկանալի է... (Կինը րոնում է նրա թկրից:) Բաց թողեք, խնդրում եմ, թեք:

**ԿԻՆ -** Ներեցեք, ակամա ստացվեց:

**ՏՂԱՄԱՐԴ -** Ցանություն:

**ԿԻՆ -** Ոչ: (*Դարձյալ րոնում է թկրից:*)

**ՏՂԱՄԱՐԴ -** (րորորված): Ինչ է, աննորմա՞լ եք:

**ԿԻՆ -** Դուք նույնիսկ չգիտեք, թե ինչով եմ առաջարկում վաստակել: Ձեզ համար դա չնշին բան է: Ըն-

դամենը իինգ րոպե, բնավ չիոգնեցնող սովորական աշխատանքի համար:

**ՏՂԱՄԱՐԴ -** Հինգ րոպե<sup>o</sup>: Եվ հարյուր քա՞՞ս: Սովորական աշխատա՞նք: Խոսեք: Բայց կարձ: Ու մեկընդմիշտ բաց թողեք թեքս:

**ԿԻՆ -** Կներեք:

**ՏՂԱՄԱՐԴ -** Ի՞նչ ծառայություն է ձեզ պետք:

**ԿԻՆ -** Դա իմ տանն է... այստեղից հինգ րոպեի ճանապար է: (*Դադար:*) Դե, ասենք, յոթ... Տասը րոպեից ոչ շատ... Այո: Տասը րոպեն ձեզ լրիվ բավական է: Հինգ րոպե էլ՝ վերադառնալու համար...

**ՏՂԱՄԱՐԴ -** Ընդամենը՝ քսան րոպե: Եվ, այնուհանդերձ, ի՞նչ ծառայություն է:

**ԿԻՆ -** Դատարկ բան... ծորակի հետ կապված: Տեղում կրացատրեմ: Եկեք ժամանակ չկորցնենք:

**ՏՂԱՄԱՐԴ -** Ծորակի<sup>o</sup>... Ինչպես ուրոշեցիք, որ դա ինձ համար սովորական գործ է: Փականագործի նմա՞ն եմ:

**ԿԻՆ -** Չե, նման չեք:

**ՏՂԱՄԱՐԴ -** Ուրեմն, փականագործի դիմեք: Ի դեպս, էժան կնաստի: Ես վերցերս էի կանչել: Ընդամենը տասը դոլար վերցրեց:

**ԿԻՆ -** Չե, չէ: Փականագործը բացառվում է: Դրանք կամ շատ ծեր են, կամ էլ՝ հարթեցող... Ես ձեզ եմ խնդրում:

**ՏՂԱՄԱՐԴ -** Շատ լավ: Ահա իմ օֆիսը: Սպասեք: Հիմա իմ փականագործին կուղարկեմ:

**ԿԻՆ** - Ես կուզենայի, որ դա անձամբ դուք անեիք:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Գիտե՞ք, ինձ շատ եք պարտավորեցնում: Դեռ ոչ ոք փողոցում չի բռնել իմ թևից ու պահածել, որ անհապաղ վերանորգեմ իր ծորակը: Հավատացնում եմ ձեզ, դուք շփորույթան մեջ եք:

**ԿԻՆ** - Դուք ինձ հավատ եք մերժմում:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Շատ շնորհակալ եմ: Շատ վաղոց դա չեմ կարողանում անել:

**ԿԻՆ** - Վստահեցնում եմ ձեզ, որ բոլոր նորմալ տղամարդիկ այդ բանը կարողանում եմ:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Առաջ կարողանում էի: Հիմա հեռու եմ դրանից: Գուցե ես աննորմալ եմ: Օ քե՞յ: Դե ինչ, կսպասե՞ք: Ուտարկե՞մ փականագործին:

**ԿԻՆ** - Ոչ, ես դա չեմ կարող վստահել մեկին, ում չեմ ճանաչում:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Ի՞նչը չեք կարող վստահել: Ծորակը: Այդ դեպքում ոչինչով չեմ կարող օգնել: Ներեցեք, ես բանակցություններ ունեմ: Ինձ ուշացնում եք, դուք էլ ժամանակ եք վատնում:

**ԿԻՆ** - Գիտեք, միայն ծորակի հարցը չէ: Ոչ թե փականագործ է պետք... Դուք անընդհատ խույս եք տալիս: Սի՞րեն դժվար է լսելը: Ես հուզվում եմ: Ու եքե ճիշտն ասեմ, ծորակն այստեղ առհասարակ կապ չունի: Փականագործ էլ պետք չի: Միայն դուք եք պետք: Եվ ուրիշ ոչ ոք: Ես զիտեմ՝ ինչ եմ ասում:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Փոխարենը՝ ես չզիտեմ:

**ԿԻՆ** - Բանն այն է, որ ոռւսական հարուստ լեզվում չկա համապատասխան բառը... Անզերեն խոսո՞ւմ եք:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Անզերե՞ն: Դուք իսկապե՞ս աննորմալ եք:

**ԿԻՆ** - Ոչ: Անգամ՝ հակառակը: Ես բժիշկ եմ:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Ի՞նչ չեք կարող ոռսերենով ասել: Ինձնից ի՞նչ եք ուզում:

### Դադար:

**ԿԻՆ** - Անկեղծ ասած... ես ուզում եմ... որ դուք ինձ հետ... պառկեք...

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Ու վե՞րջ:

**ԿԻՆ** - Այո: Մեկ անգամ:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Հարյուր դոլարո՞վ:

**ԿԻՆ** - Այո:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Մեկ անգամ:

**ԿԻՆ** - Այո, ինձ բվում է, երկրորդ անգամի կարիքը չի լինի:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Իսկ եքե...

**ԿԻՆ** - Դե, իսկ եքե... առաջին անգամ չստացվի... Ձեզ կդիմեմ երկրորդ անգամ:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Ու էլի՞ հարյուր դոլար:

**ԿԻՆ** - Իհարկե: Հասկանում եմ, ձեզ համար անսովոր առաջարկություն է:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Անսովո՞ր: Ի՞նձ համար:

Վիրավորում եք: Հարյուր դոլար ինձ բոպեի համար... Շատ գայթակղիչ է: Գուցե ազատվե՞մ աշխատանքից և ընդհանրապես դրանո՞վ գրաղվեմ: Հարյուր բարս:

**ԿԻՆ** - Իսկ ինչո՞ւ պիտի անվճար անեք: Ինձ ընդհանրապես չեք ճա-

նաշում: Դա ինձ է պետք, և ոչ թե ձեզ: Ես տեղեկանք ել ունեմ, որ առղջ եմ:

**ՏՂԱՄԱՐԴ -** Իսկ հանուն ինչի՞ դա պիտի անեմ հարյուր դոլարով: Այդպիսինի տպավորությո՞ւն եմ քողնում:

**ԿԻՆ -** Ոչ մի դեպքում: Դուք կարգին մարդու տպավորություն եք քողնում:

**ՏՂԱՄԱՐԴ -** Դրա համար ելի՞նձ ընտրեցիք:

**ԿԻՆ -** Դա ինձ շատ է պետք:

**ՏՂԱՄԱՐԴ -** Գնացեք «Կոսմո» հյուրանոց:

**ԿԻՆ -** Ինձ ո՞ւմ տեղն եք դրել: (*Դադար:* *Տղամարդը սովելով՝ նայում է նրան:* Կինն անսպասելի նրա առջև ծձկի է գալիս:) Աղաշում եմ, ինչ ուզում եք՝ մնածեք իմ մասին, միայն թե կատարեք խնդրանք:

**ՏՂԱՄԱՐԴ -** Անհապաղ ոտքի ելեք: (*Կինը կանգնում է:)* Կատարե՞ն ձեր խնդրանքը: Ինչպե՞ս եք դա պատկերացնում: Լավ, այդպես էլ է պատահում... կլիմաքս, նման բանեք: Այստեղ սպասեք: Կառաջարկեմ իմ տղաներին: Հիսուն դոլարից ավելի շտար:

**ԿԻՆ -** Դուք ինձ չհասկացաք: Ինձ միայն դուք եք պետք: Աշխարհում միայն՝ դուք: Երկու հարյուր դոլար կվճարեմ:

**ՏՂԱՄԱՐԴ -** Սակարեկ՞ւմ եք: Ես ձեզ կտամ հարյուր դոլար, միայն պոկ եկեք ինձնից: Ավելի ճիշտ է՝ մի լավ բժշկի վճարեք: Ձեզ բժիշկ է պետք:

**ԿԻՆ -** Ինչո՞ւ եք ինձ ստորացնում:

Դուք չհասկացաք: Դա շատ կարևոր է ինձ համար: Եվ շտար: Եվ ինձ հենց դուք եք պետք: (*Արտավագից:*) Ինչ է, առաջարկս այդքան արտառո՞ց է:

**ՏՂԱՄԱՐԴ -** Ես չեմ պառկում՝ ում հետ պատահի: Ես ամուսնացած եմ, երեխա ունեմ:

**ԿԻՆ -** Գիտեմ: Տեսել եմ: Աղջիկ ունեք: Ինձ շատ դուր է գալիս ձեր աղջիկը: Թմբրիկ բայիկ է: Դեմքի զույնը հրաշալի է: Փափուկ մազեք ունի, գեղեցիկ դիմագծեք: Նա ձեզ է քաշել:

**ՏՂԱՄԱՐԴ -** Շնորհակալություն:

**ԿԻՆ -** Բայց կամակոր է: Շնայած, դա դաստիարակությունից է ու ինձ չի վերաբերում: Ես իմ երեխային ճիշտ կրաստիարակեմ: Իսկ եթե գեներն են, ուրեմն դրանք ոչ թե ձեր, այլ ձեր կնոջ գեներն են: Դուք հավասարակշռված եք: Այն էլ՝ շատ: Իսկ ձեր կնոջ տեսքը շատ նյարդային է: Այո, ձեր աղջիկը ամեն լավ բան ժառանգել է ձեզնից: Թերությունները՝ ձեր կնոջից:

**ՏՂԱՄԱՐԴ -** Շատ շնորհակալ եմ: Ե՞լ ինչ գիտեք իմ մասին:

**ԿԻՆ -** Միայն այն, ինչն ինձ է պետք: Դուք մաքրակենցաղ եք, ալփոհոլ չեք խում... Եվ զլսավորը՝ շատ գեղեցիկ եք: Միայն վատ է, որ ծխում եք: Բայց քիչ եք ծխում: Փոխարենը գեղեցիկ եք: Եվ հմայիչ: Ու տարիքն էլ շատ հարմար է:

**ՏՂԱՄԱՐԴ -** Գիտեք, ձեր վիճակի հա-

մար դուք չափազանց պահանջ-  
կուտ եք:

**ԿԻՆ -** Այլ կերպ չեմ կարող: Ես դրան  
շատ լուրջ եմ վերաբերում ու  
հիմնավորապես եմ նախապատ-  
րաստվել:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Բայց ընտրությունն ան-  
հաջող է: Ես արկածներ չեմ որո-  
նում:

**ԿԻՆ -** Ճիշտ չէ: Միայն վերջին երկու  
շաբաթվա ընթացքում դուք իինգ  
արկած եք ունեցել: Մեկն օտա-  
րերկրացի եք, դուք նրա հետ անգ-  
լերեն էիք խոսում, երեք շատ  
երիտասարդ հայրենակցուիհներ,  
իսկ իինգերորդը իմ հասակակիցն  
էք:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Զեզ հետ հետաքրքիր է  
շփվելը: Վերջապես տեղ հասավ.  
դուք շանտաժ եք անում:

**ԿԻՆ -** Ես պարզապես ուզում եմ ձեզ  
հետ պառկել: Եվ ուրիշ ոչինչ: Եր-  
կու հարյուր դուր եմ առաջար-  
կում:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Երկու հարյուր դուր  
բուլղողիս մաս տալու համար է:

**ԿԻՆ -** Բայց նա, որքան գիտեմ,  
ազնվացեղ է: Երկու հարյուր իի-  
սուն, ունեցածս այդքանն է:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Այս գործում պետք չէ  
տնտեսել: Խնդրեմ, վերցրեք ինձ-  
նից հարյուր դուր և առաջարկեք  
երեք հարյուր իիսուն: Զեր հնարա-  
վորությունը կմնանա: Ես փորձա-  
գետ չեմ, բայց, չգիտեմ ինչու, ինձ  
այդպես է թվում:

**ԿԻՆ -** Ծնորհակալություն, կվերցնեմ:

Տղեք: Տղեք ձեր հարյուր դուրը:  
**ՏՂԱՍՄԱՐԴ -** (տալիս է հարյուր դո-  
ւր): Ծնորհակալություն չհայտ-  
նեք:

**ԿԻՆ -** Առաջարկում եմ երեք հարյուր  
իիսուն դուր: Ես սակագներին  
ծանոք չեմ:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Իսկ հավատացնում էիք,  
թե իիմնավորապես եք պատրաստ-  
վել:

**ԿԻՆ -** Զեր փոխարեն ես կհամաձայն-  
վեի:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Իսկ ես պիտի սակար-  
կեմ: Իմ ժամանակի տասնինգ րո-  
պեն, աշխատանքային րոպեն,  
արժեն հազար դուր:

**ԿԻՆ -** Ես այդքան փող չունեմ:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Զիջումների չեմ գնա:

**ԿԻՆ -** Բայց դա չափազանց շատ է:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Նշանակում է, դուք տեղ-  
յակ եք գների մասին:

**ԿԻՆ -** Լավ, հանձնվում եմ: Դուք հաղ-  
թեցիք: Համաձայն եմ: Կգտնեմ  
հազար դուր: Աշխատանքային  
օրվա վերջին ձեզ մոտ՝ օֆիս  
կզամ: Սպասեք ինձ: (Ուզում է  
գնալ.)

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Սպասեք: (Բոնում է նրա  
թից:) Կարո՞ղ եք մի հասարակ  
բան հասկանալ: Զեր տարիքում  
պիտի այդ բանն իմանաք: Ես չեմ  
կարող կատարել ձեր խնդրանքը:

**ԿԻՆ -** Ինչո՞ւ:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Զեզ չեմ ուզում: Որպես  
կին ինձ դուք չեք գալիս, չեք հրա-  
պուրում: Սեքսուալ առումով ինձ  
դուք չեք գալիս: Զեր հորինած

պատմություններն ել ինձ մոտ չեն անցնի:

**ԿԻՆ -** Դուք ել ինձ դուք չեք գալիս: Ես ել ձեզ չեմ ուզում: Բայց ես չեմ կարող առանց ձեզ: Երեւ կարողանայի... Դե, ի՞նչ կլինի, եթե ինձ հետ պառկեք: Չէ՞ որ պառկում եք՝ ում հետ պատահի, ոչ մեկին չեք մերժում: Մի ամիս է՝ ձեզ եմ հետևում: Մի երեք շաբաթ առաջ, այ, այստեղ, դուք կատակում եիք մի ջահել շիկահերի հետ: Գեղեցիկ աղջիկ եք, երկար հյուսքով: Նույն օրն էլ, աշխատանքային օրվա ավարտին, նա ձեզ մոտ եկավ: Այստեղ ել սպասում եք: Դուրս եկաք, հրավիրեցիք օֆիս: Նրա հետ շփվելու, հետո ել գայթակղելու համար ծախսեցիք երեսուն րոպե: Եվ անգամ շառաջարկեցիք ուղեկցել: Ես լսեցի. կանգնած եիք ձեր մեքենայի մոտ: Քննարկում եիք, թե ճանապարհին որտեղ իշեցնեք նրան: Մյուս օրը, ելի աշխատանքի ավարտին, նա եկավ: Վարդերի ահոելի փնջով: Դուք բարեհամբույր դիմավորեցիք նրան: Դուք շուտ ըմբռնող ու հավատարիմ աշխատակիցներ ունեք, մինչև ուշ գիշեր նրանք պրեֆերանս էին խաղում: Իսկ նա սպասում եք: Ու բոլորն ել նրա հետ շատ սիրալիք էին: Զեր աշխատակիցների հետ միաժամանակ լրեցիք օֆիսն ու իսկի ել շառաջարկեցիք նրան սուս ուղեկցել: Ու նա գալիս էր ելի ու ելի, ոտքից գլուխ բաղվել էր զգացմունքների մեջ: Այդ աղջիկն իսկա-

պես տառապում էր: Յավում էի նրան տեսնելիս: Իսկ դուք սկսեցիք զայրանալ: Վերջապես բացատրվեցիք ու նա այլևս չեկավ: Մեկ օր անց նույն այս տեղում դարպասեցիք չափից ավելի փուլգար տեսքով մեկին: Զեր փոխարեն ես էի անհարմար զգում: Նա սպասում էր փողոցում: Դուք սովորականից շուտ բաց բռնեցիք աշխատակիցներին ու դրան ներս տարաք: Երբ յոր բոպե անց երկուսով դուրս եկաք օֆիսից, արտակարգ բարձր տրամադրություն ունեիք: Շատ բարեհամբույր բաժանվեցիք, ու նա այլևս չերևաց: Իսկ ահա արտասահմանցու վրա երեք ժամ ծախսեցիք: Իմ կարծիքով, դա ստորաքարշուրյուն էր:

**ՏՎԱՄԱՐԴ -** Ինչո՞ւ եք ինձ հետևում:

**ԿԻՆ -** Դուք երիտասարդ, գեղեցիկ կին ունեք: Բայց քնում եք՝ ում հետ պատահի: Անվճար: Ինչո՞ւ չեք կարող ինձ հետ ել պառկել: Մանավանդ, երեք հարյուր իհսուն դոլարով:

**ՏՎԱՄԱՐԴ -** Ես կանանցից փող չեմ վերցնում:

**ԿԻՆ -** Իսկ ինչո՞ւ եք ինձանից շորթում:

**ՏՎԱՄԱՐԴ -** Ե՞ս: Շորթո՞ւմ եմ: Դուք եք ինձ կպել:

**ԿԻՆ -** Բայց երկու օր առաջ այն շեկիլին է՞լ էր ձեզ կպել: Նա պարզապես քցվում էր ձեր վրա, անգամ պատուհանը չհասցրիք փակել: Ու չեիք դիմադրում: Ես տեսա:

**ՏՎԱՄԱՐԴ -** Դուք սեքսուալ մոլագար

եք: Այս վահաճակի մոտից հետևում եք զրին ու հարձակվում:

**ԿԻՆ -** Ինձ անհրաժեշտ էր ուսումնասիրել ձեզ:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Ինչը՞ համար:

**ԿԻՆ -** Ինձ հարկավոր է պառկել ձեզ հետ:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Ինչո՞ւ: Ես սեռական գիգանտ չեմ, ինձ կարելի է փոխարինել: Նույնիսկ պետք է փոխարինել:

**ԿԻՆ -** Միայն դուք:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Ինչո՞ւ: Ինչ-որ մեկի հետ զրա՞զ եք եկել:

**ԿԻՆ -** Ինձ ո՞ւմ տեղն եք դրել:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Օ քեյ: Ես չեմ համարձակվի բարձրածայն ասել, թե ում տեղն եմ ձեզ դրել: Դուք այդքան լո՞րջ եք տառապում սերսուալ անբավարարվածությամբ: Այդ դեպքում ձեզ հարմար չեմ, ես իմ հնարավորությունները գիտեմ:

**ԿԻՆ -** Այս ընթացքում անընդհատ վիրավորում եք և գուհիկություններ ասում: Ինչո՞ւ:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Դե, դու էլ... (Արագ հեռանում է:)

**ԿԻՆ -** (Արագ հետևից): Զեր տան հեռախոսը՝ 200 2113: Զեր կնոջ անունը Լենա է: Ես իիմա կզանգեմ նրան, գիտեմ, որ տանն է, նա չի աշխատում: Հո մի ամսվա դիտումներս զուր չե՞ն կորչելու:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Դուք զզվելի շանտաժիստ եք: Սիրտս խառնում է ձեզ:

**ԿԻՆ -** Ասեք՝ ինչ ուզում եք:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Զեզ ինչքա՞ն է պետք:

**ԿԻՆ -** Մի ամգամ: Ծայրահեղ դեպքում՝ երկու: Երկրորդ անգամի դեպքում՝ միայն մեկ ամիս հետո: Բայց դա ցանկալի չէ:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Իսկ կարելի՞ է՝ փողով:

**ԿԻՆ -** Ոչ:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Հինգ հարյուր դոլար:

**Հաշված նաև այն հարյուրը, որն արդեն տվել եմ:**

**ԿԻՆ -** Ոչ:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Լավ, առանց այդ հարյուրի:

**ԿԻՆ -** Ոչ:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Հինգ հարյուր հիսուն:

**ԿԻՆ -** Ոչ:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Յոք հարյուր:

**ԿԻՆ -** Ոչ:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Հազար դոլար:

**ԿԻՆ -** Ոչ:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Քանի՞ տարեկան եք:

**ԿԻՆ -** Քառասուն...մեկ...

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Վերցրեք փողը:

**ԿԻՆ -** Ոչ:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Ես ձեզ չեմ ուզում:

**ԿԻՆ -** Մեկ ամգամ: Ու ձեզ կմոռանամ:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Կմոռանա՞ք: Ես չեմ կարող նման ոխսկի դիմել:

**ԿԻՆ -** Բայց ինչո՞ւ: Ինչո՞ւ պատրաստ եք վճարել հազար դոլար, միայն թե չպառկեք ինձ հետ: Այդքան սարսափելի՞ եմ: Չե՞ որ ձեր պատճառով կարող եմ կորցնել հավատս իմ նկատմանք:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Դուք լուսնի՞ց եք իշել:

Սի՞թե դա այդպես են անում:

**ԿԻՆ -** Մի ամիս հետևել եմ ձեզ միայն,

որ հասկանամ, թե ինչպես է դա արդյում: Անգամ փորձեր եմ արել: «Ներեցեք, ծխախոտ կարելի՞»:

**ՏՂԱՄԱՐԴ -** Խնդրեմ: Թո’ի, սատանա: Կրակվառիշը օֆիսում է: Մըս- մենք, այստեղից մի քանի քայլի վրա է: Ես էլ, ճիշտն ասած, կարծ ընդմիջում ունեմ:

**ԿԻՆ -** Բայց դա մեծ ռիսկի հետ է կապված, կրակվառիշը միշտ ձեր գրաբանում է: Ու ես որոշել եի հարցնել, թե ուր և ինչպես կարելի է գնալ: Այս դեպքում կարելի էր մի քիչ զրոյցել:

**ՏՂԱՄԱՐԴ -** Դա ձեր սխալն էր: Գոնե ծխախոտ խնդրեիք:

**ԿԻՆ -** Բայց ես չեմ ծխում:

**ՏՂԱՄԱՐԴ -** Ոչինչ, ես ձեզ ավելի ճիշտ կհասկանայի: Երբեք չի կարելի խախտել խաղի կանոնները: Արդեն ուշ է: Ես ձեզնից պարզապես վախենում եմ:

**ԿԻՆ -** Ինչո՞ւ եք ինձանից վախենում: Ես քիշկ եմ: Վարակարան: Անգամ խոլերայի դեմ եմ պայքարում: Ու ներեցեք, որ ավելորդ բաներ ասացի: Ես չեմ պատրաստվում վնասել ձեզ, ձեզանից ոչինչ չեմ ուզում: Սիայն թե մեկ անգամ պառկեք ինձ հետ: Դե, գուցե և՝ երկու:

**ՏՂԱՄԱՐԴ -** Ամեն ինչ սկզբից է սկսվում: Ներեցեք, բայց ձեր մասին ոչինչ չգիտեմ:

**ԿԻՆ -** Իսկ ի՞նչ էիք ուզում իմանալ իմ մասին:

**ՏՂԱՄԱՐԴ -** Ոչինչ էլ չեմ ուզում:

**ԿԻՆ -** Այսպես նորից փակուղի կմըս-

նենք: Այնուամենայնիվ, մի քիչ պատմեմ իմ մասին: Իհարկե, հետաքրքիր ոչինչ չեք լսի, ես միօրինակ կյանքով եմ ապրում: Ծնվել եմ հազար ինը հարյուր հիսուն...

**ՏՂԱՄԱՐԴ -** Պետք չէ:

**ԿԻՆ -** Իսկ ի՞նչ է պետք:

**ՏՂԱՄԱՐԴ -** Դուք պետք է ինձ սերտավ առումով հետաքրքրեք:

**ԿԻՆ -** Սերսուալ առումով... ձե՞զ:

Պրոբլեմ չկա: Ես ոչնչով չեմ զիջում ձեր պատահական նանարներին: Օտարերկրացու բոյին եմ: Կոնքերս ճիշտ այն գուհիկ աղջկա կոնքերի նման են: Մեջքս շիկահեր գեղեցկուհուց մի քիչ է հաստ: Մազերս, ուշադրություն դարձրեք, համարյա ձեր կնոջ մազերն են: Կարծես ինչո՞ր բան մոռացա... դե, ամեն բան չես հիշի: Հա, կուրծքս: Ի դեպ, առանց կրծկալի եմ: Խնդրենք: Բառերն ո՞ւմ են պետք: Նայեք: (Արագ քանդում է վերնաշապիկի կոճակներն ու բացում կուրծքը:) Մի անգամվա համար ձեզ հարմա՞ր է:

**ՏՂԱՄԱՐԴ -** Խելազարվել եք... կոճկվեք, շուտ: (Փորձում է իմքը կոճկել:)

**ԿԻՆ -** Ուրիշ կանանց հանվեցնում եք, ինձ՝ բռնությամբ հազցնում: Դե, ի՞նչ եք ձեռք զցում: Չկամեք ինձ: Ինչպես ուզեմ, այնպես էլ ման կգամ:

**ՏՂԱՄԱՐԴ -** Ի՞նչ եք գոռում փողոցով մեկ: Մի կողմ քաշվենք: (Տանում է դեպի զազոնը:) Ի՞նչ անեմ, որ ինձնից պոկ զաք:

**ԿԻՆ** - Շատ տարօրինակն է, շփորվում է, երբ կանացի մերկ կուրծք է տեսնում: Վախենում է: Հիմա կփախչի: Այսը, ինչպես կարելի է ձեզ գայթակղել: Անհնար է: (Նետվում է ու համրուրում մրա շորթերը:)

**Տղամարդի իրում է նրան:** Կինն ընկնում է գետնին ու մնում պառկած: **Տղամարդի հեռվից ուշադիր գննում է նրան:**

**ՏՂԱՍՍՐԴ** - (սոլում է): Ձևացրեք, ինչքան կամենաք: Ես ներողություն եմ խնդրում, բայց դա ինքնապաշտպանություն էր: Ես գնում եմ, իսկ դուք, ավելի լավ է, այստեղ չերևաք: Հիմա միայն թիկնապահներով ման կօամ: Այդ տղաները լիրիկայից հեռու են: (Գնում է, հետո վերադառնում:) Դե, ներողություն... չեմ ուզում: Եղածը մոռանանք: Ես գնում եմ: Ցտեսություն: Ուրախ էի ձեզ հետ ծանրանալու համար: (Զգույշ կռանում է նրա վրա:) Լսեք, ամեն ինչ կարգի՞ն է: Կյանքում կնոջ խփած չկամ: Ազնիվ խոսք: Բայց դե... չի կարելի այդպես վրա տալ: Դա տղամարդուն հետաքրքրելու անհաջող ձև է: Եվ, ընդհանրապես, եթե նա միանգամից չի ուզում, ուրեմն, անհմաստ է պնդելը: Ինչքան շատ եք ջանք գործադրում, տղամարդն այնքան քիչ է ցանկանում: Դա մեր եռոյթունն է: (Հպավում է նրան:) Եվ էլի մի բան աշխարհում այնքան շատ են տղամարդիկ, որ խոսք չի

կարող լինել վերջնական ընտրության մասին: (Նրան քավի է տալիս:) Ես չեմ կարող գնալ, քանի դեռ զգիտեմ՝ դուք ո՞ղջ եք, թե՞ մեռած:

**ԿԻՆ** - Ինձ մի շարժեք, գլուխս եմ խփել: Ուղեղի ցնցում է...

**ՏՂԱՍՍՐԴ** - «Շտապ օգնություն» կանչե՞մ:

**ԿԻՆ** - Երկի պետք զա:

**ՏՂԱՍՍՐԴ** - Օ քեյ: Վազեմ կանչելու:

**ԿԻՆ** - Իսկ ինձ թողնելու եք այստեղ պառկա՞ծ: Այս վիճակո՞ւմ:

**ՏՂԱՍՍՐԴ** - Իսկ ի՞նչ անեմ, ձեռքերիս վրա՞ պահեմ:

**ԿԻՆ** - Գնեն օֆիս տարեք ու բազմոցին պառկեցրեք:

**ՏՂԱՍՍՐԴ** - Անգամ ձեր դիակը քոյլ չեմ տա օֆիս տեղափոխել:

**ԿԻՆ** - Ձեր հարցում ես սխալվել եմ:

**ՏՂԱՍՍՐԴ** - Եթե հենց սկզբից ինձ լսեիք...

**ԿԻՆ** - Կարծում էի, կիրք մարդ եք:

**ՏՂԱՍՍՐԴ** - Այսինքն, ենթադրում էիք, որ կիրք մարդն է կարող ընդամենը հարյուր դրաբով պառկել առաջին պատահածի հե՞տ: Շատ լավ եղանակ է: Պառկեք, մի քիչ կիովանաք, իսկ ես գնամ «Շտապ օգնություն» կանչելու:

**ԿԻՆ** - Հինգ ժամից հետո հազիվ զա:

**ՏՂԱՍՍՐԴ** - Դուք բժիշկ եք, ավելի լավ կիմանաք: Ի դեպ, դուք կարող եք ձեզ առաջին օգնությունը ցույց տալ:

**ԿԻՆ** - Գնացեք գրողի ծոցը:

**ՏՂԱՍՍՐԴ** - Հաճույքով: Շուտափույթ կազմուրում եմ մաղրում ձեզ: Ես

«Ծտապ օգնություն» կանչեմ, իսկ մինչև այդ աշխատակիցներից մեկն այստեղ կհսկի: Զեզ պրակտիկան է պակասում:

**ԿԻՆ** - (կտրուկ վեր է բռչում): Դե, կորեք գրողի ծոցը: Գրողի մոր մոտ ու դեռ ավելի հեռու:

**ՏՂԱՄԱՐԴ** - Արդեն լավ է:

**ԿԻՆ** - Ինձ առհասարակ տղամարդ պետք չէ: Որպես տեսակ պետք չէ: Ես ընդամենը մեկ անգամ կպառկեի ձեզ հետ ու այլև տղամարդկանց երեսին չեի նայի:

**ՏՂԱՄԱՐԴ** - Ուրեմն, ինձ ընտրել եք սեռական կյանքին հրաժեշտ տալու համա՞ր: Շոյված եմ: Բայց վախենամ՝ պետք չգամ այդ նապատակի համար: Ինձ հետ շփվելուց հետո դուք կփոխեք ձեր պատկերացումները տղամարդկանց մասին ընդհանրապես և սերսի մասին՝ մասնավորապես:

**ԿԻՆ** - Այդ ինչե՞ր եք երևակայում, դուք ինձ ընդհանրապես դուք չեք գալիս, կեղտուտ պճնամոլի մեկն եք:

**ՏՂԱՄԱՐԴ** - Ինչո՞ւ ենք ժամանակ կորցնում: Ես ձեզ դուք չեմ գալիս: Դուք էլ իմ դուրը չեք գալիս: Բաժանվեցինք:

**ԿԻՆ** - Սպասեք: Դուք ինձ դուք չեք գալիս, բայց հարմար եք ինձ: Ես չեմ կարող հետաձգել այս գործը:

**ՏՂԱՄԱՐԴ** - Եթե ամեն ինչ սկզբից սկսեք, ես չեմ դիմանա: Լավ, այդ ինչո՞վ եմ ձեզ հարմար:

**ԿԻՆ** - Զեր ինտելեկտը միջինից բարձր է:

**ՏՂԱՄԱՐԴ** - Ընորհակալություն:

**ԿԻՆ** - Լավ վարվելածն ունեք, նաև՝ արժանապատվության զգացում, կանանց հարգանքով եք վերաբերում, կիրք եք, նրբանկատ, համբերատար, աշխատունակ եք ու աշխատասեր: Խսկական լիդեր եք, կենսախինդ եք և ազդեսիվ չեք:

**ՏՂԱՄԱՐԴ** - Դուք շատ պահանջկոտ եք: Այսքան արժանիքները պետք են մի տղամարդու համար, ում հետ պատրաստվում եք ընդամենը հինգ րոպե անցկացնել: Եվ ոչ մի փոխվիզում: Երկի ամուսնացած չե՞ք:

**ԿԻՆ** - Ամուսնացած չեմ:

**ՏՂԱՄԱՐԴ** - Չեմ զարմանա, եթե ընդհանրապես ամուսնացած չիմնեք:

**ԿԻՆ** - Այո, ես երբեք ամուսնացած չեմ եղել:

**ՏՂԱՄԱՐԴ** - Այս աշխարհում չեիք գտնի մեկին, ով ձեզ հետ կամունանար: Նույնիսկ մեկ անգամ պառկելու համար կատարելության հասած տղամարդ եք ուզում:

**ԿԻՆ** - Ես չեմ ուզում ամուսնանալ: Նախկինում՝ այո, իսկ հիմա՝ ոչ:

**ՏՂԱՄԱՐԴ** - Գուցե ես գնա՞մ: Կարեոր բանակցություններ ունեմ, չեմ սիրում ուշանալ: Արժանիքներին ցուցակում ավելացրեք ճշտապահությունն ու բաց քողեք ինձ: Հը՞:

**ԿԻՆ** - Գուցե փոխե՞ք ձեր միտքը: Խնդրում եմ: Ես ձեզ շատ-շատ եմ խնդրում: Չէ՞ որ ինձնից այլևս չեք վախենում: Ես սքըես եմ տարել: Կարծում եք՝ հե՞շտ է մոտենալ անձանոթ տղամարդուն և խնդրել պառկել... հեշտ չէ: Ես տանջվեցի

ձեզ հետ: (*Law է լինում:*) Թաշկինակ ունե՞ք:

**ՏՂԱՍՍԱՐԴ** - Վերցրեք: (*Ինքն է սրբում նրա դեմքը:*) Դա մեծ ալրորեմ չէ: Այ, եթե իմ պրոբլեմների մասին իմանայիք... Դե լավ, միք լա:

**ԿԻՆ** - Լացն իմ վերջին գենքն է:

**ՏՂԱՍՍԱՐԴ** - Զինաթափեք: Սի բան կմտածենք:

**ԿԻՆ** - Խնդրում եմ, արագ մտածեք:

**ՏՂԱՍՍԱՐԴ** - Արա՞գ: Ուզո՞ւմ եք, ձեզ ինչ-որ մեկի հետ ծանրացնեմ: Բայց ձեզ այլ կերպ պիտի պահեք: Անվճար: Նույնիսկ գիտեմ, թե ում հետ ծանրացնեմ: Երաշխավորում եմ: Օ քե՞յ:

**ԿԻՆ** - Աստված իմ, ինձ միայն դուք եք պետք:

**ՏՂԱՍՍԱՐԴ** - Տեր Աստված, Էի նույնը: Ո՞չ: Գուցե վաղուց ու թաքուն սրբահարվա՞ծ եք ինձ:

**ԿԻՆ** - Ինչե՞ր եք ասում:

**ՏՂԱՍՍԱՐԴ** - Ափսոս:

**ԿԻՆ** - Ձեզ այնքան շատ կանայք են սիրում:

**ՏՂԱՍՍԱՐԴ** - Ձեմ նկատել: Ձեր գլուխը ձեզ չի՞ անհանգստացնում:

**ԿԻՆ** - Ոչ: Ի՞նչ կա որ...

**ՏՂԱՍՍԱՐԴ** - Լավ վնասվել եք: Գուցե «Ծոտապ օգնությո՞ւն»...

**ԿԻՆ** - Դա անպայման դուք պիտի լինեք և միայն այսօր, մինչև կեսգիշեք:

**ՏՂԱՍՍԱՐԴ** - Հիմա զիսավորը հանգըստությունն է:

**ԿԻՆ** - Սի՞թե այդքան անիրապուրիչ եմ:

**ՏՂԱՍՍԱՐԴ** - Չե, այնքան էլ չէ...

**ԿԻՆ** - Ծնորհակալություն:

**ՏՂԱՍՍԱՐԴ** - Երբ լաց եք լինում, այսրազայես հմայիչ եք, անգամ դուք եք գալիս: Ես միշտ կիշեմ ձեզ:

**ԿԻՆ** - Բայց ես չեմ կարող անընդհատ լաց լինել: Իսկ, ընդհանրապես, կփորձեմ: Գիտե՞ք, երբ երեսուն տարեկան էի, մի ամբողջ ամիս լաց էի լինում: Ոչ ոք ոչինչ չէր կարող անել, որ լաց չլինեի: Ինքու էլ չէի կարողանում վերջ տալ լացիս: Քիչ մնաց՝ մեռնեի այն ժամանակ: (Փղձկում է:)

**ՏՂԱՍՍԱՐԴ** - Հանգստացեք, դա այն-քան վաղուց է եղել: Եվ հետո, ի՞նչ եք ինձնից կպել: Ես սուպերմեն չեմ, ոչ մի սուպերհաճույք ձեզ չեմ կարող պարզեցնել: Վստահեցնում եմ:

**ԿԻՆ** - Ես առհասարակ այդ մասին զգվանրով եմ մտածում:

**ՏՂԱՍՍԱՐԴ** - Ի՞նչ եմ լսում... Գիտե՞ք, վաղուց ինձ հետ այսպես չեն վարվել: Լսեք, ինձնից ի՞նչ եք ուզում:

**ԿԻՆ** - Նույնը, ինչն ուզում են բոլոր կանայք:

**ՏՂԱՍՍԱՐԴ** - Պետք չէ ուրիշներին օրինակ բերել: Անձամբ ես ձեզ նմանին հանդիպում եմ առաջին անգամ: Կոնկրետ խոսենք. ի՞նչ եք ուզում դուք: Տվեք ինձ ուղարկի և անկեղծ պատասխան և...

**ԿԻՆ** - Եվ ի՞նչ:

**ՏՂԱՍՍԱՐԴ** - Ես փափուկ մարդ եմ, դժվար է այսպիսի համառությամբ մերժել հմայիչ կնոջը: Կյանքում ոչ ոք ինձ այսպես չի խնդրել: Ի՞նչ եք ուզում:

**ԿԻՆ** - Երեխա:

**ՏՂԱՄԱՐԴ** - Ի՞նչ:

**ԿԻՆ** - Ուզում եմ ձեզանից երեխա ունենալ:

**ՏՂԱՄԱՐԴ** - Ինձնի՞ց: Ի՞նչ ունենալ:  
Աստված իմ, ինչի՞ համար:

**ԿԻՆ** - Տղա եմ ուզում:

**ՏՂԱՄԱՐԴ** - Ծնորհակալություն:

**ԿԻՆ** - Իսկ որպեսզի տղա ծնվի, հենց այսօր պիտի նրա հիմքը դնել: Պարտադիր՝ այսօր: Ես դա կարողանում եմ հաշվարկել: Եթե այսօր չինի, առաջիկա երկու տարիներին միայն աղջիկ կարող եմ ունենալ: Իսկ ես այնպես եմ երազում տղայի մասին: Հասկանո՞ւմ եք, մեր ցեղի համար շատ դժվար է այս կյանքը:

**ՏՂԱՄԱՐԴ** - Օ քեյ: Դուք առաջարկում եք դրուր դառնալ: Ապո՛չ: Քիչ մնաց՝ քաղվեի այդ գործի մեջ:

**ԿԻՆ** - Բնականաբար, դա կլինի միայն իմ երեխան: Երբեք և ոչ մի պահանջ ձեզ չեմ ներկայացնի:

**ՏՂԱՄԱՐԴ** - Ծնորհակալություն: Հանգստացրիք:

**ԿԻՆ** - Դուք նրան երբեք չեք տեսնի:

**ՏՂԱՄԱՐԴ** - Լսեք, ինչի՞ համար եք ինձ հետ այդպես վարվում: Ինչո՞ւ է ձեզ քվում, որ ես անասուն եմ, որ կարող եմ քբել սեփական որդուս վրա:

**ԿԻՆ** - Լավ, ես պատրաստ եմ զիջում-ների գնալ:

**ՏՂԱՄԱՐԴ** - Այնուամենայնիվ, պատրաստ եք: Բախսու բերեց:

**ԿԻՆ** - Հետո կը նարկենք:

**ՏՂԱՄԱՐԴ** - Ես կգերադասեի մինչ այդ քննարկել: Իսկ, ընդհանրապես, ի՞նչը պիտի քննարկենք:

**ԿԻՆ** - Նրա դաստիարակության մեջ ձեր մասնակցության հարցը: Դուք կարող եք այցելել նրան: Տարվա մեջ՝ մեկ անգամ:

**ՏՂԱՄԱՐԴ** - Դուք եք որոշել, որ անհրաժեշտ է պառկել ինձ հետ: Դուք եք որոշել ինձնից երեխա ունենալ: Դուք եք որոշել, որ անպայման տղա պիտի լինի: Հիմա էլ որոշեցիք, թե քանի անգամ պիտի տեսնեմ նրան: Զեր կողքին ինձ տղամարդ չեմ զգում:

**ԿԻՆ** - Լավ, ես կթողնեմ, որ մասնակցեք նրա դաստիարակությանը:

**ՏՂԱՄԱՐԴ** - Ծնորհակալություն:

**ԿԻՆ** - Կարծում եմ, նրա վրա լավ կազդիք: Նույնիսկ լավ կլինի, որ տղան իմանա, որ հայր ունի: Բարդույթներ չի ունենա:

**ՏՂԱՄԱՐԴ** - Բարդույթներ են կունենամ: Ներեցեք, ձեր անկեղծությունը փոխում է իրավիճակը: Ես գուցե դեռ կարողանայի... Բայց կտրականապես դեմ եմ ձեզանից երեխա ունենալուն: Ծնորհակալություն, որ զգուշացրիք: Հարցը վերջնականապես փակված է: Ժամանակ մի կորցրեք, մինչև կեսագիշեր դեռ հնարավորություն ուներ... (Նայում է ժամացույցին:) Վերջ, ուշամում եմ: Ավելի ճիշտ՝ ուշացած:

**ԿԻՆ** - Ես կգամ ձեզ հետ: Ես հետ չեմ կանգնի: Դուք հրաժարվելու իրավունք չունեք:

**Տղամարդը պիտի գրպանից հանում է ատրճանակն ու պահում նրա վրա: Կինը ճշում է:**

**ՏՂԱՍՍԱՐԴ -** Ոչ կատակում եմ, ոչ էլ վախեցնում եմ: Կվրակեմ: Չմոտենաք ինձ:

**ԿԻՆ - (Հի շարժվում):** Զեզ հիմարի նման եք պահում: Տղան այնպիսի երջանկություն է: Ամեն մի նորմալ տղամարդ որդի է ուզում:

**ՏՂԱՍՍԱՐԴ -** Ես ամուսնացած եմ: Ու երես տղա ուզենամ... մեկը, երկուսը, երեքը, տասը... Իմ հարազատ կինը կծնի:

**ԿԻՆ -** Տեսել եմ ձեր կնոջը: Նա ձեզ համար տասը տղա երբեք չի ծնի: Աստված տա, գոնե մեկին ծնի: Իսկ երես նա էլ աղջի՞կ լինի:

**ՏՂԱՍՍԱՐԴ -** Ի տարբերություն ձեզ, ես դեմ չեմ աղջիկներին: Երես թոյլ տաք, այդ հարցը կմոջ հետ կլուծենք՝ չխորհրդակցելով ձեզ հետ: Ինձ առայժմ տղա պետք չէ:

**ԿԻՆ -** Բայց չի կարելի միայն այսօրով ապրել: Դուք դեռ չզիտեք, թե կյանքում ինչ կլինի ձեզ հետ: Իսկ երես հանկարծ բաժանվե՞ք ձեր կնոջից:

**ՏՂԱՍՍԱՐԴ -** Նորից կամուսնանամ:

**ԿԻՆ -** Իսկ երես այլևս երեխա չունեն՞ք: Իսկ աղջիկն էլ մոր կողմն անցնի՞: Ու մեծանա ձեզ համար օտար մեկը... Նրան էլ միայն ձեր փողերը պետք լինե՞ն: Իհարկե, Աստված մի արասցե: Դուք մենակ չե՞ք մնա:

**ՏՂԱՍՍԱՐԴ -** Մի անհանգստացեք, մի կերպ կդիմանամ:

**ԿԻՆ -** Իսկ ես այնպես կդաստիարակեմ տղայիս, որ նա ձեզ միշտ սիրի:

**ՏՂԱՍՍԱՐԴ -** Շնորհակալ եմ:

**ԿԻՆ -** Եվ, ով զիտի, գուցե մենք ծերանք, ու մի օր էլ դուք չոքեք իմ առջև, համբուրեք ձեռքերս ու շնորհակալություն հայտնեք մեր տղայի համար: (*Ձեռքերով վակում է դեմքն ու լաց լինում:*)

**Տղամարդը պահում է ատրճանակը, մտտենում է կնոջը, բռնում է ձեռքն ու համբուրում:**

**ՏՂԱՍՍԱՐԴ -** Ներեցեք ինձ: Դուք զարմանալի կին եք: Արդեն քանի բռպե է՝ օֆիսում ինձ հոլանդացիներն են սպասում: Շատ կարևոր հանդիպում է: Հերիք չէ, որ չեմ պատրաստվել այդ հանդիպմանը, հիմա էլ ուշանում եմ: Ամենածորեն ցավում եմ ձեզ համար, դուք էլ սկսում եք ինձ դուր գալ: Բայց ես ոչ մի կերպ չեմ կարող օգնել: Բաց բողեք ինձ, խնդրում եմ: Ես հոգնեցի: (*Դադար:*) Տեսնում եք, ես էլ պրոլետներ ունեմ: Ոչ այնքան զլորալ, որքան ձերն են, բայց, այնուամենայնիվ, ունեմ... Բաց բողեք ինձ, խնդրում եմ: Օդ ու ջրի պես հիմա հարկավոր է հոլանդացիներին հանգել, որ իրացման համար ինձ մեծ խմբաքանակով սուրճ տրամադրեն: Այս պահին կանխավճարի փող չունեմ: Նրանք ոխալի չեն գնում, իմ հեղինակությունն էլ նրանց հայտնի է... ես չեմ կարող բաց բողնել այդքան շահավետ

գործարքը: Այս պահին գումար չունեմ, բայց եթե բաց թողնեմ այս գործարքը, ապա մյուս ներդրողների մոտ կարող են կասկածներ առաջանալ ընդհանրապես իմ վճարունակության մասին: Իսկ այդ հոլանդացիների հետ պիտի դուրս գամ սկզբունքորեն նոր հարաբերությունների ուղի: (*Դադար:*) Այ, եթե ձեր հնարավորություններն ունենայի... դուք անգամ հանգույալին կարող եք համոզել՝ ինչ կամենաք:

**ԿԻՆ -** Հանգույալին, բայց ոչ՝ ձեզ:

**ՏՂԱՄԱՐԴ -** Պարզապես ձեր ժամանակը չբավարարեց:

**ԿԻՆ -** Արդեն սկսել եք հանձնվե՞լ:

**ՏՂԱՄԱՐԴ -** Կարծես թե... այս: Բայց մի վրիպում ունեցաք՝ երեխայի մասին խոսելով:

**ԿԻՆ -** Ես սկսել եմ ձեզ դո՞ւր գալ:

**ՏՂԱՄԱՐԴ -** Բանն այդ չէ: Դուք բնածին մենեջեր եք: Գուցե ձեզ գայթակղե՞մ մեր աշխատանքով:

**ԿԻՆ -** Իսկ ձեր կիմը չի՞ խանդի:

**ՏՂԱՄԱՐԴ -** Չե՞զ: Երբեք: Ներեցեք: Գիտեք, ես ել եմ ոխսկի դիմում: Ես հուսահատ քայլի եմ դիմում: Թող ձեր ասածը լինի: Գնանք օֆիս:

**ԿԻՆ -** Ուուա՞:

**ՏՂԱՄԱՐԴ -** Ես ձեզ կուղեկցեմ լոգարան...

**ԿԻՆ -** Այս:

**ՏՂԱՄԱՐԴ -** Ձեզ կարգի կրերեք:

**ԿԻՆ -** Այս:

**ՏՂԱՄԱՐԴ -** Այդ ընթացքում ձեր կողքին կիմնեմ...

**ԿԻՆ -** Այս:

**ՏՂԱՄԱՐԴ -** Այդ ընթացքում ձեզ կրացարեն սուրճի, նախավճարի և իրացման միջև գոյություն ունեցող տարբերությունների մասին...

**ԿԻՆ -** Բնավ պարտադիր չէ:

**ՏՂԱՄԱՐԴ -** Եվ ձեզ կներկայացնեմ հոլանդացիներին:

**ԿԻՆ -** Դուք լո՞ւրջ եք խոսում:

**ՏՂԱՄԱՐԴ -** Ի՞նչ են նրանք ձեր դիմաց: Կվոտրվեն: Օ քե՞զ:

**ԿԻՆ -** Ոչ:

**ՏՂԱՄԱՐԴ -** Մի հուզվեք: Ես ձեր կողքին կիմնեմ, կապահովագրեմ ձեզ:

**ԿԻՆ -** Ոչ:

**ՏՂԱՄԱՐԴ -** Ի վերջո, ես ձեր պատճառով ուշացած: Դա ինձ համար շատ կարևոր է: Ընդամենը մեկ անգամ:

**ԿԻՆ -** Չեմ կարող, երբեք չեմ մասմակցել բանակցությունների: Միայն կվնասեմ ձեզ:

**ՏՂԱՄԱՐԴ -** Պատրաստ եմ ոխսկի դիմել, սրանից վատը չի կարող լինել:

**ԿԻՆ -** Ընդհանրապես չգիտեմ, թե ինչ եմ խոսելու:

**ՏՂԱՄԱՐԴ -** Հոլանդացիները ուսւերեն ոչ մի բառ չեն հասկանում: Ես կարող եմ ձեզ հուշել: Եթե մի անգամ չստացվի, կարելի կիմնի երկրորդ հանդիպումը կազմակերպել: Չեի ցանկանա, բայց ի՞նչ կարող եմ անել: Առանձին վճար կիմնի: Աշխատանքի կես ժամվա դիմաց ձեզ կվճարեմ երկու հարյուր դոլար:

**ԿԻՆ -** Չհաշված այն հարյուր դոլարը, որն արդեն տվել եք:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Զհաշված: Դրանք բարյական վնասի դիմաց են տրված: Իսկ եթե առաջին անգամից կարողանաք համոզել՝ կվճարեմ չորս հարյուր դրար:

**ԿԻՆ** - Դուք լրջորեն ենթադրում եք, որ կկարողանա՞մ զլուխ հանել:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Ձեր մի դեբյուտը արդեն տեսա, պարզապես փայլուն էր:

**ԿԻՆ** - Իսկ արդյո՞ւնքը:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Դուք արեցիք, ինչ կարող էիք:

**ԿԻՆ** - Լավ, համաձայն եմ: Բայց կարո՞ղ եմ հույս ունենալ, որ...

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Զորս հարյուր դրա՞ր կվճարեմ: Կարող եք: Եվ հույս ունեմ, որ բարեկամներ կդառնանք: Ես խնդրում եմ ձեզ, դուք համաձա՞յն եք:

**ԿԻՆ** - Շա՞տ եք խնդրում:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Շատ:

**ԿԻՆ** - Ուրեմն՝ առաջ:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Առաջ:

## ԵՐԿՐՈՐԴ ՍԱՍ

**ՄՔՆԵցում:** Կնոջ ձայնը: Տղամարդու ձայնը: Երկու նոր տղամարդու ձայն: Չրույցն անգլերեն է: Հնչերանգից զգացվում է, որ բաժանվում են: Ձայները խառնվում են, աշխույժ, բարյացակամ ձայներ, ծիծաղ: Լուսավորվում է: Օֆիսն է: Գրասեղան, պտտվող բազկարռություն: Անկյունային բազմոց, որի առջև փոքրիկ սեղան է: Սեղանի վրա՝ գավաթներ, կոնյակի բացված շիշ: Ստվարքրեն արկղիկներ են դրված: Անկյունում՝ շիրկիզվող պահարան:

Տղամարդն ու Կինը իրար են հրմանաւում, գրկախառնվում, այնպես են իրենց պահում, կարծես գործընկերներ լինեն, որոնք մեծ հաջողություն են ունեցել: Եվ պարզ չէ, թե նրանցից ով է ավելի ուրախ հաջողությամբ: Կինը շատ է փոխվել: Տղամարդու պիզակը նրան դարձրել է ժամանակակից և կոլիկ: Բայց առավել նկատելին նրա ուրախությունն է:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Շնորհակալ եմ, անշափի շնորհակալ եմ: Կեցցեք: Ամրող ընթացքում իհանում էի ձեզնով՝ այնքան վճռական ու գործնական էք: Խե՞նդ հոլանդացիներ: Առաջին անգամ էին այսպիսի կին տեսնում: Աշխույժ: Փայլուն դատողությամբ, սրամիտ: Եվ ինչ ընդգծված է ձեր շափի զգացումը, նրբանկատությունն ու կոկտությունը աչքի են զարնում: Եվ ի՞նչ լավ եք տիրապետում անգլերենին:

**ԿԻՆ** - Իսկ դուք անգլերեն այնքան էլ լավ չեք խոսում:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Դուք ինձ կօգնեք: Ժամը՝ տասը դրար:

**ԿԻՆ** - Այնպիսի բժամիտների համար, ինչպիսին դուք եք՝ քսան դրար:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Ձեմ սակարկի, ձեզնով իհացած եմ: Հոլանդացիներն էլ ձեզնով հմայված մնացին: Անգամ Հոլանդիա իրավիրեցին:

**ԿԻՆ** - Ձեզ նույնապես իրավիրեցին:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Այս, իրավիրեցին ձեզ, իսկ ինձ՝ նույնապես:

**ԿԻՆ** - Հոլանդացիները քաղաքավա-

թի ազգ են: Առաջնությունը կանանց  
են տալիս:

**ՏՂԱՄԱՐԴ - Մանավանդ,** եթե նա աշ-  
խարի ամենահմայիչ կինն է: Եվ  
նուրք հոգեբան: Եվ հանճարեղ դե-  
րասանուիի: Եվ շատ լավ հնարող:  
Իսկ դուք շատ լավ էիք հորինում:  
Սենք հոլանդացիներին ներկայա-  
ցանք որպես սիրահարված զույգ:  
Սիրյան սիրահարվածներին կարող  
են ներել ուշանալու համար: Եվ,  
առհասարակ, մեզ չեն հետաքրքր-  
ում սուրճի խմբաքանակները:  
Ինչպես նաև մեզ չեն հետաքրքր-  
ում փողերը: Մեր գլխավոր հե-  
տաքրքրությունը միասին լինելն է:  
Սիրահարվածները վստահություն  
են ներշնչում: Վեհ զգացմունքների  
ընդունակ մարդիկ չեն կարող խա-  
բերա լինել: Սիրահարներին բո-  
լորն են ցանկանում աջակցել:  
Աշխարհում այնքան քիչ է անկեղծ  
սերը, որ մարդիկ բնազդաբար  
ցանկանում են պահպանել այն:

**ԿԻՆ - Դուք իսկական բանաստեղծ**  
**եք:**

**ՏՂԱՄԱՐԴ -** Երբ ինձ այդ քայլն առա-  
ջարկեցիք, խոստովանում եմ, որ  
սկզբում չկարողացա գնահատել  
այն: Եվ հետո, ինչպե՞ս սիրա-  
հարված ձևանայի: Ես նոյնիսկ  
մոռացել եմ, թե դա երբ է ինձ հետ  
պատահել: Բայց դուք հանճարեղ  
հնարք հուշեցիք: Ո՛չ մի ակնթաքք  
ձեզնից աչք չկտրել: Ինձ ստիպե-  
ցիք հետևել իմ դեմքին, որպեսզի  
վիրավորված չերևամ: Ես սովորե-

ցի, որ կամ պետք է ժպտալ, կամ էլ  
ամեն ինչին նայել լրջորեն և բազ-  
մանշանակ:

**ԿԻՆ -** Եվ ինչպե՞ս էիք ժպտում: Պար-  
զապես փայլում էիք:

**ՏՂԱՄԱՐԴ -** Նյարդային հողի վրա  
էք: Վախենում էի, որ կրացահայ-  
տեն մեր սուտը:

**ԿԻՆ -** Իսկ երբ ինձ նայում էիք կենտ-  
րոնացած ու տխուր, ինչի՞ մասին  
էիք մտածում:

**ՏՂԱՄԱՐԴ -** Մտրումս եռանիշ թվեր  
էի բազմապատկում: Այդ հաշվիշ-  
ներն ինձ զրկել են մտքի մեջ հաշ-  
վելու ունակությունից: Գովեք ինձ:  
Ես ձեզ այնպիսի հայացքով էի նա-  
յում, թվում էր, թե այլևս ձեզ չեմ  
մոռանալ:

**ԿԻՆ -** Կարող եք շունչ քաշել, հիմա  
մենակ ենք: Եվ ինձ այդպես նայե-  
լու անհրաժեշտություն չկա:

**ՏՂԱՄԱՐԴ -** Դուք հրաշալի եք, ուզում  
եմ անվերջ ձեզ նայել: Կարելի՞ է:

**ԿԻՆ -** Ինչպես ձեզ հարմար է:  
**ՏՂԱՄԱՐԴ -** Կապիտալիստներն, այ-  
նուամենայնիվ, պարզունակ ժողո-  
վուրդ են: Նկատեցի՞ք, թե ինչպես  
էին մեր սիրուց ազդված, հուզված,  
հիացած: Դուք հանճարեղ ոեժի-  
սոր եք:

**ԿԻՆ -** Դժվար չէ մեծ ոեժիսոր լինել  
ձեզ պես հրաշալի դերասանի հետ:

**ՏՂԱՄԱՐԴ -** Նկատո՞ւմ եք, այնպես  
մտա դերի մեջ, որ մինչև հիմա  
դուրս գալ չեմ կարողանում: Ու-  
շազդրություն դարձրեք, թե ինչպես  
եմ ձեզ նայում:

**ԿԻՆ** - Եվ այս պահին մտքում ինչն ինչը՞վ եք բազմապատկում:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Դրանք շատ մեծ թվեր են: Իսկ ձեզ հետ հաճելի է և գործունեալ, և շաղակրատել:

**ԿԻՆ** - Սի՞թե արժանանում եմ հաճույախոսության:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Հաճոյախոսություն չէ, ճշմարտություն է: Դուք ինձ շատ օգնեցիք: Ավելին՝ փրկեցիք: Եվ մի զայրացեք ինձ վրա, ստոր հիմարի պես էի ինձ պահում: (*Կմոջը ճգում է դեսի իրեն և համրուրում:*)

**ԿԻՆ** - (սկզբում քարանում է, ապա կտրուկ հեռու է վաճում նրան): Ներեցեք: Երկի ես առիթը տվեցի: Բայց հիմա դա մի քիչ անսպասելի էր... Ներեցեք...

**ՏՂԱՍՄԱՐԴ** - (մոտենում, վստահ գրոկում է): Ես չեմ կարող ինձ զսպել: Աստված իմ, ինչպես են բուրում ձեր մազերը: Դուք այսպես հաղթական ու նորք ինձ էիք նայում նաև հոլանդացիների ներկայությամբ: Ու ես, ապուշի նման, կասկածում էի, թե ձեր քնքշության մեջ մի կարիլ անկեղծություն կա: Հետո հիշեցի, թե ինչպես էիք աղերսում... Հիմա այդ ամենին այլ կերպ եմ նայում...

**ԿԻՆ** - Եկեք մոռանանք: Դուք չիամանայնեցիք, ես հաշտվեցի այդ մտքի հետ: Գնացքը գնացել է...

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Չեմ ուզում մոռանալ: Հիմարի մեկն էի: Դուք հիանալի կուրծք ունեք, իրավացի էիք: (*Քանդում է նրա վերնաշապիկի կոճակ-աերը:*)

**ԿԻՆ** - Ի՞նչ է կատարվում ձեզ հետ:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Ինչ-որ բան այնպես չէ:

**ԿԻՆ** - Ամեն ինչն էլ այնպես չէ:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Խելքս բոցնում եմ:

**ԿԻՆ** - Իմ գլուխն է պտտվում... կարծում եմ, կրնյակից է:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - (կամաց): Հանե՞ն ձեր զեխտը... Դա լավ հիշողություն կլինի:

**ԿԻՆ** - Գիտեք, իմ տրամադրությունն ընկավ:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Կանակորության ժամանակը չէ: Ընդամենը երեք ժամ ունենք տղայի հիմքերը դնելու համար: Դուք ինձ օգնեցիք, ես էլ ձեզ կօգնեմ: Ծառայության դիմաց՝ ծառայություն:

**ԿԻՆ** - Ծնորհակալ եմ: Ոչ: Սենք շատ խմեցինք, իսկ դա երեխայի համար հետևանքներ կունենա:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Ալկոհոլը դեռ արյան մեջ չի անցել, ամեն մեկս էլ մի քանինք գրամ ենք խմել: Դուք չեք պատկերացնում, թե ինչքան էի խմել այն բանից առաջ... Իսկ աղջկու, ինքներդ եք տեսել, առողջ է և ամուր: Ու եքս այն ժամանակ չխմեի, հազիկ թե աղջկաս լույս աշխարհ բերեինք: Խնդիրը միայն դա՞ է: Դուք իմ հանդեպ հիմա զգվանք չե՞ք զգում:

**ԿԻՆ** - Ես հոգնել եմ: Շատ անսովոր օր եք: Բանակցությունների ողջ ժանրությունն իմ վրա գցեցիք ու միայն սուրճ էիք մատուցում: Սեկ էլ պլշած ինձ էիք նայում:

**ՏՂԱՍՄԱՐԴ** - Առավել ևս ձեզ անհրա-

Ժեշտ է տպավորությունների փոփոխություն: Եվ, ընդհանրապես, ի՞նչ ենք մի գլուխ վիճում ու վիճում: Եկեք վերջապես ճշտենք մեր հարաբերությունները:

**ԿԻՆ** - Դուք ինձ չե՞ք հարգում:

**ՏՂԱՄԱՐԴ** - Անորմալ: Ես քեզ ուզում եմ: Ես քեզ բաց չեմ բողնի: Տեր Աստված, ինչպես են բոլոր մազերդ: Ի դեպ, անունդ ի՞նչ է:

**ԿԻՆ** - Մարինա Անդրեևնա:

**ՏՂԱՄԱՐԴ** - Մարինա Անդրեևնա, Մարիշա... Անունդ հարմար է: Մարինա... Ես քեզ պարզապես Մարինա կասեմ:

**ԿԻՆ** - Իսկ ձեր անունն ի՞նչ է:

**ՏՂԱՄԱՐԴ** - Ալեքսեյ:

**ԿԻՆ** - Իսկ հայրանո՞ւնը:

**ՏՂԱՄԱՐԴ** - Նիկոլաևիչ: (Գրկում է, փորձում համրուել:)

**ԿԻՆ** - Ալեքսեյ Նիկոլաևիչ, պեսք չէ: Ես ձեզ չեմ սիրում: Խնդրում եմ... մի արեք:

**ՏՂԱՄԱՐԴ** - Մարինա... Ես ոչ մեկի սերը չեմ փոխի քո չսիրելու նըրքության հետ: Հոլանդացիները քո աչքերից խենքացան: Մի՞թե ձևացնում էիր:

**ԿԻՆ** - Իհարկե:

**ՏՂԱՄԱՐԴ** - Ես արդեն վաղուց չեմ հավատում կանանց: Չնայած դրամ՝ իմաս մի քիչ հիասքափեցի: Վիրավորված եմ ու տխուր: Աստված գիտե՝ ինչու: Ու ինչ էլ ասես, միևնույն է, դու երկրագնդի ամենահմայիչ կինն ես:

**ԿԻՆ** - Դուք կրկնվում եք: Պեսք չէ ինձ կայչել, Ալեքսեյ Նիկոլաևիչ:

**ՏՂԱՄԱՐԴ** - Իսկ ո՞վ ում առաջինը

մոտեցավ ու սկսեց կպչել... ամեն ինչ խառնել եմ: Իմ կարծիքով, նախաձեռնությունը իմը չէր:

**ԿԻՆ** - Սի անհանգստացեք, ինչոք մեկին կգտնեմ:

**ՏՂԱՄԱՐԴ** - Ինչո՞ւ ես հիմարություններ դուրս տալիս: Ո՞ւմ կգտնես: Արդեն զիշեր է, դուրս նայիր:

**ԿԻՆ** - Բայց կան, չէ՞ ծեզանից բացի, երիտասարդ, գեղեցիկ ու առողջ տղամարդիկ:

**ՏՂԱՄԱՐԴ** - Ես ուսի որ քե խանդրում եմ: Բայց ինչքան մոռացված զգացումներ կարողացար արքնացնել իմ մեջ: Խնդրում եմ, ամեն ինչ մի փշացրու, իմաս մեզ համար շատ լավ կլինի: Օ քե՞յ:

**ԿԻՆ** - Ես ձեզանից մեծ եմ:

**ՏՂԱՄԱՐԴ** - Քեզ պես պահանջկոտ չեմ: Եվ հետո, մի զիշերվա սիրավեսի համար դա ի՞նչ նշանակություն ունի:

**ԿԻՆ** - Դե, բաց բողեք ինձ:

**ՏՂԱՄԱՐԴ** - Քեզ ի՞նչ պատահեց: Գուցե ինչոք բան այնպես չե՞մ ասում, վիրավորեցի՞:

**ԿԻՆ** - Տուն պիտի գնամ, գործեր ունեմ:

**ՏՂԱՄԱՐԴ** - Գիշերները տանը հիփանդնե՞ր ես ընդունում:

**ԿԻՆ** - Պատկերացրեք, երբեմն պատահում է: Մեր շենքը տասնվեց մուտք ունի: Ու բոլորն էլ ինձ մոտ են զալիս: Անգամ ատամնացավի դեսպոտ: Ասացի՝ բողնք ինձ: Ի՞նչ է, օգնությա՞ն կանչեմ:

**ՏՂԱՄԱՐԴ** - Գնացեք:

**ԿԻՆ** - Բայց... ախր, դուք ինձ բոնել եք...

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Ես ձեզ չեմ բռնել: Ես ձեզ գրկել եմ: Ի դեպ, դուք ընդունակ չեք ընկալելու տարրերությունը: (*Բաց է քողջում:*) Դուք ազատ եք: Վազեք:

**Հեռախոսազանգ:** Կիմը վերցնում է ընկալուչը:

**ԿԻՆ -** Ալո: Մխալվել եք: Սա գերեզմանատումն է: Ու ձեր ուզած մարդիկ այստեղ չկան: (*Նետում է ընկալուչը:*)

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Այ թե կատակներ եք անում: Շնորհավորում եմ:

**ԿԻՆ -** Ձեզ պիտի փոխանցեի ընկալուչը: Մանավանդ, որ ձեր կինն եք զանգողը:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Իսկ ինչո՞ւ մոտեցաք հեռախոսին:

**ԿԻՆ -** Ունֆլեքս է: Սի անհանգստացեք, նա իհմա նորից կզանգի:

**Հեռախոսազանգ:**

**ՏՂԱՍՄԱՐԴ -** (*վերցնում է ընկալուչը:*) Բարի, մենակ եմ: Հոլանդացիների պատճառով երկար մնացի: Ամեն ինչ նորմալ է: Համաձայնվեցին: Շնորհակալություն: Հա, զայխ եմ: Արդեն դրան մոտ եմ: Ձեզ նոյնապես: (*Կախում է ընկալուչը:*)

**ԿԻՆ -** Ինչքան եմ հոգնած:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Մինչև ձեր տուն կտանեմ:

**ԿԻՆ -** Շնորհակալություն, կքայլեմ:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Այնուամենայնիվ, քոյլ տվեք մեքենայով տեղ հասցնել: Պատրա՞ստ եք: Գնամք:

**ԿԻՆ -** Ծխախոտ տվեք:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Ձեմ տա: Դուք ծխող չեք:

**ԿԻՆ -** Կակսեմ:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Խորհուրդ չեմ տա: Վկարժվեք:

**ԿԻՆ -** Ձեզ համար ի՞նչ նշանակություն ունի՞ կվարժվե՞մ, թե՞ չեմ վարժվի: Մանավանդ, որ ինձ այլս չեք տեսնելու:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Պարզապես այդ մտքին դեռ չեմ վարժվել: Խնդրեմ: (*Ծխախոտ է տալիս:*) Խնդրեմ: (*Վառում է կրակվառիչով:* Կիմը ծխում է: *Տղամարդն սպասում է:*) Գուցե սո՞րճ...

**ԿԻՆ -** Սի անհանգստացեք: Ձեզ ուշացնո՞ւմ եմ:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Սի քիչ: (*Դադար:*) Կարելի՞ է ձեզ հետ խսնել:

**ԿԻՆ -** Լսում եմ:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Դուք իսկապես ինձ դուր եք զայխ: Ցավում եմ, որ այսպես բաժանվելու ենք և այլևս ձեզ չեմ տեսնելու: Ու շմոռանաք, որ երկուսիս միասին են Հոլանդիա հրավիրել: Ի՞նչ պիտի ասեմ հնանդացիներին: Ի՞նչ պիտի հորինեմ:

**ԿԻՆ -** Ինչ հարմար կգտնեք:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Ինձ հարմար է, որ ձեզ հրավիրեմ աշխատանքի: Որպես քիչկ ինչքա՞ն եք վաստակում:

**ԿԻՆ -** Ոչ շատ:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Սկզբի համար առաջարկում եմ կրկնակի ավելի: Բայց դա սահմանը չէ:

**ԿԻՆ -** Խե՞ղճ Ռուսաստան... Եթե րուրն սկսեն առևտրով զբաղվել, ո՞վ պիտի մտածի սովորեցնելու, բուժելու, դաստիարակելու մասին:

**ՏՂԱՍՄԱՐԴ -** Բայց դուք կարող եք

բժշկի պարտականությունները  
մեզ մոտ կատարել: Զեզ համար  
լավ կլինի: Ինձ էլ շատ հարմար է:

**ԿԻՆ -** Քանի՞ մարդ է այստեղ աշխա-  
տում:

**ՏՂԱՄԱՐԴ -** Մշտական աշխատող-  
ները քսանից քիչ են: Իսկ ժամա-  
նակավորների թիվը իշխունից  
անցնում է:

**ԿԻՆ -** Սի ֆիրմայում մեկ բժիշկ՝ հի-  
սուն մարդու համար: Իսկ ամբողջ  
Ռուսաստանում տասը հազար  
մարդուն բաժին է ընկնում մեկ  
բժիշկ:

**ՏՂԱՄԱՐԴ -** Ամբողջ Ռուսաստանի  
հոգսն ինձ վրա վերցնելու հավակ-  
նություն չունեմ: Իսկ ձեզ հետ իս-  
կապես ուզում եմ աշխատել: Դուք  
հմայիչ, խելացի և կրրված կին եք:  
Ամուր բնավորություն ունեք: Կես  
խոսքից ամեն ինչ հասկանում եք:  
Ամեն ինչի մասին սեփական կար-  
ծիք ունեք: Նախաձեռնող ու եռան-  
դուն եք, համարձակ ու վճռական:  
Դուք իսկական լիդեր եք:

**ԿԻՆ -** Իսկ մրցակցությունից չե՞ք վա-  
խնենում:

**ՏՂԱՄԱՐԴ - Ոչ:** Չե՞ որ մենք լրացնում  
ենք մեկս մյուսին: Դուք ավանտ-  
յուրիստ եք, իսկ ես՝ շրջահայաց:  
Դուք հրաշալի գործ եք զիսավորը,  
իսկ ես հետևողական եմ մասնավո-  
րի հանդեպ: Դուք կրրված եք, գա-  
ղափարներ ունեք, իսկ իմ փորձն է  
շոշափելի: Եվ, առհասարակ, դուք  
ավելի ու ավելի շատ եք ինձ դուք  
գալիս:

**ԿԻՆ -** Լավ, կմտածեմ:

**ՏՂԱՄԱՐԴ -** Մտածեք: Ահա այցե-  
քարտս: Կապասեմ ձեր պատաս-  
խանին: Հիմա ձեզ ո՞ւր տանեմ:

**ԿԻՆ -** Դուք խնդրեցիք մտածել: Նըս-  
տեք և սպասեք: Ես մտածում եմ:

**Դարձար:**

**ՏՂԱՄԱՐԴ -** Սուրճ եփե՞՞մ:

**ԿԻՆ -** Սի լոեք: Խոսեք: Միևնույն է,  
ինչի մասին կխոսեք: Հանուն ֆոնի  
խոսեք:

**ՏՂԱՄԱՐԴ -** Ես չեմ կարող խոսել՝ ի-  
մանալով, որ ինձ չեն լսում:

**ԿԻՆ -** Ես կմիանամ խոսակցությանը:  
Ճիշտ և ճիշտ ձեզ նման, ես կարող  
եմ մի բան խոսել, բայց մտածել բո-  
լորովին այլ բանի մասին:

**ՏՂԱՄԱՐԴ -** Ես մի արժանիք: Իսկ  
ինչո՞ւ երբեք չեք ամուսանացել:  
Ձեզ զիրավորեցի՞: Չեի հարցնի,  
եքեւ տգեղ լինեիք:

**ԿԻՆ -** Ես ուզում եի սիրելով ամուսնա-  
նալ:

**ՏՂԱՄԱՐԴ -** Անպատասխան սե՞ր եք  
ունեցել:

**ԿԻՆ -** Ես փշրված սեր եմ ունեցել:  
(Դադար: ) Ես կապատմեմ, չե՞ որ  
կանայք հոգի են տալիս սիրո մա-  
սին խոսելու համար:

**ՏՂԱՄԱՐԴ -** Գուցե մեկ ուրիշ ան-  
գամ:

**ԿԻՆ -** Լսեք ինձ, խնդրում եմ:

**ՏՂԱՄԱՐԴ -** Իհարկե, իհարկե...

**ԿԻՆ -** Տասներեք տարեկան էի: Ինձ  
ու տատիկիս համար ծնողներս  
Ֆիննական ծոցի Լախտա ավա-  
նում ամառանց էին վարձել: Այն-  
տեղ էլ նրան հանդիպեցի: Տասնուր  
տարեկան էր: Բանակից առաջ

հաճախանում էր: Տեր Աստված, ի՞նչ գեղեցիկ էր: Սովորական գեղեցկություն չէր դա, նա պարզապես հիասքանչ էր: Դրանից առաջ ու հետո նրա նման մեկին չեմ հանդիպել: Նա խկական տղամարդ էր: Միայն այն գիտակցությունը, որ նա կա աշխարհում, ինձ փրկել է ամեն չարիքից: Ես նրան սիրեցի առաջին հայացքից, սիրեցի խոր, ուժգին, կրքու և ամաչոս սիրով: Ինչպես միայն կարող է սիրել կարդացած, երևակայությամբ ապրող աղջնակը: Դա ձգվեց մի շաբաթ, ոչ ավելի: Այդպես էլ կարևոր մի բան չհասցրինք ասել մեկս մյուսին: Մերը մեզ իր գիրկն առավ հանկարծակի: Մենք սիրել հասցրինք, բայց չհասցրինք վարժվել իրար:

### Դադար:

**ՏՂԱՍՍԱՐԴ** - Ընորհակալություն, որ պատմեցիք: Իսկ հետո<sup>o</sup>:

**ԿԻՆ** - Ամառանցում, մինչև նրան հանդիպելը, ընկերություն էի անում հարևան բակի տղաների ու աղջիկների հետ: Թեև նրանցից ոչ մեկի հետ չէի սիրաբանում, բայց անընդհատ նրանց հետ էի. լողանում էինք, մոպեդներով սլանում փողոցներով, քուղը ու սեղանի թենիս խաղում... Սի խոսքով, նրա հետ շատ քիչ ժամանակ էի լինում: Իսկ այդ տղաներին դուր չէր գալիս, որ օտար մեկն իմ կողքին է, հարձակվում էին նրա վրա, կըպշտում: Իսկ նա ոչ միայն չէր վախենում, անգամ չնկատելու էր տալիս: Դա էլ երևի ամենից շատ էր կատաղեցնում այդ տղաներին:

### Դադար:

**ՏՂԱՍՍԱՐԴ** - Հետո ի՞նչ եղավ:

**ԿԻՆ** - Սի անգամ առավոտյան արքնացա այն զգացումով, որ դըքրախսություն էր պատահել: Ես արքնացա, սկսեցի պտտվել տան շուրջն այնպիս, կարծես փնտրում էի այդ դժբախսությունը: Արևմ այրում էր: Ամենուրեք բգեցների բզոյցն էր: Քաջվարդերը փրքում էին: Ամեն ինչի մեջ խաղաղության և հարմարավեսության շունչն էր իշխում: Աստիճանաբար հանգըստացա և զնացի լցակայանից ջուր բերելու: Այստեղ էլ լսեցի. գիշերը տղային ծեծել ու հաշմանդամ էին դարձրել: Դժբախսությունն ինքը ինձ գտավ: Ես շպրտեցի դույլերն ու վագեցի դիմացի բակը: Ախ, ինչպես էր այրում արել, ասես Հին Հրեաստանը լիներ: Բակի մեջտեղում իմ շրջապատի տղաները շարել էին շշերն ու դրանց վրա կրակում էին երկփողանի հրացաններից: Երկու երկփողանի էլ սեղանի վրա էր: Ես վերցրեցի մեկն ու նշան բռնեցի նրանցից մեկի վրա, մականունը Սոճի էր, անունը չեմ հիշում: Նրա տան մոտ սոճիներ էին աճում, դրա համար էլ մականունը Սոճի էր: Ես երկար ու մանրակրկիտ նշան էի բռնում: Վախենում էի վրիպել: Լուրյուն տիրեց: Լսում էր, ինչպես էր փայտանցում դույլի մեջ ընկնում կարի ցայտը: Նրա մայրը կովն էր կրում: Կրակեցի: Ուսս ինձ լավ պատվար եղավ: Սոճին հնձած ցորենի պես տապալվեց: Հետո

նշան բռնեցի Վասկա-հոսանքիչի վրա: Հետո մի փոքր զարմացա. ինչո՞ւ է նա այդպես սփրթնած: Կարծես քիչ առաջ ոնց որ նեզր լիներ: Եվ այդ պահին նրա աղջիկը, չեմ իիշում, թե անունն ինչ էր, այնպես ճշաց, կարծես իրեն էին մորթում: Ու վազեց այդ տղային իր մարմնով ծածկելու: Իսկ նա աղջիկան նույնիսկ չիրեց, տեղափորվեց նրա թիկունքում: Աղջիկն ինձ խանգարում էր: Ես չի ուզում նրան կրակել: Որտեղից որտեղ հայտնվեց Սոճի մայրը, ձայնը գլուխը զցեց. «Սպան՝ լեմ: Որդոս սպանել են»: Ես շարտեցի հրացանն ու անհետացա: Չեմ իիշում, թե ինչպես հայտնվեցի նեղուցի մոտ գտնվող նրա ամառանցում: Երկու լացող կին՝ մայրն ու քույրը, հավաքում էին իրերը: Օ՛խ, ի՞նչ ատելությամբ էին նայում ինձ: Չեմ իիշում երբ և ինչպես տուն եկա: Ինձ արդեն միլիցիոներն էր սպասում: Իսկ Սոճուն չէի սպանել, միայն ուսն էր վիրավորվել: Ինձ մանկական գաղութն էր սպասում: Բայց տղաներին նույնպես բաժին կհասներ: Սոճուն մայրը մտածեց-մտածեց ու դիմումը հետ վերցրեց: Ինձ Լենինգրադ տարան: Տենիք նման մի բան ցնցեց ինձ: Ես փողոց դուրս եկա միայն այն ժամանակ, երբ դեղին տերևների հրդեհը վերջացել էր: Այնպես տխուր էր:

#### Դադար:

**ՏՂԱՄԱՐԴ - Ծնորհակալ եմ:**

**ԿԻՆ - Իսկ իիմա ամուր բռնվեր:**

**ՏՂԱՄԱՐԴ - Ինչո՞ւ, ի՞նչ...**

**ԿԻՆ - Դուք այնպես նման եք այն տղային, ում սիրել եմ և այլև չեմ տեսել:**

**ՏՂԱՄԱՐԴ - Ծնորհակալ եմ... նախանձում եմ ձեզ: Երբեք այդպիսի սեր չեմ ունեցել: Ընդհանրապես սիրուն այնքան էլ չեմ հավատում:**

**ԿԻՆ - Ես լնարեցի ձեզ, որովհետև շատ էի ուզում, որ իմ որդին նման լինի նրան:**

**ՏՂԱՄԱՐԴ - Ծնորհակալ եմ: Բայց այդպես չի լինում: (Նայում է ժամացույցին:) Ժամը տասն է:**

**Հեռախոսազնօք հնչում է երկար, ոչ ոք չի մոտենում:**

**ԿԻՆ - Ձեզ եմ շնորհակալ:**

**ՏՂԱՄԱՐԴ - Ինչի՞ համար:**

**ԿԻՆ - Ես այսօր հասկացա, որ չի կարեի ամբողջ կյանքը հպատակեցնել անցյալին: (Ծիծաղում է:) Երբ առավոտյան համոզում էի ձեզ, խոճապահը էի... Այն ժամանակ խայտառակությունից պարզապես կզմվեի: Ասես պարտությունից ավելի խայտառակ հաղթանակ չի լինում:**

**ՏՂԱՄԱՐԴ - (ծիծաղում է): Արդեն ընդհանուր հիշողություններ ունեմք: Եվ պարտություններ, և հաղթանակներ:**

**ԿԻՆ - Այսօր ես հասունացա: Եվ չեմ հասկանում նրան, ով էի առավոտյան: Ինչպես կարող էի հուսալ սիրելի երեխսա ծնել չսիրած մարդուց:**

**ՏՂԱՄԱՐԴ - Ընդհանրապե՞ս ձեզ դուք չեմ գալիս:**

**ԿԻՆ** - Չե, դուք չեք գալիս:

**ՏՂԱՍՍՐԴ** - Ցավալի է:

**ԿԻՆ** - Ի՞նչ արած:

**ՏՂԱՍՍՐԴ** - Իսկ կարելի՞ է խմանալ՝ ինչու: Դուք իմ մեջ այնքան արժանիքներ եք գտել:

**ԿԻՆ** - Մոլորդած էի:

**ՏՂԱՍՍՐԴ** - Վիրավորական է: Իսկ ես արդեն ինքու իմ մեջ ուտել եմ...

**ԿԻՆ** - Հիմա, երբ ձեզ պետք եմ, դուք այնպես քնքշորեն եք ժպտում, այնպես բարեկամաբար եք նայում... Կարելի է հավատալ, որ իրոք ձեզ դուք եմ գալիս:

**ՏՂԱՍՍՐԴ** - Դուք իրոք ինձ դուք եք գալիս: Ձեզ պակասում է հավատը սեփական անձի հանդեպ: Դուք իրավունք չունեք կասկածի տակ առնելու ձեր հմայքը:

**ԿԻՆ** - Իսկ ինչո՞ւ փողոցում ձեր աչքին հմայիչ չէի երևում:

**ՏՂԱՍՍՐԴ** - Այն ժամանակ ձեզ զփսեի:

**ԿԻՆ** - Զգիտեիք, որ ձեզ օգտակա՞ր եմ լինելու:

**ՏՂԱՍՍՐԴ** - Ժամը տասնմեկն է: Կինըս անհանգստանում է: Պետք է ուրիշների զգացմունքների հետ հաշվի նստել: Ձեզ ո՞ւր տանեմ:

**ԿԻՆ** - Ես ձեզ համար լա՞վ աշխատեցի:

**ՏՂԱՍՍՐԴ** - Այո, լավ: Ծնորհակալություն:

**ԿԻՆ** - Իսկ չորս հարյուր դոլարն ո՞ւր է: Դուք ինձ խոստացք, երե...

**ՏՂԱՍՍՐԴ** - (ընդհատում է): Ներեցեք, մոռացել էի: Խնդրեմ: (Փողը տեղավորում է ծրարի մեջ, պարզում կմողը):

**ԿԻՆ** - (չի վերցնում): Անհարմար վիճակի մեջ դրեցիք: Ստիպեցիք հիւեցնել փողի մասին: Զենտլմենին վայել չե:

**ՏՂԱՍՍՐԴ** - Ներեցեք: Դուք ճիշտ եք:

**ԿԻՆ** - Հարյուր դոլարը հանեք:

**ՏՂԱՍՍՐԴ** - Թող դա լինի իմ անձնական նվերը:

**ԿԻՆ** - Կողմնակի անձանցից ոչինչ չեմ ընդունում:

**ՏՂԱՍՍՐԴ** - Լավ: (Հոգոց արձակելով՝ ծրարից հանում է մի քղացուամ:)

**ԿԻՆ** - Եվ միշտ ձեզ մոտ հազար, երկու հազար դոլա՞ր կա:

**ՏՂԱՍՍՐԴ** - Իսկ դուք ուզում եք ինձ կողովտե՞լ:

**ԿԻՆ** - Պատահական ծախսերի համար ձեզ մոտ այնքան գումար եք պահում, որքան անհրաժեշտ է սովորական մարդուն մի տարի ապրելու համար:

**ՏՂԱՍՍՐԴ** - Ինձ մոտ այնքան փող կա, որքան ես վաստակում եմ:

**ԿԻՆ** - Դուք չեք աշխատում, դուք առևտուր եք անում:

**ՏՂԱՍՍՐԴ** - Իրավացի եք: Դուք էլ, ի վերջոն, չեք աշխատում, այլ ձև եք անում, թե բուժում եք մարդկանց՝ ինչպես դա ընդունված է շրջանային պոլիկինիկաներում:

**ԿԻՆ** - Ես մտածեցի: Ձեզ համար չեմ աշխատի:

**ՏՂԱՍՍՐԴ** - (ամսպասելի գրկում է մրան, թերևակի հպկում մրա շորթթերին): Ձեի ուզում ձեզ վիրավորել: Ու չեմ հասկանում, թե ի՞նչ է կատարվում: Ինչո՞ւ ենք նման վերջա-

բանի գնում: Եվ ինչպե՞ս փոխել այս ամենը: Չանգեք ինձ, զանգեք: Մի անհետացեք: Եվ փողն էլ վերցրեք: Դուք ազնվորեն եք այն վաստակել: (*Մարում է լույսը:*) Մենք կարող ենք գնալ:

**ԿԻՆ** - Բայց դուք սուրճ առաջարկեցիք:

**ՏՂԱՄԱՐԴ** - Մեկ ուրիշ անգամ:

**ԿԻՆ** - Ուրիշ անգամ չի լինի: Մենք հրաժեշտ կտանք, ու ես ընդմիշտ կհեռանամ:

**ՏՂԱՄԱՐԴ** - Մոտերքո՞ւմ եք ապրում:

**ԿԻՆ** - Համեմատաքար... դե ի՞նչ:

**ՏՂԱՄԱՐԴ** - Սուրճը ձեր տանը խմեք:

**ԿԻՆ** - Տանը սուրճ չունեմ: Աշխատավարձս թույլ չի տալիս:

**ՏՂԱՄԱՐԴ** - (միացնում է սեղանի լամպը, դարակից հանում է մի տուփ սուրճ): «Կլասիկը» հարմա՞ր է: Նվիրում եմ, հիշատակ:

**ԿԻՆ** - Ես արդեն ասացի, որ առաջին պատահածից նվեր չեմ ընդունում:  
Հեռախոսազանգ: Երկար է հընչում: Ընկալուզը ոչ ոք չի բարձրացնում:

**ՏՂԱՄԱՐԴ** - Ներեցեք, բայց սուրճ եփելու ժամանակ չկա: Շտապում եմ: Կիսու ինձ է սպասում: Անհանգրատանում է, չի քնում: Դուք դժվար հասկանաք, ազատ մարդ եք: (*Ցուցադրաբար սպասողական կեցվածք է ընդունում:*)

**Երկար դադար:**

**ԿԻՆ** - (կամաց): Հրաժեշտից առաջ համրուեք ինձ: Խնդրում եմ:

**ՏՂԱՄԱՐԴ** - (համրուրում է): Մի կորեք: Առանց ձեզ իմ կյանքում մի բան պակաս կլինի: Այցելեք:

**ԿԻՆ** - Աշխատանքային օրվա վերջո՞ւմ: Կանգնել այնտեղ և սպասել, թե երք ինձ կտուլի՞ք: Եվ գուշակել, թե իմաս ձեզ պե՞տք եմ, թե՞ ոչ:

**ՏՂԱՄԱՐԴ** - (շատ լուրջ և վստահելի սոլոկյո): Ի՞նչ եք ինձնից ուզում: Ես չեմ կարողանում հասկանալ, չեմ կարողանում կոռահել, չնայած ջանք եմ քափում: Դուք ինձ բացատրեք: Համարձակուրյուն ունեցեք և ասացեք: Դուք կարող եք ուժեղ լինել: Մի՞թե ավելի դժվար է ուժեղ լինել, քան անկեղծ:

**ԿԻՆ** - Եթե ինքս հասկանայի...

**ՏՂԱՄԱՐԴ** - Ինչպե՞ս կարող եմ ձեզ հասկանալ, եթք դուք ձեզ չեք հասկանում: (Դադար: *Լուրջ և քննություշ:*) Դուք տեսիքների մեջ եք:

**ԿԻՆ** - (ցնցվում է): Տեսիլքների՞ց: Դուք ճիշտ եք:

**ՏՂԱՄԱՐԴ** - Առավոտյան ամեն ինչին լրիվ այլ կերպ էիք նայում: Իսկ մի շաբաթից կմոռանաք այսօրվա տրամադրության մասին: Վախենում եմ, որ ինձ էլ կմոռանաք:

**ԿԻՆ** - Ես սարսափում եմ: Ես դարձյալ տասներեք տարեկան եմ: Ու դարձյալ ինձ զգում եմ ողբերգության կիզակետում: Եվ փրկուրյուն չկա: Ես միշտ իմացել եմ, որ մենակուրյունն այն ժամանակ չի գալիս, եթք կողքիդ ոչ ոք չկա: Մենակուրյունն այն է, եթք թեզ պետք է միակը, մեն-մեկը: Ես այնպես զգուշավոր էի: Ես ինձ այնպես էի պահպանում: Ես չէի կարող թույլ տալ, որ իմ սիրտը մեկ անգամ էլ փշրվի: Ես չպետք է մոտենայի

ձեզ: Մի ամբողջ ամիս ձեզ էի հետևում, երազում էի, պատկերացնում, իխանում էի ձեզնով, անհանգըստանում էի, խանդրում, ատում էի ձեզ, տառապում... Ես սպասում էի: Ոչ մի սովորական օր չկար իմ կյանքում: Իմ ամեն մի օրը ձեզնով լցված էր: Ինչո՞ւ խարեմ ձեզ և ինձ: Ես ձեզ սիրում եմ խենքորեն, կրոստ... Ես սիրում եմ ձեզ: Եվ ի՞նչ անեմ ձեր հանդեպ ունեցած իմ սերը: (*Ծնկի է զալիս Տղամարդու առջև:*) Հուշեք, ի՞նչ անեմ:

**Տղամարդը նոյնպես ծնկի է զալիս, գրկում է, օրորում է նրան, կարծես փոքր երեխա լինի:**

**ՏՂԱՄԱՐԴ -** Իմ անպաշտպան տասներեքամյա աղջնակ: Սիրելիս, լավս: Դու որտեղի՞ց եկար: Դու իմ ամկոչ տոնն ես: Դու բոլորում ես եղրևանու նման: Ինչո՞ւ: Որովհետու ես սիրում եմ քեզ: Ես ուզում եմ, որ դու երջանիկ լինես: Ես քեզ հիմա մի տեղ կտանեմ, որտեղ քեզ համար բյուրեղապակյա կոշիկներ ու շրջազգեստ կգնես: Արքայադստեր նման... Դու չես էլ հասկանում, քեզ որքան ձգող ես ու կանչող: Ես քեզ շատ եմ սիրում:

**ԿԻՆ - (լաց է լինում):** Ալյոշենկա...

**ՏՂԱՄԱՐԴ -** Ես չարժեմ քեզ: Ձեզնից լավ երբեք ոչինչ չեմ ունեցել: Երեսուն տարեկան եմ, ես դեռ չեմ ապրել: Ես ստեղծել եմ ինձ: Ոչնչից: Գալառացի պատանոց, ոչ մի արժանիքն չունեցող, միայն բարեխղճորյամբ աչքի ընկնող տղայից սարքել եմ ինձ: Այն տղայից, որի

հայրը հարբում ոի ծեծում էր մորը, իսկ մայրը լաց էր լինում և աշխատում օրնիբուն, որպեսզի պահեր երեք երեխաներին: Ես Մոսկվա եկա: Սովորում ու աշխատում էի: Վաստակում էի ու համարյա ամբողջ վաստակս ուղարկում մորս՝ քոյրերիս մեծացնելու համար: Անուսնացա անսպասելի, տրամադրության թելադրանքով, և հիմա ինձ թվում է՝ առանց սիրո: Այս, ես շատ եմ վաստակում, բայց փողերս ծախսելու ոչ ժամանակ, ոչ էլ ցանկություն ունեմ: Կյանքիս մեջ գոնեմեկ անգամ արձակուրդ չեմ ունեցել: Ես չեմ հավատում նրան, ինչ մեր միջև կատարվում է: Չեմ հավատում:

**ԿԻՆ - Ալյոշենկա...**

**ՏՂԱՄԱՐԴ -** Դու լաց ես լինում... Ինչ համով արցունքներ են, ինչ քաղցր... Իմ փոքրիկ աղջիկ, մենք քեզ հետ Հոլանդիա կմեկնենք: Ի դեպ, քո արտասահմանյան անձնագիրը կարգի՞ն է:

**ԿԻՆ - (ծիծաղում է):** Չունեմ ու երբեք արտասահմանյան անձնագիր չեմ ունեցել: Ես եղել եմ Ռիգայում, Սովում ու մեկ էլ Պուշկինյան լեռներում: Ես գիտեմ Մոսկվան ու Լենինգրադը: Մայրս երկար տարիներ հիվանդ էր, նրան մենակ քողնել չեր կարելի: Ես ուզում եմ տեսնել աշխարհը քեզ հետ միասին: Առանց քեզ ինչի՞ս է պետք աշխարհը:

**ՏՂԱՄԱՐԴ -** Ես քեզ ցույց կտամ աշխարհը: Երկուսով շատ կճամփոր-

**ՊԵՆՔ:** Իսկ հետո դու աղջիկ կծնես: Գուցե, այնուամենայնիվ, համաձայնէ՞ս աղջիկ ունենալ, մանավանդ, որ տղայի հարցում արդեն չենք հասցնում:

**ԿԻՆ - Ծողութեալ աղջիկ լինի:** Աղջիկներն եւ երբեմն վատ չեն ապրում:

**ՏՂԱՄԱՐԴ - Ծնորհակալություն:** Ես միշտ, միշտ կօգնեմ քեզ: Իսկ հետո, երբ աղջիկը մեծանա, դու մեզ կծանոթացնես: Ես ուզում եմ, որ մեր աղջկան ծնես ու նրան կոչես Մարինա: Եթե քեզ մոտ լինի մեր աղջիկը, ապա այնքան ցավագին չես ընդունի, չէ՞՝, մեր բաժանումը:

**ԿԻՆ - Այո...**

**ՏՂԱՄԱՐԴ - Քեզ համար այնքան ցավագին չի՞ լինի:** Ես վախենում եմ քեզ համար: Դու այնքան նուրբ ես: Դու շատ ցավ չե՞ս զգա:

**ԿԻՆ - Ոչ:**

**ՏՂԱՄԱՐԴ - Իհարկե, քեզ համար, ինչպես նաև ինձ համար, շատ ցավագին կլինի այս ամենը: Բայց ասա, քեզ համար ավելի շատ չի՞ լինի ցավը:**

**ԿԻՆ - Ոչ:**

**ՏՂԱՄԱՐԴ - Ես քեզ սիրում եմ:**

**ԿԻՆ - Այո:**

**ՏՂԱՄԱՐԴ - Դու ինձ սիրո՞ւմ ես:**

**ԿԻՆ - Այո: Տուն գնալուդ ժամանակն է:** Քեզ սպասում և անհանգստանում են:

**ՏՂԱՄԱՐԴ - Կինս քնած է:** Նա վաղ է պառկում: Աղջկաս հետ հոգնում է: Մեր աղջիկն իսկապես կամակոր է: Կինս էլ, իսկապես, շատ ներվային է: Նրան դժվար է բան հասկացնել:

Ինչ անում եմ՝ նրան դուր չի գալիս: Նա մշտապես սկանդալներ է սարքում, որ աշխատանքից ուշ եմ զնում: Նրա մոտ իխտերիա է սկսվում, որովհետև համոզված է, որ իրեն քիչ ժամանակ եմ տրամադրում: Եթե իմ կինը լինեիր, ես շատ երջանիկ կլինեի: Ջո մեջ մանրախնդիր ոչինչ չկա, չկա առօրեական ոչինչ: Դու տոն ես: Դու հոգի ունես:

**ԿԻՆ - Ծնորհակալ եմ:**

**ՏՂԱՄԱՐԴ - Չէ, նա հրաշալի տանտիրուիի է, հրաշալի կին, հրաշալի մայր: Ես լիովին բավարարված եմ:** Տունը մաքուր է, աղջիկս ինչ-որ բանով զբաղվում է: Իհարկե, կնոջս համար դժվար է տանը մնալը: Նա հոգնում է: Ես կարող եմ հանգըստյան օրերին նրանց ինչ-որ տեղ տանել ժամանցի... Շաբարվա ընթացքում հասցնում եմ կարուտել աղջկաս, իսկ աղջիկս ոտքից գլուխ ինձ է քաշել: Բայց հատկապես հանգստյան օրերին կնոջս խիստ անիրաժեշտ է լինում խանութեր գնալ: Փնտրել ինչ-որ վերնաշապիկ կամ էլ հարյուրերորդ լողազգեստը: Եվ պտտվում ենք Մոսկվայում, անիմաստ փողեր ենք ծախսում: Դրանից կինս բորբոքվում է, աղջիկս՝ նվճվում: Իսկ ես, միևնույն է, մի վերնաշապիկը նյուից չեմ տարրելում, որովհետև որն էլ հազնի, կինս էլի նույն է: Կարծում եմ, իսկապես իմ գնալու ժամանակն է: Մենք միասին Հոլանդիա կգնա՞նք:



**ԿԻՆ** - Եսք սիրում եմ... Եսք սիրում եմ... Եսք սիրում եմ...

**ՏՂԱՄԱՐԴ** - Էլի ինչ-որ բան ասա: Ինչ-որ ուրիշ բան ասա:

**ԿԻՆ** - Ես ուրիշ ոչինչ զգիտեմ... Սիրայի եսք սիրում եմ... Եսք սիրում եմ...

**ՏՂԱՄԱՐԴ** - Սի ուրիշ բան ասա:

**ԿԻՆ** - Ի՞նչ: Ի՞նչ:

**ՏՂԱՄԱՐԴ** - Զգիտեմ:

**ԿԻՆ** - Ուրիշ ասելիք չունեմ:

**ՏՂԱՄԱՐԴ** - Ահա՝ թե ինչ: (*Նայում է ժամացույցին:*) Լավ, ամեն ինչ գրողի ծոցը բռող գնա: Նստիր այս-տեղ: Ջեզ համար երաժշտություն կմիացնեմ: Պատրիսիա Կասա: (*Միացնում է Պատրիսիա Կասա «Սնա ինձ հետ» երգի ձայներիզը:*) Հիմա կզամ: Կես ժամից: (*Համրու-րում է Կնոջը և դուրս վազում:*)

**ԿԻՆ** - (անջատում է երգը և ձայնա-գրում ինքն իրեն): Ես սիրում եմ ձեզ: Ես այլևս երբեք չեմ տեսնի ձեզ: Ես ձեզանից ոչ տղա և ոչ էլ աղջիկ չեմ ծնի: Ես ձեզ հետ Հոլան-դիա չեմ մեկնի, որովհետև չկա այդպիսի երկիր՝ Հոլանդիա: Եվ դուք էլ ինձ ամեն օր վարդակա-կաշներ չեք նվիրի, որովհետև աշ-խարհում վարդակակաչներ չկան: Եվ ես էլ ձեզ հետ միասին չեմ աշ-խատելու: Եվ դուք ինձ ցույց չեք տա աշխարհը: Անգամ աշխարհի ամենափոքր մի կտոր, աշխարհի նվազագույն կտորը: Ու էլ երբեք ինձ չեք ասի. «Մարինա, ես քեզ սիրում եմ»: Եվ ինձ համար շրջազգեստ ու բյուրեղապակյա

կոշիկներ չեք գնի: Եվ չեք չարչար-վի իմ արտասահմանյան անձնա-գրի համար: Ես ձեզ չեմ ծանոքաց-նի մեր չափահաս աղջկա հետ: Ես այլևս երբեք աղջիկ չեմ ունենա: Ո-չինչ, ոչինչ, ոչինչ ես այլևս չեմ ունենա: Ես զգիտեմ, թե ինչ եք ա-սում դուք ուրիշ կանաց: Բայց ե-թե նույն բաները, ինչ որ ինձ, միևնույն է, ես շնորհակալ եմ ձեզ: Ոչ միշտ է իրավացի նա, ով սիրում է և տառապում: Եվ ոչ էլ միշտ մե-ղավոր է նա, ով չի սիրում: Ես սի-րում եմ ձեզ և վախենում, որ մինչև կյանքիս վերջն այլևս ժամանակ չեմ ունենա ձեզ չսիրելու համար: Ես սարսափում եմ: Իսկ ի՞նչ, եթե մենք ամբողջապես չենք մեռնում: Եվ այնտեղ, այն հեռավոր ու ան-հայտ ափերում, ես կշարունակեմ սիրել ձեզ ուժգին ու անհոյս: Դուք մեղավոր չեք, որ մեր միջև ոչինչ տեղի չունեցավ: Սերը չեն մուրում: Այն Աստված է ուղարկում: Սի շա-րաթից դուք ամեն ինչի այլ հայաց-քով կնայեք: Իսկ ես մեկ շարաթ հետո էլ առաջվա պես կսիրեմ ձեզ: Եվ այդ պատճառով էլ, քանի դեռ ուժ կա իմ մեջ, ես ձեզանից ընդ-միշտ հեռանում եմ: (*Անջատում է ձայնագրիչը, կիսաձայն երգում է Պատրիսիա Կասաի երգը:*)

**Կինը հանում է Տղամարդու պի- չակը, կախում աքուի թիկնակին ու հեռանում: Պատրիսիա Կաս- ար երգում է: Տղամարդը վերա- դառնում է վարդերի փնջով:**

**ՏՂԱՄԱՐԴ** - Դու չե՞ս քննել: Տեսա՞ր,

ինչ արագ վերադարձաւ: Վարդեք էի ընտրում: Եվ բոլոր վարդերն ել իմ կարծիքով, արժանի չէին քեզ: (*Սիացնում է մեծ ջահը:*) Մարինա: (*Բարձր:*) Մարինա: (*Նայում է, հասկանում, որ Կիմը չկա, վայր է դնում փունջը, մտածմունքի մեջ ընկնում, հետո արագ սոսուզում է սեղանի դարակմերը, բացում է շիրկիզվող պահարանը, ճայում, անջատում է ճայնագրիչը, անփոթորեն ճայներիզը նետում է սեղանին, բռվում ուսերը:)* Անորմալ: (*Տեսնում է իր պիջակը, ճեռքն է առնում, մոտեցնում դեմքին:*) Անորմալ...

### **ՀԵռախոսազանգ:**

**ՏՂԱՄԱՐԴ -** (արագ վերցնում է ընկալուչը, բղավում): Դո՞ւ ես: (*Հոգմած:*) Զանգի էի սպասում, ոյսա համար էլ արագ վերցրի ընկալուչը: Իսկ դու ինչո՞ւ քնած չես: Չե, ինձ հետ ոչինչ չի պատահել: Իսկ, քո կարծիքով, ի՞նչ կարող էր պատահել: Սովորական աշխատանքային իրավիճակ: Ու ստիպված եմ ուշանալ: Չե, դու չգիտես, քե ինչու եմ ուշանում: Մտածիր, ինչ մտքովդ կանց-

նի: Հա, այստեղ մենակ եմ: Լենա, հոգմել եմ, արդարանալու տրանադրություն չունեմ: Պրոբլեմներ են առաջացել, ստիպված էի մի քիչ երկար մնալ: Հա, հիշում եմ, որ ընտանիք ունեմ: Վաղը ընտանիքին տանելու եմ դինոզավրերին տեսնելու: Ի՞նչ մուշտակ, Լենա: Հիմա ամառ է: Բայց ինչո՞ւ հունիս ամսին, այդպես շտապ, քեզ կարակուլից մուշտակ է պետք: Լավ, լավ, կառնենք: Եվ երեխան էլ, ամեն անգամվա պես, մեզ հետ քարշ կզա խանութներում: Լենա, դու հիվանդ երևակայություն ունես: Այս ուշ ժամին ի՞նչ կանայք կարող են լինել օֆիսում: Ի դեպ, քեզ համար Պատրիսիա Կասս եմ առել: Կրերեմ: Օրերով կլսես: Հա, ես ել քեզ եմ համբուրում: Իմ ճայնը շատ նորմալ է: Տուն եմ զալիս: Ինձ ոչինչ չի պատահել:

*Ուսւերենից բարգմանեց  
ԼԵՎՈՆ ՄՈՒԹԱՖՅԱՆԸ*

# ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱ

28 29

գրական-գեղարվեստական հանդես

ISSN 1829-0701

© «Դրամատուրգիա», 2012  
Տպագրվել է պետական աջակցությամբ  
ՀԺԴԳՄ օժանդակությամբ

Խմբագիր՝  
ԿԱՐԻՆԵ ԽՈԴԻԿՅԱՆ

Կազմը և էջադրումը՝  
ՆԱՌԱ ՎԱՐԴԱՆՅԱՆՅԱՆԻ

Նյութերն ընդունվում են մեքենագիր կամ շարվածքով:  
Բնագրերը չեն վերադարձվում:

Հանդեսում տպագրված պիեսների բեմադրությամբ շահագրգիռ  
թատրոնները դրանց օգտագործման թույլտվության համար  
դիմեն անմիջական իրավատերերին՝ հեղինակներին:

Խմբագրության հասցեն՝  
Երևան, Օքտեղ 18/6, հեռ. 22-76-08

Ստորագրված է տպագրության 11.06.2012  
Գինը՝ պայմանագրային:

Գրանցման վկայական՝ 01Մ 000089

Հայիր՝ 70x100, 1/16: Ծավալը՝ 9,25 լուգ. մասնությունը՝  
Ռուղթը և տպագրությունը՝ օֆսետ: Տպաքանակը՝ 300 օրինակ:

Տպագրվել է ....

